



ՀՐԱՄԱՆԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆԻ ԵՐԿՐՈՂԴԻ

ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

# **ACTING PERSONES OF GOSPELS**



**MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN  
BIBLE SOCIETY OF ARMENIA**

**HOLY ETCHMIADZIN 2010**

# ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ



ՄԱՅՐ ԱԹ-ՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՎԱԾԱՇԽԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ 2010

ՀՏԴ 23/28 (038)  
ԳՄԴ 86.37 g 2  
Ա 791

**Պարբռասպնցին՝ Ուուրեն արեղա Զարգարյանը  
Շահե արեղա Անանյանը**

Ա 791 ԱՎԵՏԱՐԱՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ. - Էջմիածին: Մայր Աթոռ Սուլրք  
Էջմիածին, 2009. - 176 էջ:

Բառարանում ընդգրկված են Ավետարաններում հանդիպող անձնանունները, նշված են տեղիները, բերված են համապատասխան գրաբար և աշխարհաբար հատվածները:

ՀՏԴ 23/28 (038)  
ԳՄԴ 86.37 g 2

### **ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄՔ**

Տեր և Տիկին  
**ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՉԱԳԱՆԻ ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻ  
և ԲԵԼԼԱ ԴՐԱՆՏԻ ԺԱՄԳԱՐՅԱՆԻ**

### **МЕЦЕНАТ**

Господин и Госпожа  
**ВЛАДИМИР ВАЧАГАНОВИЧ ЕНГИБАРЯН  
и БЕЛЛА ГРАНТОВНА ЖАМГАРЯН**

ISBN 978-9939-59-047-9

© Մայր Աթոռ Սուլրք Էջմիածին, 2010 թ.

© Հայաստանի Աստվածաշնչային Ընկերություն, 2010 թ.

## Ի ՀԻՃԱՑՈՎ

ԴՐԱՆՑ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԺԱՄԳԱՐՅԱՆԻ  
ԵՎ  
ՅՈՒՆՈՒԱ ԼԵՎՈՆԻ ԱՍԼԱՆՅԱՆԻ

ПОСВЯЩАЕТСЯ ПАМЯТИ

ГРАНТА ИВАНОВИЧА ЖАМГАРЯНА  
И  
ЮОНОНЫ ЛЕВОНОВНЫ АСЛАНЯН



## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Բառարանի խորագիրն է «Ավելարանների գործող անձինք»: Այն ենթադրում է բնականաբար չորս Ավելարաններում առկա զիսավոր անձանց՝ հնարավորինս անփոփի և ամբողջական պատկերի վերհանումը:

Մեր օրերում գրական կերպարների նկարագրման միջոցով Ավելարանների իրականությանը հայ ընթերցողին հասու դարձնելու առաջին փորձն է այս: Բառարանը բաղկացած է մեկ հիմնական բաժնից և երեք հավելվածներից: Դիմնական բաժնում գործող անձանց անդրադարձալուց բացի՝ երեք հավելվածներում համառորակիորեն ներկայացվում են՝ ա) Ավելարանների հիմնկրակարանյան անձինք, բ) Դիսուսի սերնդաբանական ցանկերը և գ) Դարակից պարմական անձինք:

Ինչ-որ առումով այս աշխափությունը կարող է ընորոշվել իրեն «Նոր Կրակարանի անձնանունների բառարան», որպես, սակայն, անձնանունների նկարագրությունը չունի զուրությունը բառարանագրական նշանակություն: Ավելարաններում յուրաքանչյուր կերպար իր որույն զույնն ու երանգն է հաղորդում ավելարանական համայնապարկերին: Նրանցից յուրաքանչյուրը գործում է՝ շարժուն և կենդանի մնալով նույնիսկ մեր օրերում: Այս առումով հարկ է նշել, որ բառարանում հաշվի են առնվել ոչ միայն ավելարանական փեղեկությունները, այլ նաև եկեղեցական ավանդության մեջ պահպանված վկայություններն ու ավանդությունները, որոնք իրենց հերթին պարզում են ավելարանների գործող անձանց «երկար ճամփորդության» հանգամանքները՝ քրիստոնի ժամանակաշրջանից մինչև մեր օրերը:

Ծուսկ, անհրաժեշտ ենք համարում շեշտել բառարանի գիրահանրամաքընիությունը. այն սպեղծված է ընթերցող լայն շրջանակների համար՝ գործող անձանց ուսպնյակով ավելարանական իրականությանը ծանոթանալու և քիչ թե շատ ամբողջական զաղափար կազմելու նպագույնությունը: Երբեմն փորձ է արվել անփոփի կերպով վերհանելու նաև այս կամ այն կերպարի բարոյական և քրիստոնեական բացարձիկ արժեքները՝ իրեն օրինակ մերօրյա քրիստոնյա ընթերցողի համար: Լիսիոյս ենք, որ բառարանը, բացի պարզ գործությունների համար: Լիսիոյս ենք, որ բառարանը, բացի պարզ գործությունների համար: Լիսիոյս ենք, որ բառարանը, բացի պարզ գործությունների համար:

---

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Роналд Браунригг, Кто есть кто в Новом Завете, Словарь,  
перевод с английского Поспехин И. Л., Москва 1998.

Новый Библейский Словарь, часть 1, Библейские персонажи,  
Р. Ороховатская (ред.), Санкт-Петербург 1999.

Մաղարիա արք. Օրմանյան, Համապարում, Ս. Էջմիածին,  
1997:

Մաղարիա արք. Օրմանյան, Ազգապարում, հրթ Ա, Ս. Էջմի-  
ածին, 2001:

## ԱՆԴՐԵԱՍ առաքյալ

<sup>18</sup>Մինչ դեռ զգնայր Յիսուս ընդ եղբ ծովուն Գալիլեացւոց, ետես երկուս եղբարս, զՍիմոնվն զկոչեցեալն Պետրոս եւ զՀովհանն երբայր նորա, արկեալ ուռկան ի ծով, քանզի ձկնորսք էին:

<sup>2</sup>Եւ առաքելոցն երկոտասամից էին անուանք այսորիկ. առաջին Սիմոն, անուանեալն Պետրոս, եւ Հովհանն երբայր նորա, <sup>3</sup>Յակովոս Զեբեդեայ եւ Յովհաննես երբայր նորա, Փիլիպպոս եւ Բարթողոմէոս, Թովմաս եւ Մատթեոս մաքսաւոր, Յակովոս Ալփեայ եւ Ղերեն որ անուանեցաւն Թադէոս, <sup>4</sup>Սիմոն Կանանացի եւ Յուդա Իսկարիովտացի, որ եւ մատնեացն զնա:

<sup>16</sup>Իբրեւ անցանէր առ ծովեգերբն Գալիլեացւոց, ետես զՍիմոնվն եւ զՀովհանն զեղբայր Սիմոնին, զի արկեալ էր նոցա ուռկանս ի ծով, քանզի ձկնորսք էին. <sup>17</sup>Եւ ասէ ցնոսա Յիսուս. Եկայք զկնի իմ եւ արարից զձեզ լինել որսորդս մարդկան:

<sup>29</sup>Եւ վաղվաղակի ելեալ ի ժողովրդենէ՛ եկն ի տուն Սիմոնի եւ Հովհանն Յակովբաւ եւ Յովհաննու հանդերձ:

<sup>16</sup>Եւ ե՞ր անուն Սիմոնի՝ Պետրոս. <sup>17</sup>Եւ Յակովու Զեբեդեայ՝ եւ Յովհաննու եղբաւրն Յակովբայ՝ ե՞ր նոցա անուանս բաներեգէն, որ է՝ որդիք որոտման, <sup>18</sup>Եւ զՀովհանն, եւ զՓիլիպպոս, եւ զԲարթողոմէոս, եւ զՄատթեոս, եւ զԹովմաս, եւ զՅակովոս Ալփեայ, եւ զԹադէոս, եւ զՍիմոնվն Կանանացի. <sup>19</sup>Եւ զՅուդա Ակարիովտացի, որ եւ մատնեացն զնա.

Մատթ 18

<sup>18</sup>Մինչ Յիսուս Գալիլիայի ծովեցերքով քայլում էր, տեսավ երկու եղբայրների՝ Սիմոնին, որ Պետրոս էր կոչվում, և նրա եղբայր Հովհանն. ծովի մեջ ուռկան էին զցում, քանի որ ձկնորսներ էին::

Մատթ 2

<sup>2</sup>Եվ տասներկու առաքյալների անունները սրանք էին. առաջին Սիմոն Պետրոս կոչվածը, և նրա եղբայրը Հովհանն, <sup>3</sup>Զեբեդեոսի որդի Յակովոս և նրա եղբայրը Յովհաննես, Փիլիպպոս և Բարթողոմէոս, Թովմաս և Սատթեոս մաքսավոր, Ալփեոսի որդի Յակովոս և Ղերեն, որ Թադէոս կոչվեց, <sup>4</sup>Սիմոն Կանանացի և Յուդա Իսկարիովտացի, որ և մատնեց նրան:

Մարկ 16

<sup>16</sup>Երբ նա անցնում էր Գալիլիայի ծովեգորվ, տեսավ Սիմոնին և նրա եղբայրը Հովհանն, որոնք ուռկանները ծովն էին զցել, որովհետև ձկնորսներ էին: <sup>17</sup>Եվ Յիսուս նրանց ասաց. «Իմ հետևից եկեք, և ես ձեզ կդարձնեմ մարդկանց որսորդներ»:

Մարկ 29

<sup>29</sup>Եվ ժողովարանից դուրս ելնելով, անմիջապես եկավ Սիմոնի և Հովհանն ստունք՝ Յակովոսի և Յովհաննեսի հետ:

Մարկ 4 18

<sup>16</sup>Եվ Սիմոնի անունը Պետրոս դրեց <sup>17</sup>և Զեբեդեոսի որդու՝ Յակովոսի ու նրա եղբոր՝ Յովհաննեսի անունները դրեց Բաներեգես, որ նշանակում է՝ Որտման որդիներ: <sup>18</sup>Սաև՝ Հովհանն և Փիլիպպոսին և Բարթողոմէոսին և մաքսավոր Մատթեոսին և Թովմասին և Ալփեոսի որդի Յակովոսին և Թադէոսին և Սիմոն Կանանացուն <sup>19</sup>և Յուդա Իսկարիովտացուն, որը և նրան մատնեց:

<sup>3</sup>Եւ մինչ նստէր նա ի լերինն Զիթենաց յանդիման տաճարին, հարցանդին ցնա առանձինն Պետրոս եւ Յակովը եւ Յովհաննես եւ Ընդրէս։ <sup>4</sup>Ասա մեզ Ե՞րբ լինիցի այդ, եւ զի՞նչ նշան է յորժամ կատարելոց իցէ այդ ամենայն։

<sup>13</sup>Եւ իբրեւ այգ եղեւ՝ կոչեաց զաշակերտսն իւր, եւ ընտրեաց ի նոցանէ երկոտասանս. զորս եւ առաքեալս անուանեաց։ <sup>14</sup>Սիմովն զոր եւ Պետրոսն անուանեաց, եւ՝ Ընդրէս զեղբայր նորին, եւ զՅակովըն, եւ զՅովհաննես, եւ զՓիլիպոսն, եւ զԲարթոլոմէոսն, <sup>15</sup>եւ զՄատթէոս, եւ զԹովմասն, եւ զՅակովըն Ալփեայ, եւ զՍիմովն զկոչեցեալն Նախանձայոյգ, <sup>16</sup>եւ զՅուղա Յակովը, եւ զՅուղա Իսկարիովտացի, որ եղեւ իսկ մատնիչ։

<sup>40</sup>Եր Ընդրէս եղբայր Սիմովնի Վիմի, մի յերկուց անտի որ լուանն ի Յովհաննետ եւ գնացին զկնի նորա։

<sup>44</sup>Եւ էր Փիլիպոս ի Բեթսայիդայ, ի քաղաք Ընդրէս, եւ Պետրոսի։

<sup>8</sup>Ասէ ցնա մի յաշակերտացն նորա, Ընդրէս, եղբայր Սիմովնի Վիմի. <sup>9</sup>Ես աստ պատանեակ մի, որ ունի իհնգ նկանակ գարեղին եւ երկուս ծկունս, այլ այն զի՞նչ է առ այդչափ մարդիկո։

<sup>22</sup>Գայ Փիլիպոս եւ ասէ ցԸնդրէս։ Ընդրէս եւ Փիլիպոս ասեն ցՅիսուս։ <sup>23</sup>Եւ Յիսուս պատասխանի եւ նոցա՝ եւ ասէ. Եհաս ժամ զի փառաւրեսցի որդի մարդոյ։

Մարկ ԺԳ 3

<sup>3</sup>Եվ մինչ նստած էր նա Զիթենաց լերան վրա, տաճարի դիմաց, Պետրոսն ու Յակոբոսը և Յովհաննեսն ու Ընդրէսը, առանձին, հարցորին նրան. <sup>4</sup>«Ասա մեզ, Ե՞րբ պիտի լինի այդ, և ի՞նչ կլինի նշանը, երբ կատարվելու լինի այդ բոլորը»։

Ղուկ Զ 14

<sup>13</sup>Եվ երբ լույսը բացվեց, կանչեց իր աշակերտներին և ընտրեց նրանցից տասներկուսին, որոնց և առաքյալներ անվանեց. <sup>14</sup>Սիմոնին, որին էլ Պետրոս կոչեց, և Ընդրէսին՝ Նրա Եղբորը, Յակոբոսին, Յովհաննեսին, <sup>15</sup>Փիլիպոսին, Բարթողոմէոսին, Մատթէոսին, Թովմասին, Ալփեոսի որդի Յակոբոսին, Սիմոնին՝ Նախանձահոյզ կոչվածին, <sup>16</sup>Յակոբի որդի Յուդային և Խսկարիովտացի Յուդային, որը և մատնիչ եղավ։

Յովհ Ա 40

<sup>40</sup>Սիմոն Պետրոսի եղբայր Ընդրէսը մեկն էր այն երկուսից, որոնց լսեցին Յովհաննեսի ասածը և գնացին Յիսուսի հետևից։

Յովհ Ա 44

<sup>44</sup>Եվ Փիլիպոսը Բեթսայիդայից էր, Ընդրէսի և Պետրոսի քաղաքից։

Յովհ Զ 8

<sup>8</sup>Նրա աշակերտներից մեկը՝ Ընդրէս, Սիմոն Պետրոսի եղբայրը, ասաց նրան. <sup>9</sup>«Այստեղ մի պատանի կա, որ իհնգ գարեղիաց ունի և երկու ծուկ. բայց այդքանն ի՞նչ է այսչափ մարդկանց համար»։

Յովհ ԺԲ 22

<sup>22</sup>Փիլիպոսը եկավ և Ընդրէսին ասաց. Ընդրէսը և Փիլիպոսն էլ Յիսուսին ասացին։ <sup>23</sup>Եվ Յիսուս նրանց պատասխանեց ու ասաց. «Յասավ ժամը, որ փառավորվի մարդու Որդին։

**Անդրեաս** (Հուն. «առնական»): է հաստատել եղբոր՝ Պետրոսի մոտ, Կաչիսուսի տասներկու առաքյալներից, Սիմոն Պետրոսի եղբայրը, Հովհաննի որդին, ծնված Գալիլիայի Բեթսահիդա յամբ։ Մարկոսի ավետարանի համաձայն քաղաքում: Հետագայում բնակություն (Մարկ Ա 29)` նրանց տունը գտնվել է

ժողովարանից ոչ հեռու: «Պետրոսի տան» ութանկյուն սրբարանը երկար ժամանակ մատնանշվում էր Կափառնայումի մուտքի դիմաց: Վերջին ժամանակներում կատարված պեղումները հավաստում են, որ վերոհիշյալ տեղանքը Հիսուսի ժամանակներում բնակեցված է եղել:

Անդրեասի անունը հանդիպում է տասներկու առաքյալների հիշատակումներում: Նա Պետրոս, Հակոբոս և Հովհաննես առաքյալների հետ էր, երբ Զիթենյաց լեռան վրա Հիսուս կանխագուշակում էր տաճարի կործանումը: Անդրեասին հանդիպում ենք նաև Հոգեգալուստից առաջ Վերնատանը հավաքված առաքյալների մեջ (Հմմտ. Գործ Ա. 13):

Հովհաննու Ավետարանն Անդրեասին ներկայացնում է իբրև Մեսիայի մասին առաջին ավետարերը: Երբ Հովհաննես Մկրտիչը Հորդանան գետի մոտ քարոզում էր Բարի լուրը, Անդրեասը և մեկ այլ աշակերտ՝ հավանաբար Փիլիպոսը, թերևս նրա հետևորդներն էին: Հովհաննես Մկրտչի քարոզչության շնորհիվ էր, որ նրա աշակերտներն առաջինը հետևեցին Հիսուսին: Անդրեասն է, որ իր եղբօրը՝ Սիմոն Պետրոսին, տանում է Հիսուսի մոտ:

Այս Ավետարանում Անդրեասին դարձյալ հանդիպում ենք հինգ հազարին կերակրելու դրվագում: Նրա ընկերը՝ Փիլիպոսը, որ ըստ երկույթին խմբի մատակարարն էր, հայտնում է, որ երկու հարյուր դաշեկանով գնաված հացը չի բավականացնի ամբոխին, եթե նույնիսկ ամեն մեկն ընդամենը մի կտոր վերցնի: Անդրեասը երկրնարանքի մեջ է. մի պատանի հինգ դարեհաց ունի և երկու փոքրիկ ձուկ, բայց «այդքանն ի՞նչ է այսչափ մարդկանց համար»: Այնուամենայնիվ նա պատանուն տանում է Հիսուսի մոտ: Հիսուս վերց-

նում է պատանու ունեցածը, գոհություն է հայտնում Աստծուն և տալիս աշակերտներին, որպեսզի բաժանեն ներկաներին: Ամենքն էլ ճաշակում են ու հագենում:

Հովհաննու Ավետարանում Անդրեասը վերջին անգամ հիշատակվում է երուսաղեմում տոնվող Պասեփից առաջ՝ Ծաղկազարդի հաղթական մուտքից հետո: Մի քանի հույներ մոտենում են Փիլիպոսին՝ աղաչելով. «Տե՛ր, ուզում ենք Հիսուսին տեսնել»: Փիլիպոսն այդ մասին հայտնում է ընկերոջը՝ Անդրեասին, հետո երկուսով դիմում են Հիսուսին: Այսպիսով, մենք տեսնում ենք Անդրեասին՝ հնազանդ վկային և առաքյալին, որ Հիսուսի մոտ է տանում նախ իր եղբօրը՝ Պետրոսին, ապա այն պատանուն, որ գարեհաց ու ձուկ ուներ իր մոտ, և վերջապես հեթանոս պատգամավորներին:

Գործը Անդրեասի անվագեր գրքում (Գ. դ.) պատմվում է Անդրեասի առաքելության, հալածանքների, բանտարկության և Աքայիայի հյուսիսարևմտյան ծովափին ընկած Պատրաս քաղաքում նրա մահապատժի (60 թ.) մասին: Նա երկու օր կենդանի է մնացել խաչի վրա՝ քարոզելով և քաջալերելով իր շուրջը գտնվողներին: Եվսեբիոս Կեսարացին (Դ. դ.) նշում է, որ Անդրեասն Ավետարանը քարոզել է խավարամիտ ու անգութ սկյութների մեջ:

Մուրատորիի կանոնը (Բ. դ.)՝ Նոր Կտակարանի գրքերի ամենավաղ ցուցակը, Անդրեասին անորոշ կերպով կապում է Դ Ավետարանի գրառման հետ:

ԺԴ դարում ծնունդ է առել «X»-աձեւ խաչի վրա նրա խաչելության մասին ավանդությունը, հավանաբար այն հիմքի վրա, որ «X»-ը հունարեն «Ք»-ն է՝ առաջին տառը «Քրիստոսի», որ նշանակում է «Օծյալ»:

## ԱՆՆԱ մարգարեուիի

<sup>36</sup>Եւ անդ էր Աննա մարգարէ դուստր Փանուելի յազգէ Ասերայ. սա ինքն անցեալ էր զաւուրբթ բազմօք՝ կեցեալ ընդ առն անս եւթն ի կուսութենէ իւրնէ:

Դուկ Բ 36

<sup>36</sup>Եվ այնտեղ կար նի մարգարեուիի Աննա անունով՝ Փանվելի դուստրը, Ասերի ազգատոհմից. սա տարիքով շատ առաջացած էր և ամուսնու հետ միայն յոթ տարի էր ապրել՝ սկսած իր կուսությունից:

**Աննա (եբր. «ողորմություն»):** Ծեր մարգարեուհի, Փանուելի դուստրը, Ասերի ցեղից, որ տարեց Սիմեոն քահանայի հետ սպասավորում էր Երուսաղեմի տաճարում, երբ Հովսեփին ու Մարիամը մանուկ Հիսուսին ծնունդից 40 օր հետո տանում են Տաճար՝ Տիրոջը ներկայացնելու: Հուկաս ավետարանչի վկայությամբ՝ Աննան ամուսնու հետ ապրել է յոթ տարի, իսկ այրիանալուց

հետո մնացել է Տաճարում և ծոմապահությամբ ու աղոթքով գիշեր-ցերեկ ծառայել Աստծուն: Հավանաբար Մարիամ Աստվածածինը Տաճարում եղել է նրա սանուհին: Աննան գոհություն է հայտնում Աստծուն՝ մանուկ Հիսուսին տեսնելու բախտին արժանանալու համար, և բացահայտորեն հոչակում է, որ նա է Աստծո խոստացած Մեսիան:

## ԱՆԱ քահանայապետ

<sup>2</sup>Եւ ի քահանայապետութեան Ընայի եւ Կայիափայ, եղև բան Աստուծոյ ի վերայ Յովիաննու որդուոյ Զաքրիայ յանապատի անդ:

<sup>12</sup>Իսկ գունդն եւ հազարապետն եւ սպասաւորը Յրէցն կայան զՅիսուս եւ կապեցին. <sup>13</sup>Եւ ածին զնանախ առ Ընա, որ էր աներ Կայիափայի, որ քահանայապետն էր տարւոյն այնորիկ:

<sup>24</sup>Եւ առաքեաց զնա Ընա կապեալ առ Կայիափա քահանայապետ:

Դուկ Գ 2

<sup>2</sup>Ա Ընայի ու Կայիափայի քահանայապետութիւն օրով, Աստծո խոսքը լսելի եղավ Զաքրիայի որդի Յովիաննեսին անապատում:

Յովի ԺԸ 13

<sup>12</sup>Իսկ գունդը, հազարապետը և հրեաների պահակները բռնեցին Յիսուսին և կապեցին: <sup>13</sup>Եվ նախ նրան տարան Ընայի մոտ, որը Կայիափայի՝ այդ տարվա քահանայապետի ամերն էր:

Յովի ԺԸ 24

<sup>24</sup>Եվ Ընան նրան կապած ուղարկեց Կայիափա քահանայապետի մոտ:

**Աննա (եբր. «ողորմություն»):** Քահանայապետ, ով իր ծառայությունն սկսել է թթ. Ք.Հ.՝ 36 տարեկան հասակում: Ինը տարի անց Հրեաստանի հռոմեացի կառավարիչ Վալերիոս Գրատոսն Աննային հեռացնում է ծառայությունից, և նրա փոխարեն նշանակում փեսային՝ Կայիափային: Աննան շարունակում է կրել «քահանայապետ» տիտղոսը՝ հավանաբար հետևյալ պատճառներով. ա) չնայած հռոմեացիները կարող էին քահանայապետ փոխել, այդուհանդերձ հրեաների ավանդության համաձայն այդ պաշտոնը ցմահ էր, և գործող քահանայապետը պաշտոնաթող քահանայապետից տարբերվում էր միայն Քավության օրը զոհ մատուցելու և տասանորդ հավաքելու հանգամանքով: բ) Հովսեփոս Փլավիոսը (Ա.դ.) և Գործք Առաքելոցի հեղինակը երկու քահանայապետների պարագայում էլ օգտագործում են միենույն «քահանայապետ» բառը: գ) Աննան մեծ ազդեցություն ուներ իրեն հաջորդած քա-

հանայապետների վրա, քանի որ նրանք որդիներն ու փեսան էին հաջորդել իրեն: Այս ընտանիքը, ըստ էության, ազգի քաղաքական ու կրոնական պարագլուխն էր դարձել:

Ղուկաս ավետարանիչը նշում է, որ Հովհաննես Մկրտչի քարոզչությունն սկսվել է «Աննայի և Կայիափայի քահանայապետության օրոք»: Իսկ Հովհաննես ավետարանիչը պատմում է, թե ինչպես են ձերբակալել Հիսուսին և տարել Աննայի մոտ: Այստեղ էր, որ Զերեղեսոսի որդի Հովհաննեսին հաջորդվում է ներս մտցնել Պետրոսին, որտեղ էլ վերջինս երեք անգամ ուրանում է Հիսուսին: Այստեղ էր, որ Հիսուս իր աշակերտների և վարդապետության մասին քահանայապետի հարցին պատասխանում է. «Ինձ ինչո՞ւ ես հարցուփորձ անում, հարցուփորձ արա նրանց, ովքեր լսել են, թե ես նրանց հետ ինչ եմ խոսել. ահա՛, նրանք գիտեն, թե ինչ եմ ասել»՝ ստանալով ապտակ պահակներից մեկի կողմից:

Ղուկասն Աննային դարձյալ հիշատակում է Երուսաղեմի «իշխանավոր-ների» թվում, ովքեր հավաքվել էին գերագույն առյանում՝ Սինեդրիոնում, որպեսզի դատեին Պետրոս և Հովհաննես առաքյալներին՝ Տաճարի Գեղեցիկ դռան մոտ ի ծնե մի կաղի բժշկելու համար։ Զնայած Նոր Կտակարանում

Աննայի մասին հետագա հիշատակությունն չկա, բայց հայտնի է, որ, մեծահարուստ լինելով, նա գումար է փոխ տվել հռոմեացիներին և նրանց ստիպել իր կամքով շարժվել։

Աննայի տան շինության տեղում այժմ Ժեղարի հայկական եկեղեցի է։

## ԱՐՔԵՂԱՅՈՍ

<sup>22</sup>Եւ իբրեւ լուաւ եթէ Արքեղայոս թագաւորեաց Յրեաստանի փոխանակ Յերովդի հօրն իւրոյ, երկեաւ երթալ անդր. եւ հրաման առեալ ի տեսլեան՝ գնաց ի կողմանս Գալիլեացւոց:

Մատթ Բ 22

<sup>22</sup>Իսկ երբ լսեց, թե Արքեղայոսը թագավորել է Յրեաստանի վրա իր հոր՝ Յերովդեսի փոխարեն, վախեցավ այնտեղ գնալ. և երազի մեջ հրաման առնելով՝ գնաց Գալիլեայի կողմերը

**Ներովդես Արքեղայոս (Նրա օրոք հատած դրամների վրա՝ «Հերովդես ժողովրդապետ»):** Հրեաստանի, Սամարիայի և Եղոմի երրորդապետ (ՔԱ 4-ՔՀ 6 թթ.): Հերովդես Մեծի ավագ որդին, ով հիշատակվում է Մատթեոսի Ավետարանում՝ Հիսուսի ծննդյան պատմության մեջ, որպես Եգիպտոսից Մարիամի և Հովսեփի վերադարձի ժամանակների Հրեաստանի թագավոր: Արքեղայոսը թերևս ժառանգել էր հոր ամենավատ գծերը: Նա գահակալել է

տասը տարի՝ առանց արքայական տիտղատած դրամների վրա՝ «Հերովդես ժողովրդապետ»: Հրեաստանի կողմից անգութ կառավարման մեղադրանքով ետ է կանչել Հոռոմ, 36 թ. աքսորվել է Վիեննա, որտեղ էլ տասը տարի անց մահացել է: Նրան փոխարինել է Հոռոմեացի մի կուսակալ: Կուսակալի ծառայությունն Օգոստոսի օրոք երեք տարով էր, իսկ Տիբերիոսի օրոք՝ բավական երկար (Պիղատոս Պոնտացին այդ պաշտոնը վարել է տասը տարի):

## ԲԱՐԱՔԲԱ

<sup>16</sup>Ունեին յայնժամ կապեալ մի նշանաւոր, որուն անուն էր Յեսու Բարաքը:

<sup>17</sup>Իբրեւ ժողովեցան, ասէ ցնոսա Պիղատոս. Զո՞ կամիք յերկուց աստի զի արձակեցից ձեզ, զՅեսու Բարաքը՝ եթէ զՅիսուս զանուանեալն Քրիստոս:

<sup>20</sup>Իսկ քահանայապետքն եւ ծերք հաւանեցուցին զժողովուրդն, զի խնդրեսցեն չԲարաքըայն, եւ զՅիսուս կորուսցեն:

<sup>21</sup>Պատասխանի ետ դատաւորն եւ ասէ ցնոսա. Զո՞ կամիք զի արձակեցից ձեզ յերկուց աստի: <sup>22</sup>Եւ նոքա ասեն. չԲարաքըա:

<sup>26</sup>Յայնժամ արձակեաց նոցա չԲարաքըայն, եւ զՅիսուս զան հարեալ՝ ետ ի ձեռս զի խաչեսցի:

<sup>7</sup>Եւ էր որում անուն էր Բարաքը՝ կապեալ ընդ խռովիչսն, որոց ի խռովելն այր մի սպանեալ էր:

<sup>8</sup>Ի ձայն բարձր սկսաւ աղաղակել ամբոխն եւ խնդրել որպէս սովոր էր, զի արձակեսցէ նոցա չԲարաքըայն:

<sup>15</sup>Իսկ Պիղատոս իբրեւ զմիտս կամեցաւ հաճել զամբոխին, արձակեաց նոցա չԲարաքըայն

<sup>18</sup>Եւ նոքա աղաղակեին ամենայն բազմութեամբն եւ ասէին. Բարձ զդա եւ արձակեա մեզ չԲարաքըա

<sup>25</sup>Արձակեաց նոցա չԲարաքըայն՝ զոր վասն խռովութեան եւ սպանու-

Մատք Իւ 16

<sup>16</sup>Այն ժամանակ ունեին մի նշանավոր բանտարկյալ, որի անունը Յեսու Բարաքը էր:

Մատք Իւ 17

<sup>17</sup>Երբ հավաքվեցին, Պիղատոսը նրանց ասաց. «Այս երկուսից որի՞ն էք ուզում, որ ձեզ համար արձակեն. Յեսու Բարաքըայն», թէ՞ Յիսուսին Քրիստոս կոչվածին».

Մատք Իւ 20

<sup>20</sup>Իսկ քահանայապետներն ու ծերք համոզեցին ժողովորդին, որ Բարաքըայն ուզեն և Յիսուսին կորստյան մատնեն:

Մատք Իւ 21

<sup>21</sup>Կուսակալը պատասխան տվեց ու ասաց նրանց. «Այս երկուսից որի՞ն էք ուզում, որ ձեզ համար արձակեն»: <sup>22</sup>Եվ նրանք ասացին՝ Բարաքըայն:

Մատք Իւ 26

<sup>26</sup>Այն ժամանակ Պիղատոսը նրանց համար արձակեց Բարաքըայն և Յիսուսին զանակոտել տալով տվեց նրանց ձեռքը, որ խաչվի:

Մարկ ԺԵ 7

<sup>7</sup>Եվ Բարաքըա անունով մեկը կար բանտարկված այն խռովարաների հետ, որոնք խռովութիան ժամանակ մի մարդ էին սպանել:

Մարկ ԺԵ 8

<sup>8</sup>Ամբոխն սկսեց բարձր ձայնով աղաղակել և պահանջել, որ, ինչպէս սովորություն էր անել, Բարաքըայն՝ արձակի:

Մարկ ԺԵ 15

<sup>15</sup>Իսկ Պիղատոսը, որովհետև ուզեց ամբոխն գոհացնել, նրանց համար Բարաքըայն արձակեց:

Ղուկ ԻԳ 18

<sup>18</sup>Եվ նրանք ամբողջ բազմությամբ աղաղակում էին և ասում. «Նրան վերացորդ և արձակի՛ր մեզ համար Բարաքըայն»

Ղուկ ԻԳ 25

<sup>25</sup>Սա արձակեց Բարաքըայն, որը խռովութիան և սպանութիան հա-

թեան արկեալ էր ի բանտ, զոր եւ հսնդրէինն իսկ

<sup>40</sup>Աղաղակեցին ամենեքեան եւ Յովի ԺՈ 40 ասէին. Մի՛ զդա, այլ չ՝ արաբաբառ: Եւ էր Բարաբբայն այն աւազակ:

**Բարաբբա** (Եբր. «Հոր որդի»): Հոռոմեական կուսակալի սովորության համաձայն՝ ամեն տարի Պասեքի տոնին, հրեաների սիրտը շահելու համար, ժողովրդի ընտրությամբ մեկ կալանավոր ազատ էր արձակվում: Բարաբբան այն բանտարկյալն էր, ով այդ տոներից մեկի ժամանակ ազատ է արձակվում Հիսուսի փոխարեն:

Չորս Ավետարաններն էլ հիշատակում են Բարաբբային: Պենտեկոստեից շատ չանցած, երրուսաղեմի բնակիչներին ուղղված քարոզում Պետրոսը նրան անվանում է «մարդասպան»: Մարկոսու Մատթեոսը հայտնում են, որ քահանապետներն են ամբոխին ստիպում ոչ թե Հիսուսին, այլ՝ Բարաբբային ազատելու կոչ անել: Հուկասը Բարաբբային ներկայացնում է որպես մի մարդու, «ով քաղաքում պատահած մի խոռվության և սպանության համար բանտարկվել էր»: Հովհաննեսի առավել հանգամանալից և ստույգ պատումի մեջ, որի աղբյուրը թերևս հենց Հիսուսի դատի պաշտոնական գրառումներն են, Պիղատոսը նույնիսկ չի էլ հիշատակում Բարաբբային: Հիսուսին հարցաքննելուց հետո Պիղատոսը գիտակցելով, որ Նրա դեմ մեղադրանքները նենգությունից բխող զրպարտություններ են, և որ իրեն որպես Սինեդրիոնի գործիք են ուզում օգտագործել, փորձում է փախուստի ելք գտնել: Նա կամենում է հետևել ամենամյա սովորությանը՝ բոլորովին մոռանալով Բարաբբայի մասին: Բարաբբային անվանելով «ավագակ»՝ Հովհաննեսը շեշտում է ամբոխի կատարած ընտրության ողբերգությունը:

մար բանտ էր նետված, և որին էլ հենց ուզում էին

<sup>40</sup>Բոլորը աղաղակեցին և ասացին՝ ոչ դրան, այլ՝ Բարաբբային: Եվ այն Բարաբբան ավազակ էր:

**Մատթեոսի Ավետարանի մի շարք վաղ ձեռագրերում** Բարաբբային նախորդում է մեկ այլ անուն: Հավանական է, որ բնագիրն արտագրողը հունարեն «ձեզ համար» («ձեզ համար Բարաբբային արձակեմ») բառերը տառադարձել է որպես Յիսուս կամ Յեսու անվան համառոտագրություն: Սրան անդրադառնում է նաև նշանավոր Որոգինեսը (Գ դար):

Քրիստոնեական ավանդության մեջ Բարաբբայի միջադեպն անքակտելիորեն աղերսվում է Հիսուսի դատի պատմության հետ: Հիսուսի մահվան պատճառը ոչ միայն հրեա քահանայապետներն էին, այլև հրեա ժողովուրդը: Սակայն պետք է ընդունել, որ Հիսուսի փոխարեն Բարաբբային ազատելու ընտրությունը միանգամայն համաշունչ էր ժամանակի քաղաքական մթնոլորտին:

Բարաբբան նախանձահույզ էր, հոռմեական իշխող ուժերին վտարելու գործին նվիրված խմբի անդամ: Իսկ Հիսուսին մենք տեսնում ենք իբրև իր վարդապետության ընթացքում երբեք չընդդիմացող մեկի, ով նույնիսկ իր ձերբակալության ու դատի ժամանակ առանց դիմադրություն ցույց տալու հանձնվում է իշխանավորներին: Անտոնիայի ամրոցի շուրջ խմբված ամբոխի մեջ ըստ երկույթին Բարաբբայի կողմնակիցներ են եղել: Ահա թե ինչու ամբոխը չէր դադարեցնում Բարաբբային ազատելու աղմկալի գոչյունները: Հիսուսին ազատելու Պիղատոսի փորձը սոսկ ինքնախարենություն էր, որովհետև ամբոխը պահանջում էր ազատել իր իսկական ապստամբին:

## ԲԱՐԹՈՒՂԻՄԵՈՍ առաջալ

<sup>2</sup>Եւ առաքելոցն երկոտասամից էին անուանք այսորիկ. առաջին Սիմովն, անուանեալն Պետրոս, եւ Անդրեաս եղբայր նորա, <sup>3</sup>Յակովոս Զեբեդեայ եւ Յովհաննես եղբայր նորա, Փիլիպպոս եւ **Բարձող ոմէսս**, Թովմաս եւ Սատթեոս մաքսաւոր, Յակովոս Ալփեայ եւ Ղերեոս որ անուանեցաւն Թադէոս, <sup>4</sup>Սիմովն Կանանացի եւ Յուդա Խսկարիովտացի, որ եւ մատնեացն զնա:

<sup>16</sup>Եւ եղ անուն Սիմովնի՝ Պետրոս, <sup>17</sup>եւ Յակովոս Զեբեդեայ եւ Յովհաննու եղբօրն Յակովբայ՝ եղ նոցա անուանս Բամերեգէս, որ է Որդիք որոտման. <sup>18</sup>Եւ զԱնդրեաս, եւ զՓիլիպպոս, եւ **Հարցող ոմէսս**, եւ զՄատթեոս զմաքսաւորն, եւ զԹովմաս, եւ զՅակովոս Ալփեայ, եւ զԹադէոս, եւ զՍիմովն Կանանացի, <sup>19</sup>եւ զՅուդա Խսկարիովտացի, որ եւ մատնեացն զնա:

<sup>14</sup>ԶՍիմովն զոր եւ Պետրոսն անուանեաց, եւ զԱնդրեաս զեղբայր նորին, եւ զՅակովոս, եւ զՅովհաննես, եւ զՓիլիպպոս, եւ **Բարձող ոմէսս**, <sup>15</sup>եւ զՄատթեոս, եւ զԹովմաս, եւ զՅակովոս Ալփեայ, եւ զՍիմովն զկոչեցեալն Նախանձայոյգ, <sup>16</sup>եւ զՅուդա Յակովբայ, եւ զՅուդա Խսկարիովտացի, որ եղեւ իսկ մատնիչ:

**Քարթուղիմեոս (արամ. «Թողոմեի որդի»):** Քրիստոսի տասներկու առաքյալներից: Այս անունը հիշատակվում է Համատես Ավետարաններում՝ տասներկու առաքյալների ցանկում, Փիլիպպոսի հետ: Գործք Առաքելոցում նրա անվանը հանդիպում ենք Հուդային փոխարինող առաքյալի՝ ընտրության ժամանակ (Հմմտ. Գործք Ա. 13): Քանի

Մատթ Ժ 3

<sup>2</sup>Եվ տասներկու առաքյալների անունները սրանք էին. առաջին՝ Սիմոն Պետրոս կոչվածը, և նրա եղբայրը Անդրեաս, <sup>3</sup>Զեբեդեոսի որդի Յակովոս և նրա եղբայրը Յովհաննես, Փիլիպպոս և **Բարձող ոմէսս**, Թովմաս և Սատթեոս մաքսավոր, Ալփեոսի որդի Յակովոս և Ղերեոս, որ Թադէոս կոչվեց, <sup>4</sup>Սիմոն Կանանացի և Յուդա Խսկարիովտացի, որ և մատնեց նրան:

Մարկ Գ 18

<sup>16</sup>Եվ Սիմոնի անունը Պետրոս դրեց <sup>17</sup>և Զեբեդեոսի որդիու՝ Յակովոսի ու նրա եղբօր՝ Յովհաննեսի անունները դրեց Բաներեգես, որ նշանակում է Որտման որդիներ: <sup>18</sup>Սակայն Անդրեասին և Փիլիպպոսին և **Բարձող ոմէսսին** և մաքսավոր Մատթեոսին և Թովմասին և Ալփեոսի որդի Յակովոսին և Թադէոսին և Սիմոն Կանանացուն <sup>19</sup>և Յուդա Խսկարիովտացուն, որը և նրան մատնեց:

Ղուկ Ջ 14

<sup>14</sup>Սիմոնին, որին էլ Պետրոս կոչեց, և Անդրեասին նրա եղբօրը, Յակովոսին, Յովհաննեսին, <sup>15</sup>Փիլիպպոսին, **Բարձող ոմէսսին**, Մատթեոսին, Թովմասին, Ալփեոսի որդի Յակովոսին, Սիմոնին՝ Նախանձահոյզ կոչվածին, <sup>16</sup>Յակորի որդի Յուդային և Խսկարիովտացի Յուդային, որը և մատնիչ եղավ:

որ Բարթուղիմեոսն ավելի շուտ ազգանուն է, քան անուն, ապա ենթադրելի է, որ նա անձնանուն էլ է ունեցել: Հավանաբար Բարթուղիմեոսը նույն Նաթանայելն է, ում Հովհաննու Ավետարանը Փիլիպպոսի հետ հիշատակում է առաջին և վերջին գլուխներում: Հիսուս Նաթանայելին հանդիպել է Գալիլիայի Կանա քաղաքում: Վերջինս մի բարեպաշտ

հրեա էր, ով անհամբերությամբ սպասում էր Մեսիայի գալուստին: Սրանով է թերևս պայմանավորված Նաթանայելին տրված «Նախաղավան» բնորոշումը, քանի որ նա առաջինը Քրիստոսին խոստովանեց իբրև Աստծո Որդու և Իսրայելի Թագավորի: Նաթանայելը վերջին անգամ Հիշատակվում է Հովհաննու Ավետարանի վերջին դրվագում, որտեղ Հիսուսի վեց այլ աշակերտների հետ ձուկ էր որսում Գալիլիական լճում: Նաթանայելի և Բարթոլդիմեոսի նույնացումը Թագարից մինչև մեր օրերը մեծ ընդունելություն է դաել Աստվածաշնչի ուսումնասիրությամբ զբաղվողների կողմից:

Հստ Եփսերիոս Կեսարացու (Դ դ.)՝ Հնդկաստանում ճանապարհորդող մի ալեքսանդրիացի Հայտնաբերել է եքրայեցերեն «Մատթեոսի Ավետարան», որտեղ գրված է եղել՝ «Բարթոլդիմեոսը՝ առաքյալներից մեկը»: Ավանդության համաձայն՝ Բարթոլդիմեոս առաքյալն էր գործունելության մասն իրականացրել է Պարթևական

աշխարհի եղեմ գավառում, ընդհուպ մինչև Հնդկաստան: Պարթևական տերության հյուսիսային մասով նա անցնում է Հայաստան՝ «Թագեի վիճակ»: Բարթոլդիմեոսը Հայաստան մուտք է գործում Սյունյաց նահանգի Որդվատ գյուղով և առաջանում մինչև Արտաշատ: Այստեղ հանդիպում է Թագեոս առաքյալին և մի գիշեր մնալուց հետո շարունակում իր առաքելական քարոզչությունը մինչև Վասպուրական նահանգի Հեր և Զարևանդ գավառները: Այնուհետև մտնում է Անձևացյաց գավառ՝ Աղքակ, որտեղ դարձի է բերում Սանատրուկ թագավորի քրոջը՝ Ոգուհուն: Այս երկուսն էլ թագավորի առջև հարցաքննվելուց հետո բրածեծ նահատակվում են: Մեկ այլ ավանդության համաձայն Բարթոլդիմեոսը մաշկագերծ է արվել Աղքակ քաղաքում: Արվեստի մեջ նրան հաճախ պատկերում են իր սեփական մաշկն ուսին, ձեռքին՝ դաշույն:

**Տե՛ս Նաև ՆԱԹԱԼՆԱՅԵԼ**

## ԲԱՐՏԻՄԵՈՍ

<sup>46</sup>Եւ գան յԵրիքով. Եւ ընդ Ելանելն նորա յԵրիքովէ աշակերտաւքն՝ Եւ բազում ժողովրդով, որդի Տհմէի Բարդիմէնս կոյր նատեր մուրացիկ:

Մարկ Ժ 46

<sup>46</sup>Եվ Եկան Երիքով: Եվ մինչ նա Երիքովից դուրս էր գալիս իր աշակերտներով և բազում ժողովրդով, Տհմէի որդին՝ կոյր Բարդիմէնս, նատել մուրում էր ճանապարհի Եզրին:

**Բարդիմէնս** (Եբր. «Տիմեի որդի»): Երիքովում բնակվող կույր մուրացկան, որ բժշկվում է Հիսուսի կողմից՝ Երուսաղեմ կատարած նրա վերջին այցելության ժամանակ: Ճամփեզրին մուրող այս կույրի պատմությունը հիշատակվում է համատես Ավետարաններում: Մատթեոսի Ավետարանի այդ դրվագում Հիսուս երկու կույրերի է բժշկում: Միայն Մարկոս ավետարանին է նշում մուրացկանի անունն ու ծագումը: Եթե ըստ Մարկոսի և Մատթեոսի Ավետարանների (հմմտ Մարկ Ժ 46-52, Մատթ Ի 29-34)՝ Հիսուս կույրին բժշկել է Երիքովից դուրս գալու ժամանակ, ապա ըստ Ղուկասի Ավետարանի (հմմտ. Ղուկ ԺԸ 35-43)՝ բժշկությունը կատարվել է, երբ նա մոտենում էր Երիքովին: Այս պատմությունը խիստ կարևորվում է այն առումով, որ բացի Պետրոսից և «չար ոգիներ» ունեցող որոշ մարդկանցից, որոնց բժշկել էր Հիսուս, Մարկոսի Ավետարանում հիշատակված կույր Բարտիմէնսն առաջին անձնավորությունն է, որ Հիսուսին ճանաչում է որպես Մեսիայի: Ճանապարհի ճամատած, գուցել մուրալիս, նա հան-

կարծ լսում է մոտեցող ամբոխի ձայնը: Լսելով, որ «անցնողը Հիսուս Նազովրեցին է», նա աղաղակում է ոչ թե «Հիսուս Նազովրեցի», այլ՝ «Հիսուս, Դավթի՛ Որդի, ողորմի՛ր ինձ», որը Մեսիային՝ Փրկչին, վերապահված տիտղոսն է: Այստեղ երեք Ավետարաններն էլ հայտնում են, որ ամբոխը նրան սաստում է լոել, բայց նա ավելի ու ավելի է աղաղակում: «Դավթի՛ Որդի, ողորմի՛ր ինձ»: Հիսուս կանգ է առնում և կանչում կույրին: Վերջինս դեն է գցում իր զգեստները և ամբոխի ուղեկցությամբ մոտենում Հիսուսին: Հիսուս նրան հարցնում է. «Ի՞նչ ես ուզում, որ քեզ անեմ»: Բարտիմէնոսը խնդրում է. «Վարդապե՛տ, աչքերս թող բացվեն»: Հիսուս անմիջապես հոչակում է, որ նրա տեսողության վերականգնման պատճառը նրա հավատն է. «Գնա՛, քո հավատը քեզ փրկեց»: Բարտիմէնոսի աչքերն անմիջապես բացվում են, և նա ամբոխի հետ գնում է Հիսուսի ետևից:

Բարտիմէնոսը հրաշագործությամբ բժշկված այն սակավաթիվ անձանցից է, որոնք անվանապես են Հիշատակվում համատես Ավետարաններում:

## ԳԱԲՐԻԵԼ հրեշտակապետ

<sup>19</sup>Պատասխանի եւ հրեշտակն եւ ասէ ցնա. Ես եմ Գ-աբրիել որ կամ առաջի Աստուծոյ, եւ առաքեցայ խօսել ընդ քեզ եւ աւետարանել քեզ զայդ:

<sup>26</sup>Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գ-աբրիել հրեշտակ յԱստուծոյ ի քաղաք մի Գալիլեացւոց, որում անուն էր Նազարեթ, <sup>27</sup>առ կոյս խօսեցեալ առն, որում անուն էր Յովսէփի, ի տանէ Դաւթի. Եւ անուն կուսին Մարիամ:

**Գաբրիել** (եբր. «Աստծո մարդ» կամ «Աստծո զորություն»): Ցոթ հրեշտակապետներից մեկը, աստվածային միսիթարության պատգամաբերը: Հրեական կրոնական պատկերացումների մեջ Գաբրիելը երկրորդ հրեշտակապետն է՝ Միքայելից հետո: Միայն ենոքի գրքում է նրան վերագրվում «Հրեշտակապետ» կոչումը (գլուխ թ, ի, ի): Գաբրիելը երկիցս հայտնվում է Դանիելի գրքում՝ տեսիլքներ մեկնելու համար (Դան Լ 17, Թ 21), իսկ Ղուկասի Ավետարանում՝ Հովհաննես Մկրտչի և Հիսուսի հրաշափառ ծնունդներն ավետելու (Ղուկ Ա 19, 26):

Ք.Ա. Բ գարում հրեական գրականության մեջ Գաբրիելը նույնացվում էր պահապան հրեշտակի հետ, ով մշտապես կանգնած էր Աստծո գահի առջև, փառաբանում էր Նրան և բարեխոսում մարդկանց համար (Տոբ ԺԲ 15,

Ղուկ Ա 19

<sup>19</sup>Հրեշտակը նրան պատասխանեց և ասաց. «Ես Գ-աբրիելն եմ, որ կանգնում եմ Աստծո առաջ. Ես ուղարկվեցի խոսելու քեզ հետ և այդ բանը քեզ ավետելու:

Ղուկ Ա 26

<sup>26</sup>Վեցերորդ ամսին Գ-աբրիել հրեշտակը Աստծո կողմից ուղարկվեց Գալիլեայի մի քաղաքը, որի անունը Նազարեթ էր, <sup>27</sup>մի կույսի մոտ, որ նշանված էր Յովսէփ անունով մի մարդու հետ՝ Դավթի տնից: Եվ այդ կույսի անունը Մարիամ էր:

Գիրք Հոբելենից Բ 2, Ուխտ Ղեիի Գ 5, 7, Ղուկ Ա 19, Հայտն Ը 2): Նա Միքայելի, Սարիելի կամ Ուրիելի և Ռաֆայելի հետ կազմում է Հրեշտակապետների քառյակը (Ա ենոք Թ 1, Խ 6, ԾԴ 6) կամ էլ Ուրիելի, Ռաֆայելի, Ռագուելի, Միքայելի, Սարիելի կամ Սարակիելի և Ռեմիելի հետ ներկայացնում է մեծ հրեշտակների յոթնյակը (Ա ենոք ի):

Գաբրիելը հատուկ պատասխանառվություն ունի գրախտի պահպանության համար (Ա ենոք ի 7): Նա է վերացրել նախաջրհեղեղյան հսկաներին (Ա ենոք Ժ 9): Նա մյուս հրեշտակապետների հետ պիտի մասնակցի Վերջին Դատաստանին (Ա ենոք ԾԴ 6, Ղ 21, Ա Թես Դ 16): Թարգումները և ուղբեինիստական գրականությունը Հին Կտակարանում հանդիպող անանուն հրեշտակներին հաճախ են նույնացնում Գաբրիելի կամ Միքայելի հետ:

## ԵՂԻՍԱԲԵԹ

Եւ եղեւ յաւուրս Յերովդի արքայի Յրեաստանի, քահանայ ոմն անուն Զաքարիա ի դասակարգէ Արիայ, եւ կին նորա ի դստերաց Ահարովնի, եւ անուն նորա **Եղիսաբեթ**:

Եւ ոչ գոյր նոցա որդեակ, քանզի **Եղիսաբեթ** ամուլ էր, եւ երկոքեան անցեալ էին զաւուրբք իւրեանց:

<sup>13</sup>Ասէ ցնա հրեշտակն Տեառն. Մի՛ երկնչիր, Զաքարիա, զի լսելի եղեն աղօքք քո, եւ կին քո **Եղիսաբեթ** ծնցի քեզ որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յովիաննէս:

<sup>24</sup>Եւ յետ աւուրցն այնոցիկ յղացաւ **Եղիսաբեթ**, կին նորա, եւ քաքուցանէր զանձն ամիսս հինգ, եւ ասէր. <sup>25</sup>Զի՞նչ գործ գործեաց ընդ իս Տէր յաւուրս յորս հայեցաւ յիս բառնալ զնախատինս իմ ի մարդկանէ:

<sup>36</sup>Եւ ահա **Եղիսաբեթ** ազգական քո, եւ նա յիշ է ի ծերութեան իւրում. եւ այս վեցերորդ ամիս է նորա որ ամուլն կոչեցեալ էր. <sup>37</sup>զի ոչ տկարասցի առ յԱստուծոյ ամենայն բան:

<sup>39</sup>Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ՝ գնաց ի լեռնակողմն փութապէս ի քաղաքն Յուդայ. <sup>40</sup>Եւ ենուտ ի տուն Զաքարիայ եւ ետ ողջոյն **Եղիսաբեթ**:

<sup>41</sup>Եւ եղեւ իբրեւ լոււաւ զողջոյնն Մարիամու **Եղիսաբեթ**, խաղաց մանուկն յորովայնի նորա. եւ լցաւ Եղիսաբեթ Յոգով Սրբով. <sup>42</sup>Եւ ի ձայն բարձր աղաղակեաց եւ ասէ. Օրինեալ ես դու ի կանայս, եւ օրինեալ է պտուղ որովայնի քո:

Ղուկ Ա 5

<sup>5</sup>Յրեաստանի Յերովդես թագավորի օրով, Աբիայի քահանայական ընտանիքից Զաքարիա անունով մի քահանա կար, որի կինը Ահարոնի դստրերից էր. նրա անունը **Եղիսաբեթ** էր:

Ղուկ Ա 7

Նրանք որդի չունեին, որովհետև **Եղիսաբեթ** ամուլ էր, և երկուսն էլ իրենց առաջացած տարիքում էին:

Ղուկ Ա 13

<sup>13</sup>Տիրոց հրեշտակը նրան ասաց. «Մի՛ վախեցիր, Զաքարիա», որովհետև քո աղոքքը լսելի եղավ. քո կինը **Եղիսաբեթ**, մի որդի կծնի քեզ, և նրա անունը Յովիաննէս կղննես:

Ղուկ Ա 24

<sup>24</sup>Այդ օրերից հետո նրա կինը՝ **Եղիսաբեթ**, հոլիացավ: Յինգ ամիս նա թաքցնում էր ինքն իրեն և ասում. <sup>25</sup>«Այս ինչ բան արեց Տէրը ինձ իմ այս օրերին, երբ նայեց ինձ վրա՝ վերացնելով իմ նախատինքը մարդկանց միջից»:

Ղուկ Ա 36

<sup>36</sup>Եվ ահա քո ազգական **Եղիսաբեթ**. նա ևս հոյի է իր ծերութիան մեջ, և այս հղիութիան վեցերորդ ամիսն է նրա, որ ամուլ էր կոչված. <sup>37</sup>Որովհետև Աստծոն համար անկարելի բան չկա»:

Ղուկ Ա 40

<sup>39</sup>Այդ օրերին Մարիամը վեր կացավ և շտապով գնաց Յուդայի լեռնային շրջանի քաղաքներից մեկը, <sup>40</sup>մտավ Զաքարիայի տունը ու **Եղիսաբեթին** ողջուն տվեց:

Ղուկ Ա 41

<sup>41</sup>Եվ երբ **Եղիսաբեթ** Մարիամի ողջունը լսեց, մանուկը խաղաց նրա որովայնում, և Եղիսաբեթը լցվեց Սուրբ Յոգով. <sup>42</sup>և բարձր ձայնով աղաղակեց ու ասաց. «Օրինյալ ես դու կանանց մեջ, և օրինյալ է քո որովայնի պտուղը»:

<sup>57</sup>Եւ Եղիսաբէթի լցան ժամանակը ծննդելոյ, եւ ծնաւ որդի:

Ղուկ Ա 57

<sup>57</sup>Եղիսաբէթի ծննդաբերելու ժամանակը լրացավ, և նա մի որդի ծնեց:

**Եղիսաբէթ (ԵԲԲ. «Աստված է իմ երգումը»):** Հովհաննես Մկրտչի մայրը: Եղիսաբէթը գյուղական մի քահանայի՝ Զաքարիայի կինն էր: Երկուսն էլ քահանայական ցեղից էին, Եղիսաբէթը՝ Ահարոնի, Զաքարիան՝ Աբիայի: Երկուսն էլ բարեպաշտ և Օրենքին հնազանդ անձեր էին: Բայց նրանք երեխա չունեին, որովհետեւ Եղիսաբէթն ամուլ էր, և իրենք էլ արդեն տարեց էին: Տաճարում քահանայական սպասավորություն կատարելիս Զաքարիան մի տեսիլք է ունենում, որի ժամանակ Գաբրիել հրեշտակապետը նրան ավետում է. «Մի՛ վախեցիր, Զաքարիա՛, որովհետեւ քո աղոթքը լսելի եղավ. քո կինը՝ Եղիսաբէթը, մի որդի կծնի քեզ, և նրա անունը Հովհաննես կդնես» (Ղուկ Ա 13):

Տաճարում ծառայություն մատուցելուց հետո Զաքարիան վերադառնում է տուն: Եղիսաբէթը Հղիանում է և հինգ ամիս առանձնության մեջ անցկացնում: Տեսիլք էր հայտնվել նաև Եղիսաբէթի պագականին՝ Նազարեթում բնակվող Մարիամին՝ որդու՝ Հիսուսի ծննդյան

խոստումով: Գաբրիել հրեշտակապետը Մարիամին հայտնել էր Եղիսաբէթի՝ զավակ ունենալու մասին. «Եվ ահա քո ազգական Եղիսաբէթը. նա ևս հղի է իր ծերության մեջ, և այս՝ Հղիության վեցերորդ ամիսն է նրա, որ ամուլ էր կոչված, որովհետեւ Աստծո համար անկարելի բան չկա» (Ղուկ Ա 36-37):

Մարիամն անմիջապես ճանապարհ է ընկնում գեղի «Հուղայի լեռնային շրջանի քաղաքներից մեկը»՝ այցելելու Եղիսաբէթին: Եղիսաբէթը նրան դիմավորում է հետեւյալ խոսքերով. «Օրհնյա՛լ ես դու կանանց մեջ, և օրհնյա՛լ է քո որովհայնի պտուղը: Որտեղի՞ց ինձ այս ուրախությունը, որ իմ Տիրոջ մայրը ինձ մոտ գա, որովհետեւ ահավասիկ, երբ քո ողջունի ձայնը հասավ իմ ականջին, մանուկը ցնծալով խաղաց իմ որովհայնում» (Ղուկ Ա 42-44):

Այստեղ Ղուկասը ներկայացնում է ցնծության այն օրհներգությունը, որ կոչվում է «Մեծացուսցէ» և քրիստոնեական բոլոր եկեղեցիների ժամանակությունների մաս է կազմում:

## ԶԱԿԹԵՈՍ

<sup>2</sup>Եւ ահա այր մի անուն կոչեցեալ **Զակիւն»,** եւ նա էր մաքսապետ եւ ինքն մեծատուն. <sup>3</sup>Եւ խնդրէր տեսանել եթէ ով իցէ Յիսուս, եւ ոչ կարէր ի բազմութենէն, զի կարծ էր հասակաւ:

<sup>5</sup>Իբրեւ եկան ի տեղին, հայեցաւ ի վեր Յիսուս եւ ասէ ցնա. **Զակիւն,** փութա էջ այսի, զի այսօր ի տան քուն արժան է ինձ ագամել:

<sup>6</sup>Եկաց **Զակիւն»** եւ ասէ ցՏէր. Տէր, ահա զկէս ընչից ինոց տաց աղքատաց, եւ եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքիհն:

Ղուկ ԺԹ 2

<sup>2</sup>Եվ ահա մի մարդ, **Զակիւն»** անունով, որ մաքսապետ էր ու մեծահարուստ, <sup>3</sup>ուզուն էր տեսնել, թէ ո՛վ է Յիսուս, բայց բազմութիւն պատճառով չէր կարողանում, որովհետև կարծահասակ էր:

Ղուկ ԺԹ 5

<sup>5</sup>Երբ այդ տեղը եկավ, Յիսուս վեր նայեց և ասաց. «**Զակիւն՝**, շտապիր իջիր այդտեղից, որովհետև այսօր պետք է, որ ես քո տանը գիշերեմ»:

Ղուկ ԺԹ 8

<sup>8</sup>Իսկ **Զակիւն»** եկավ կանգնեց և ասաց Տիրոջը. «Տէ՛ր, ահա իմ ինչքերի կեսը կտամ աղքատներին, և եթե որևէ մեկին զրկել եմ, քառապատիկ կհատուցեմ”:

**Զակրենս (Եբր. և արամ. «մաքուր»):** *Մաքսապետ, շատ հարուստ մեկը, որովհետեւ իրավունք էր ստացել հավաքելու երիքովի հարկերը, իսկ դրանք եկամուտի շահավետ աղբյուր էին: Երբ Հիսուս երիքով է գալիս, Զակրենը կամենում է տեսնել նրան, բայց քանի որ կարճահասակ էր, բարձրանում է ճամփեզրյամի ծառի վրա, որի մոտով անցնելու էր Հիսուս: Համելով այդտեղ՝ Հիսուս նայում է վեր ու ասում. «Զակրեն՝, շտապիր իջի՞ր այդտեղից, որովհետեւ այսօր պետք է, որ ես քո տանը գիշերեմ» (Ղուկ ԺԹ 5): Զակրենս անմիջապես իջնում է ներքեւ և ուրախությամբ ընդունում նրան:*

«Երբ ամենքը այս տեսան, տրտնջում էին և ասում, թե մեղավոր մարդու մոտ

մտավ գիշերելու: Իսկ Զակրենը եկավ կանգնեց և ասաց Տիրոջը. “Տէ՛ր, ահա իմ ինչքերի կեսը կտամ աղքատներին, և եթե որևէ մեկին զրկել եմ, քառապատիկ կհատուցեմ”:

Ղուկասը հստակ ցույց է տալիս, որ Հիսուս, «կորած» ասելով, նկատի ունի մաքսավորներին, ովքեր իրենց ապրելակերպով անխուսափելիորեն «մեղավորներ» էին դառնում: Ի պաշտպանություն Զակրենի՝ Հիսուս նրան անվանում է «Աբրահամի որդի», բարի հրեա՝ չնայած նրա ապրելակերպին:

## ԶԱՔԱՐԻԱՌ Յովիաննես Մկրտչի հայրը

<sup>5</sup>Եւ եղեւ յաւուրս Յերովդի արքայի Յրեաստանի, քահանայ ոմն անուն Զաքարիա ի դասակարգէ Արիայ, եւ կին նորա ի դստերաց Անարովնի, եւ անուն նորա Եղիսաբեթ:

<sup>12</sup>Եւ խռովեցաւ Զաքարիա, իբրեւ ետես, եւ անկաւ ահ ի վերայ նորա:

<sup>13</sup>Ասէ ցմա իրեշտակն Տեառն. Մի երկնչիր, Զաքարիա, զի լսելի եղեն աղօքք քո, եւ կին քո Եղիսաբեթ ծննիք քեզ որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յովիաննես:

<sup>18</sup>Եւ ասէ Զաքարիա ցիրեշտակն. Եւ ի՞ւ գիտացից զայդ. զի ես ծեր եմ, եւ կին իմ անցեալ զաւուրքք իւրովք:

<sup>21</sup>Եւ ժողովուրդն ակն ունէր Զաքարիա, եւ զարմանային ընդ յամելն նորա ի տաճարին:

<sup>39</sup>Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ՝ գնաց ի լեռնակողմն փութապես ի քաղաքն Յուդայ. <sup>40</sup>Եւ եմուտ ի տուն Զաքարիա, եւ ետ ողջոյն Եղիսաբեթի:

<sup>59</sup>Եւ եղեւ յաւուրն ութերորդի եկին թլիատել զմանուկն, եւ կոչէին զնայանուն հօր իւրոյ Զաքարիա:

<sup>67</sup>Եւ Զաքարիա հայր նորա լցաւ Յոգանվ Սրբով, մարգարեացաւ եւ ասէ. <sup>68</sup>Օրինեալ Տեր Աստուած Խրայելի, զի յայց ել մեզ, եւ արար փրկութիւն ժողովուրդեան իւրում:

<sup>1</sup>Ի հնգետասամերորդի ամի տէրութեանն Տիբերեայ կայսեր, ի դատաւորութեան Յովիաննես Պիղատոսի

Ղուկ Ա 5

<sup>5</sup>Յրեաստանի Յերովդես թագավորի օրով, Արիայի քահանայական ընտանիքից Զաքարիա անունով մի քահանա կար, որի կինը Ահարոնի դստրերից էր. նրա անունը Եղիսաբեթ էր:

Ղուկ Ա 12

<sup>12</sup>Երբ Զաքարիան նրան տեսավ, խռովվեց, և վախ ընկավ նրա մեջ:

Ղուկ Ա 13

<sup>13</sup>Տիրոջ իրեշտակը նրան ասաց. «Մի՛ վախեցիր, Զաքարիա, որովհետև քո աղոքքը լսելի եղավ. քո կինը՝ Եղիսաբեթը, մի որդի կօնիք քեզ, և նրա անունը Յովիաննես կինես:

Ղուկ Ա 18

<sup>18</sup>Եվ Զաքարիան ասաց իրեշտակին. «Ես ի՞նչ կերպ կիմանամ այդ, քանի որ ես ծեր եմ, և կինս ել առաջացած տարիքում է»:

Ղուկ Ա 21

<sup>21</sup>Իսկ ժողովուրդը սպասում էր Զաքարիային. զարմանում էին, որ տաճարում նա ուշանում է:

Ղուկ Ա 40

<sup>39</sup>Այդ օրերին Մարիամը վեր կացավ և շտապով գնաց Յուդայի լեռնային շրջանի քաղաքներից մեկը, <sup>40</sup>մտավ Զաքարիայի տունը ու Եղիսաբեթին ողջուն տվեց:

Ղուկ Ա 59

<sup>59</sup>Եվ ութերորդ օրը եկան մանկանը թլիատելու. և նրան իր հոր անունով Զաքարիա էին կոչում:

Ղուկ Ա 67

<sup>67</sup>Զաքարիան՝ նրա հայրը, Սուրբ Յոգանվ լցվեց, մարգարեացավ և ասաց. <sup>68</sup>«Օրինյալ է Խրայելի Տեր Աստվածը որ այցի եկավ մեզ և փրկություն բերեց իր ժողովորդին:

Ղուկ Գ 2

<sup>1</sup>Տիբերիոս կայսեր իշխանութեան տասնինգերորդ տարում, երբ Պոնտացի Պիղատոսը կուսա-

Պոնտացւոյ, եւ ի չորրորդպետութեան Գալիլեացւոց Յերովդի, եւ ի Փիլիպոսի եղօր նորա չորրորդպետութեան հտուրացւոց եւ Տրաքոնացւոց աշխարհին, եւ ի չորրորդպետութեան Լիւսանեայ Արիլենացւոյ, <sup>2</sup> եւ ի քահանայապետութեան Աննայի եւ Կայիափայ, եղեւ թան Աստուծոյ ի վերայ Յովիաննու որդույ Զաքարիայ, յանապատի անդ:

**Զաքարիա** (եբր. «Տիրոջ Հիշատակ»): Հովհաննես Մկրտչի Հայրը, Արիայի քահանայական տոհմից: Նա և իր կինը՝ Եղիսաբեթը, որ Ահարոնի սերնդից էր, բարեպաշտ և Օրենքին հնագանդ մարդիկ էին, սակայն զավակ չունեին, և երկուսն էլ արդեն տարեց էին: «Ահարոնի որդիների» քսանչորս ցեղերը երուսաղեմի տաճարում քահանայական ծառայության շարունակական մատուցումն էին ապահովում: Յուրաքանչյուր ցեղում վիճակահանությամբ ընտրվում էր մի քահանա, ով առավոտյան և երեկոյան հոգ էր տանում Սրբություն սրբոցի առջև գտնվող խնկարկության սեղանի կրակարանի մասին: Այն օրը, երբ Զաքարիան ընտրվում է սրբարան մտնելու ու այնտեղ խունկ ծխելու մեծ առանձնաշնորհումն իրականացնելու, և մինչ համայնքը դրսում աղոթում էր, նրան տեսիլք է հայտնվում:

Զաքարիան տեսնում է խնկարկության սեղանի մոտ կանգնած մի Հրեշտակի և լցում վախով: Հրեշտակը նրան ասում է. «Մի՛ վախեցիր, Զաքարիա՛, որովհետև քո աղոթքը լսելի եղավ. քո կինը՝ Եղիսաբեթը, մի որդի կծնի քեզ, և նրա անունը Հովհաննես կղնես: Նա քեզ համար ուրախություն և ցնծություն կղինի, և շատերը կուրախանան իր

կալ էր Յովանանի, և Յերովդեսը՝ չորրորդապետ Գալիլիայի, և նրա եղբայր Փիլիպոսը՝ չորրորդպետ Խուրացիների ու Տրաքոնացիների աշխարհի, Լյուսանհասը՝ չորրորդապետ Արիլենեի, <sup>2</sup> և Աննայի ու Կայիափայի քահանայապետութիւնը օրով, Աստծո խոսքը լսելի եղավ. Զաքարիայի որդի Յովիաննեսին անապատում:

Ճննդով, որոքհետև նա Տիրոջ առաջ մեծ կղինի, գինի և օղի չի խմի և մոր որովայնից սկսած Սուրբ Հոգով կցցվի և իսրայելի որդիներից շատերին կդարձնի դեպի իրենց Տեր Աստվածը: Նա Եղիայի հոգով և զորությամբ պիտի գնա նրա առջևից, որպեսզի Հայրերի սրտերը որդիներին դարձնի ու անհնազանդներին՝ արդարների իմաստությանը՝ Տիրոջ համար պատրաստ մի ժողովուրդ կազմելու»: Զաքարիան պատասխանում է. «Ես ի՞նչ կերպ կիմանամ այդ, քանի որ ես ծեր եմ, և կինս էլ առաջացած տարիքում է»: Հրեշտակն ասում է. «Ես Գաբրիելն եմ, որ կանգնում եմ Աստծո առաջ. Ես ուղարկվեցի խոսելու քեզ հետ և այդ բանը քեզ ավետելու: Եվ ահա՛, դու համր կղինես և չես կարողանա խոսել մինչեւ այն օրը, երբ այդ կատարվի, քանի որ դու չհավատացիր իմ խոսքերին, որ կիրականանան իրենց ժամանակին» (Ղուկ Ա. 18-20): Երբ ի վերջո Զաքարիան դուրս է գալիս սրբարանից, որպեսզի ողջույն փոխանցի մարդկանց, չի կարողանում խոսել և փորձում է նշաններով ինչ-որ բան արտահայտել: Նրանք հասկանում են, որ սրբարանում քահանային տեսիլք է հայտնվել:

Տուն վերադարձից հետո նրա կինը հղիանում է: Բայց Զաքարիան համր է

մնում մինչև որդու թլիատությունն ու անվանակոչումը: Թլիատության արարողության ժամանակ Զաքարիայի ընտանիքի անդամներն ու բարեկամները կամենում են երեխային անվանակոչել «Զաքարիա»՝ հոր անունով, սակայն Եղիսաբեթը պնդում է, որ նրա անունը «Հովհաննես» պետք է լինի: Ի վերջո նրանք դիմում են Զաքարիային՝ երեխայի հորը, ով տախտակի վրա գրում է. «Դրա անունը Հովհաննես է», ինչ-պես որ Գաբրիել հրեշտակապետն էր կարգադրել նրան: Հենց այդ պահին էլ վերականգնվում է նրա խոսելու ընդունակությունը: Ղուկասը գրի է առել այն մարգարեական խոսքերը, որոնցով Զաքարիան փառաբանել է Աստծուն: Այդ օրհներգը քրիստոնեական եկեղեցում մատուցվող ժամասացության մասն է դարձել (Հմմտ.՝ Ղուկ Ա 68-79): Հետագա մի ավանդության համաձայն՝ Հերովդեսի հրամանով Զաքարիային սպանել են Տաճարում:

## ԹԱՂԵՌՍ առաջալ

<sup>2</sup>Եւ առաքելոցն երկոտասանից՝ էին անուանք այսոքիկ: Առաջին, Սիմովն՝ անուանեալն Պետրոս, եւ Անդրեաս եղբայր նորա: <sup>3</sup>Յակովոս Զեբեդեայ, եւ Յովհաննես եղբայր նորա. Փիլիպպոս, եւ Բարթողովմէնոս, Թովմաս, եւ Մատթեոս մաքսաւոր. Յակովոս Ալփեայ, եւ Զաքեոս՝ որ անուանեցաւն **Թաղեռն**: <sup>4</sup>Սիմովն կանանացի, եւ Յուդա սկարիովտացի՝ որ եւ մատնեացն զնա:

<sup>16</sup>Եւ եղ անուն Սիմովնի՝ Պետրոս. <sup>17</sup>Եւ Յակովոս Զեբեդեայ՝ եւ Յովհաննու եղբաւրն Յակովայ՝ եղ նոցա անուանն Բաներեգէս, որ է՝ որդիք որոտման, <sup>18</sup>Եւ զԱնդրեաս, եւ զՓիլիպպոս, եւ զԲարթողովմէնոս, եւ զՄատթեոս զմաքսաւորն, եւ զԹովմաս, եւ զՅակովոս Ալփեայ, եւ **Թաղեռն**, եւ զՍիմովն կանանացի. <sup>19</sup>Եւ զՅուդա սկարիովտացի, որ եւ մատնեացն զնա.

Մատթ Ժ 3

<sup>2</sup>Եվ տասներկու առաքյալների անունները սրանք էին. առաջին՝ Սիմոն Պետրոս կոչվածը, եւ նրա եղբայրը Անդրեաս, <sup>3</sup>Զեբեդեոսի որդի Յակովոս եւ նրա եղբայրը Յովհաննես, Փիլիպպոս եւ Բարթողովմէնոս, Թովմաս եւ Մատթեոս մաքսավոր, Ալփեոսի որդի Յակովոս եւ Ղեբեոս, որ **Թաղեռն** կոչվեց, <sup>4</sup>Սիմոն կանանացի եւ Յուդա իսկարիովտացի, որ եւ մատնեց նրան:

Մարկ Գ 18

<sup>16</sup>Եվ Սիմոնի անունը Պետրոս դրեց <sup>17</sup>Եւ Զեբեդեոսի որդու՝ Յակովոսի ու նրա եղբրդ՝ Յովհաննեսի անունները դրեց Բաներեգէս, որ նշանակում է՝ Որտման որդիներ: <sup>18</sup>Նաեւ՝ Անդրեասին եւ Փիլիպպոսին եւ Բարթողովմէնսին եւ մաքսավոր Մատթեոսին եւ Թովմասին եւ Ալփեոսի որդի Յակովոսին եւ **Թաղեռնին** եւ Սիմոն կանանացուն <sup>19</sup>Եւ Յուդա իսկարիովտացուն, որը եւ նրան մատնեց:

**Թաղեռն** Քրիստոսի տասներկու առաքյալներից: «Թաղեռն» անունը հանդիպում է միայն Մատթեոսի և Մարկոսի ավետարաններում, իսկ Ղուկասի ավետարանում նրա փոխարեն առկա է «Հուդա Հակոբյան» անվանաձեռ: Այսօր քննադատների մեծ մասն այս տեքստում ընթերցում է «Թաղեռն»՝ «Ղերես» ձեւը համարելով արևմտյան բնագրից ներմուծված: «Թաղեռն» անվանումը հավանաբար առաջացել է արամեերեն թադ բառարմատից, որ նշանակում է «կանացի կուրծք». այստեղ ակնարկվում է Թաղեռոսի տաքարյունության և կանացի հավատարմության մասին: «Ղերես» անվանաձեռ

առաջացել է հին երայական լևառից, որ նշանակում է «սիրտ»: Ժամանակակից ուսումնասիրողները միահամուռ կերպով ընդունում են Թաղեռոսի նույնացումը Հուդա Հակոբյանի հետ: Հուդա անվանումն այդ ժամանակաշրջանում այդքան էլ մեծ տարածում չուներ, քանի որ աղերսվում էր Հուդա իսկարիովտացու դավաճանական կերպարին, և հնարավոր է, որ հենց այս պատճառով Հուդա անունն օդտագործված չէ Մատթեոսի և Մարկոսի ավետարաններում: Հետագա հայրաբանական գրականության մեջ Հուդայի և Թաղեռոսի նույնացումն այդքան էլ հստակ չէ: Ըստ Հերոնիմոսի (**Դ դ**)՝ Թաղեռոսին

անվանում էին նաև Ղեթեոս և Հուդա Հակոբյան՝ նույնացնելով նրան Եղեսիայի Աբգար թագավորի մոտ ուղարկված առաքյալի հետ։ Սակայն Եվսեբիոս Կեսարացին (Դ դ.) նրան համարում է ոչ թե Տասներկու առաքյալներից մեկը, այլ Յոթանասուներկու աշակերտներից։

Եղեսիայում Թագեոսի քարոզչության մասին մեզ պատմում է Լաբուբնա Ասորի պատմիչը՝ մեջբերված Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմության» մեջ։ Մովսես Խորենացու համաձայն՝ Թագեոսը, Եղեսիայում իր առաքելությունն ավարտին հասցնելուց հետո, անցնում է Մեծ Հայք՝ Արտազ գավառ։ Հենց այս քարոզությամբ էլ սկզբնավորվում է Հայոց Աշխարհի լուսավորության բուն պատմությունը։ Թագեոսի հայերեն վարքի համաձայն՝

Արտազ գավառի Շավարշան գյուղաքաղաքում Թագեոս առաքյալը հանդիպում է Սանատրուկ Հայոց թագավորի պալատականներից շատերին, որոնց մեջ էր նաև արքայադուստր Սանդուխտը։ Նրանց մեծ մասը, այդ թվում Սանդուխտը, առաքյալի քարոզչության ու բժշկությունների վրա դարձի են գալիս և հավատում Քրիստոսին։ Թագեոս առաքյալը նահատակվում է Սանատրուկ թագավորի հրամանով Մեծ Հայքի Արտազ գավառում։ Նրա գերեզմանի վրա կառուցված Սր. Թագեի հայկական վանքը մինչ օրս էլ ուխտատեղի է և գտնվում է Իրանի տարածքում։

*Տե՛ս նաև ՂԵԲԵՌՈՒ,  
ՆՈՒԴՎԱՐԱՐՅԱԼ*

## ԹԵՂՓԻԼՈՒ

<sup>1</sup>Քանզի բազումք յօժարեցին վերստին կարգել զպատմութիւն վասն իրացն հաստատելոց ի մեզ, <sup>2</sup>որպէս աւանդեցին մեզ որ ի սկզբանէ ականատեսք եւ սպասաւորք եղեն բանին, <sup>3</sup>կամ եղեւ եւ ինձ, որ ի սկզբանէ զիետ երթեալ էի ամենայնի ճշնարտութեանք, կարգաւ գրել քեզ, քաջը՝ **Թէ՛ռֆիլէ**, <sup>4</sup>զի ծանիցես զբանիցն որոց աշակերտեցար՝ զճմարտութիւն:

Դուկ Ա Յ

<sup>1</sup>Քանի որ շատերը ծեռնարկեցին շարադրել մեզանում կատարված դեպքերի պատմությունը, <sup>2</sup>ինչպէս մեզ ավանդեցին նրանք, որ սկզբից խոսքի ականատեսներն ու սպասավորները եղան, <sup>3</sup>ես էլ, որ սկզբից ստուգությանք հետամուտ էի եղել ամեն բանի, կամեցա կարգով քեզ գրել, ո՞վ գերազանցող **Թէ՛ռֆիլէ**, <sup>4</sup>որպէսզի ճանաչես ճշնարտությունն այն խոսքերի, որոնց աշակերտեցիր:

**Թեղփիլու** (Հուն. «աստվածասեր»): Անհայտ անձ, ում ուղղված են Ղուկասի Ավետարանն ու Գործք Առաքելոցը: Թեղփիլեին տրված կոչումը՝ «ո՛վ գերազանց», որ այլուր օգտագործված է Ֆելիքս կուսակալի համար, խոսում է նրա հասարակական բարձր դիրքի մասին: Այդ տիտղոսը պատշաճում էր հեծյալի աստիճան ունեցող հռոմեացի պաշտոնյային:

Այս մարդը լսել էր Հիսուսի ու Նրա հետեւրդների համբավը և թերեւս ջանացել մանրամասն տեղեկություններ:

Քաղել նրանց մասին: Նա երկու մագաղաթ էր ստացել՝ մեկը Հիսուսի ծննդյան, կյանքի, առաքելության, մահվան ու հարության մասին, մյուսը՝ Հիսուսի հետեւրդների, առանձնապես Պետրոսի ու Պողոսի կողմից հիմնած համայնքներին առնչվող դեպքերի վերաբերյալ: Ուսումնասիրողների մի մասը կարծում է, որ այս անվան տակ պետք է հասկանալ ընդհանրապես քրիստոնյա ընթերցողին, իսկ մյուս մասն էլ՝ Վեսպասիանոս կայսեր ազգական Տիտոս Փլաբիոս Կղեմեսին:

## ԹՈՎՄԱՍ առաքյալ

<sup>2</sup>Եւ առաքելոցն երկոտասամից էին անուանք այսոքիկ. առաջին Սիմովն, անուանեալն Պետրոս, եւ Անդրեաս Եղբայր նորա, <sup>3</sup>Յակովոս Զեբեդեայ եւ Յովհաննես Եղբայր նորա, Փիլիպպոս եւ Բարթողոմէոս, <sup>Թ.ավ.մաս.</sup> եւ Մատթեոս մաքսաւոր, Յակովոս Ալփեայ եւ Ղերեոս որ անուանեցաւն Թադէոս, <sup>4</sup>Սիմովն Կանանացի եւ Յուդա Իսկարիովտացի, որ եւ մատմեացն զնա:

<sup>16</sup>Եւ եղ անուն Սիմովնի՝ Պետրոս, <sup>17</sup>եւ Յակովու Զեբեդեայ եւ Յովհաննու Եղբօրն Յակովբայ՝ եղ նոցա անուանս Բաներեգես, որ է Որդիք որոտման. <sup>18</sup>Եւ զԱնդրեաս, եւ զՓիլիպպոս, եւ զԲարթողոմէոս, եւ զՄատթեոս զմաքսաւորն, եւ <sup>պ.թ.ավ.մաս.</sup>, եւ զՅակովոս Ալփեայ, եւ զԹադէոս, եւ զՍիմովն Կանանացի, <sup>19</sup>եւ զՅուդա Իսկարիովտացի, որ եւ մատմեացն զնա:

<sup>14</sup>ԶՍիմովն զոր եւ Պետրոսն անուանեաց, եւ զԱնդրեաս զԵղբայր նորին, եւ զՅակովոս, եւ զՅովհաննես, եւ զՓիլիպպոս, եւ զԲարթողոմէոս, <sup>15</sup>Եւ զՄատթեոս, եւ <sup>պ.թ.ավ.մաս.</sup>, եւ զՅակովոս Ալփեայ, եւ զՍիմովն զկոչեցեալն Նախանձայոյգ, <sup>16</sup>Եւ զՅուդա Յակովբայ, եւ զՅուդա Իսկարիովտացի, որ եղեւ իսկ մատմիչ:

<sup>18</sup>Ասէ <sup>թ.ավ.մաս.</sup>, անուանեալն Երկուորեակ, ցաշակերտակիցսն. Օն, Եկայք եւ մեք զի ընդ ննա մեռցուք:

<sup>5</sup>Ասէ ցնա <sup>թ.ավ.մաս.</sup> Տեր, ոչ գիտեմք յ՛ Երբաս, եւ զիա՞՞րդ զճանապարհն կարասուք գիտել:

Մատթ Ժ 3

<sup>2</sup>Եվ տասներկու առաքյալների անունները սրանք էին. առաջին Սիմոն Պետրոս կոչվածը, և նրա Եղբայրը Անդրեաս, <sup>3</sup>Զեբեդեոսի որդի Յակովոս և նրա Եղբայրը Յովհաննես, Փիլիպպոս և Բարթողոմէոս, <sup>Թ.ավ.մաս.</sup> և Մատթեոս մաքսավոր, Ալփեոսի որդի Յակովոս և Ղերեոս, որ Թադէոս կոչվեց, <sup>4</sup>Սիմոն Կանանացի և Յուդա Իսկարիովտացի, որ և մատմեց նրան:

Մարկ Գ 18

<sup>16</sup>Եվ Սիմոնի անունը Պետրոս որեց <sup>17</sup>և Զեբեդեոսի որդոյ՝ Յակովոսի ու նրա Եղբօր՝ Յովհաննեսի անունները որեց Բաներեգես, որ նշանակում է՝ Որտնան որդիներ: <sup>18</sup>Սակա Անդրեասին և Փիլիպպոսին և Բարթողոմէոսին և մաքսավոր Մատթեոսին և <sup>թ.ավ.մաս.</sup> և Ալփեոսի որդի Յակովոսին և Թադէոսին և Սիմոն Կանանացուն <sup>19</sup>և Յուդա Իսկարիովտացուն, որը և նրան մատմեց:

Ղուկ Զ 15

<sup>14</sup>Սիմոնին, որին էլ Պետրոս կոչեց, և Անդրեասին՝ նրա Եղբօրը, Յակովոսին, Յովհաննեսին, <sup>15</sup>Փիլիպպոսին, Բարթողոմէոսին, Մատթեոսին, <sup>թ.ավ.մաս.</sup>, Ալփեոսի որդի Յակովոսին, Սիմոնին Նախանձահույզ կոչվածին, <sup>16</sup>Յակովի որդի Յուդային և Իսկարիովտացի Յուդային, որը և մատմիչ եղավ:

Յովհ ԺԱ 16

<sup>16</sup><sup>թ.ավ.մաս.</sup>, որ Երկվորյակ էր կոչվում, աշակերտակիցներին ասաց. «Եկեք մենք էլ զնանք, որ նրա հետ մեռնենք»:

Յովհ ԺԴ 5

<sup>5</sup><sup>թ.ավ.մաս.</sup> նրան ասաց. «Տե՛ր, չգիտեմք ուր ես գնում, ուրեմն ինչպէ՞ս կարող ենք գիտենալ ճանապարհը»:

<sup>24</sup>Իսկ **Թաղմաս**, մի յերկոտասամիցն, անուանեալն Երկուորեակ, ոչ էր ընդ նոսա յորժամ եկն Յիսուս:

<sup>25</sup>Եւ յետ ուր աւուր դարձեալ էին ի ներքս աշակերտքն, եւ **Թաղմաս** ընդ նոսա. գայ Յիսուս դրօքն փակելովք, եւ ասէ. Ողջոյն ընդ ձեզ:

<sup>27</sup>Ապա ասէ **Կթաղմաս**. Բեր զնատունս քո եւ արկ այսր եւ տես զծեռս իմ, եւ բեր զծեռն քո եւ միւեա ի կողս իմ, եւ մի՛ լինիր անհաւատ, այլ հաւատացեալ:

<sup>28</sup>Պատասխանի եւս **Թաղմաս** եւ ասէ ցնա. Տեր իմ եւ Աստուած իմ:

<sup>1</sup>Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր Յիսուս աշակերտացն իւրոց առ ծովեզերբն Տիբերեայ, եւ յայտնեաց այսպէս. <sup>2</sup>Եին ի միասին Սիմովն Պետրոս, եւ **Թաղմաս** անուանեալն Երկուորեակ, եւ Նարանայէլ որ ի Կանայ Գալիլեացւոց, եւ որդիքն Զեբերեայ, եւ այլք յաշակերտաց անտի Երկու:

**Թովմաս** (Հուն. «Դիղիմոս», արամ. «Երկվորյակ»): Հիսուսի տասներկու առաքյալներից, նրա հավատարիմ ու գործնական աշակերտը, ում կասկածները Հիսուսի հարության հանդեպ փարատում է ինքը՝ հարուցյալ Վարդապետն իր ներկայությամբ:

Թովմասի անունը հանդիպում է համատես Ավետարաններում առաքյալների բոլոր թվարկումներում, նաև նրանց խմբում, ովքեր Հիսուսի համբարձումից հետո Վերնատանը Հուդային փոխարինող առաքյալ են ընտրում և Պետեկոստեին ստանում Սուրբ Հոգին: Նոր Կտակարանում՝ Ավետարաններից դուրս, նրա մասին ոչինչ չի հիշատակվում: Հովհաննու Ավետարանում նա

Յովի ի 24

Յովի ի 26

Յովի ի 27

Յովի ի 28

Յովի ի Ա 2

<sup>24</sup>Իսկ **Թաղմասը** Տասներկուսից մեկը՝ Երկվորյակ կոչվածը, նրանց հետ չէր, երբ Յիսուս եկավ:

<sup>25</sup>Ուր օր հետո աշակերտները դարձյալ ներսում էին. և **Թաղմասը** նրանց հետ: Յիսուս եկավ փակ դրներով, կանգնեց մեջտեղ ու ասաց՝ խաղաղություն ձեզ:

<sup>27</sup>Ապա **Թաղմասին** ասաց. «Բե՛ր քո մատները և դի՛ր այստեղ ու տե՛ս իմ ձեռքերը. և բե՛ր քո ձեռքը ու մտցողություն կողի մեջ. անհավատ մի՛ եղիր, այլ՝ հավատացյալ»:

<sup>28</sup>**Թաղմասը** պատասխան տվեց ու նրան ասաց՝ Տեր իմ և Աստված իմ:

<sup>1</sup>Սրանց հետո Յիսուս դարձյալ իրեն հայտնեց իր աշակերտներին Տիբերիայի ծովեզերքի մոտ. և հայտնեց այսպէս. <sup>2</sup>Միասին էին Սիմոն Պետրոսը, **Թաղմասը** Երկվորյակ կոչվածը, Նարանայէլը, որ Գալիլեայի Կաա քաղաքից էր, Զեբերեուսի որդիները և աշակերտներից ուրիշ Երկու հոգի:

Կոչվում է «Երկվորյակ»: Հովհաննեսը նշում է չորս միջադեպ, երբ Թովմասի ներկայությունը կարևորվում է ավետարանական պատմության համար:

Առաջինն այն է, երբ Հիսուս ստիպված հեռանում է Երուսաղեմից: Շուտով հասնում է Ղազարոսի հիվանդության լուրը: Հիսուս անմիջապես որոշում է վերադառնալ նրա մոտ՝ Բեթանիա, որն ընդամենը երկու մղոն էր հեռու Երուսաղեմից: Թովմասը՝ վախցած, բայց հավատարիմ, պատրաստակամություն է հայտնում հետեւելու Հիսուսին. «Եկե՛ք մենք էլ գնանք, որ նրա հետ մեռնենք»:

Երկրորդ գեպքը տեղի է ունեցել Վերջին ընթրիքին՝ Վերնատանը: Հիսուս

աշակերտներին նախապատրաստում էր իր մոտալուտ հեռանալուն. «Եվ եթե գնամ և ձեզ համար էլ տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ և ձեզ կվերցնեմ ինձ մոտ, որպեսզի, ուր ես լինեմ, դուք ևս այնտեղ լինեք: Եվ թե ուր եմ գնում, այդ գիտեք, գիտեք և ճանապարհը»: Թովմասն անմիջապես ընդհատում է Նրան. «Տե՛ր, չգիտենք՝ ուր ես գնում, ուրեմն ինչպես կարող ենք գիտենալ ճանապարհը»: Ինչ խոսք, մյուսները նույնպես չգիտեին, բայց Թովմասը չէր թողնում, որ իր Վարդապետի խոսքերն անհասկանալի մնային իր համար: «Ես եմ ձանապարհը և ձշմարտությունը և կյանքը: Ոչ ոք չի գա Հոր մոտ, եթե ոչ ինձանով: Եթե ինձ ճանաչեիք, ապա կճանաչեիք և իմ Հորը. այսուհետեւ կճանաչեք նրան. և տեսել եք նրան», պատասխանում է Հիսուս:

Երրորդ միջադեպը դարձյալ Վերնատանն է, բայց արդեն Հիսուսի հարությունից հետո: Զատկի գիշերը, երբ Հիսուս առաջին անգամ այցելում է աշակերտներին, Թովմասը նրանց հետ չէր: Երբ նրանք այդ մասին հայտնում են Թովմասին, նա չի հավատում և խիստ գործնական մարդուն բնորոշ պատասխան է տալիս. «Եթե չտեսնեմ նրա ձեռքերի վրա մեխերի նշանը և իմ մատները մեխերի տեղերը չդնեմ ու իմ ձեռքը նրա կողի մեջ չխրեմ, չեմ հավատա»:

Մեկ շաբաթ անց աշակերտները դարձյալ հավաքված էին Վերնատանը,

Թովմասն էլ նրանց հետ: Թեև դռները կողպված էին հրեաների պատճառով, Հիսուս դարձյալ հայտնվում է այնտեղ: Թովմասի կասկածներն ու պահանջները թե՛ Հիսուսի, թե՛ ավետարանիչների համար պատշաճ հնարավորություն էին և՝ այն ժամանակ, և՝ հիմա հարության իրողությունն աշակերտներին ապացուցելու համար: Հիսուս Թովմասին կանչում է, որպեսզի շոշափի իր վերքերը. «Բե՛ր քո մատները և գի՛ր այստեղ ու տե՛ս իմ ձեռքերը. և բե՛ր քո ձեռքը ու մտցրո՛ւ իմ կողի մեջ. անհավատ մի՛եղիր, այլ՝ հավատացյալ»:

Նրա խիստ հոռետեսությունն ու մեկուսի կասկածներն անհետանում են, և նա Հիսուսին անվանում է՝ «Տե՛ր իմ և Աստված իմ»:

Թովմասը վերջին անգամ հիշատակվում է Գալիլիայի լճում ձուկ որսացող յոթ աշակերտների թվում: Լուսաղեմին ծովեղրի մոտ նրանք հանդիպում են Հիսուսին և զարմանալի քանակությամբ ձուկ որսում: Հետհարության շրջանի այս վերջին պատմության մեջ Թովմասը հիշատակված աշակերտների մեջ երկրորդն է՝ Սիմոն Պետրոսից հետո:

Հետագա ավանդությունների համաձայն՝ Թովմասը գնացել է Պարսկաստան և հարավյային Հնդկաստան ու Քերալայում հիմնադրել Մար Թովմա եկեղեցին: Նրան է վերագրվում պարականոն մի Ավետարան՝ թվագրված Բ դարով:

## ԿԱՅԻԱՓԱ քահանայապետ

<sup>3</sup>Յայնժամ ժողովեցան քահանայապետքն եւ դպիրք եւ ծերք ժողովրդեանն ի սրահ քահանայապետին որում անուն էր Կայիչափ։ <sup>4</sup>Եւ արարին խորհուրդ զի նենգութեամբ կալցին զՅիսուս եւ սպանցեն։

<sup>5</sup>Իսկ նոցա կալեալ զՅիսուս՝ ածին առ Կայիչափ քահանայապետ, ուր դպիրքն եւ ծերք ժողովեալ էին։

<sup>53</sup>Եւ տարան զՅիսուս առ քահանայապետն Կայիչափ եւ գային ընդ նմա ամենայն քահանայապետքն եւ դպիրք եւ ծերք։

<sup>1</sup>Ի հնգետասաներորդի ամի տերութեանն Տիբերեայ կայսեր, ի դատաւորութեան Քրէաստանի Պիղատոսի Պոնտացւոյ, եւ ի չորրորդպետութեան Գալիլեացւոց Քերովդի, եւ ի Փիլիպպոսի եղբօր նորա չորրորդպետութեան Խոտուրացւոց եւ Տրաքոնացւոց աշխարհին, եւ ի չորրորդպետութեան Լիւսանեայ Արիլենացւոյ, <sup>2</sup>եւ ի քահանայապետութեան Աննայի եւ Կայիչափայ, եղեւ բան Աստուծոյ ի վերայ Յովիանու որդուոյ Զաքարիայ յանապատի անդ։

<sup>49</sup>Մի ոմն ի նոցանէ, անուն Կայիչափ, որ քահանայապետ էր տարւոյն այնորիկ, ասէ ցնոսա. Դուք ոչինչ զիտեք, <sup>50</sup>եւ ոչ բնաւ խորհել իսկ, թէ լաւ է մեզ զի այր մի մեռանիցի ի վերայ ժողովորդեանս, եւ մի՛ ամենայն ազգս կորից։

<sup>12</sup>Իսկ գունդն եւ հազարապետն եւ սպասաւորք Քրէիցն կալան զՅիսուս եւ կապեցին. <sup>13</sup>Եւ ածին զնանախ առ Աննա, որ էր աներ Կայիչափայ, որ քահանայապետն էր տարւոյն այնորիկ։

Մատք ԻՉ 3

<sup>3</sup>Այն ժամանակ քահանայապետները և օրենսգետներն ու ժողովրդի ծերերը հավաքվեցին Կայիչափանունվ քահանայապետի դահլիճը <sup>4</sup>և խորհուրդ արեցին, որպեսզի նենգությամբ բռնեն Քիսուսին ու սպանեն։

Մատք ԻՉ 57

<sup>57</sup>Իսկ նրանք բռնելով Քիսուսին՝ տարան Կայիչափ քահանայապետի մոտ, ուր օրենսգետներն ու ծերերը հավաքվել էին։

Մարկ ԺԴ 53

<sup>53</sup>Եվ Քիսուսին տարան Կայիչափ քահանայապետի մոտ. և նրա հետ հավաքված էին բոլոր քահանայապետները, օրենսգետներն ու ծերերը։

Ղուկ Գ 2

<sup>1</sup>Տիբերիոս կայսեր իշխանութեան տասնինգերորդ տարում, երբ Պոնտացի Պիղատոսը կուսակալ էր Քրեաստանի, և Քերովդեսը՝ չորրորդպատետ Գալիլիայի, և նրա եղբայր Փիլիպպոսը՝ չորրորդպատետ Խոտուրացիների ու Տրաքոնացիների աշխարհի, Լյուսանիասը՝ չորրորդպատետ Արիլենեի, <sup>2</sup>և Աննայի ու Կայիչափայի քահանայապետութիւն օրով, Աստուծոյ խոսքը լսելի եղավ Զաքարիայի որդի Քովիանմնեսին անապատում։

Յովի ԺԱ 49

<sup>49</sup>Մրանցից մեկը՝ Կայիչափ անունվ, որ այդ տարվա քահանայապետն էր, նրանց ասաց. <sup>50</sup>«Դուք ոչինչ զիտեք, ոչ իսկ խորհել էք, թէ մեզ համար ավելի լավ է, որ մեկ մարդ մեռնի ժողովորդի համար, քան թե ամբողջ ազգը կորչի»։

Յովի ԺԸ 13

<sup>12</sup>Իսկ գունդը, հազարապետը և իրեաների պահակները բռնեցին Քիսուսին և կապեցին: <sup>13</sup>Եվ նախ նրան տարան Աննայի մոտ, որը Կայիչափայի՝ այդ տարվա քահանայապետի աներն էր։

<sup>14</sup>Այս այն Կայիշապիս էր որ խրատն ետ Յրեհց եթէ՛ Լաւ է առն միում մեռանել ի վերայ ժողովրդեան:

<sup>24</sup>Եւ առաքեաց զնա Աննա կապեալ առ Կայիշապիս քահանայապետ:

<sup>28</sup>Եւ ածին գՅիսուս ի վաճացն Կայիշապիս յապարանս դատաւորին, եւ էր այգուց. Եւ նորա ոչ մտին յապարանսն, զի մի՛ պլծեսցին, այլ զի ու տիցեն զզատիկն:

Յովի ԺՈ 14

<sup>14</sup>Սա այն Կայիշապիս էր, որ հրեաներին խրատ տվեց, թե ավելի լավ է, որ ժողովրդի համար մեկ մարդ մեռնի:

Յովի ԺՈ 24

<sup>24</sup>Եվ Աննան նրան կապած ուղարկեց Կայիշապիս քահանայապետի մոտ:

Յովի ԺՈ 28

<sup>28</sup>Կայիշապիսը տնից Յիսուսին տարան կուսակալի ապարանքը: Այգաբաց էր: Բայց նրանք ապարանք չմտան, որպեսզի չպղծվեն և որպեսզի զատկական ընթրիքը կարողանան ուտել:

**Տովուելի Կայիշափա: Հրեա քահանայապետ (ՔՀ 18-37), Աննա քահանայապետի (ՔՀ 6-15) փեսան: Սովորության համաձայն՝ քահանան ամուսնանում էր քահանայի դստեր հետ: Սահատկապես տարածված էր երուսաղեմի քահանայական ազնվականության շրջանակներում, որոնց հեղինակությունն ու կրթությունն ավելի էր մեծացնում նրանց դերը: Քահանայապետներն իրենց որդիներին ու փեսաներին կարգում էին Տաճարի առավել շահավետ պաշտոններում: Արդ զարմանալի չէ, որ Կայիշափան հաջորդում է իր անեռողջը՝ հիմնելով քահանայապետական դինաստիա: Հասարակության ատելությունը վայելող Կայիշափային քահանայապետությունից զրկել է Վիտելիոսը: Ըստ Հուկասի՝ Հովհաննես Մկրտչի քարոզչությունն սկսվել է «Աննայի և Կայիշափայի քահանայապետության օրով»:**

Հովհաննու Ավետարանում պատմվում է, թե ինչպե՞ս են Հիսուսին ձերբակալում և տանում Աննայի մոտ: Վերջինս՝ որևէ վճիռ կայացնելու անկարող, նրան ուղարկում է Կայիշափա քահանայապետի մոտ: Սա հրավիրում է Արևինչեղիոնին՝ դատելու Հիսուսին, և նրան

ուղարկում է Պիղատոսի մոտ: Հստակ է, որ Արևինչեղիոնում Հիսուսի դատը Կայիշափան է վարել:

Խորհրդակցության ընթացքում ձեռք է բերվում խելացի ու հնարամիտ լուծում, որը թերևս հենց Կայիշափայի նենգության արդյունքն էր. Հիսուս պետք է հանձնվեր հռոմեական իշխանությունների ձեռքը: Իհարկե, նրանց չի հաջողվում Հիսուսին մահվան դատապարտել, բայց գոնե հաջողվում է նրան մեղադրել հռոմեական իշխանության դեմ հանցավորության մեջ՝ իբրև լուրջ սպառնալիք կայսրության համար:

Տաճարում առեւտուր անողների և լումայափոխների վտարումը լուրջ սպառնալիք էր Կայիշափայի իշխանության համար, որովհետև Տաճարը բարգավաճ առեւտրի կենտրոն էր և զոհաբերվող կենդանիների վաճառքի եկամտաբեր աղբյուր: Այստեղ մեծ չափերի էր հասնում նաև դրամափոխությունը, որովհետև գոհաբերվող կենդանի գնելու համար Տաճարի մետաղադրամ էր հարկավոր: Հովհետապ Փլավիոսն (Ա. դ.) իր «Հրեաների հնախոսություն» աշխատության մեջ ասում է. «Քահանայապետների անպատկառությունը հասել

էր այն աստիճանի, որ նրանք անամոթաբար իրենց ծառաներին ուղարկում էին կալատուն՝ ստանալու քահանաներին հասանելիք տասանորդը։ Սա հանգեցրեց նրան, որ այն տարեց քահանաները, որոնց գոյամիջոցը հենց այդ տասանորդներն էին, սկսեցին սովամահության մատնվել»։

Հասարակ ժողովրդի հանդեպ Տաճարի իշխանավորների վախն է կանխում Հիսուսի ձերբակալումը։ Ծաղկազարդի՝ Հիսուսի՝ Երուսաղեմ կատարած վերջին այցելության օրը, քաղաքն աղմկալից էր։ Շատերն ակնկալում էին, որ Պատեփի տոնին Հիսուս իրեն «Դավթի Որդի» էր հոչակելու։ Կայիշափայի համար հստակ էր՝ հիմա կամ երբեք. պետք էր գործի անցնել նախքան տոնախմբությունը։

Կայիշափան ըստ երևույթին վախենում էր Հիսուսի գերբնական զորությունից և գալիլիացի ուխտագնացների՝ Հիսուսի հանդեպ ունեցած ակնածանքից։ Այս հանգամանքն է Կայիշափային ստիպում նրան ձերբակալել գիշերով։ Ընդհանողապես անօրինական էր գիշերով դատավարություն կազմակերպել, ձերբակալվածին մղել ինքնադատապարտության և նրան ազատ չարձակել վկայությունների անհամաձայնության պարագային։ Տաճարը կործանելու Հիսուսի սպառնալիքը հրապարակավ չի ապացուցվում, իսկ Հիսուսի՝ Մեսիա լինելու կոչն էլ հետեանք էր Կայիշափաքահանայապետի սադրանքի։ Տեսներով, որ մեղադրանքներն ապարդյուն են, քահանայապետն ինքն է սկսում հարցաքննել Հիսուսին։

Եղբ Հիսուսին տանում են Պիղատոսի մոտ, հայհոյության համար դատա-

պարտությունն անտեսվում է, որովհետեւ Նրա դեմ կար մեկ այլ՝ ավելի մեծ մեղադրանք՝ կայսեր հանդեպ անհավատարմությունը։

Հիսուսի դատավարությունը Պիղատոսի առաջ վաղ առավոտյան կազմակերպելու Կայիշափայի աճապարանքն ու ջանքերը վկայում են նրա բոնի իշխանության մասին։ Կայիշափան սպառնում է Պիղատոսի վարչական հեղինակությանը՝ նրան խաղալիք դարձնելով իր ձեռքին։ Եղբ կուսակալն ուզում է Հիսուսին ազատ արձակել, հրեաներն աղաղակում են. «Եթե դրան արձակես, կայսրին բարեկամ չես։ Ամենայն ոք, որ ինքն իրեն թագավոր է կոչում, հակառակ է կայսեր»։ Սա Հիսուսի դատապարտությունը հաստատելու հրեաների վերջին միջոցն էր։

Վաղ եկեղեցու պատմության մեջ Կայիշափային հանդիպում ենք մի քանի անգամ։ Երկու անգամ նա վարել է Պետրոսի, Հովհաննեսի և մյուս առաքյալների հարցաքննությունը՝ Տաճարում քարոզելու և բժշկություններ անելու կապակցությամբ։ Փարիսեցի Գամաղեկելի խորհրդով՝ Կայիշափան գանահարել է տվել առաքյալներին և զգուշացնելով այլևս չխոսել Հիսուսի անունով, ազատ է արձակել նրանց։ Կայիշափան է վարել նաև Ստեփանոսի դատավարությունը և նրա քարկոծումից հետո ձեռնամուխ եղել հունախոս քրիստոնյաների հալածանքներին՝ անուղղակիորեն նապատելով ամբողջ Միջերկրականի ավագանում քրիստոնեության քարոզությանը։ Կայիշափան է եղել այն քահանայապետը, ով Սողոսին (հետագայում՝ Պողոս առաքյալ) հեղինակավոր նամակներ հանձնելով, հանձնարարել է

գնալ հեռավոր Դամասկոս և հալածել տեղի քրիստոնյաներին:

Կայիշափայի տան հավանական վայրը Վերնատան տարածքն է՝ Երուսաղեմի Արևմտյան բլրի վրա, որը վեր է հանում քահանայապետի ապարանքի ամենաուշագրավ հատվածները՝ իրենց ողջ պերճանքով. ամբարը, գանձարանը, պալատը, ատյանը, պահականոցը, բանտախցերը:

Այստեղ շատ եկեղեցիներ են կառուցվել՝ ի հիշատակ Կայիշափայի կողմից Հիսուսի դատավարության, ինչպես նաև՝ Պետրոսի ուրացումների և ապաշ-

խարության: Ուխտագնաց Բորդեռուքսը (533թ.) քահանայապետի տան ավերակ-

ների մասին այսպես է արտահայտվել. «Սիլովամի հովտում, որտեղից կարելի է բարձրանալ Սիոն լեռ, կարող եք տեսնել այն վայրը, որտեղ նախկինում եղել է Կայիշափայի տունը»: 457-459թթ. Եվ-

դոկիա կայսրուհին Պետրոսին նվիրված մի սքանչելի եկեղեցի է կառուցել տան ավերակների վրա:

Ներկայիս եկեղեցին ուղղաձիգ սարալանջին է երեք տարբեր մակարդակների վրա:

## ԿՂԵՌՊԱՍ

<sup>18</sup>Պատասխանի եւս մի ոմն ի նոցանէ որում անուն էր Կղեռվապաս, եւ ասէ ցնա. Դո՞ւ միայն կաս յերուսաղէն, որ ոչ գիտացեր զինչ գործեցաւ ի նմա յաւուրս յայսոսիկ:

**Կղեռպաս** («Կղեռպատրոս» անվան կրծատ ձևը): Զատկի առաջին օրը երուսաղեմից էմմավուս գնացող երկու աշակերտներից մեկը, ով ըստ երևույթին ոչ թե Գալիլիայից, այլ Հրեաստանից էր:

Էմմավուսի հավանական վայրի մասին չորս վարկած կա՝ չորսն էլ՝ երուսաղեմից էմմավուս տարբեր հեռավորություններ նշելով: Հռոմեական «ստադիան» 201 մետր է, սակայն որոշ ձեռագրերում ստադիաների թիվը տարբեր է: Առաջարկված վայրերից մեկը Կալոնիեն է (այդպես է կոչվել ի պատիվ հռոմեական գաղութի), որն արձանագրված հեռավորության միայն կեսն է: Մեկ այլ վայր է երուսաղեմից 60 ստադիա (կամ 7 մղոն) հեռավորության վրա գտնվող Քուբեյքը՝ վկայակոչված աստվածաշնչային նշանավոր ձեռագրերից շատերում: Սա մի փոքրիկ քաղաք է երուսաղեմից Կեսարիա գնացող հռոմեական ճանապարհի վրա: Էմմավուսի՝ այդտեղ գտնվելու հավանականությունը հաստատում են միայն խաչակիրներն ու ֆրանցիսկյանները: Խաչակիր-

Դուկ ԻԴ 18

<sup>18</sup>Նրանցից մեկը, որի անունը Կղեռվապաս էր, ասաց նրան. «Երուսաղեմում միայն դու՛ ես, որ չես իմացել, թե ինչեր կատարվեցին այնտեղ այս օրերին»:

Ների առաջարկած մեկ ուրիշ տեղանք, որտեղ վեր է խոյանում մի փառահեղեկեղեցի, գտնվում է Աբու Ղոչում: Սա նույնպես երուսաղեմից ճշգրիտ հեռավորության վրա է գտնվում և ընկած է ծովափ տանող մեկ այլ հոռմեական ճանապարհի վրա:

Զարմանալի է, բայց ամենավաղ ավանդական և հնագիտական վկայությունների համաձայն՝ էմմավուս գյուղը գտնվել է Ամֆասում (էմմավուսի արաբերեն անվանումը՝ երուսաղեմից 160 ստադիա հեռավորության վրա: Այս մասին հիշատակվում է «Սինայական ձեռագրում»: Ամփասը 15 մղոն է հեռու երուսաղեմից: Ուրեմն մեկ օրում երկու անգամ կարելի է երուսաղեմից գնալ այնտեղ և վերադառնալ:

Ամփասում և Քուբեյքում տեղի ունեցած պեղումները վկայում են, որ ամբողջ շրջանը բնակեցված է եղել հողագործությամբ գրաղվող համայնքով: Հետևաբար կարելի է ենթադրել, որ Կղեռպասն սթափ մտքով մի գործարար էր:



## ՀԱԿՈԲՈՍ առաքյալ՝ Զեբեդեոսի որդի

<sup>21</sup>Եւ մատուցեալ անտի յառաջ՝ ետես այլ երկուս եղբարս, **ՀՅԱԿՈՅՆ** Զեբեդեայ եւ զՅովհաննես գեղբայր նորա, ի նաև Զեբեդեալ հանդերձ հարբն իւրեանց, մինչ կազմէին զուրկանս իւրեանց, եւ կոչեաց զնոսա:

<sup>2</sup>Եւ առաքելոցն երկոտասանից էին անուանք այսորիկ. առաջին Սիմովն, անուանեալն Պետրոս, եւ Անդրեաս եղբայր նորա, **ՅՅԱԿՈՅՆ** Զեբեդեայ եւ Յովհաննես եղբայր նորա, Փիլիպոս եւ Բարթողոմէոս, Թովմաս եւ Սատրեոս մաքսաւոր, Յակովըս Ալփեայ եւ Ղերեոս որ անուանեցաւն Թադէոս, **ՍԻՄՈՎՆ** Կանանացի եւ Յուդա Իսկարիովտացի, որ եւ մատնեացն զնա:

<sup>1</sup>Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս զՊետրոս եւ **ՀՅԱԿՈՅՆ** եւ զՅովհաննես գեղբայր նորա, եւ հանդ զնոսա ի լեառն մի բարձր առանձինն. <sup>2</sup>Եւ այլակերպեցաւ առաջի նոցա, եւ լուսաւորեցան երեսք նորա իբրեւ զարեգակն, եւ հանդերձ նորա եղեն սպիտակ իբրեւ զլոյս:

<sup>19</sup>Եւ մատուցեալ անտի սակաւիկ մի յառաջ՝ ետես **ՅՅԱԿՈՅՆ** Զեբեդեայ եւ զՅովհաննես գեղբայր նորա, եւ զնոսա ի նաւին մինչ կազմէին զուրկանս:

<sup>29</sup>Եւ վաղվաղակի ելեալ ի ժողովրդնենք՝ եկն ի տուն Սիմովնի եւ Անդրեայ **ՅՅԱԿՈՅՆ**՝ եւ Յովհաննու հանդերձ:

<sup>17</sup>Եւ **ՅՅԱԿՈՅՆ** Զեբեդեայ եւ Յովհաննու եղբօրն Յակովը՝ եղ նոցա անուանս Բաներեգես, որ է Որ-

Մատթ Դ 21

<sup>21</sup>Եվ այնտեղից առաջ գնալով, տեսավ երկու այլ եղբայրների՝ Զեբեդեոսի որդի **ՀՅԱԿՈՅՆ** և նրա եղբայր Յովհաննեսին, մինչ նավակի մեջ էին իրենց հոր՝ Զեբեդեոսի հետ միասին և իրենց ուռկանները կարգի էին բերում. և նրանց էլ կանչեց:

Մատթ Ժ 3

<sup>2</sup>Եվ տասներկու առաքյալների անուանները սրանք էին. առաջին՝ Սիմոն Պետրոս կոչվածը, և նրա եղբայրը Անդրեաս, **ՅՅԵԲԵԴԵՈՍԻ ՈՐԴԻ** **ՀՅԱԿՈՅՆ** և նրա եղբայրը Յովհաննես, Փիլիպոս և Բարթողոմէոս, Թովմաս և Մատթեոս մաքսավոր, Ալփեոսի որդի Յակոբոս և Ղերեոս, որ Թադէոս կոչվեց, **ՍԻՄՈՎՆ** Կանանացի և Յուդա Իսկարիովտացի, որ և մատնեց նրան:

Մատթ ԺԷ 1

<sup>1</sup>Եվ վեց օր հետո Յիսուս իր հետ վերցրեց Պետրոսին, **ՀՅԱԿՈՅՆ** և նրա եղբօրը՝ Յովհաննեսին և նրանց հանեց, առանձին, մի բարձր լեռ և նրանց առաջ պայծառակերպվեց. և նրա դեմքը փայլեց ինչպես արեգակը. և նրա զգեստները դարձան սպիտակ ինչպես լույսը:

Մարկ Ա 19

<sup>19</sup>Այստեղից մի քիչ առաջ գնալով տեսավ Զեբեդեոսի որդի **ՀՅԱԿՈՅՆ** և նրա եղբայր Յովհաննեսին. սրանց էլ տեսավ իրենց նավակի մեջ, մինչ ուռկաններն էին կարգի բերում:

Մարկ Ա 29

<sup>29</sup>Եվ ժողովարանից դուրս ելնելով, անմիջապես եկավ Սիմոնի և Անդրեասի տունը՝ **ՀՅԱԿՈՅՆ** և Յովհաննեսի հետ:

Մարկ Գ 17

<sup>17</sup>և Զեբեդեոսի որդու՝ **ՀՅԱԿՈՅՆ** ու նրա եղբօրը՝ Յովհաննեսի անուանները դրեց Բաներեգես, որ նշանակում

դիբ որոտման՝ <sup>18</sup>եւ զԱնդրէաս, եւ զՓիլիպպոս, եւ զԲարթողոմէոս, եւ զՄատթէոս զմաքսաւորն, եւ զԹովվմաս, եւ զՅակովոս Ալփեայ, եւ զԹադէոս, եւ զՍիմոն Կանանացի, <sup>19</sup>եւ զՅուդա Իսկարիովտացի, որ եւ մատնեացն զնա:

<sup>37</sup>Եւ ոչ զոք եթող ընդ իւր երթալ, բայց միայն զՊետրոս եւ զՅակովոս եւ զՅովհաննէս զեղբայրն Յակովոս:

<sup>1</sup>Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս զՊետրոս եւ զՅակովոս եւ զՅովհաննէս, եւ հանէ զնոսա ի լեան մի բարձր առանձինն, եւ յայլակերպս եղեւ առաջի նոցա:

<sup>35</sup>Եւ երթային առ նովա Յակովոս եւ Յովհաննէս որդիքն Զեբեդէայ, եւ ասեն ցնա. Վարդապետ, կամիմք զի զոր ինչ խնդրեսցուք ի քեն արասցես մեզ:

<sup>41</sup>Եւ լուեալ զայն տասանցն՝ սկսան բարկանալ Յակովոս, եւ Յովհաննու:

<sup>3</sup>Եւ մինչ նստէր նա ի լերինն Զիթենեաց յանդիման տաճարին, հարցանէին ցնա առանձինն Պետրոս եւ Յակովոս եւ Յովհաննէս եւ Անդրէաս. <sup>4</sup>Ասա մեզ Ե՞ր լինիցի այդ, եւ զի՞ն նշան է յորժան կատարելոց իցէ այդ ամենայն:

<sup>33</sup>Եւ առնու ընդ իւր զՊետրոս եւ զՅակովոս եւ զՅովհաննէս, եւ սկսաւ տիսրել եւ հոգալ:

Զքանզի ահ պատեաց զնա եւ զամենեան որ ընդ նմայն էին վասն որսոյ ծկանցն զոր ընբռնեցին, <sup>10</sup>նոյնպէս եւ զՅակովոս եւ զՅովհաննէս զորդիսն Զեբեդէայ, որ էին որսակիցը Սիմոնի. եւ ասէ ցՍիմոն Յիսուս. Մի՛ երկնչիր, յայսմ հետէ զմարդիկ որսայցես ի կեանս:

Մարկ Ե 37

Մարկ Թ 1

Մարկ Ժ 35

Մարկ Ժ 41

Մարկ Ժ 4 3

Մարկ Ժ 7 33

Ղուկ Ե 10

Է Որտման որդիներ: <sup>18</sup>Նաև՝ Անդրէասին և Փիլիպպոսին և Բարթողոմէոսին և մաքսավոր Մատթէոսին և Թովմասին և Ալփեոսի որդի Յակոբոսին և Թադէոսին և Սիմոն Կանանացուն <sup>19</sup>և Յուդա Իսկարիովտացին, որը և նրան մատնեց:

<sup>37</sup>Եվ ոչ ոքի թույլ չտվեց իր հետ գնալ, այլ միայն Պետրոսին, Հակոբոսին և նրա եղբորը՝ Յովհաննեսին:

Կեց օր հետո Յիսուս իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբոսին և Յովհաննեսին ու առանձին նրանց հանեց մի բարձր լերան վրա և նրանց առաջ պայծառակերպվեց:

<sup>35</sup>Զեբեդէոսի որդիները՝ Հակոբոսը և Յովհաննեսը, գնացին նրա մոտ և ասացին նրան. «Վարդապետ, ինչ որ քեզնից պիտի խնդրենք, կամենում ենք, որ անես մեզ համար»:

<sup>41</sup>Այդ լսելով՝ տասը առաքյալները սկսեցին բարկանալ Հակոբոսի և Յովհաննեսի վրա:

<sup>3</sup>Եվ մինչ նստած էր նա Զիթենյաց լերան վրա, տաճարի դիմաց, Պետրոսն ու Հակոբոսը և Յովհաննեսն ու Անդրէոսը, առանձին, հարցողին նրան. <sup>4</sup>«Ասա՝ մեզ, Ե՞ր պիտի լինի այդ, և ի՞նչ կլինի նշանը, երբ կատարվելու լինի այդ բոլորը»:

<sup>33</sup>Եվ նա իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբոսին և Յովհաննեսին և սկսեց տիսրել ու տագնապել:

Զքանի որ վախը պատել էր նրան և բոլորին, որ նրա հետ էին, իրենց բրնած ծկների քանակի պատճառով. <sup>10</sup>Նույնպէս և Զեբեդէոսի որդիներին՝ Հակոբոսին և Յովհաննեսին, որոնք Սիմոնի որսակիցներն էին. և Յիսուս Սիմոնին ասաց. «Մի՛ վախեցիր, այսուհետև դու մարդկանց պիտի որսաս կհանքի համար»:



<sup>14</sup>ՉՍիմովն զոր եւ Պետրոսն անուանեաց, եւ զԱնդրեաս գեղբայր նորին, եւ զՅակովոս, եւ զՅովհաննէս, եւ զՓիլիպոս, եւ զԲարթողոմէոս, <sup>15</sup>եւ զՄատթէոս, եւ զԹովմաս, եւ զՅակովոս Ալփեայ, եւ զՍիմովն զԿոչեցեալն Նախանձայոյզ, <sup>16</sup>եւ զՅուղա Յակովոս, եւ զՅուղա Իսկարիովտացի, որ եղեւ իսկ մատնիչ:

<sup>51</sup>Եւ մտեալ ի տունն՝ ոչ զոք եթող մտանել, բայց միայն զՊետրոս եւ զՅակովոս եւ զՅովհաննէս եւ զիայր մանկանն եւ զմայր նորա:

<sup>28</sup>Եւ եղեւ յետ այս բանից իբրեւ աւուրջ ութ, առեալ զՊետրոս եւ զՅակովոս եւ զՅովհաննէս՝ ել ի լեան կալ յալօթ:

<sup>54</sup>Իբրեւ տեսին աշակերտքն, Յակովոս եւ Յովհաննէս, ասեն. Տեր, կանի՞ս զի ասասցութ, եւ իջցէ հուր յերկնից եւ սատակեսցէ զնոսա:

Ղուկ Զ 14

<sup>14</sup>Սիմոնին, որին էլ Պետրոս կոչեց, և Անդրեասին՝ նրա եղբորը, Հակոբոսն, Յովհաննեսին, <sup>15</sup>Փիլիպպոսին, Բարթողոմէոսին, Մատթէոսին, Թովմասին, Ալփեոսի որդի Յակովոսին, Սիմոնին Նախանձահույզ կոչվածին, <sup>16</sup>Յակորի որդի Յուդային և Իսկարիովտացի Յուդային, որը և մատնիչ եղավ:

Ղուկ Ը 51

<sup>51</sup>Եվ նրա տունը մտնելով՝ ոչ ոքի չըողեց ներս մտնել, բայց Պետրոսից, Հակոբոսից, Յովհաննեսից և երեխայի հորից ու մորից:

Ղուկ Թ 28

<sup>28</sup>Եվ այս խոսքերից մոտ ութ օր հետո, իր հետ վերցնելով Պետրոսին, Հակոբոսին և Յովհաննեսին, նա լեռ ելավ աղոթքի կանգնելու:

Ղուկ Թ 54

<sup>54</sup>Երբ նրա աշակերտները՝ Հակոբոս և Յովհաննեսը, այդ տեսան, ասացին. «Տե՛ր, կամենու՞ն ես, որ ասենք, և երկնքից կրակ իջնի ու բնաջինջ անի նրանց»:

**Նակորոս** (եբր. «գարշապարից բռնող», փիսր. «խարդախ»): Քրիստոսի տասներկու առաքյալներից, Զեբեդեոսի ավագ որդին, Հովհաննես առաքյալի եղբայրը: Հակոբոսն ու Հովհաննեսը Գալիլիայի ծովեզերքին իրենց ուռկաններն էին կարգի բերում, երբ Հիսուս նրանց կոչում է առաքելության: Հուկասը հայտնում է, որ երկու եղբայրները Սիմոնի և Անդրեասի՝ Հովհաննեսի որդիների որսակիցներն էին: Հակոբոսը գրեթե միշտ եղբոր հետ է հիշատակվում: Հակոբոսը, Հովհաննեսը և Պետրոսը Հիսուսի ամենամտերիմ աշակերտներն էին, նրա կյանքի, գործերի, մահվան և հարության ականատեսները: Նրանք ներկա են եղել Հայրոսի դստեր հարությանը, Հիսուսի

պայծառակերպությանը, Գեթսեմանիի պարտեզում նրա տագնապի պահին: Իրենց նախանձախնդրության և կրքութության պատճառով, ինչն ակնհայտ կերպով դրսեորվում է սամարական մի անհյուրընկալ գյուղի վրա կրակ թափելու ցանկության մեջ, եղբայրները վաստակում են «Բաներեգես»՝ «որոտման որդիներ», մականունը:

Առաքելության կոչվելուց տասնհինգ տարի անց Հակոբոսը դառնում է Հերովդես Ագրիպպաս Ա-ի քաղաքական նկրտումների գոհը: Նրա սպանությունից շատ չանցած մեռնում է նաև Հերովդեսը: Հակոբոսի նահատակությունը տասներկու առաքյալներից գոյն մեկի մահվան միակ հավաստի և աստվածաշնչյան արձանագրությունն

է: Հակոբոսն առաջինն էր, որ պիտի խմեր իր Տիրոջ մահվան բաժակից և մկրտվեր իր Տիրոջ չարչարանքների մկրտությամբ, ինչպես խոստացել էր Տերը:

Հստ ԺԵ դարի մի ավանդության, Հակոբոսը նահատակությունից առաջ մեկնել է Իսպանիա: Իսպանական մեկ այլ ավանդության համաձայն՝ Հակոբոսը ան աճյունը տեղափոխվել է Սանտյագո

դե Կոմպոստելա (Հյուսիսային Իսպանիա), և նրա գերեզմանն այսօր էլ մեծ ուխտատեղի է: Երուսաղեմի Հին քաղաքի Արևմտյան բլրի վրա վեր է խոյանում ԺԲ դարում հիմնված հայկական Սբ Հակոբոս եկեղեցին, որտեղ ավանդության համաձայն՝ գտնվում է առաջին նահատակ առաքյալի՝ Հակոբոսի գերեզմանը:



## ՀԱԿՈԲՈՍ առաքյալ՝ Ալփեոսի որդի

<sup>2</sup>Եւ առաքելոցն երկոտասամից էին անուանք այսորիկ. առաջին Սիմովն, անուաննեալն Պետրոս, եւ Անդրեաս եղբայր նորա, <sup>3</sup>Յակովոս Զեբեդեայ եւ Յովհաննես եղբայր նորա, Փիլիպպոս եւ Բարթողոմեոս, Թովմաս եւ Մատթեոս մաքսատոր, <sup>5</sup>Յակովովն Ալփեայ եւ Ղերեոս որ անուանեցաւն թաղեոս, <sup>6</sup>Սիմովն Կանանացի եւ Յուդա Իսկարիովտացի, որ եւ մատնեացն զնա:

<sup>16</sup>Եւ եդ անուն Սիմովնի՝ Պետրոս, <sup>17</sup>եւ Յակովու Զեբեդեայ եւ Յովհաննու եղբօրն Յակովբայ՝ եդ նոցա անուանն Բաներեգես, որ է Որդիք որոտման. <sup>18</sup>Եւ զԱնդրեաս, եւ զՓիլիպպոս, եւ զԲարթողոմեոս, եւ զՄատթեոս զմաքսատորն, եւ զԹովմաս, եւ <sup>19</sup>Յակովովն Ալփեայ, եւ զԹաղեոս, եւ զՍիմովն Կանանացի, <sup>20</sup>եւ զՅուդա Իսկարիովտացի, որ եւ մատնեացն զնա:

<sup>14</sup>ՉՍիմովն զոր եւ Պետրոսն անուանեաց, եւ զԱնդրեաս գեղբայր նորին, եւ զՅակովոս, եւ զՅովհաննես, եւ զՓիլիպպոս, եւ զԲարթողոմեոս, <sup>15</sup>եւ զՄատթեոս, եւ զԹովմաս, եւ <sup>16</sup>Յակովովն Ալփեայ, եւ զՍիմովն զկոչեցեալն Նախանձայոյգ, <sup>17</sup>եւ զՅուդա Յակովբայ, եւ զՅուդա Իսկարիովտացի, որ եղեւ իսկ մատնիչ:

**Հակոբոս** (եբր. «գարշապարից» կիսու. «խարդախ»): Քրիստոսի տասներկու առաքյալներից, Ալփեոսի որդին: Հիսուսի համբարձումից հետո երուսաղեմի Վերնատանը նա ներկա է եղել Հուդային փոխարինող Մատաթիա առաքյալի ընտրությանը: Մատթեոսի և Մարկոսի Ավետարաններում, տասներկուսի ընտրության դրվագում, Հակոբոսը և Թադեոսը Հիշատակվում են որպես Ալփեոսի որդիներ: Մարկոսը նշում

Մատթ Ժ 3

<sup>2</sup>Եվ տասներկու առաքյալների անունները սրանք էին. առաջին Սիմոն Պետրոս կոչվածը, և նրա եղբայրը Անդրեաս, <sup>3</sup>Զեբեդեոսի որդի Յակոբոս և նրա եղբայրը Յովհաննես, Փիլիպպոս և Բարթողոմեոս, Թովմաս և Մատթեոս մաքսավոր, Ալփեոսի որդի <sup>5</sup>Յակովովն և Ղերեոս, որ թաղեոս կոչվեց, <sup>6</sup>Սիմոն Կանանացի և Յուդա Իսկարիովտացի, որ և մատնեց նրան:

Մարկ Գ 18

<sup>16</sup>Եվ Սիմոնի անունը Պետրոս դրեց <sup>17</sup>և Զեբեդեոսի որդու՝ Յակոբոսի ու նրա եղբոր՝ Յովհաննեսի անունները դրեց Բաներեգես, որ նշանակում է Որտնան որդիներ: <sup>18</sup>Սակա Անդրեասին և Փիլիպպոսին և Բարթողոմեոսին և մաքսավոր Մատթեոսին և Թովմասին և Ալփեոսի որդի <sup>19</sup>Յակովովն և Թաղեոսին և Սիմոն Կանանացուն <sup>20</sup>և Յուդա Իսկարիովտացուն, որը և նրան մատնեց:

Ղուկ Զ 15

<sup>14</sup>Սիմոնին, որին էլ Պետրոս կոչեց, և Անդրեասին՝ նրա եղբորը, Յակոբոսին, Յովհաննեսին, <sup>15</sup>Փիլիպպոսին, Բարթողոմեոսին, Մատթեոսին, Թովմասին, Ալփեոսի որդի <sup>16</sup>Յակովովն և Սիմոնին՝ Նախանձահույզ կոչվածին, <sup>17</sup>Յակոբի որդի Յուդային և Իսկարիովտացի Յուդային, որը և մատնիչ եղավ:

Էյս Հակոբոսի մասին այլեւս ոչինչ հայտնի չէ: Նրան տեառնեղբայր Հակոբոսի կամ Հակոբոս Կրտսերի հետ նույնացնելու համար բավարար վկայություն չկա:

## ՀԱԿՈԲՈՍ Հիսուսի Եղբայրը

<sup>55</sup>Ո՞չ սա է հիւսանն որդի. ո՞չ մայր սորա կոչի Մարիամ, եւ Եղբայրը սորա՝ Յակովը՝ եւ Յովանն եւ Սիմոն եւ Յուդա.<sup>56</sup>Եւ քորք սորա ո՞չ ամենքեան առ մեզ են. արդ ուստի՝ է սմա այս ամենայն:

<sup>37</sup>Ո՞չ սա է մանուկ հիւսանն եւ որդին՝ Մարիեմայ, Եղբայր Յակովը, եւ Յովանն եւ Յուդայի եւ Սիմոնի, եւ չիցե՞ն քորք դորա աստ առ մեզ: Եւ գայթակղին ի նա:

Մատթ Ժ 55

<sup>55</sup>Սա հյուսնի որդին չէ. սրա մայրը չէ, որ Մարիամ է կոչվում. և սրա Եղբայրները՝ Յակովը, Յովանն, Սիմոն և Յուդա: <sup>56</sup>Եվ սրա քույրերը բոլորը մեզ մոտ չե՞ն. և արդ, որտեղից է սրան այս բոլորը»:

Մարկ Զ 3

<sup>37</sup>Սա հյուսնի տղան և Մարիամի որդին չէ միթե, Յակովը և Յովանն ու Յուդայի և Սիմոնի Եղբայրը. և սրա քույրերը այստեղ մեզ մոտ չե՞ն: Եվ նրանով գայթակղվում էին:

**Տակորոս** (եբր. «գարշապարից բռնող», փխր. «խարդախ»): Հիսուսի չորս եղբայրներից կամ քեռորդիներից մեկը: Հակոբոսի՝ «Տիրոջ եղբոր» դարձը, թերևս տեղի է ունեցել Հարուցյալ Հիսուսի երեսման շնորհիվ, որի մասին հիշատակում է Պողոս առաքյալը (Ա. Կորնթ ԺԵ 7): Շուտով Հակոբոսը երուսաղեմի քրիստոնեական եկեղեցու առաջնորդն է դառնում: Գաղատիայի եկեղեցուն ուղղված թղթի ինքնակենսագրական հատվածներում Պողոսը պատմում է իր դարձից (35-36թթ.) և անապատում մնալուց հետո երուսաղեմում երկու շաբաթ Պետրոսի և Հակոբոսի հետ անցկացնելու մասին: Հերովդես Ագրիպաս Ա-ի կողմից բանտից ազատվելուց հետո (ՔՀ 44թ.) Պետրոսն իր ընկերներին խնդրում է. «Այս բաները պատմեցե՞ք Հակոբոսին և Եղբայրներին» (Գրծ ԺԲ 17): Գաղատացիներին ուղղված թղթում Պողոսը պատմում է, թե ինչպես է ինքը, դարձի գալուց տասնչորս տարի հետո, հեթանոսների մեջ կատարած իր առաքելությունը

քննարկում Հակոբոսի, Կեփասի և Հովհաննեսի հետ, որոնք եկեղեցու այուներէին համարվում:

Թեև քրիստոնեական նախնական եկեղեցին երուսաղեմից տեղափոխվել էր Անտիոք, եկեղեցու հենարանը շարունակում էր մնալ երուսաղեմում: Այնտեղ կար մի հզոր հրեական քրիստոնեական համայնք, որ պայքարում էր Սովուսի Օրենքին անհավատարիմ հեթանոսների դեմ: Թե՛ հրեաների և թե՛ հեթանոսների մեջ Հակոբոսը մեծ ակնածանք էր վայելում՝ իր բարեպաշտության և քաղաքական խորաթափանցության շնորհիվ: Պողոսն ու Բառնաբասը երուսաղեմից ուղարկվում են Անտիոք՝ հեթանոսությունից դարձած քրիստոնյաներին ընդունելու խնդիրը հարթելու նպատակով:

Հակոբոսի գլխավորությամբ գումարված երուսաղեմի առաքելական ժողովը (48-49թթ.) որոշում է ընդունում, որի համաձայն Աստծուն դարձած հեթանոսները պարտավորվում են հեռու մնալ կուռքերին մատուցված զոհերից,



խեղամահ արված կենդանիների մսից, պոռնկությունից և մերձավոր ազգաւկանների միջև ամուսնությունից։ Այսպիսով աշյանը հրաժարվում է Օրենքը հեթանոսներին պարտադրելուց, բացառությամբ մի քանի կարևոր կետերի։ Սրանից քաջալերված՝ Պողոսն ու Բառնաբասը շարունակում են քարոզել Անտիռում։ Հակոբոսը և հրեական ծագում ունեցող այլ քրիստոնյաներ շարունակում են հավատարիմ մնալ Մովսեսի Օրենքին։

Երբ Պողոսը վերջին անգամ այցելում է Երուսաղեմ (58թ.), Հակոբոսն ու քրիստոնեական եկեղեցու երեցներն անհանգստանում են նրա համար։ «Տեսնո՞ւմ ես, եղբա՛յր, հազարավոր հավատացյալ հրեաներ կան, և բոլորն էլ նախանձախնդիր են օրենքին։ Բայց քո մասին իրազեկ եղանք, թե հեթանոսների մեջ գտնվող բոլոր հրեաներին ուսուցանում ես հրաժարվել Մովսեսի Օրենքից։ ասում ես, որ նրանք իրենց որդիներին չթլփատեն և կրոնի ավանդությունների համաձայն չգնան» (ԳրծիԱ. 20-22)։ Հակոբոսի առաջարկով Պողոսը մասնակցում է Տաճարում կատարվող յոթնօրյա ծիսական մաքրման արարողությանը։ Այնուամենայնիվ Պողոսը ձերբակալվում է և տարվում Հոգեամամահ պատմիչներ Հովսեփոս Փլավիոսն (Ա. դ.) ու Հեգեսիպոսը (Բ. դ.), երկուսն էլ Պաղեստինի բնակիչներ, տեղեկացնում են քահանայապետի և Սինեղրիոնի կողմից հրահրված Հակոբոսի սպանության մասին (62թ.)։ Տաճարի պարսպի վրայից Հակոբոսին նետել են Կեղրոնի հեղեղատը, որտեղից նրա դին դուրս է բերել սիլովամցի մի թաղիքագործ։

**Տակորոս՝ Ընդհանրական թղթի հեղինակ:** Այս նամակը կոչվել է «Հակոբոս Երուսաղեմացու հովվական թուղթ»։ Թեև այն ավանդաբար վերագրվում է Հակոբոսին՝ Հիսուսի եղբորը, սակայն առավել հավանական է, որ «սփյուռքում եղող տասներկու ցեղերին» ուղղված այս քարոզը պատկանում է ոմն անհայտ ուսուցչի և գրվել է 90թ. շեմին։ Եկեղեցին, որին հեղինակն ուղղում է իր խոսքը, ղեկավարում են Երեցները։ Եպիսկոպոսների և սարկավագների մասին ոչինչ չի ակնարկվում։ Միայն Դ դարում է, որ Արևմուտքում այս թուղթն ընդգրկվում է Նոր Կտակարանի կանոնում։ Պատճառը թերևս այն էր, որ նամակի սկզբում հիշատակվում էր Հակոբոսի Տիրոջ եղբոր անունը։ «Հակոբոսը՝ Աստծո և Տեր Հիսուս Քրիստոսի ծառան» (Հակ Ա. 1)։

## ՀԱՅՐՈՍ

<sup>22</sup>Եւ ահա մի ի ժողովրդապետացն գայր, որում անուն էր Յայրոս, եւ իբրեւ ետես զնա անկաւ առ ոտս նորա. <sup>23</sup>աղաչի զնա յոյժ եւ ասէր թէ՝ Դուստր նորա մերձ է ի մահ, զի եկեալ դնիցէ նմա ձեռն, որպէս զի ապրեսցի եւ կեցցէ:

<sup>41</sup>Եւ ահա եկն այր մի որում անուն էր Յայրոս, եւ նա էր իշխան ժողովրդան, անկեալ առ ոտսն Յիսուսի՝ աղաչի զնա մտանել ի տուն նորա. <sup>42</sup>զի դուստր միամօր էր նորա ամաց իբրեւ երկոտասանից, եւ էր մերձ ի մահ. եւ ընդ երթալն նորա ժողովուրդը նեղէին զնա

Մարկ 6 22

<sup>22</sup>Ահա եկավ ժողովրդապետներից մեկը, որի անունը Հայրոս էր. և երբ տեսավ նրան, նրա ոտքերն ընկավ. <sup>23</sup>սաստիկ աղաչում էր նրան ու ասում, որ իր դուստրը մահամերձ է, և որ նա գա ու նրա վրա իր ձեռքը դնի, որպեսզի առողջանա և ապրի:

Ղուկ Ը 41

<sup>41</sup>Եվ ահա եկավ մի մարդ, որի անունը Հայրոս էր, և որը ժողովրդապետ էր: Յիսուսի ոտքերն ընկնելով՝ նա աղաչում էր նրան, որ իր տունը մտնի, <sup>42</sup>որովհետև նա մոտ տասներկու տարեկան մի միամորդիկ դուստր ուներ, որ մահամերձ էր: Եվ երբ Յիսուս գնում էր, ժողովուրդը նրան նեղում էր:

**Տայրոս** (եբր. «Տիրոջից լուսավորված»): Տեղական սինհեղբիոնի պարագլուխ, ով ղեկավարում էր Կափառնայումի ժողովարանում մատուցվող պաշտամունքը և համայնական կյանքը: Հիսուս վերակենդանացնում և բժշկում է նրա մահացած տասներկուամյա դստերը:

Այս հրաշքի մասին պատմում են միայն համատես Ավետարանները: Բուն պատումը հանդիպում է Մարկոսի մոտ, Ղուկասի մոտ՝ համառոտ, Մատթեոսի մոտ՝ այնքան հակիրճ, որ չի հրշատակվում նույնիսկ Հայրոսի անունը:

Նրա դուստրը մահամերձ էր, ինչի համար ընկնում է Հիսուսի ոտքերը և նրան աղաչում գալ իր տուն: Նրանց անմիջապես հետեւում է ամբոխը՝ գուցե այն պատճառով, որ Հայրոսը մեծ հեղինակություն և համբավ վայելող անձ էր:

Երբ մոտենում են Հայրոսի տանը, ինչոր մեկը Հայրոսին հայտնում է նրա դստեր մահվան գույժը: Ուշադրութ-

յուն չգարձնելով դրան՝ Հիսուս ուղղակի գառնում է Հայրոսին և ասում. «Մի՛ վախեցիր, այլ միայն հավատա՛»: Երբ տեղ են հասնում և տեսնում, որ ամենքը լաց են լինում ու ողբում, Հիսուս ասում է. «Ինչո՞ւ եք խոռված ու լաց եք լինում. մանուկը մեռած չէ, այլ ննջում է» (Մարկ 6 36, 39): Ներկաներն արհամարհանքով ծիծաղում են նրա վրա, որովհետև աղջիկն իսկապես մեռած էր: Հիսուս միայն երեխայի ծնողներին և Պետրոսին, Հակոբոսին ու Հովհաննեսին է թույլատրում մտնել այնտեղ, որտեղ պառկած էր աղջնակը: Ապա Հիսուս երեխային հրամայում է վեր կենալ: Մարկոսը մեջբերում է Հիսուսի արամեերեն ասված խոսքերը. «Տալի՛թա, կումի. աղջի՛կ, դո՛ւ, քե՛զ եմ ասում, վե՛ր կաց» (Մարկ 6 41): Աղջիկն իսկույն վեր է կենում ու քայլում, և ամենքը խիստ զարմանում են: Հիսուս պատվիրում է լոել կատարվածի մասին և աղջկան ուտելու բան տալ:



## ՀԵՐՈՎԴԵՍ արքա

<sup>1</sup>Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղեհեմ Հրեաստանի յաւուրս Հէրովդու արքայի, ահա մոգք յարեւելից եկին յերուսաղեմ, <sup>2</sup>Եւ ասեն. Ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից. զի տեսաք զաստղն նորա յարեւելս, եւ եկաք երկիր պագանել նմա:

<sup>3</sup>Եւ իբրեւ լուաւ արքայ Հէրովդէս, խոռվեցաւ, եւ ամենայն երուսաղեմ ընդ նմա:

<sup>7</sup>Յայնժամ Հէրովդէս գաղտ կոչեաց զմնակն, եւ ստուգեաց ի նոցանէ զժամանակ աստեղն երեւելոյ. <sup>8</sup>Եւ արձակեալ զնոսա ի Բեթղեհեմ, ասէ. Գնացեք, ստուգեցեք վասն մանկան, եւ յորժամ գտանիցեք, ազդ արասցիք ինձ, զի եւ ես եկեալ երկիր պացից նմա:

<sup>12</sup>Եւ իրաման առեալ ի տեսլեան շդառնալ անդրեն առ Հէրովդէս՝ ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց:

<sup>13</sup>Եւ իբրեւ գնացին նոքա անտի, ահա հրեշտակ Տեառն երեւէր ի տեսլեան Յովսեփու եւ ասէր. Արի, առ զմանուկդ եւ զմայր իւր, եւ փախիր յեզիւտոս, եւ անդ լինիցիր ցորժամ ասացից քեզ. քանզի ի խնդիր է Հէրովդէս կորուսանել զմանուկդ:

<sup>14</sup>Եւ նա յարուցեալ առ զմանուկն եւ զմայր իւր գիշերի, եւ գնաց յեզիւտոս, եւ անդ էր մինչեւ ցվախճան Հէրովդէս. <sup>15</sup>զի լցցի ասացեալն ի Տեառնէ ի ծեռն մարգարեին որ ասէ. Յեզիւտոսէ կոչեցից զորոի իմ:

Մատթ Բ 1

<sup>1</sup>Երբ Յիսուս ծնվեց Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում, Հէրովդէս արքայի օրով, ահա արևելքից մոգեր եկան երուսաղեմ և ասացին. <sup>2</sup>«Ու՞ր է իրեաների արքան, որ ծնվեց, որովհետև նրա աստղը տեսանք արևելքում և եկանք նրան երկրպագելու»:

Մատթ Բ 3

<sup>3</sup>Եվ երբ Հէրովդէս արքան լսեց այս, խոռվեց, նրա հետ՝ և երուսաղեմի ամբողջ ժողովուրդը:

Մատթ Բ 7

<sup>7</sup>Այս ժամանակ Հէրովդէսը գաղտնի կանչեց մոգերին և նրանցից ստուգեց աստղի երևալու ժամանակը: <sup>8</sup>Եվ նրանց Բեթղեհեմ ուղարկելով՝ ասաց. «Գնացեք ստույգ ինացեք մանկան մասին և երբ գտնեք, տեղեկացրեք ինձ, որպեսզի ես էլ զնամ երկրպագեմ նրան»:

Մատթ Բ 12

<sup>12</sup>Եվ երազի մեջ Աստծուց իրաման առնելով չվերադառնալ Հէրովդէս՝ մոտ, այլ ճանապարհով գնացին իրեանց երկիրը:

Մատթ Բ 13

<sup>13</sup>Եվ երբ նրանք այնտեղից գնացին, ահա Տիրոջ հրեշտակը երազի մեջ երևաց Յովսեփին ու ասաց. «Վեր կաց, վերցրու՝ այդ մանկանը և նրա մորը ու փախիր Եգիպտոս. և այնտեղ մնա՛ մինչև որ քեզ ասեն. քանի որ Հէրովդէսը փնտրում է այդ մանկանը կորհստիան մատնելու համար»:

Մատթ Բ 14

<sup>14</sup>Եվ նա վեր կացավ, առավ մանկանն ու նրա մորը, գիշերով, և զնաց Եգիպտոս ու այնտեղ մնաց մինչև Հէրովդէս՝ մահը, <sup>15</sup>որպեսզի կատարվի մարգարեի բերանով Տիրոջ կողմից ասվածը, թե՝ Եգիպտոսից պիտի կանչեմ իմ Որդուն:

<sup>16</sup>Յայնժամ իբրեւ ետես ՀԵՐՈՎԴԵԿԱ թէ խարեցաւ ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ. Եւ առաքեաց կոտորեաց զամենայն մանկունս որ էին ի Բերդեհեմ Եւ յամենայն սահմանս նորա յերկեմենից Եւ ի խոնարհ՝ ըստ ժամանակին զոր ստուգեաց ի մոգուցն:

<sup>19</sup>Եւ ի վախճանելոն ՀԵՐՈՎԴԵԿԻ՝ ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երեւեր Յովսեփիայ յԵղիպտոս, <sup>20</sup>Եւ ասէր. Արի, առ զմանուկու Եւ զմայր իւր, Եւ գնա յերկիրն իսրայելի, զի մեռան որ խնդրեին զանձն մանկան:

<sup>22</sup>Եւ իբրեւ լուաւ եթէ Արքեղայոս թագաւորեաց Յրեաստանի փոխանակ ՀԵՐՈՎԴԵԿԻ հօրն իւրոյ, երկեաւ երթալ անդր. Եւ իրաման առեալ ի տեսլեան՝ գնաց ի կողմանս Գալիլեացւոց:

<sup>5</sup>Եւ եղեւ յաւուրս ՀԵՐՈՎԴԵԿԻ արքայի Յրեաստանի, քահանայ ոմն անուն Զաքարիա ի դասակարգէ Արիայ, Եւ կին նորա ի դստերաց Ահարոնի, Եւ անուն նորա Եղիսաբեթ:

Մատթ Բ 16

<sup>16</sup>Այն ժամանակ, երբ ՀԵՐՈՎԴԵԿԱ տեսավ, որ մոգերից խարվեց, սաստիկ բարկացավ և մարդ ուղարկեց ու կոտորեց այն բոլոր մանուկներին, որ Բերդեհեմում և նորա սահմաններում էին գտնվում և երկու տարեկան ու դրանից ցած էին՝ ըստ այն ժամանակի, որն ստուգել էր մոգերից:

Մատթ Բ 19

<sup>19</sup>Երբ ՀԵՐՈՎԴԵԿԱ վախճանվեց, ահա Տիրոց հրեշտակը երազի մեջ երևաց Յովսեփին Եգիպտոսում և ասաց. <sup>20</sup>«Վե՛ր կաց, վերցրո՛ այդ մանկան ու իր մորը և վերադարձի՛ր իսրայելի երկիրը, որովհետև մեռան նրանք, որ այդ մանկան մահն էին ուզում»:

Մատթ Բ 22

<sup>22</sup>Իսկ երբ լսեց, թէ Արքեղայոսը թագավորել է Յրեաստանի վրա իր հոր՝ ՀԵՐՈՎԴԵԿԻ փոխարեն, վախեցավ այնտեղ գնալ. և երազի մեջ իրաման առնելով՝ գնաց Գալիլիայի կողմերը:

Ղուկ Ա 5

<sup>5</sup>Յրեաստանի ՀԵՐՈՎԴԵԿԱ թագավորի օրով, Արիայի քահանայական ընտանիքից Զաքարիա անունով մի քահանա կար, որի կինը Ահարոնի դստերից էր. նրա անունը Եղիսաբեթ էր:

**Տերովդես Մեծ:** Հրեաների թագավոր (ՔԱ 37-4ԹՁ.): Քաղաքական խորաթափանցության և կատարյալ դիվանագիտության չնորհիվ նա ընդարձակում է իր իշխանությունը՝ հրեական բոլոր տարածքների չորրորդապետը դառնալու նկրտումով, և ՔԱ 40Թ. Հոռմում նշանակվում է Հրեաստանի թագավոր: Զնայած իր եղոմական ծագմանը՝ Հերովդեսը ցանկանում էր, որ իրեն վերաբերվեին որպես իսկական հրեայի: Միաժամանակ նա մեծ համակրանք էր տածում հունական մշակութիւն ու գրականության նկատմամբ:

Հերովդեսը մեծ շինարար էր: Նա ոչ միայն երուսաղեմի տաճարի, Քեքրոնում գտնվող նահապետների քարանձավի վրա վեր խոյացող սրբարանի, Սամարիայի, Երիքովի, Բեթղեհեմի, Սասադայի, Մաքերուսի բազմաթիվ պալատ-ամրոցների, երուսաղեմի Անտոնիայի ամրոցի, այլև Հեռավոր Դամասկոսի, Անտիոքի և Բիբլոսի մի շարք կոթողների հիմնադիրն է:

Հերովդեսը խելացի քաղաքագետ էր, հմուտ, բայց անկանխատեսելի կառավարիչ, և բացարձակ անողորմ, երբ



սպառնալիքի տակ էր իր անվտանգությունը: Նա իր կանանցից մեկին և երկու որդիներին մահապատճի է ենթարկել: Նրան բնորոշել են որպես «երկու հոգի ունեցող գժբախտ մարդու»՝ ժամանակակից մարդու հոգի, որ հելլենիստական մշակույթի կրողն էր և տենչում էր հեռանալ անապատ (նրա բոլոր ամրոցներն անապատի սահմաններին են), մյուսը՝ մեսիական ձգտումներ ունեցող կառավարչի:

Հերովդես Մեծը մահացել է ՔԱ 4թ., և Մատթեոսի Ավետարանից մեզ հայտնի է, որ Հիսուս նրա իշխանության օրոք է ծնվել: Հերովդեսն Արևելքից եկած մոգերին ուղարկում է Բեթղեհեմ՝

պատվիրելով վերադառնալ նորածին «Հրեաների թագավորի» մասին տեղեկություններով: Մոգերի կողմից խարշած՝ Հերովդեսը հրամայում է կոտորել Բեթղեհեմի անմեղ մանուկներին: Հերովդեսը թաղվել է Բեթղեհեմին կից իր ամառանոցում:

Հերովդեսի մահից հետո նրա թագավորությունը, ինչպես ինքն էր կամեցել, բաժանվում է նրա երեք որդիների միջև. Հրեաստանը, Սամարիան և Եղոմն անցնում են Արքեղայոսին՝ որպես երրորդապետի, Գալիլիան ու Բերիան՝ Անտիպատասին՝ որպես չորրորդապետի, Հյուսիսարևելյան տարածքները՝ Փիլիպպոսին:

## ՀԵՐՈՎԴԵՍ՝ ԳԱԼԻԼԻԱՅԻ ՀՈՐՌՈՌԴԱՎԵՏ

<sup>1</sup>Յայնմ ժամանակի լուաւ ՀԵՐՈՎԴԵՍ՝ չորրորդապետ զլուկը Յիսուսի. <sup>2</sup>Եւ ասէ ցօառայս իւր. Նա է Յովհաննէս մկրտիչ. Նա յարեաւ ի մեռելոց, եւ վասն այնորիկ օօրութիւնք լինին նովաւ:

<sup>3</sup>Քանզի ՀԵՐՈՎԴԵՍ՝ կալաւ զՅովհաննէս, կապեաց զնա եւ եղ ի բանտի վասն Յերովդիայ, կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա:

<sup>6</sup>Եւ իբրեւ եղեն ծնունդը ՀԵՐՈՎԴԵՍ, կաքաւեաց դուստրն Յերովդիայ ի մէջ բազմականին. Եւ հաճոյ թուեցաւ ՀԵՐՈՎԴԵՍ:

<sup>14</sup>Եւ լուաւ արքայ ՀԵՐՈՎԴԵՍ, քանզի յայտնի եղեւ անուն նորա, եւ ասէր թէ Յովհաննէս մկրտիչ յարեաւ ի մեռելոց, եւ վասն այնորիկ օօրութիւնք լինին նովաւ:

<sup>16</sup>Իբրեւ լուաւ ՀԵՐՈՎԴԵՍ, ասէ. Զորոյ ես զգլուխն հատի զՅովհաննու, սա է նա, յարեաւ ի մեռելոց:

<sup>17</sup>Զի ինքն ՀԵՐՈՎԴԵՍ առաքեաց կալաւ զՅովհաննէս, եւ կապեաց զնա եւ եղ ի բանտի վասն Յերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա, զի նա կին արար զնա:

<sup>18</sup>Քանզի ասէր Յովհաննէս ԱՀԵՐՈՎԴԵՍ՝ թէ Ոչ է օրէն թեզ ունել զկին եղբօր քո:

<sup>20</sup>Զի ՀԵՐՈՎԴԵՍ երկնչէր ի Յովհաննէտ, քանզի զիտէր զնա այր արդար եւ

Մատթ ԺԴ 1

Այն ժամանակ ՀԵՐՈՎԴԵՍ չորրորդապետը լսեց Յիսուսի համբավը և իր ծառաներին ասաց. <sup>2</sup>«Նա՝ է Յովհաննէս Սկրտիչը. մեռելներից հարություն է առել, և դրա համար նրա միջոցով զորավոր գործեր են լինում»:

Մատթ ԺԴ 3

Արդարիս ՀԵՐՈՎԴԵՍ ձերբակալել էր Յովհաննէսին, նրան կապել և բանտի մէջ էր դրել իր եղբօր՝ Փիլիպպոսի կնոջ՝ Յերովդիայի պատճառով:

Մատթ ԺԴ 6

Եվ երբ ՀԵՐՈՎԴԵՍ ծննդյան տարեդարձը հասավ, Յերովդիայի դուստրը հրավիրյալների առաջ պարեց. և հաճելի թվաց ՀԵՐՈՎԴԵՍին:

Մարկ Զ 14

Եվ ՀԵՐՈՎԴԵՍ արքան լսեց այս բաները, որովհետև Յիսուսի անունը հայտնի էր դարձել. և նա ասաց. «Յովհաննէս Սկրտիչը հարություն է առել մեռելներից, և դրա համար զորություններ են գործվում նրա միջոցով»:

Մարկ Զ 16

Երբ ՀԵՐՈՎԴԵՍ այս լսեց, ասաց. «Յովհաննէսը, որի զգլուխը կտրեցի ես, սա նա՛ է. մեռելներից հարություն է առել»:

Մարկ Զ 17

Արդարի, ինքը՝ ՀԵՐՈՎԴԵՍ էր մարդ ուղարկել, ձերբակալել էր Յովհաննէսին, կապել նրան ու բանտարկել՝ իր եղբօր՝ Փիլիպպոսի կնոջ՝ Յերովդիայի պատճառով, քանի որ Յերովդեսը նրան իրեն կին էր դարձրել:

Մարկ Զ 18

Եւ քանի որ Յովհաննէսը ՀԵՐՈՎԴԵՍին ասում էր. «Քո եղբօր կնոջը թեզ կին առնելը օրինավոր չէ»:

Մարկ Զ 20

Որովհետև ՀԵՐՈՎԴԵՍ վախենում էր Յովհաննէսից, քանի որ նրան գի-

սուրբ, եւ սպասէր նմա, եւ լուեալ ի նմանէ՝ բազում ինչ առներ, եւ քաղցրութեամբ լսէր նմա:

<sup>21</sup>Իբրեւ օր մի լիներ պարապոյ, յորժամ ընթրիս տայր Հերովում յաւուր ծննդոց իւրոց նախարարաց իւրոց եւ հազարապետաց եւ մեծամեծաց Գալիլեացւոց. <sup>22</sup>Եւ ի մտանել դստերն Յերովդիայ եւ ի կաքաւել, հաճոյ եղեւ Հերովում եւ բազմականացն. ասէ թագաւորն ցաղջիկն. Խնդրեա յինէն զոր ինչ կամիս, եւ տաց քեզ:

<sup>1</sup>Ի հնգետասաներորդի ամի տէրութեանն Տիբերեայ կայսեր, ի դատաւորութեան Յիեաստանի Պիղատոսի Պոնտացւոյ, եւ ի չորրորդպետութեան Գալիլեացւոց Հերովում, եւ ի Փիլիպոսի եղբօր նորա չորրորդպետութեան Խտուրացւոց եւ Տրաքոնացւոց աշխարհին, եւ ի չորրորդպետութեան Լիւսանեայ Արիլենացւոյ, <sup>2</sup>եւ ի քահանայապետութեան Աննայի եւ Կայիափայ, եղեւ բան Աստուծոյ ի վերայ Յովիաննու որդույ Զաքարիայ յանապատի ան:

<sup>19</sup>Բայց Հերովում չորրորդպապետ յանդիմանեալ ի նմանէ վասն Յերովդիայ, կնոց երօր իւրոյ, եւ վասն ամենայն չարեացն զոր գործեաց Հերովում, <sup>20</sup>յաւել եւ զայն եւս ի վերայ ամենայնի, եւ եղ ի բանտի զՅովիաննէս:

<sup>2</sup>Եւ կանայք ոմանք՝ որ բժշկեալ էին յայսոց չարաց եւ ի հիւանդութենէ. Մարիամ՝ որ կոչէր Մագդաղենացի, յորմէ եւրն դեւն ելեալ էր. <sup>3</sup>Եւ Յովիանա՝ կիս՝ Քուզայ հազարապետին Հերովում. եւ Շուշան, եւ այլք բազումք որք պաշտէին զնա յընչից իւրեանց:

## Մարկ 2 21

տեր որպես արդար և սուրբ մարդու, և նրան հովանավորում էր ու նրան անսալով՝ շատ բաներ էր անում և քաղցրությամբ լսում էր նրան:

<sup>21</sup>Սակայն մի հարմար օր եկավ, երբ Հերովում իր ծննդյան տարեդարձի ընթրիքն էր տալիս իր նախարարներին, Գալիլիայի մեծամեծներին և հազարապետներին: <sup>22</sup>Եվ երբ Յերովդիայի դուստրը ներս մտավ և սկսեց պարել, դուր եկավ Հերովում և սեղանակիցներին. թագավորը աղջկան ասաց. «Ուզի՞ր ինձնից, ինչ որ կամենում ես, և քեզ կտան»:

## Ղուկ 4 1

<sup>1</sup>Տիբերիոս կայսեր իշխանութիւն տասնինգերորդ տարում, երբ Պոնտացի Պիղատոսը կուսակալ էր Յիեաստանի, և Հերովում՝ չորրորդպապետ Գալիլիայի, և նրա եղբայր Փիլիպոսը՝ չորրորդպապետ Խոտուրացիների ու Տրաքոնացիների աշխարհի, Լյուսանիասը՝ չորրորդպապետ Արիլենեի, <sup>2</sup>և Աննայի ու Կայիափայի քահանայապետութիւն օրով, Աստծո խոսքը լսելի եղավ Զաքարիայի որդի Յովիաննեսին անապատում:

## Ղուկ 4 19

<sup>19</sup>Բայց Հերովում չորրորդպապետը, հանդիմանված լինելով Յովիաննեսի կողմից, իր երթոր կնոց Յերովդիայի պատճառով և այն բոլոր չարութեների համար, որ Հերովում գործել էր, <sup>20</sup>այդ բոլորի վրա ավելացրեց և այն, որ Յովիաննեսին բանտարկեց:

## Ղուկ 6 3

<sup>2</sup>Եվ մի քանի կանայք, որոնք բժշկվել էին չար ոգիներից ու հիվանդություններից. Մարիամը, որ կոչում էր Մագդաղենացի, և որից յոթ դև էր դուրս եկել, <sup>3</sup>Յովիաննա՝ Հերովում՝ Վերակացուի՝ Քուզայի կինը, և Շուշան ու շատ ուրիշներ, որոնք իրենց ունեցվածքից մատակարարում էին նրան:

<sup>7</sup>Լուաւ Հերովդէս չորրորդապետ զգործսն ամենայն, եւ զարմանայր վասն ասելոյն յոնանց <sup>8</sup>թէ Յովիաննես յարեաւ ի մեռելոց, եւ յոնանց՝ թէ Եղիա յայտնեցաւ, եւ յայլոց թէ Մարգարէ ոմն յառաջնոցն յարեաւ:

<sup>9</sup>Ասէ Հերովդէս. ԶՅովիաննես ես գլխատեցի, իսկ սա ո՞վ իցէ զորմէ զայսափի իրս լսեմ: Եւ խնդրէր տեսանել զնա:

<sup>31</sup>Ի նմին աւուր մատեան ոմանք փարիսեցիք եւ ասեն ցնա. Ել եւ զնա աստի, զի Հերովդէս կամի սպանանել զքեզ:

<sup>7</sup>Եւ իբրեւ գիտաց թէ յիշխանութեն Հերովդէս է, եւ տանել զնա առ Հերովդէս. քանզի եւ նա յերուսաղէն էր յաւուրսն յայնոսիկ:

<sup>8</sup>Եւ Հերովդէս իբրեւ ետես զՅիսուս, ուրախ եղեւ յոյժ, զի ցանկայր ի բազում ժամանակաց տեսանել զնա. քանզի լսէր բազում անգամ զնմանէ, եւ ակն ունէր նշան ինչ լիեալ տեսանել ի նմանէ:

<sup>11</sup>Արիամարհեաց զնա եւ Հերովդէս հանդերձ իւրովք օօրականօքն, եւ այպն արարեալ՝ արկ զնովաւ հանդերձս սպիտակս, եւ ետ տանել անդրէն առ Պիղատոս:

<sup>12</sup>Եւ եղեն բարեկամք Պիղատոս եւ Հերովդէս յաւուր յայնմիկ, քանզի յառաջ թշնամիք էին միհեանց:

<sup>15</sup>Այլ եւ ոչ Հերովդէս, քանզի ետու տանել զդա առ նա. եւ արդ ոչինչ մահու արժանի է գործեալ դորա.

<sup>16</sup>Խրատեցից զդա եւ արձակեցից:

Ղուկ թ 7

<sup>7</sup>Հերովդէս չորրորդապետը լսեց այս բոլոր գործերը և զարմանում էր ոնանց ասածի վրա, <sup>8</sup>թէ՝ Յովիաննեսը մեռելներից հարություն է առել, իսկ ոնանց ասածի վրա, թէ՝ Եղիան հայտնվեց, և ուրիշների թէ՝ նախկին մարգարեներից մեկը հարություն է առել:

Ղուկ թ 9

<sup>9</sup>Հերովդէսն ասաց. «Յովիաննեսին ես գլխատեցի, իսկ սա ո՞վ է, որի մասին այսափի բաներ եմ լսում»: Եվ ուզում էր նրան տեսնել:

Ղուկ ժ 4 31

<sup>31</sup>Սոյն օրը մի քանի փարիսեցիներ մոտեցան և ասացին նրան. «Վե՛ր կաց, զնա՝ այստեղից, որովհետև Հերովդէսն ուզում է քեզ սպանել»:

Ղուկ ի գ 7

<sup>7</sup>Եվ երբ իմացավ, թէ Հերովդէսի իշխանությունից է, հանձնեց, որ նրան տանեն Հերովդէսի մոտ, որովհետև այդ օրերին նա էլ Երուսաղեմում էր:

Ղուկ ի գ 8

<sup>8</sup>Եվ երբ Հերովդէսը տեսավ Յիսուսին, շատ ուրախացավ, որովհետև երկար ժամանակից ի վեր ցանկանում էր նրան տեսնել, քանի որ հաճախ լսում էր նրա մասին և ակնկալություն ուներ նրա ձեռքով կատարված որևէ նշան տեսնել:

Ղուկ ի գ 11

<sup>11</sup>Հերովդէսն էլ, իր զորականներով հանդերձ, արիամարհեց նրան և ծիծաղելով նրա վրա՝ սպիտակ զգեստներ հազցնել տվեց նրան ու վերստին հանձնեց, որ տանեն նրան Պիղատոսի մոտ:

Ղուկ ի գ 12

<sup>12</sup>Եվ Պիղատոսն ու Հերովդէսը այդ օրերին բարեկամներ եղան, որովհետև առաջ իրար թշնամիներ էին:

Ղուկ ի գ 15

<sup>15</sup>Եվ ոչ էլ՝ Հերովդէսը, որի մոտ հրամայեցի, որ Յիսուսին տանեն: <sup>16</sup>Արդ, նա մահվան արժանի ոչինչ չի արել, նրան զանահարել կտամ և կ'արձակեմ»:



**Ներովդես Անտիպաս:** Գալիլիայի և Բերիայի չորրորդապետ (ՔԱ 4 - ՔՀ 39), Հերովդես Մեծի ողջ մնացած երկրորդ որդին: Նա է բանտարկում Հովհաննես Մկրտչին և եղբօր՝ Փիլիպպոսի կնոջ՝ Հերովդիայի դստեր խնդրանքով հրամայում գլխատել նրան: Հիսուս Անտիպասին «աղվես» է անվանում, եթե փարիսեցիներից լսում է, թե նա ուզում է սպանել իրեն: Անտիպասը հայտնի էր իր ծուլությամբ, անառակությամբ ու շվայտությամբ: Հստ Ղուկասի՝ Հիսուսի դատի ժամանակ Պիղատոսն իմանալով, որ Նա Անտիպասի տերությունից է և երուսաղեմ է եկել Պատերի համար, Նրան Անտիպասի մոտ է ուղարկում՝ հարցաքննության, սակայն Հիսուս հրաժարվում է պատասխանել վերջինիս հարցերին, և Նրան ետք ուղարկում Պիղատոսի մոտ:

Անտիպասը Գալիլիայի ծովի հյուսիսարևմտյան ափին հիմնում է Տիբերիա քաղաք-ամրոցը՝ իր տերության մայրաքաղաքը: Ղուկասը նրան հիշատակում է «չորրորդապետ» տիտղոսով: Մարկոսը նրան անվանում է «արքա», տիտ-

ղոս, որ Անտիպասը ապարդյուն կերպով խնդրում էր Կալիգուլա կայսրից: Անտիպասը 39թ. կանչվում է Հռոմ և աքսորվում Գալիա:

Նա ամուսնացել էր Արաբիայի թագավոր Արետասի դստեր հետ, ում հետագայում արձակելով՝ ամուսնանում է եղբօր՝ Փիլիպպոս չորրորդապետի կնոջ՝ Հերովդիայի հետ:

Հովսեփոս Փլավիոսի (Ա. դ.) վկայությամբ Արետասը վրեժինդիր է եղել դստեր համար՝ ՔՀ 36թ. Անտիպասին պարտության մատնելով: Հովսեփոսը նաև պատմում է Հովհաննես Մկրտչի՝ Անտիպասի հրամանով իրագործված գլխատման մասին: Բայց պատմիչը չի հիշատակում այն փաստը, որ Հովհաննես Մկրտիչը դատապարտել էր Անտիպասի ամուսնությունը եղբօր կնոջ հետ: Գուցե Մարկոսի և Մատթեոսի Ավետարանները թյուրիմացաբար են Հերովդիային կապել Փիլիպպոսի հետ: Հովսեփոսը նշում է, որ Հերովդիան սկզբում ամուսնացել էր հորեղբօր հետ, և հաստատում է նրա՝ Անտիպասի հետ հետագա ամուսնության փաստը:

## ՀԵՐՈՎԴԻԱ

<sup>3</sup>Քանզի Յերովդէս կալաւ գՅովհաննէս, կապեաց զնա եւ եղ ի բանտի վասն Հերովդէայ, կնոց Փիլիպպոսի եղօր նորա:

<sup>6</sup>Եւ իբրեւ եղեն ծնունդք Յերովդի, կաքաւեաց դուստրն Հերովդէայ, ի մէջ բազմականին. եւ հաճոյ թուեցաւ Յերովդի:

<sup>17</sup>Զի ինքն Յերովդէս առաքեաց կալաւ գՅովհաննէս, եւ կապեաց զնա եւ եղ ի բանտի վասն Հերովդէայ կնոց Փիլիպպոսի եղօր նորա, զի նա կին արար զնա:

<sup>19</sup>Եւ Հերովդէայ ոխացեալ էր ընդ նմա, եւ կամէր սպանանել զնա եւ ոչ կարէր:

<sup>21</sup>Իբրեւ օր մի լինէր պարապոյ, յորժամ ընթրիս տայր Յերովդէս յաւուր ծննդոց իւրոց նախարարաց իւրոց եւ հազարապետաց եւ մեծամեծաց Գալիլեացոց. <sup>22</sup>Եւ ի մտամել դստերն Հերովդէայ, եւ ի կաքաւել, հաճոյ եղեւ Յերովդի եւ բազմականացն. ասէ բագաւորն ցաղցիկն. Խնդրեա յինէն զոր ինչ կամիս, եւ տաց քեզ:

<sup>19</sup>Բայց Յերովդէս չորրորդապետ յանդիմանեալ ի նմանէ վասն Հերովդէայ, կնոց եղօր իւրոյ, եւ վասն ամենայն չարեացն զոր գործեաց Յերովդէս, <sup>20</sup>յաւել եւ զայն եւս ի վերայ ամենայնի, եւ եղ ի բանտի գՅովհաննէս:

Մատք ԺԴ 3

<sup>3</sup>Արդարէ Յերովդէսը ձերբակալել էր Յովհաննեսին, նրան կապել և բանտի մեջ էր դրել իր եղբոր՝ Փիլիպպոսի կնոց՝ Հերովդէայը պատճառով:

Մատք ԺԴ 6

<sup>6</sup>Եվ երբ Յերովդէսի ծննդյան տարեդարձը հասավ, Հերովդէայը դուստրը հրավիրյալների առաջ պարեց. և հաճելի թվաց Յերովդէսին:

Մարկ Չ 17

<sup>17</sup>Արդարէ, ինքը՝ Յերովդէսն էր մարդ ուղարկել, ձերբակալել էր Յովհաննեսին, կապել նրան ու բանտարկել՝ իր եղբոր՝ Փիլիպպոսի կնոց՝ Հերովդէայը պատճառով, քանի որ Յերովդէսը նրան իրեն կին էր դարձրել:

Մարկ Չ 19

<sup>19</sup>Եվ Հերովդէան ոխ էր պահել նրա դեմ ու ուզում էր նրան սպանել տալ, բայց չէր կարողանում:

Մարկ Չ 22

<sup>21</sup>Սակայն մի հարմար օր եկավ, երբ Յերովդէսը իր ծննդյան տարեդարձի ընթրիքն էր տալիս իր նախարարներին, Գալիլիայի մեծամեծներին և հազարապետներին: <sup>22</sup>Եվ երբ Հերովդէայը դուստրը ներս մտավ և սկսեց պարել, դուր եկավ Յերովդէսին և սեղանակիցներին. բագավորը աղջկան ասաց. «Ուզի՞ր ինձնից, ինչ որ կամենում ես, և քեզ կտամ»:

Ղուկ Գ 19

<sup>19</sup>Բայց Յերովդէս չորրորդապետը, հանդիմանված լինելով Յովհաննեսի կողմից, իր եղբոր կնոց՝ Հերովդէայը պատճառով և այն բոլոր չարիքների համար, որ Յերովդէսը գործել էր, <sup>20</sup>այդ բոլորի վրա պվելացրեց և այն, որ Յովհաննեսին բանտարկեց:

**Հերովդէս Մեծի թոռնուհին, Արիստոքոլոսի (Հերովդէս Մեծի որդին՝ Մարիամնեից) դուստրը: Հերովդիան նախ**

**ամուսնանում է հորեղբոր՝ Հերովդէս Փիլիպպոսի հետ (Հերովդէս Մեծի որդին՝ մյուս Մարիամնե կնոջից. ՀՀփոթել**



**Փիլիպպոս Զորբորդապետի հետ), ումից ունենում է մի դուստր՝ Սաղոմեին:** Ապա երկրորդ անգամ ամուսնանում է մյուս հորեղբոր՝ Հերովդես Անտիպասի հետ: Հերովդիայի հետ ամուսնանալու նպատակով Անտիպասն արձակում է կնոջը՝ Արաքիայի նաբաթացիների Արետաս Դ թագավորի դստերը: Վըեժխնդրությամբ լցված՝ Արետասն արշավում է Անտիպասի տերություն և այնպիսի ջախջախիչ հարված հասցնում նրան, որ վերջինս ստիպված դիմում է հռոմեական զորքերի օգնությանը: Հասարակական համոզմամբ՝ Անտիպասի այդ պատությունն աստվածային պատիժ էր՝ Հովհաննես Մկրտչին գլխատելու համար:

Հովհաննես Մկրտչի մահվան պատմությունն ընկալվում է որպես թագավորին հանդիմանող մարգարեի հայտնի ավանդություն: Հին Կտակարանում այս պատմության զուգահեռ Նաբոթի խաղողի այգուն տիրանալու համար Աքաար թագավորին ուղղված եղիայի հանդիմանանքի պատումն է: Հովհաննեսը համարձակ դատապարտում էր Անտիպասին՝ Փիլիպպոսի կնոջը կնության առնելու համար, որովհետեւ նման ամուսնությունն օրենքով արգելվում էր: Հովհաննեսը նաև դատապարտում էր Հերովդիային՝ առաջին ամուսնուն լքելու և իր հորեղբայր Անտիպասի հետ ապօրինի միություն կնքելու համար: Հերովդիան խոր ատելություն էր տածում Հովհաննեսի հանդեպ:

«Սակայն մի հարմար օր եկավ, երբ Հերովդեսն իր ծննդյան տարեդարձի

ընթրիքն էր տալիս իր նախարարներին, Գալիլիայի մեծամեծներին և հազարապետներին: Եվ երբ Հերովդիայի դուստրը ներս մտավ և սկսեց պարել, դուր եկավ Հերովդեսին և սեղանակիցներին. Թագավորը աղջկան ասաց. “Ուզի՞ր ինձնից, ինչ որ կամճնում ես, և քեզ կտամ”: Եվ երդվեց նրան շատ անգամ, թե՛ դու ինձնից ինչ էլ որ ուզես, կտամ քեզ, մինչև իսկ իմ թագավորության կեսը: Աղջիկը դուրս գնալով իր մորն ասաց՝ ի՞նչ ուզեմ: Եվ սա ասաց՝ Հովհաննես Մկրտչի գլուխը: Եվ աղջիկը շտապով վերստին մտնելով թագավորի մոտ՝ ասաց. “Ուզում եմ, որ հիմա ինձ տաս սկուտեղի վրա Հովհաննես Մկրտչի գլուխը”: Եվ թագավորը սաստիկ տրտմեց, բայց իր երդումների և հրավիրյալների պատճառով չուզեց նրան մերժել: Եվ թագավորը իսկույն դահիճ ուղարկեց ու հրամայեց բերել Հովհաննեսի գլուխը: Եվ սա գնաց գլխատեց նրան բանտում ու նրա գլուխը սկուտեղով բերեց և տվեց աղջկան, և աղջիկը տարավ տվեց իր մորը» (Մարկ Զ 21-28):

Հետագայում Հերովդիան Անտիպասին հորդորում է Հերովդես Ագրիպպասի նման կայսրից «արքա» տիտղոսն ստանալու փորձ անել: Բայց Ագրիպպասն առաջինն է հասնում Հոռմ և Անտիպասի դեմ ամբաստանություններ ներկայացնում, որոնց պատճառով էլ Անտիպասն աքսորվում է Գալիա, իսկ Յ9թ. Հերովդիան միանում է նրան:

## ՅՈՎՅԱՆԱԱ

<sup>2</sup>Եւ կանայք ոմանք՝ որ բժշկեալ էին յայսց չարաց եւ ի հիւանդութենէ. Մարիամ՝ որ կոչէր Մագդաղենացի, յորմէ եւթն դեւն ելեալ էր. <sup>3</sup>Եւ **Յանձնանակին՝ Քուզայ հազարապետին՝ Յերովդի.** եւ Շուշան, եւ այլք բազունք որք պաշտէին զնա յընչից իւրեանց:

<sup>9</sup>Եւ դարձան պատմեցին զայս ամենայն մետասանիցն, եւ այլոցն ամենեցուն: <sup>10</sup>Եւ էին Մարիամ Մագդաղենացի, եւ **Յանձնանակ,** եւ Մարիամ Յակովբայ, եւ այլք ընդ նոսա՝ որ պատմեցին զայս առաքելոցն:

Դուկ Ը 3

<sup>2</sup>և մի քանի կանայք, որոնք բժշկվել էին չար ոգիներից ու հիվանդություններից. Մարիամը, որ կոչվում էր Մագդաղենացի, և որից յոթը դև էր դուրս եկել, <sup>3</sup>**Յանձնանակ՝ Յերովդիսի վերակացվի՝ Քուզայի կինը,** և Շուշան ու շատ ուրիշներ, որոնք իրենց ունեցվածքից մատակարարում էին նրան:

Դուկ Ի 7 10

<sup>9</sup>Եվ վերադարձան ու պատմեցին այս ամենը Տասնմեկին և բոլոր մյուսներին: <sup>10</sup>Եվ Մարիամ Մագդաղենացին, **Յանձնանակ,** Յակոբի մայր Մարիամը և նրանց հետ ուրիշ կանայք էին, որ այս բաները պատմեցին առաքյալներին:

**Հերովդես Անտիպասի տան վերակացուությունը Քուզայի կինը:** Հովհաննան գալիք թափուր գերեզմանի ականատեսներից լիացի այն կանանցից էր, ովքեր իրենց է եղել: ունեցվածքից մատակարարում էին Հի-

**սուսին:** Զատկի առավոտյան նա Տիրոջ թափուր գերեզմանի ականատեսներից



## ՀՈՎՐԱՆՆԵՍ Մկրտիչ

<sup>1</sup>Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս մկրտիչ քարոզել յանապատին Յրեաստանի, <sup>2</sup>եւ ասել. Ապաշխառեցեք, զի մերձեալ է արքայութիւն երկնից. <sup>3</sup>զի սա է վասն որոյ ասացաւ ի ձեռն Եսայեայ մարգարէի, որ ասէ. Զայն բարբառոյ յանապատի. Պատրաստ արարէք զճանապարի Տեառն, եւ ուղիղ արարէք զշաւիդս նորա:

<sup>4</sup>Եւ ինքն Յովհաննէս ուներ հանդերձ ի ստեռոյ ուղսու, եւ գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր, եւ կերակուր նորա էր մարախս եւ մեղր վայրենի:

<sup>13</sup>Յայնժամ գայ Յիսուս ի Գալիլէի ի Յորդանան առ Յովհաննէս մկրտել ի նման:

<sup>14</sup>Եւ Յովհաննէս արգելու զնա եւ ասէ. Ինձ պիտոյ է ի քէն մկրտել, եւ դու առ ի՞ս գաս:

<sup>12</sup>Եւ իբրեւ լուաւ Յիսուս երէ Յովհաննէս մատնեցաւ, մեկնեցաւ զնաց ի Գալիլեա:

<sup>14</sup>Յայնժամ մատեան առ նա աշակերտք Յովհաննէս եւ ասեն. Ընդէ՞ր մեք եւ փարիսեցիքն պահենք յաճախ, եւ քո աշակերտք ոչ պահեն:

<sup>2</sup>Իսկ Յովհաննէս իբրեւ լուաւ ի բանտին զգործսն Քրիստոսի, առաքեաց ի ձեռն աշակերտաց իւրոց, <sup>3</sup>եւ ասէ ցնա. Դու՞ւ ես որ գալոցն ես, երէ այլում ակն կալցուր:

<sup>4</sup>Պատախանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Գնացէք պատմեցէք Յովհաննէս— զոր լուայք եւ տեսէք. <sup>5</sup>Կոյոք տեսանեն, կաղք գնան, բորոտք սրբին,

Մատթ Գ 1

<sup>1</sup>Այն օրերին Հովհաննէս Մկրտիչը գալիս է քարոզելու Յրեաստանի անապատում և ասում. <sup>2</sup>«Ապաշխառեցեք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է»: <sup>3</sup>Սա՛ է այն մարդը, որի մասին Եսայի մարգարէի բերանով ասվեց. «Անապատում կանչողի ձայնն է, պատրաստեցեք Տիրոց ճանապարհը և հարթեցեք նրա շավիղները»:

Մատթ Գ 4

<sup>4</sup>Եվ ինքը՝ Հովհաննէսը, ուղտի մազից զգեստ ուներ և կաշվե գոտի՝ իր մեջքին, իսկ նրա կերակուրն էր մորեին ու վայրի մեղլը:

Մատթ Գ 13

<sup>13</sup>Այն ժամանակ Յիսուս Գալիլիայից Յորդանան եկավ, Հովհաննէսի մոտ՝ նրանից մկրտվելու:

Մատթ Գ 14

<sup>14</sup>Իսկ Հովհաննէսն ընդդիմացավ նրան ու ասաց. «Ինձ պետք է, որ քեզնից մկրտվեմ, և դու ի՞նձ մոտ ես գալիս»:

Մատթ Դ 12

<sup>12</sup>Եվ երբ Յիսուս լսեց, թե Հովհաննէսը բանտարկվել է, մեկնեց զնաց Գալիլիա:

Մատթ Թ 14

<sup>14</sup>Այն ժամանակ Հովհաննէսի աշակերտները մոտեցան նրան և ասացին. «Ինչու՞ մենք և փարիսեցիները հաճախ ծոմ ենք պահում, իսկ քո աշակերտները չեն պահում»:

Մատթ ԺԱ 2

<sup>2</sup>Իսկ Հովհաննէսը, երբ բանտում լսեց Քրիստոսի գործերի մասին, ուղարկեց իր աշակերտներին և նրանց միջոցով ասաց նրան. <sup>3</sup>«Դու՞ւ ես, որ գալու էիր, թե՞ ուրիշին սպասենք»:

Մատթ ԺԱ 4

<sup>4</sup>Յիսուս պատախան տվեց նրանց և ասաց. «Գնացէք պատմեցեք Հովհաննէսին, ինչ որ դուք լսեցիք և տեսաք. <sup>5</sup>Կույրերը տեսնում են, կա-

Եւ խուզք լսեն, եւ մեռեալք յառնեն,  
եւ աղքատք աւետարանին:

<sup>7</sup>Եւ իբրեւ նոքա գնացին, սկսաւ  
Յիսուս ասել ցժողովուրդս զՅովՀաննէ.  
Զի՞նչ ելք տեսանել յանապատին. եղէ՞զ զարժուն ի հողմոյ:

<sup>11</sup>Ամէն ասեմ ձեզ. Չէ յարուցեալ ի  
ծնունդս կանանց մեծ քան զՅովՀաննէ  
մկրտիչ. քայց փոքրիկն յարցայութեան երկնից մեծ է քան զնա:

<sup>12</sup>Քայց յաւուցն ՅովՀաննու մկրտչի  
մինչեւ ցայժմ արքայութիւնն երկնից  
բռնադատի, եւ բռունք յափշտակէն զնա:

<sup>13</sup>Քանզի ամենայն օրէնք եւ մարգարէք  
մինչեւ զՅովՀաննէ մարգարէացան.  
<sup>14</sup>Եւ եթէ կամիք ընդունել, նա է  
եղիա որ զալոցն է:

<sup>18</sup>Եկն ՅովՀաննէ, ոչ ուտէր եւ ոչ ըմպէր,  
եւ ասեն. Դեւ գոյ ի նմա:

<sup>1</sup>Յայն ժամանակի լուաւ Յերովիէս  
չորրորդապետ զլուր Յիսուսի. <sup>2</sup>Եւ  
ասէ ցծառայս իւր. Նա է ՅովՀաննէ  
մկրտիչ. նա յարեաւ ի մեռելոց, եւ  
կասն այնորիկ օօրութիւնք լինին  
նովաւ:

<sup>3</sup>Քանզի Յերովիէս կալաւ զՅովՀաննէ,  
կապեաց զնա եւ եղ ի բանտի  
վասն Յերովիհայ, կնոջ Փիլիպպոսի  
եղքօն նորա:

<sup>4</sup>Զի ասէր ցնա ՅովՀաննէ. Չէ արժան  
քեզ ունել զդա:

<sup>8</sup>Եւ նա յառաջագոյն խրատեալ ի  
մօրէ իւրմէ. Տուր ինձ, ասէ, այսր ի  
վերայ սկսել զգլուխսն ՅովՀաննէ-  
մկրտչի:

Դերը՝ քայլում, բորոտները՝ մաքր-  
վում, խուզերը՝ լսում, մեռելները՝  
հառնում, և աղքատներին քարոզ-  
վում է Ավետարանը:

Մատք ԺԱ 7

Դերը Յովիաննեսի աշակերտները  
գնացին, Յիսուս սկսեց ժողովր-  
դին ասել ՀովՀաննէուի մասին. «Ինչ տեսնելու ելաք անապատում. հող-  
մից շարժվող եղե՞գ:

Մատք ԺԱ 11

<sup>11</sup>Թշմարիտ են ասում ձեզ, կանան-  
ցից ծնվածների մեջ ՀովՀաննէս  
Մկրտչից ավելի մեծը չի ելել. քայց  
երկնիք արքայութիւն մեջ ամենից  
հետինը նրանից մեծ է:

Մատք ԺԱ 12

<sup>12</sup>ՀովՀաննէս Մկրտչի օրերից մինչև  
այժմ երկնիք արքայությունը բռնա-  
դատվում է. և հզորներն են հափշ-  
տակում այն:

Մատք ԺԱ 13

<sup>13</sup>Քանի որ ամբողջ Օրենքը և մար-  
գարեները մարգարեացան մինչև  
ՀովՀաննէսը: <sup>14</sup>Եվ եթէ ուզում էր ըն-  
դունել, Յովիաննեսն է եղիան, որ  
գալու է:

Մատք ԺԱ 18

<sup>18</sup>Եկավ ՀովՀաննէսը. ոչ ուտում էր և  
ոչ խմում. և ասացին նրա մեջ դն կա:

Մատք ԺԴ 2

<sup>1</sup>Այն ժամանակ Յերովիէս չորրորդ-  
դապետը լսեց Յիսուսի համբավը  
և իր ծառաներին ասաց. <sup>2</sup>«Նա՛ է  
ՀովՀաննէս» Մկրտչիը. մեռելներից  
հարություն է առել, և դրա համար  
նրա միջոցով զրավոր գործեր են  
լինում»:

Մատք ԺԴ 3

<sup>3</sup>Արդարև Յերովիէսը ձերբակալել էր  
ՀովՀաննէսին, նրան կապել և բանտի  
մեջ էր դրել իր եղբոր՝ Փիլիպպոսի  
կնոջ՝ Յերովիհայի պատճառով:

Մատք ԺԴ 4

<sup>4</sup>Որովհետև ՀովՀաննէսը նրան ասում  
էր. «Օրինավոր չէ, որ դու նրան իբ-  
րև կին ունենաս»:

Մատք ԺԴ 8

<sup>8</sup>Եվ նա, առաջուց խրատված լի-  
նելով իր մորից, ասաց. «Տուր ինձ  
այստեղ, սկսւտեղի վրա, ՀովՀաննէս  
Մկրտչի գլուխը»:

<sup>10</sup> Եւ առաքեաց գլխատեաց պՅով- Ճաննէս ի բանտի:	Մատթ ԺԴ 10	<sup>10</sup> Եվ մարդ ուղարկեց, գլխատել տվեց ՀովՃաննէսին բանտի մեջ:
<sup>14</sup> Եւ նոքա ասեն. Ոմն պՅովՃաննէս մկրտչչ, եւ այլը՝ զեղիա, եւ կտը՝ զերեմիա կամ զմի ոք ի մարգա- րիցն:	Մատթ ԺԶ 14	<sup>14</sup> Եվ նրանք ասացին. «Մեկը, թե՝ ՀովՃաննէս Մկրտչչը, և ուրիշներ՝ Եղիան, իսկ ոնանք, թե՝ Երեմիան, կամ մարգարեներից մեկը»:
<sup>13</sup> Յայնժամ ի միտ առին աշա- կերտքն թէ վասն ՅովՃաննէս մկրտչի ասաց ցնոսա:	Մատթ ԺԷ 13	<sup>13</sup> Այս ժամանակ աշակերտները հասկացան, թե՝ ՀովՃաննէս Մկրտչի մասին էր ասել իրենց:
<sup>25</sup> Մկրտութիւնն ՅովՃաննէս ուստի՝ եր, յերկնից թէ ի մարդկանէ: Եւ նո- քա խորհին ընդ միմեանս եւ ասէին. <sup>26</sup> Եթէ ասեմք. Եերկնից, ասէ ցնեզ. Իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա. Եւ եթէ ասեմք. Ի մարդկանէ, երկնչիմք ի ժողովրդեն, զի ամենեքին պՅով- Ճաննէս իբրև զմարգարէ ունին:	Մատթ ԻԱ 25-26	<sup>25</sup> ՀովՃաննէսի մկրտությունը որտե- ղից եր՝ երկնից թէ՝ մարդկան- ցից»: Նրանք իրար մեջ խորհուրդ էին անում ու ասում. «Եթէ ասենք՝ Երկնից, մեզ կ'ասի՝ իսկ ինչու՝ չհավատացիք նրան. <sup>26</sup> Իսկ եթէ ասենք՝ մարդկանցից, ժողովրդից վախենում ենք, որովհետև բոլորն էլ ՀովՃաննէսին որպես մարգարէ են ընդունում»:
<sup>32</sup> Զի եկն ՅովՃաննէս ճանապարհաւ արդարութեան, եւ ոչ հաւատացէք նմա. Եւ մաքսաւորը եւ պոռնիկը հաւատացին նմա, եւ դուք տեսէք, եւ ոչ զղջացարուք յետոյ հաւատալ նմա:	Մատթ ԻԱ 32	<sup>32</sup> Որովհետև ՀովՃաննէսը արդարութ- հան ճանապարհով եկավ, և նրան չհավատացիք. իսկ մաքսավորներ ու պոռնիկներ հավատացին նրան. և դուք այդ տեսաք և հետո էլ չզղջա- ցիք, որ նրան հավատայիք»:
<sup>4</sup> Եւ եղեւ զի ՅովՃաննէս մկրտէր յա- նապատի, եւ քարոզէր մկրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն մե- ղաց:	Մարկ Ա 4	<sup>4</sup> ՀովՃաննէսը մկրտում էր անապա- տում և քարոզում ապաշխարութ- հան մկրտություն՝ մեղքերի թողութ- հան համար:
<sup>6</sup> Եւ էր ՅովՃաննէս զգեցեալ ստել ուղ- տու, եւ գօսի մաշկեղին ընդ մէջ իւր. Եւ կերակուր նորա մարախ եւ մեղր վայրենի:	Մարկ Ա 6	<sup>6</sup> Եվ ՀովՃաննէսը հագել էր ուղտի մազից զգեստ և մեջքին՝ կաշվե գո- տի. և նրա կերակուրն էր մորեխ և վայրի մեղր:
<sup>9</sup> Եւ եղեւ յաւուրսն յայնոսիկ եկն Յի- սուս ի նազարեթ Գալիլեացւոց, եւ մկրտեցաւ ի ՅովՃաննէ ի Յորդանան:	Մարկ Ա 9	<sup>9</sup> Այս օրերին Յիսուս եկավ Գալիլիա- յի նազարեթ քաղաքից և ՀովՃաննէ- սից մկրտվեց Յորդանանում:
<sup>14</sup> Եւ յետ մատնելոյն ՅովՃաննէս եկն Յիսուս ի Գալիլեա. քարոզէր զաւե- տարանն Աստուծոյ. <sup>15</sup> Եւ ասէր թե՝ Կատարեալ է ժամանակ, եւ հասեալ է արքայութիւնն Աստուծոյ, ապաշ- խարեցէք եւ հաւատացէք յաւետա- րանն:	Մարկ Ա 14	<sup>14</sup> ՀովՃաննէսի բանտարկվելուց հե- տո Յիսուս Գալիլիա եկավ. քա- րոզում էր Աստծոն Ավետարանը և ասում. <sup>15</sup> «Ժամանակը հասել է, և մոտեցել է Աստծոն արքայությունը. ապաշխարեցէք և հավատացէք Ավետարանին»:

<sup>18</sup>Եւ էին աշակերտքն Յաղանոն – եւ փարիսեցիքն ի պահս. գան եւ ասեն ցնա. Ընդէ՞ր աշակերտքն Յաղանոն – եւ փարիսեցիքն պահեն, եւ քո աշակերտքը ոչ պահեն:

<sup>14</sup>Եւ լուաւ արքայ Յերովդէս, քանզի յայտնի եղեւ անուն նորա, եւ ասէր թէ Յաղանէ» մկրտիչ յարեաւ ի մեռելոց, եւ վասն այնորիկ օրորւթիւնը լինին նովաւ:

<sup>16</sup>Իբրեւ լուաւ Յերովդէս, ասէ. Զորոյ ես զգլուխն հատի ԱՅՆ Յաղանոն, սա է նա, յարեաւ ի մեռելոց: <sup>17</sup>Չի ինքն Յերովդէս առաքեաց կալաւ ԱՅՆ Յաղանէ», եւ կապեաց զնա եւ եղ ի բանտի վասն Յերովդիայ կնոջ Փիլիպոսի եղրօր նորա, զի նա կին արար զնա: <sup>18</sup>Քանզի ասէր Յաղանէ» ցՅերովդէս թէ՝ Ոչ է օրէն քեզ ունել զկին եղրօր քո:

<sup>20</sup>Չի Յերովդէս երկնչէր ի Յաղանէ, քանզի գիտէր զնա այր արդար եւ սուրբ, եւ սպասէր նմա, եւ լուեալ ի նմանէ՝ քազում ինչ առնէր, եւ քաղցրութեամբ լսէր նմա:

<sup>24</sup>Սա ելեալ ասէ ցմայր իւր. Չի՞նչ խնդրեցից: Եւ նա ասէ. Զգլուխն Յաղանոն – մկրտչի: <sup>25</sup>Եւ մտեալ անդրէն փութանակի առ քագաւորն՝ ասէ. Կամին զի այժմ տացես ինձ վաղվաղակի ի վերայ սկտեղ զգլուխն Յաղանոն – մկրտչի:

<sup>28</sup>Նոքա ետուն պատասխանի եւ ասեն. ԶՅԱՂԱՆԷ» մկրտիչ, եւ այլք՝ Ձեղիա, եւ այլք՝ Զմի ոք ի մարգարէից անտի:

<sup>30</sup>Մկրտութիւնն ՅԱՂԱՆՈՆ – յերկնի՞ց էր թէ ի մարդկանէ, տուք ինձ պատասխանի:

Մարկ 18

<sup>18</sup>ԱՅՆ ՅԱՂԱՆՆԵՒՅ» աշակերտները և փարիսեցիները ծոն էին պահում. Եկան և նրան ասացին. «Ինչո՞ւ ՀԱՂԱՆՆԵՒՅ» աշակերտները և փարիսեցիները ծոն են պահում, իսկ քո աշակերտները չեն պահում»:

Մարկ 24

<sup>14</sup>Եվ Յերովդէս արքան լսեց այս բաները, որովհետև Յիսուսի անունը հայտնի էր դարձել. և նա ասաց. «ՀԱՂԱՆՆԵՅ» Մկրտիչը հարություն է առել մեռելներից, և դրա համար զորություններ են գործվում նրա միջոցով»:

Մարկ 2 16-18

<sup>16</sup>Երբ Յերովդէսը այս լսեց, ասաց. «ՀԱՂԱՆՆԵՅ», որի գլուխը կտրեցի ես, սա նա՛ է. մեռելներից հարություն է առել»: <sup>17</sup>Արդարև, ինքը՝ Յերովդէսն էր մարդ ուղարկել, ձերբակալել էր ՀԱՂԱՆՆԵՒՅ, կապել նրան ու բանտարկել՝ իր եղրօր՝ Փիլիպոսի կնոջ՝ Յերովդիայի պատճառով, քանի որ Յերովդէսը նրան իրեն կին էր դարձրել, <sup>18</sup>և քանի որ ՀԱՂԱՆՆԵՅ Յերովդէսին ասում էր. «Քո եղրօր կնոջը քեզ կին առնելը օրինավոր չէ»:

Մարկ 2 20

<sup>20</sup>Որովհետև Յերովդէսը վախենում էր ՀԱՂԱՆՆԵՒՅ, քանի որ նրան գիտէր որպաս արդար և սուրբ մարդու, և նրան հովանավորում էր ու նրան անսալով՝ շատ բաներ էր անում և քաղցրությամբ լսում էր նրան:

Մարկ 2 24-25

<sup>24</sup>Աղջիկը դուրս գնալով իր մորն ասաց՝ ի՞նչ ուզեմ: Եվ սա ասաց՝ ՀԱՂԱՆՆԵՅ» Մկրտչի գլուխը: <sup>25</sup>Եվ աղջիկը շտապով վերստին մտնելով թագավորի մոտ՝ ասաց. «Ուզում են, որ իհնա ինձ տաս սկսութեղի վրա ՀԱՂԱՆՆԵՅ Մկրտչի գլուխը»:

Մարկ 28

<sup>28</sup>Տրանք պատասխան տվեցին և ասացին. «ՀԱՂԱՆԷ» Մկրտիչը, և հնանք՝ Եղիան, իսկ ուրիշներ՝ մարգարեներից մեկը»:

Մարկ 30

<sup>30</sup>ՀԱՂԱՆՆԵՅ» մկրտությունը երկնքի՞ց էր, թէ՞ մարդկանցից. պատասխանեցե՞ք ինձ»:



<sup>31</sup>Խորհեին ընդ միմեանս եւ ասէին. Եթէ ասեմք եթէ՝ Յերկնից, ասէ ցմեզ. Իսկ ընդէ՞՞ ոչ հաւատացէք նմա. <sup>32</sup>այլ եթէ ասեմք. Ի մարդկան, Երկնչիմք ի ժողովողենեն, զի ամեներին գիտէին Հովհաննէ» թէ մարգարէ էր:

<sup>13</sup>Ասէ ցնա իրեշտակն Տեառն. Մի՝ Երկնչիր, Զաքարիա, զի լսելի եղեն աղօքք քո, եւ կին քո Եղիսաբէթ ծնցի քեզ որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յովհաննէ»:

<sup>59</sup>Եւ եղեւ յաւուրն ութերորդի՝ եկին թլիքատել՝ զմանուկն, եւ կոչեին զնա յանուն հաւր իւրոյ Զաքարիա: <sup>60</sup>Պատասխանի ետ մայր նորա եւ ասէ. Ոչ, այլ կոչեսցի Յովհաննէ»:

<sup>62</sup>Ակն արկէին հաւրն նորա՝ թէ զի՞նչ կամիցի կոչել զնա: <sup>63</sup>Եւ խնդրեաց տախտակ, գրեաց եւ ասէ. Յովհաննէ» է անուն դորա: Եւ զարմացան ամեներին:

Ի հճգետասաներորդի ամի տէրութեանն Տիրերեայ կայսեր, ի դատաւորութեան Քրեաստանի Պիղատոսի Պոնտացւոյ, եւ ի չորրորդաետութեան Գալիլեացւոց Քերովի, եւ ի Փիլիպպոսի եղբօր նորա չորրորդաետութեան Խտուրացւոց եւ Տրաքոնացւոց աշխարհին, եւ ի չորրորդաետութեան Լիսանեայ Արիլենացւոյ, <sup>2</sup>եւ ի քահանայապետութեան Աննայի եւ Կայիհափայ, եղեւ բան Աստուծոյ ի վերայ Յովհաննու՝ որդույ Զաքարիայ յանապատի անդ:

<sup>15</sup>Մինչ ակն ուներ ժողովուրդն եւ խորհեին ամեներեան ի սիրոս իւրեանց վասն Յովհաննու. Միթէ սա՞ ից Քրիստոսն:

<sup>19</sup>Բայց Քերովիէս չորրորդապետ յանդիմանեալ ի նմանէ վասն Քերովիիայ, կնոջ եղբօր իւրոյ, եւ վասն ամենայն չարեացն զոր գործեաց Քերովիէս, <sup>20</sup>յաւել եւ զայն եւս

## Մարկ ԺԱ 32

<sup>31</sup>Սրանք իրար միջև խորհում էին ու ասում. «Եթէ ասենք՝ Երկնքից, մեզ կ'ասի՝ իսկ ինչու՝ նրան չհավատացիք. <sup>32</sup>իսկ եթէ ասենք՝ մարդկանցից, ժողովորդից ենք վախտենում». որովհետև բոլորը գիտեին, թէ Հովհաննէս մարգարէ էր:

## Ղուկ Ա 13

<sup>13</sup>Տիրոց իրեշտակը նրան ասաց. «Մի՛ վախտեցիր, Զաքարիա՛, որովհետև քո աղոթքը լսելի եղավ. քո կինը՝ Եղիսաբէթը, մի որդի կծնի քեզ, և նրա անունը Հովհաննէս կդնես:

## Ղուկ Ա 60

<sup>59</sup>Եվ ութերորդ օրը եկան մանկանը թլիքատելու. և նրան իր հոր անունով Զաքարիա էին կոչում: <sup>60</sup>Բայց նրա մայրը պատասխանեց և ասաց. «Ո՛չ, այլ Հովհաննէս պետք է կոչվի»:

## Ղուկ Ա 63

<sup>62</sup>Սշանացի ակնարկեցին նրա հորը, թէ ի՞նչ կկամենա նրան կոչել: <sup>63</sup>Իսկ նա մի տախտակ ուզեց և վրան գրեց. «Դրա անունը Հովհաննէս է»: Եվ բոլորը զարմացան:

## Ղուկ Գ 2

<sup>1</sup>Տիրերիոս կայսեր իշխանութիւն տասնինգերորդ տարում, երբ Պոնտացի Պիղատոսը կուսակալ էր Քրեաստանի, և Քերովինը՝ չորրորդապետ Գալիլիայի, և նրա եղբայր Փիլիպպոսը՝ չորրորդապետ Խտուրացիների ու Տրաքոնացիների աշխարհի, Լյուսանիասը՝ չորրորդապետ Արիլենեի, <sup>2</sup>և Աննայի ու Կայիհափայի քահանայապետութեան օրով, Աստծո խոսքը լսելի եղավ. Զաքարիայի որդի Հովհաննէսին անապատում:

## Ղուկ Գ 15

<sup>15</sup>Ժողովուրդը սպասման մեջ էր, և բոլորն իրենց սրտում Հովհաննէսի նասին հարց էին տալիս, թէ՝ միթե սա՞ է Քրիստոսը:

## Ղուկ Գ 20

<sup>19</sup>Բայց Քերովինը չորրորդապետը, հանդիմանված լինելով Յովիանեսի կողմից, իր եղբօր կնոջ՝ Քերովիիայի պատճառով և այն բոլոր չարիքների համար, որ Քերովինը

ի վերայ ամենայնի, եւ եդ ի բանտի շնովհաննէ»:

<sup>33</sup>Եւ նոքա ասեն ցնա. Ընդէ՞ր աշակերտքն Յաղաննո— պահեն ստեպ եւ խնդրուածն առնեն, նոյնպէս եւ փարիսեցլոցն, եւ քոյթ ուտեն եւ ընպեն:

<sup>18</sup>Եւ պատմեցին Յաղաննո— աշակերտքն իր վասն ամենայնի այսորիկ: <sup>19</sup>Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմանս յաշակերտացն իւրոց Յաղաննէ», առաքեաց առ Տէր՝ եւ ասէ. Դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այլում ակն կալուք: <sup>20</sup>Եւ եկեալ արջն առ նա՝ ասեն. Յաղաննէ» մկրտիչ առաքեաց զմեզ առ քեզ եւ ասէ. Դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այլում ակն կալցուք:

<sup>22</sup>Պատասխանի ետ նոցա եւ ասէ. Երբայթ պատմեցէք Յաղաննո— զոր տեսէքդ եւ լուայթ, զի կոյքը տեսածեն, եւ կաղք գնան, բորոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք յառնեն, աղքատք աւետարանին. <sup>23</sup>Եւ երանի իցէ որ ոչ գայթակողից յիս:

<sup>24</sup>Եւ իբրեւ գնացին իրեշտակքն Յաղաննո—, սկսաւ խօսել ընդ ժողովուրդան վասն Յաղաննո—. Զի՞նչ ելէք յանապատն տեսանել, եղէ՞գն շարժուն ի հողմոյ:

<sup>28</sup>Ամէն ասեմ ձեզ. Մեծ ի ծնունդս կանանց մարգարէ քան շնովհաննէ» ոչ որ է, բայց փոքրիկն յարքայութեան Աստուծոյ մեծ է քան զնա: <sup>29</sup>Եւ ամենայն ժողովուրդն իբրեւ լուան եւ մաքսաւորքն, արդարացուցին զլստուած, զի մկրտեցան ի մկրտութիւնն Յաղաննո—:

գործել էր, <sup>20</sup>այդ բոլորի վրա ավելացրեց և այն, որ Հաղաննէսին բանտարկեց:

Ղուկ Ե 33

<sup>33</sup>Եվ նրանցից ոմանք ասացին նրան. «Ինչո՞ւ Հաղաննէսի, ինչպես և փարիսեցիների աշակերտները ծոմ են պահում հաճախ և աղոքք ամուսն, իսկ քո աշակերտները ուտում են ու խնում»:

Ղուկ Ե 18-20

<sup>18</sup>Եվ Հաղաննէսին այս բոլորի մասին պատմեցին իր աշակերտները: <sup>19</sup>Եվ Հաղաննէսին իր աշակերտներից մի երկուսին իր մոտ կանչեց ու նրանց ուղարկեց Տիրոց մոտ՝ ասելու. «Դո՞ւ ես, որ գալու էիր, թէ՞ ուրիշին սպասենք»: <sup>20</sup>Եվ այդ մարդիկ գալու նրա մոտ՝ ասացին. «Հաղաննէս Մկրտիչը մեզ ուղարկեց քեզ մոտ և ասում է. “Դո՞ւ ես, որ գալու էիր, թէ՞ ուրիշին սպասենք»:

Ղուկ Ե 22

<sup>22</sup>Սա պատասխանեց նրանց և ասաց. «Գնացեք պատմեցեք Հաղաննէսին, ինչ որ դուք տեսաք և լսեցիք. որ կոյսրեց տեսնում են, կաղերը՝ քայլուն, բորոտները մաքրվում են, խուլերը՝ լսում, մեռելները հարություն են առնում, աղքատները Բարի լուրն են լսում:

Ղուկ Ե 24

<sup>24</sup>Եվ երբ Հաղաննէսի պատգամավորները գնացին, նա սկսեց ժողովրդին խօսել Հաղաննէսի մասին. «Ինչ տեսնելու համար դուրս եկաք անապատ. քամուց շարժվող մի եղե՞ց:

Ղուկ Ե 28-29

<sup>28</sup>Եշմարիտ եմ ասում ձեզ, կանանցից ծնվածների մեջ չկա ավելի մեծ մարգարէ, քան Հաղաննէսը. բայց Աստծոն արքայութիան մեջ ամենափոքրը ավելի մեծ է, քան թէ նա»: <sup>29</sup>Եվ երբ ամբողջ ժողովուրդը լսեց, նույնպես և մաքսավորները, ընդունեցին Աստծոն արդարությունը՝ մկրտվելով Հաղաննէսի մկրտությամբ:



<sup>33</sup>Եկան Յովհաննէս մկրտիչ, ոչ ուստի եւ ոչ ըմպէր, եւ ասէիք. Դեւ գոյ ի նմա:

<sup>7</sup>Լուաւ Յերովդէս չորրորդապետ զգործն ամենայն, եւ զարմանայր վասն ասելոյն յոմանց <sup>8</sup>եթէ Յովհաննէս յարեաւ ի մեռելոց, եւ յոմանց՝ թէ Եղիա յայտնեցաւ, եւ յայլոց թէ Մարգարէ ոմն յառաջնոցն յարեաւ:

<sup>9</sup>Ասէ Յերովդէս. **ԶՅՈՎՀԱՆՆԷՍ** ես զլխատեցի, իսկ սա ո՞վ ից զորմէ զայսախի իրս լսեն: Եւ խնդրէր տեսանել զնա:

<sup>10</sup>Եւ նոցա պատասխանի տուեալ ասեն. **ԶՅՈՎՀԱՆՆԷՍ** մկրտիչ. Եւ այլը՝ Զեղիա. իսկ այլը թէ Մարգարէ ոք յառաջնոցն յարեաւ:

<sup>11</sup>Եւ եղեւ ի տեղուց ուրեք կալ յադօթս. Եւ իբրեւ դադարեաց, ասէ ցնա ոմն յաշակերտացն իւրոց. Տեր, ուսոն մեզ յադօթս կալ, որպէս եւ Յովհաննէս ուսույց աշակերտացն իւրոց:

<sup>16</sup>Օրէնքն եւ մարգարէք մինչեւ **ՅՅՈՎՀԱՆՆԷՍ**. յայնմ հետէ արքայութիւն Աստուծոյ աւետարանի, եւ ամենայն ոք զնա բռնաբարէ:

<sup>3</sup>Պատասխանի ես՝ եւ ասէ ցնոսա. Յարցից եւ ես գձեզ բա՛ն մի, եւ ասացէք ինձ: <sup>4</sup>Մկրտութիւնն ՅՅՈՎՀԱՆՆԵՆ - յերկնից էր եթէ ի մարդկանէ:

<sup>6</sup>Եթէ ասեմք. Յերկնից, ասէ. իսկ ընդո՞ր ոչ հաւատացէք նմա. Եւ եթէ ասեմք. Ի մարդկանէ, ամենայն ժողովուրդն քարկոծ առնեն զմեզ. զի հաստատեալ է ի միտս ՅՅՈՎՀԱՆՆԵՆ, թէ մարգարէ է:

Ղուկ է 33

<sup>33</sup>Եկավ ՅՅՈՎՀԱՆՆԵՆ Մկրտիչը, չէր ուտում և չէր խնում. և դուք ասացիք՝ նրա մեջ դև կա:

Ղուկ թ 7

<sup>7</sup>Յերովդէս չորրորդապետը լսեց այս բոլոր գործերը և զարմանում էր ոմանց ասածի վրա, <sup>8</sup>թէ՝ ՅՅՈՎՀԱՆՆԵՆ մեռելներից հարություն է առել, իսկ ոմանց ասածի վրա, թէ՝ Եղիան հայտնվեց, և ուրիշների՝ թէ՝ նախկին մարգարեներից մեկը հարություն է առել:

Ղուկ թ 9

<sup>9</sup>Յերովդէսն ասաց. «**ՅՅՈՎՀԱՆՆԵՆ** ես զլխատեցի, իսկ սա ո՞վ է, որի մասին այսախի բաներ եմ լսում»: Եվ ուզում էր նրան տեսնել:

Ղուկ թ 19

<sup>10</sup>Եվ նրանք պատասխանեցին և ասացին. «**ՅՅՈՎՀԱՆՆԵՆ** Մկրտիչը. և ոմանք, թէ՝ Եղիան, իսկ ուրիշներ, թէ՝ նախնիներից մի մարգարէ հարություն է առել»:

Ղուկ ԺԱ 1

<sup>11</sup>Եվ եղավ որ Յիսուս մի տեղ աղոթքի էր կանգնած. և երբ վերջացրեց, նրա աշակերտներից մեկն ասաց նրան. «Տե՛ր, մեզ աղոթել սովորեցրու, ինչպես ՅՅՈՎՀԱՆՆԵՆ սովորեցրեց իր աշակերտներին»:

Ղուկ ԺԶ 16

<sup>16</sup>Օրենքն ու մարգարեները մինչև ՅՅՈՎՀԱՆՆԵՆ էին. այնուհետև ավետարանվում է Աստծո արքայությունը, և ամեն ոք բռնի է ուզում ձեռք բերել այն:

Ղուկ Ի 4

<sup>3</sup>Յիսուս պատասխան տվեց նրանց և ասաց. «Ես էլ ձեզ մի բան հարցնեմ, և դուք ինձ ասացեք. <sup>4</sup>ՅՅՈՎՀԱՆՆԵՆ մկրտությունը երկնից էր, թէ՝ մարդկանցից»:

Ղուկ Ի 6

<sup>6</sup>«Եթէ ասեմք՝ երկնից էր, կասի՝ իսկ ինչու՝ չհավատացիք նրան. և եթէ ասեմք՝ մարդկանցից, ամբողջ ժողովուրդը մեզ կքարկոժի, որովհետև իրենց մտքում ՅՅՈՎՀԱՆՆԵՆ մասին հաստատ համոզում կա, թէ նա մարգարէ է»:

<sup>6</sup>Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա **ՅովՀաննէ»:**

<sup>15</sup>**ՅովՀաննէ»** վկայէ վասն նորա, աղաղակեաց եւ ասէ. Սա է զորմէ ասէի. Որ զկնի իմ գալոցն էր՝ առաջի իմ եղեւ, զի նախ քան զիս էր:

<sup>19</sup>Եւ այս է վկայութիւնն **ՅովՀաննո»,** յորժամ առաքեցին առ նա Յրեայքն յԵրուսաղեմէ քահանայս եւ Ղետացիս, զի հարցցեն ցնա թէ՝ Դու ո՞ւ ես:

<sup>26</sup>Պատասխանի ետ նոցա **ՅովՀաննէ»** եւ ասէ. Ես մկրտեմ զձեզ ջրով. ի միջի ձերում կայ, զոր դուքը ոչ գիտք. <sup>27</sup>Որ զկնի իմ գալոցն է, որում չեմն արժանի եթե լուծից զիսրաց կօշկաց նորա:

<sup>28</sup>Այս ի Բեթաբրա եղեւ յայնկոյս Յորդանանու, ուր էրն **ՅովՀաննէ»** եւ մկրտէր:

<sup>32</sup>Վկայեաց **ՅովՀաննէ»** եւ ասէ թէ՝ Տեսանի զՇոգին, զի իշանէր իբրեւ զաղաւմի յԵրկնից, եւ հանգէր ի վերայ նորա:

<sup>35</sup>Ի վաղիւ անդր կայր **ՅովՀաննէ»,** եւ յաշակերտաց անտի նորա երկու:

<sup>40</sup>Էր Անդրէաս եղբայր Սիմովօի Վիմի, մի յԵրկուց անտի որ լուանն ի **ՅովՀաննէ** եւ գնացին զկնի նորա:

<sup>23</sup>Մկրտէր եւ **ՅովՀաննէ»** ի յԱյենովն մերձ առ Սաղին, զի ջուրք բազումք էին անդ. Եւ գային եւ մկրտին. <sup>24</sup>Զի չեւ եւս էր արկեալ զՅովհաննէս ի քանտ: <sup>25</sup>Եւ եղեւ խնդիր յաշակերտացն **ՅովՀաննո»** ընդ Յրէի վասն սրբութեան: <sup>26</sup>Եկին առ **ՅովՀաննէ»** եւ ասեն ցնա. Ուաբրի, որ էրն ընդ թեզ յայնկոյս Յորդանանու, որում դուն վկայեցեր, ահաւասիկ նա մկրտէ, եւ

Յովի Ա 6

<sup>6</sup>Կար մի մարդ՝ Աստծուց ուղարկված. նրա անունը՝ **ՅովՀաննէ»:**

Յովի Ա 15

<sup>15</sup>**ՅովՀաննէ»** վկայում էր նրա մասին, աղաղակում և ասում. «Սա՞ է, որի մասին ասացի: Նա, որ իմ հետևից էր գալու, ինձնից մեծ եղավ, որովհետև ինձնից առաջ կար»:

Յովի Ա 19

<sup>19</sup>Եվ **ՅովՀաննէ»** վկայությունը այս է. երբ իրեաները Երուսաղեմից քահանաներ ու ղետացիներ ուղարկեցին նրա մոտ, որպեսզի հարցնեն նրան՝ դու ո՞վ ես:

Յովի Ա 26

<sup>26</sup>**ՅովՀաննէ»** պատասխան տվեց նրանց ու ասաց. «Ես ձեզ մկրտում ենջրով. ձեր մեջ կա մեկը, որին դուք չեք ճանաչում, <sup>27</sup>որ գալու է իմ հետևից, և որի կողիկմերի կապերը արձակելու արժանի չեմ ես»:

Յովի Ա 28

<sup>28</sup>Այս բանը պատահեց Բեթաբրիայում, Յորդանանի մյուս կողմում, ուր գտնվում էր **ՅովՀաննէ»** և մկրտում:

Յովի Ա 32

<sup>32</sup>**ՅովՀաննէ»** վկայեց և ասաց. «Տեսա Յոգին, որ իշում էր երկնքից որպես աղավնի և հանգչում նրա վրա:

Յովի Ա 35

<sup>35</sup>Քետևյալ օրը դարձյալ այնտեղ կանգնած էր **ՅովՀաննէ»**. նաև՝ իր աշակերտներից երկուսը:

Յովի Ա 40

<sup>40</sup>Սիմոն Պետրոսի եղբայր Անդրեասը մեկն էր այն երկուսից, որոնք լսեցին **ՅովՀաննէ»** ասածը և գնացին Յիսուսի հետևից:

Յովի Գ 23-27

<sup>23</sup>**ՅովՀաննէ»** էլ մկրտում էր Այենոնում, Երուսաղեմի մոտ, որովհետև այնտեղ շատ ջոեր կային, և նարդիկ գալիս ու մկրտվում էին, <sup>24</sup>քանի դեռ Յովհաննեսին չին բանտարկել: <sup>25</sup>Եվ **ՅովՀաննէ»** աշակերտների ու մի իրեայի միջև մաքրութեան մասին մի հարց ծագեց: <sup>26</sup>Նրանք եկան **ՅովՀաննէ»** մոտ և նրան ասացին. «Ուաբրի», նա, որ Յորդանանի մյուս

ամեներին գան առ նա: <sup>27</sup>Պատասխանի եւ Յովհաննէս եւ ասէ. Ոչ կարէ մարդ առնուլ յանձնէ եւ ոչ ինչ, եթէ ոչ իցէ տուեալ յերկնից ի վերուստ:

<sup>1</sup>Իրեւ գիտաց Յիսուս եթէ լուան փարիսեցիքն եթէ Յիսուս բազում աշակերտս առնէ եւ մկրտ քան Յովհաննէս, <sup>2</sup>(քանզի ոչ եթէ Յիսուս ինքնին մկրտէր, այլ աշակերտըն նորա), <sup>3</sup>Եթող զրեաստան երկիր, եւ եկն միւսանգամ ի Գալիլեա:

<sup>33</sup>Դուք առաքեցէք առ Յովհաննէս եւ վկայեաց ճշմարտութեանն:

<sup>36</sup>Այլ ես ունիմ վկայութիւն մեծ եւս քան Յովհաննէս. զգործսն զորս եւս ցիս Յայր զի կատարեցից զնոսա, նորին իսկ գործքն զոր գործեմ՝ վկայեն վասն ին, եթէ Յայր առաքեաց զիս:

<sup>40</sup>Եւ գնաց միւսանգամ յայնկոյս Յորդանանու ի տեղին ուր էր Յովհաննէս զառաջինն եւ մկրտէր, եւ անդ լինէր: <sup>41</sup>Եկին բազումք առ նա եւ ասեն. Զի Յովհաննէս նշան ինչ ոչ արար. <sup>42</sup>Քայց զամենայն զոր ասաց Յովհաննէս վասն նորա, ճշմարիտ էր. եւ բազումք հաւատացին ի նա անդ:

Յովհ Դ 1

Յովհ Ե 33

Յովհ Ե 36

Յովհ Ժ 40-42

կողմում թեզ հետ էր, և որի մասին դու վկայեցիր, ահավասիկ նա մկրտում է, և ամենքը գալիս են նրա մոտ»: <sup>27</sup>Յովհաննէսը պատասխանեց և ասաց. «Մարդն իրենից որևէ բան անել չի կարող, եթե նրան ի վերուստ՝ երկնքից այդ տրված չէ:

1Եթք Յիսուս իմացավ, որ փարիսեցիները լսել են, թե ինքն ավելի շատ աշակերտներ է դարձնում և մկրտում, քան Յովհաննէսը <sup>2</sup>(թեաբետն ոչ թե Յիսուս ինքն էր մկրտում, այլ նրա աշակերտները), <sup>3</sup>թողեց Յրեաստան երկիրը և վերստին եկավ Գալիլիա:

<sup>33</sup>Յովհաննէսը մոտ դուք մարդ ուղարկեցիք, և նա վկայեց ճշմարտությունը:

<sup>36</sup>Բայց ես ավելի մեծ վկայություն ունեմ, քան Յովհաննէսինը. այն գործերը, որ Յայրն ինձ տվեց, որ կատարեմ, այդ նույն գործերն իսկ, որ անում եմ, վկայում են ին մասին, թե Յայրն է ուղարկել ինձ:

<sup>40</sup>Եվ վերստին գնաց Յորդանանի մյուս կողմը, այնտեղ, ուր Յովհաննէսն էր նախապես գտնվում և մկրտում. և այնտեղ էր մնում: <sup>41</sup>Շատեր նրա մոտ եկան և ասում էին. «Յովհաննէսը որևէ նշան չարեց, քայց այն ամենը, որ Յովհաննէսն ասել էր նրա մասին, ճշմարիտ էր»: <sup>42</sup>Եվ այնտեղ շատերը հավատացին նրան:

**Տովիաննես (Եբր. «Տերը ողորմած է Տովիաննեսի»):** Հիսուսի նախակարապետը և Նրա ազգականը: Ինչպես կանխասել էին մարգարեները, նա անապատում ավետում է Մեսիայի գալուստը և հաստատում ապաշխարության մկրտությունը՝ մեղքերի թողության համար: Հորդանան գետի մոտ նա ճանաչում է Հիսուս

Մեսիային, մկրտում նրան՝ իր աշակերտներին ասելով. «Ահա՛ Գառն Աստծու»: Քէ մոտ 30թ. Հովհաննեսը բանտարկվում և գլխատվում է Հերովդես Անտիպասի կողմից:

Զաքարիա քահանայի և քահանայական ընտանիքի դուստը, Հիսուսի մոր՝ Մարիամի ազգականուհի եղիսա-

բեթի որդին ծնվել է ՔԱ 7թ. Հուդայի բլրոտ երկրում։ Զաքարիան ու Եղիսաբեթն արդար էին Աստծո առաջ, սակայն անժառանգ։ Երուսաղեմի տաճարում քահանայական ծառայություն մատուցելիս (ըստ քահանայության օրենքի, նրան էր վիճակվել մտնել Տիրոջ տաճարը և խնկարկել), երբ Զաքարիան մոտենում է խնկարկության սեղանին, նրան Տիրոջ հրեշտակն է երեսում՝ հայտնելով Հովհաննեսի մոտալուտ ծննդյան մասին։ (Տե՛ս ԵՂԻՍԱԲԵԹ)։

Երկու մանուկները ծնվում են իրարից վեց ամսվա տարբերությամբ, իրարից ոչ հեռու երկու տարբեր քաղաքներում։ Զաքարիայի ու Եղիսաբեթի տունն Օրա լեռան ստորոտում էր՝ Այն Քարիմում («Գթառատ աղբյուր»)։ 1107թ. ոռւս ուխտագնաց Դանիելը Հովհաննեսի ծննդյան վայրը հայտնաբերում է մի աննշան գյուղակում՝ քարանձավի մեջ, որի տեղն այժմ մատնանշվում է Քրանցիսկյան Սբ Հովհաննես եկեղեցում։ Հովտի մյուս կողմում Քրանցիսկյան «Այցելության» եկեղեցին է, որի ստորերկրյա մատուռում է գտնվում ավանդության համաձայն Մարիամի ու Եղիսաբեթի հանդիպման վայրում բխած աղբյուրը։ Երեսուն տարի շարունակ Հովհաննեսը հասարակությունից մեկուսացած կյանք էր վարում անապատում, որտեղից դուրս է գալիս ապաշխարության մկրտությունն սկսելու իր առաքելությամբ։

Հովհաննեսը Հորդանան գետում մարդկանց մկրտելու իր առաքելությունն սկսում է 28թ. ՔՀ։ Չորս ավետարանիչներն էլ Հովհաննեսի առաքելությունը դիտում են որպես Եսայու մարդարենության իրականացում։ (Անապա-

տում կանչողի ձայնն է։ Պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը և հարթեցե՛ք նրա շավիղները»։ Հովհաննեսի զգեստն ուղտի մազից էր, կերակուրը՝ մորեխ ու վայրի մեղը։ Հովհաննեսն արթնության քարոզիչ էր, Մեսիայի գալստյան նախապատրաստողը։ Հրեական ավանդության համաձայն՝ մկրտությունը մեղքերի լվացում էր խորհրդանշում։ Հովհաննեսի՝ ջրով մկրտությունը մարդկանց պիտի նախապատրաստեր Մեսիայի՝ Աստծո Հոգով մկրտությանը։

Հովհաննեսը Հերովդես Անտիպասի հրամանով բանտարկվում է վերջինիս եղբոր՝ Փիլիպպոսի կնոջ հետ նրա ամուսնությունը դատապարտելու համար։ Հովհաննեսն իր համարձակությամբ մեզ հիշեցնում է Եղիա մարդարեին, ով նույն համարձակությամբ դատապարտել էր հսրայելի Աքասք արքային ու նրա անօրեն կնոջը՝ Հեղաբելին։

Բանտարկված Հովհաննեսն իր աշակերտներից երկուսին ուղարկում է Հիսուսի մոտ՝ հարցնելու. «Դո՞ւ ես, որ գալու էիր»։ Հիսուսի պատասխանը, որտեղ վկայվում են Մեսիայի մասին կանխասված գործերը, փարատում է Հովհաննեսի կասկածները։

Մատթեոսն ու Մարկոսը նկարագրում են Հովհաննեսի գլխատումը, որի պատճառը Հերովդիայի աղջկան՝ Սաղոմեին Հերովդեսի տված անխոհեմ խոստումն էր։ Հստ Ա դարի հրեա պատմագիր Հովսեփոսի՝ Հովհաննեսին գլխատել են Հերովդեսի՝ Մեոյալ ծովի արևելյան կողմում ընկած Մաքերուսի բերդում։

Դ Ավետարանում Հովհաննես Մկրտիչը ներկայանում է որպես Մեսիայի վկա-



ու նախակարապետ, Ում ճանաչում է, երբ Սուրբ Հոգին աղավնակերպ իջնում է նրա վրա (Հմմտ. Հովհ Ա 33, 34):

Դ Ավետարանում չի հիշատակվում այն, որ Հիսուս իր քարոզչությունն սկսել է Հովհաննեսի բանտարկությունից հետո: Այս Ավետարանում երկուսի առաքելությունն էլ իրականացվում է միաժամանակ մինչև այն պահը, երբ Հիսուսին են հետեւում Հովհաննեսի որոշ աշակերտներ: Ահա այդ ժամանակ է, որ Հովհաննեսը նահանջում է. «Ով հարս ունի, նա՛ է փեսան. իսկ փեսայի բարեկամը, որ կանգնած լսում է նրան, մեծապես ուրախանում է փեսայի ձայնի համար. արդ, այս ուրախությունը, որ իմն է, կատարյալ է: Պետք է, որ նա մեծանա, իսկ ես՝ նվազեմ» (Հովհ Գ 29-30):

Դ Ավետարանում աներկբայորեն ընդգծվում է Հովհաննեսի հոժարակամ հնազանդությունը, որն ամենայն հավանականությամբ կապված էր առաջին հարյուրամյակի վերջին դեռևս ապրող Հովհաննես Մկրտչի աշակերտների կազմած համայնքի այն համոզման հետ, թե Հովհաննեսն ավելի մեծ է, քան Հիսուս: Դ Ավետարանի հեղինակն սկզբից ևեթ խոսում է այն փաստի մասին, որ Հովհաննես Մկրտչիը շրջապատված էր աշակերտներով, և որ հենց այս հետեւրդներից է հետագայում ձեւավորվում Հիսուսի աշակերտների բուն շրջանակը: Այս աշակերտները Հիսուսի կողմն են անցնում հենց Հովհաննեսի խորհրդով, երբ նա Հիսուսին ներկայացնում է որպես «Քրիստոս» և «Գառն Աստծո»: Հովհաննեսի բանտարկության, գլխատման և թաղման պատմություններում դրսեռվում է Հովհաննե-

սի՝ որպես իրենց առաջնորդի հանդեպ աշակերտների հավատարմությունը: Քսան տարի անց դեռ հանդիպում ենք Հովհաննեսի որոշ աշակերտների, այդ թվում՝ ուսյալ ալեքսանդրիացի հրեա Ապողոսին, ով Եփեսոսում հանդիպում է Պողոսին և հետագայում դառնում Կորնթոսի առաջին եպիսկոպոսը (Հմմտ. Գործք ԺԼ 24-28):

Հովհաննեսը Հորդանան գետում մկրտության երկու վայր էր ընտրել՝ մեկը Սամարիայի, մյուսն էլ՝ Հուդայի բնակիչների համար: Առաջինը թերևս Սաղեմի շրջանում էր (Հմմտ. Հովհ Գ 23), հավանաբար Այենոնի հինգ աղբյուրների մոտ: Մկրտության հարավային վայրը՝ Բեթաբրիան (նշանակում է «Հուն» կամ «գետանց»), հավանաբար մեկ մղոնաչափ հեռավորություն ունի այն վայրից, որն այսօր ընդունված է համարել իբրև Հովհաննեսի մկրտավայր: Վաղ ավանդության համաձայն Հովհաննեսն իր ազգական Հիսուսին մկրտել է Հայլայի ծանծաղուտում: 1902թ. Վաղի Ալ-Խարար Հովտի մուտքին՝ կամարների վրա կանգնած երկու փոքրիկ շինություններ էին դեռևս նշարվում, որոնք թվագրվում էին բյուզանդական դարաշրջանով: 530թ. ուխտագնաց Թեոդոսիոսն Անաստաս կայսեր հրամանով Հորդանանի արեւելյան ափի այդ նույն տեղում հիմնել է Ս. Հովհաննես Մկրտչի եկեղեցին: Գետի մեջ՝ մկրտության վայրում, կանգնեցված էր մարմարյա սյան վրա փայլատակող խաչը: Քառասուն տարի անց Անտոնիոսը հայտնաբերում է միայն սյունը:

Շատ գիտնականներ փորձում էին անմիջական կապ տեսնել Հովհաննես

Մկրտչի և Քումրանի վանական համայնքի միջև, որի մագաղաթյա ձեռագրերը հայտնաբերվել են Մեոյալ ծովի մոտ գտնվող քարանձավների մեջ։ Հնարավոր է, որ Հովհաննեսն այն եսենացիւներից մեկն էր, ովքեր կատարյալ անպականությունն ու սրբությունն անպատային մեկուսացման մեջ էին որոնում։ Զի բացառվում նաև, որ նրանց սովորությունները (մասնավորապես ծիսական լվացում և մաքրում) իրենց հետքն էին թողել Հովհաննեսի վրա։

Հարկավ, Հիսուս ինքը որդեգրել և ընդունել է ջրով մկրտության խոր-

հուրդը՝ իբրև քրիստոնյա դառնալու միջոց։ Հիսուսի համար Հովհաննեսը հին աշխարհի վերջին մարդարեն և նախակարապետն էր, և Քրիստոսի գալստյամբ նոր աշխարհի սկիզբն էր դրվում։ Հիսուս այսպես է արտահայտվում Հովհաննեսի մասին. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, կանանցից ծնվածների մեջ չկա ավելի մեծ մարդարե, քան Հովհաննեսը. բայց Աստծո աղքայության մեջ ամենափոքր ավելի մեծ է, քան թե նա» (Ղուկէ 28):



## ՀՈՎՐԱՆՍԵՍ առաքյալ

<sup>21</sup>Եւ մատուցեալ անտի յառաջ՝ ետես այլ երկուս եղբարս, զՅակովոս Զեբեդեայ եւ զՅակովոս գեղբայր նորա, ի նաև Զեբեդեաւ հանդերձ հարբն իւրեանց, մինչ կազմէին գուրկանս իւրեանց, եւ կոչեաց զնոսա:

<sup>22</sup>Եւ առաքելոցն երկոտասանից էին անուանք այսոքիկ. առաջին Սիմոն, անուանեալն Պետրոս, եւ Անդրեաս եղբայր նորա, <sup>3</sup>Յակովոս Զեբեդեայ եւ Յակովոս եղբայր նորա, Փիլիպպոս եւ Բարթողոմէոս, Թովմաս եւ Մատթեոս մաքսաւոր, Յակովոս Ալփեայ եւ Ղերեսոս որ անուանեցաւն Թադէոս, <sup>4</sup>Սիմոն Կանանացի եւ Ցուդա Խսկարիովտացի, որ եւ մատնեացն զնա:

<sup>1</sup>Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս գՊետրոս եւ զՅակովոս եւ զՅակովոս գեղբայր նորա, եւ հանձ զնոսա ի լեառն մի բարձր առանձինն. <sup>2</sup>Եւ այլակերպեցաւ առաջի նոցա, եւ լուսաւորեցան երեսք նորա իբրեւ զարեգակն, եւ հանդերձ նորա եղեն սպիտակ իբրեւ զլոյս:

<sup>19</sup>Եւ մատուցեալ անտի սակաւիկ մի յառաջ՝ ետես զՅակովոս Զեբեդեայ եւ զՅակովոս զեղբայր նորա, եւ զնոսա ի նաևին մինչ կազմէին գուրկանս:

<sup>29</sup>Եւ վաղվաղակի ելեալ ի ժողովրդենէն եկն ի տուն Սիմոնի եւ Անդրեայ Յակովոս եւ Յակովոս հանդերձ:

<sup>16</sup>Եւ եղ անուն Սիմոնի՝ Պետրոս, <sup>17</sup>եւ Յակովոս Զեբեդեայ եւ Յակովոս եղբօրն Յակովոս՝ եղ նոցա անուանս Բաներեգէս, որ է Որ-

Մատթ Դ 21

<sup>21</sup>Եվ այնտեղից առաջ գնալով, տեսավ երկու այլ եղբայրների՝ Զեբեդեայոսի որդի Յակովոսին և նրա եղբայր Հակոբոսին, մինչ նավակի մեջ էին իրենց հոր Զեբեդեայի հետ միասին և իրենց ուռկանները կարգի էին բերում. և նրանց էլ կանչեց:

Մատթ Ժ 3

<sup>2</sup>Եվ տասներկու առաքյալների անունները սրանք էին. առաջին՝ Սիմոն Պետրոս կոչվածը, և նրա եղբայրը Անդրեաս, <sup>3</sup>Զեբեդեայի որդի Յակովոս և նրա եղբայրը Հակոբոս, Փիլիպպոս և Բարթողոմէոս, Թովմաս և Մատթեոս մաքսավոր, Ալփեայի որդի Յակովոս և Ղերեսոս, որ Թադէոս կոչվեց, <sup>4</sup>Սիմոն Կանանացի և Ցուդա Խսկարիովտացի, որ և մատնեց նրան:

Մատթ ԺԷ 1

<sup>1</sup>Եվ վեց օր հետո Յիսուս իր հետ վերցրեց Պետրոսին, Յակովոսին և նրա եղբորը՝ Հակոբոսին և նրանց հանեց, առանձին, մի բարձր լեռ <sup>2</sup>և նրանց առաջ պայծառակերպվեց. և նրա դեմքը փայլեց ինչպես արեգակը. և նրա զգեստները դարձան սպիտակ ինչպես լույսը:

Մարկ Ա 19

<sup>19</sup>Այստեղից մի քիչ առաջ գնալով՝ տեսավ Զեբեդեայոսի որդի Յակովոսին և նրա եղբայր Հակոբոսին. սրանց էլ տեսավ իրենց նավակի մեջ, մինչ ուռկաններն էին կարգի բերում:

Մարկ Ա 29

<sup>29</sup>Եվ ժողովարանից դուրս ելնելով, անմիջապես եկավ Սիմոնի և Անդրեասի տունը՝ Յակովոսի և Հակոբոսի հետ:

Մարկ Գ 17

<sup>16</sup>Եվ Սիմոնի անունը Պետրոս որեց <sup>17</sup>և Զեբեդեայոսի որդու՝ Յակովոսի ու նրա եղբոր՝ Հակոբոսի անունները որեց Բաներեգէս, որ նշանակում է

դիք որոտման. <sup>18</sup>Եւ զԱնդրէաս, եւ զՓիլիպպոս, եւ զԲարթողոլոմէոս, եւ զՄատթէոս զմաքսաւորն, եւ զԹովվմաս, եւ զՅակովոս Ալփեայ, եւ զԹադէոս, եւ զՍիմոնվն Կանանացի, <sup>19</sup>Եւ զՅուդա Իսկարիովտացի, որ եւ մատնեացն զնա:

<sup>37</sup>Եւ ոչ զոք եթող ընդ իւր երթալ, բայց միայն զՊետրոս եւ զՅակովոս եւ զՅովհաննէ» զեղբայրն Յակովբայ:

<sup>1</sup>Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս զՊետրոս եւ զՅակովոս եւ զՅովհաննէ», եւ հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձինն, եւ յայլակերպս եղեւ առաջի նոցա:

<sup>37</sup>Պատասխանի եւ նմա Յովհաննէ» եւ ասէ. Վարդապետ, տեսաք զոնն զի յանուն քո դեւս հանէր եւ զներ կնի ոչ շրջէր, եւ արգելաք զնա:

<sup>35</sup>Եւ երթային առ նովաւ Յակովոս եւ Յովհաննէ» որդիքն Զերեեայ, եւ ասեն ցնա. Վարդապետ, կամինք զի զոր ինչ խնդրեսցուք ի քէն արասցես մեզ:

<sup>41</sup>Եւ լուեալ զայն տասանցն՝ սկսան բարկանալ Յակովբայ եւ Յովհաննէ»:

<sup>3</sup>Եւ մինչ նստէր նա ի լերինն Զիթենեաց յանդինան տաճարին, հարցանէին ցնա առանձինն Պետրոս եւ Յակովոս եւ Յովհաննէ» եւ Անդրէաս. <sup>4</sup>Ասա մեզ ե՞րբ լինիցի այդ, եւ զի՞նչ նշան է յորժամ կատարելոց իցէ այդ ամենայն:

<sup>33</sup>Եւ առնու ընդ իւր զՊետրոս եւ զՅակովոս եւ զՅովհաննէ», եւ սկսաւ տիսրել եւ հոգալ:

<sup>9</sup>Քանզի ահ պատեաց զնա եւ զամենեսեան որ ընդ ննայն էին՝ վասն որսոյ ծկանցն զոր ըմբռնեցին, <sup>10</sup>նոյն-

Որտման որդիներ: <sup>18</sup>Նաև՝ Անդրէասին և Փիլիպպոսին և Բարթողոլոմէոսին և մաքսավոր Մատթէոսին և Թովվմասին և Ալփեոսի որդի Յակովոսին և Թաթէոսին և Սիմոն Կանանացուն <sup>19</sup>և Յուդա Իսկարիովտացուն, որը և նրան մատնեց:

Մարկ Ե 37

<sup>37</sup>Եվ ոչ ոքի թույլ չտվեց իր հետ գնալ, այլ միայն Պետրոսին, Յակովոսին և նրա եղբորը՝ Հովհաննէս:

Մարկ Թ 1

<sup>1</sup>Վեց օր հետո Յիսուս իր հետ վերցրեց Պետրոսին, Յակովոսին և Հովհաննէսին ու առանձին նրանց հանեց մի բարձր լերան վրա և նրանց առաջ պայծառակերպվեց:

Մարկ Թ 37

<sup>37</sup>Հովհաննէսը պատասխանեց և ասաց. «Վարդապետ, տեսանք մեկին, որը քո անունով դևեր էր հանում, բայց մեզ հետ չէր շրջում, և արգելեցինք նրան»:

Մարկ Ժ 35

<sup>35</sup>Զերեենոսի որդիները՝ Յակովոսը և Հովհաննէսը, զնացին նրա մոտ և ասացին նրան. «Վարդապետ, ինչ որ քեզնից պիտի խնդրենք, կամենում ենք, որ անես մեզ համար»:

Մարկ Ժ 41

<sup>41</sup>Այդ լսելով՝ տասը առաքյալները սկսեցին բարկանալ Յակովոսի և Հովհաննէսի վրա:

Մարկ Ժ 4 3

<sup>3</sup>Եվ մինչ նստած էր նա Զիթենյաց լերան վրա, տաճարի դիմաց, Պետրոսն ու Յակովոսը և Հովհաննէսն ու Անդրէասը, առանձին, հարցորին նրան. <sup>4</sup>«Ասա՛ մեզ, ե՞րբ պիտի լինի այդ, և ի՞նչ կլինի նշանը, եթ կատարվելու լինի այդ բոլորը»:

Մարկ Ժ 7 33

<sup>33</sup>Եվ նա իր հետ վերցրեց Պետրոսին, Յակովոսին և Հովհաննէսին և սկսեց տիսրել ու տագնապել:

Ղուկ Ե 10

<sup>9</sup>Քանի որ վախը պատել էր նրան և բոլորին, որ նրա հետ էին, իրենց բռնած ծկների բանակի պատճա-



պես եւ զՅակովքոս եւ չՅովՀաննէ» զորդիսն Զեբեդեայ, որ էին որսակիցը Սիմոնի. Եւ ասէ ցՍիմոնն Յիսուս. Մի՛ երկնչիր, յայսն հետէ զմարդիկ որսացես ի կեանս:

<sup>14</sup>ՉՍիմոնն զոր եւ Պետրոսն անուանեաց, եւ զԱնդրեաս զեղբայր նորին, եւ զՅակովքոս, եւ չՅովՀաննէ», եւ զՓիլիպպոս, եւ զԲարթողոմէոս, <sup>15</sup>եւ զՄատթէոս, եւ զԹովոնաս, եւ զՅակովքոս Ալփեայ, եւ զՍիմոնն զկոչեցեալն Նախանձայոց, <sup>16</sup>եւ զՅուդա Յակովքայ, եւ զՅուդա Իսկարիովտացի, որ եղեւ իսկ մատնիչ:

<sup>51</sup>Եւ մտեալ ի տունն՝ ոչ զոք եթող մտանել, բայց միայն զՊետրոս եւ զՅակովքոս եւ չՅովՀաննէ» եւ զիայր մանկան եւ զմայր նորա:

<sup>28</sup>Եւ եղեւ յետ այսց բանից իբրեւ աւուրծ ութ, առեալ զՊետրոս եւ զՅակովքոս եւ չՅովՀաննէ՝ ել ի լեառն կալ յաղօթս:

<sup>49</sup>Պատասխանի ետ ՅովՀաննէ» եւ ասէ. Վարդապետ, տեսաք զոնն որ յանուն քո դեւս հաներ, եւ արգելաք զնա, զի ոչ շրջի ընդ մեզ:

<sup>54</sup>Իբրեւ տեսին աշակերտքն, Յակովքոս եւ ՅովՀաննէ», ասեն. Տէր, կամի՞ս զի ասացուք, եւ իջցէ հուր յերկնից եւ սատակեցէ զնոսա:

<sup>8</sup>Եւ առաքեաց զՊետրոս եւ չՅովՀաննէ» եւ ասէ. Երբայք պատրաստեցէք մեզ զպասեքն զի կերիցուք:

ռով. <sup>10</sup>Նույնապէս և Զեբեդեոսի որդին՝ Յակոբոսին և ՀովՀաննէովն, որոնք Սիմոնի որսակիցներն էին. և Յիսուս Սիմոնին ասաց. «Մի՛ վախեցիր, այսուհետև դու մարդկանց պիտի որսաս կիանքի համար»:

Ղուկ Զ 14

<sup>14</sup>Սիմոնին, որին էլ Պետրոս կոչեց, և Անդրեասին՝ նրա եղբորը, Յակոբոսին, ՀովՀաննէովն, <sup>15</sup>Փիլիպպոսին, Բարթողոմէոսին, Մատթէոսին, Թովոնասին, Ալփեոսի որդի Յակոբոսին, Սիմոնին Նախանձահույզ կոչվածին, <sup>16</sup>Յակոբի որդի Յուդային, որը և մատնիչ եղավ:

Ղուկ Ը 51

<sup>51</sup>Եվ նրա տունը մտնելով՝ ոչ ոքի չքողեց ներս մտնել, բացի Պետրոսից, Յակոբոսից, ՀովՀաննէովն և երեխայի հորից ու մորից:

Ղուկ Թ 28

<sup>28</sup>Եվ այս խոսքերից մոտ ութ օր հետո, իր հետ վերցնելով Պետրոսին, Յակոբոսին և ՀովՀաննէովն, նա լեռ ելավ աղոթքի կանգնելու:

Ղուկ Թ 49

<sup>49</sup>ՀովՀաննէով պատասխանեց և ասաց. «Վարդապետ, տեսանք մեկին, որ քո անունով դևեր էր հանում, և արգելեցինք նրան, որովհետև մեզ հետ չի շրջում»:

Ղուկ Թ 54

<sup>54</sup>Երբ նրա աշակերտները՝ Յակոբոսը և ՀովՀաննէով, այդ տեսան, ասացին. «Տէ՛ր, կամենու՞ն ես, որ ասեմք, և երկնքից կրակ իջնի ու բնաջինց անի նրանց»:

Ղուկ ԻԲ 8

<sup>8</sup>Եվ նա ուղարկեց Պետրոսին և ՀովՀաննէովն ու ասաց. «Գնացե՛ք, պատրաստեցե՛ք մեզ համար Պատեքի ընթրիքը, որ ուտենք»:

**Տովհաննես** (Եբր. «Տերը ողորմած է»): Քրիստոսի տասներկու առաքյալներից, Զեբեդեոսի և Սաղոմեի որդին, Յակոբոս առաքյալի եղբայրը: ՀովՀաննեսն ու Յակոբոսը ձկնորսներ էին,

**Պետրոսի ու Անդրեասի որսակիցները:** Պետրոսի գործունեության և վաղ եկեղեցու դավանանքը հաստատելու ժամանակ Հովհաննեսը, ինչպես վկայում է Գործք Առաքելոցը, նրա հետ է եղել:

Նա եկեղեցու այն երեք «սյուներից» մեկն էր, ում Պողոսը հանդիպել է Երուսաղեմում (Հմմտ. Գաղ Բ 9):

Չի բացառվում, որ Հովհաննեսը Հովհաննես Մկրտչի՝ նրա քարոզչության դրվագում անվանապես չհիշատակվող այն աշակերտներից մեկն է, ովքեր Անդրեասի ու Պետրոսի հետ հետագյում դառնում են Հիսուսի աշակերտները: Հիսուս Հովհաննեսին ու նրա եղբորը կանչում է այն ժամանակ, երբ նրանք նավակում իրենց ուռկաններն էին նորոգում: Նրանք անմիջապես հեռանում են՝ իրենց հորը թողնելով նավակում, վարձկան ձկնորսի հետ: Սաղոմնն այն կանանց թվում էր, ովքեր, երբ Հիսուս Գալիլիայում էր, «նրա հետևից էին գնում և ծառայում նրան»: Ինչպես երևում է, Զերեղեռսի ընտանիքը որոշ կարողության տեր էր: Պալատի գոնապանին ճանաչելու և Հիսուսի դատավարության ժամանակ նրա միջոցով Պետրոսին ներս մտցնելու փաստը թույլ է տալիս ենթադրելու, որ Հովհաննեսը բավական ծանոթ էր Երուսաղեմի քահանայապետի ապարանքին: Շատ հավանական է, որ նրանք քահանայապետի ընտանիքին մատակարարել են Գալիլիայի ծովի ձկով:

Հիսուսի աշակերտների ընտրության դրվագում հանդիպում ենք Հովհաննեսին և Հակոբոսին տրված մականվանը՝ «Բաներեգես»: «Բաներեգես» նշանակում է «որոտման որդիներ», որը եղբայրները հավանաբար վաստակել էին իրենց նախանձախնդրության ու կրքոտության պատճառով: «Որոտման որդի» նշանակում է օժտված լինել որոտի հատկանիշներով: Անկախ մականվան՝ պատիվ թե նախատինք լինելուց,

ակնհայտ է, որ Հիսուս քանիցս նախատել է երկու եղբայրներին: Մի անգամ Կափառնայումում Հովհաննեսը Հիսուսին ասում է. «Վարդապե՞տ, տեսանք մեկին, որ քո անունով դևեր էր հանում, և արգելեցինք նրան, որովհետեւ մեզ հետ չի շրջում»: Եվ Հիսուս ասում է. «Մի՛ արգելեք նրան, որովհետեւ ով որ ձեր թշնամին չէ, ձեր կողմն է»: Երբ Հակոբոսն ու Հովհաննեսը Հիսուսին աղաջում են շնորհ անել իրենց՝ արքայության մեջ նստեցնելու իր աջ և ձախ կողմերում, Հիսուս պատասխանում է. «Ձեք իմանում, թե ինչ եք խնդրում. կարո՞ղ եք խմել այն բաժակը, որ ես խմելու եմ, կամ մկրտվել այն մկրտությամբ, որով ես մկրտվելու եմ»: Եղբայրները համոզված պնդում են, որ կարող են: Եվ Հիսուս պատասխանում է. «Այս բաժակը, որ ես խմելու եմ, կխմեք... բայց իմ աջում և ձախում նստեցնելը ես չէ, որ պիտի տամ...»: Հիսուս Հովհաննեսին ու Հակոբոսին նախատում է նաև սամարական մի գյուղում իր պատգամավորների հանդեպ վատ ընդունելության դրվագում, երբ «որոտման որդիներն» ասում են. «Տե՛ր, կամենո՞ւմ ես, որ ասենք, և երկնքից կրակինի ու բնաջինջ անի նրանց»:

Չնայած իրենց կրքոտությանը և Հիսուսի բացահայտ կշտամբանքներին՝ երկու եղբայրները՝ Հակոբոսն ու Հովհաննեսը, Պետրոսի հետ միասին Հիսուսի աշակերտների խմբի կորիզն էին: Այս երեքին է, որ Հիսուս մասնակից է դարձնում երեք նշանավոր իրադարձությունների. նրանք են Հիսուսին ուղեկցում Հայրոսի տուն, որտեղ Հիսուս հարություն է տալիս նրա դստերը, նրանք են դառնում թարբոր լեռան վրա



Հիսուսի պայծառակերպության փառքի վկաները, նրանք են Գեթսեմանիի պարտեզում Հիսուսի տագնապի ականատեսները։ Հիսուսի չարչարանքների պատմության մեջ Հովհաննեսն անվանապես հիշատակվում է միայն այն ժամանակ, երբ Նրան հարցնում է, թե ե՞րբ է իրագործվելու Տաճարի կործանման մասին մարդարենությունը։ Հավանական է, որ նա Հովհաննու Ավետարանում հիշատակվող «սիրելի աշակերտն» է։ Եթե դա ճշմարիտ է, ապա բավական տեղեկություն է հայտնի այդ կերպարի և Վերնատանը, Գողգոթայում, թափուր գերեզմանի մոտ ու Գալիլիայում նրա ունեցած դերի մասին։

«Այն աշակերտը, որին Հիսուս սիրում էր» արտահայտությունը միայն Հովհաննես ավետարանիչն է օգտագործում, ընդամենը չորս միջադեպում, բոլորն էլ՝ Հիսուսի չարչարանքների կամ դրանց հաջորդող պատմություններում։

Առաջին միջադեպը Վերնատանն է Վերջին ընթրիքի գիշերը, ճաշից հետո։ Հիսուս, աշակերտների ոտքերը լվանալուց հետո, նստում է նրանց հետ և հայտնում իր մոտալուտ մատնության մասին։ Աշակերտներն իրար են նայում տարակուսելով, թե ո՞ւմ մասին է խոսքը։ «Աշակերտներից մեկը, ում Հիսուս սիրում էր», Նրա մոտ էր նստած։ Սիմոն Պետրոսը նրան ակնարկ է անում՝ հարցնելով, թե այդ ո՞ւմ մասին է ասում։ Սա Հիսուսի կրծքովն է ընկնում ու ասում։ «Տե՛ր, ո՞վ է»։ «Նա է, որի համար ես այս պատառը կթաթախեմ և կտամ իրեն»,՝ պատասխանում է Հիսուս։ «Եվ թաթախելով պատառը՝ տալիս է իսկարտովտացի Հուդային» (Հմմտ. Հովհ Ժ 21-26)։

Երկրորդ միջադեպը Գողգոթայում է՝ խաչելությունից հետո, Հիսուսի երկարատես հոգեվարքի ժամանակ։ «Երբ Հիսուս տեսավ մորը և այն աշակերտին, որ մոտ էր կանգնած, որին նա սիրում էր, մորն ասաց. “Ո՞վ կին, ահա՛ քո որդին”։ Ապա աշակերտին ասաց. “Ահա՛ քո մայրը”։ Եվ այդ պահից աշակերտը նրան իր մոտ առավ» (Հմմտ. Հովհ Ժ 25-27)։

Երրորդ միջադեպը Զատկի առավոտյան է, երբ Մարիամ Մագդաղենացին, այցելելով գերեզման, այն դատարկ է գտնում, իսկ մուտքի մոտի քարը՝ մի կողմ գլորված։ «Ապա վազում է և գալիս Սիմոն Պետրոսի և այն մյուս աշակերտի մոտ, որին Հիսուս սիրում էր, ու նրանց ասում է. “Տիրոջը վերցրել են գերեզմանից...”։ Պետրոսը և մյուս աշակերտը ելան և գերեզման էին գալիս։ Երկուսով միասին վազում էին, բայց մյուս աշակերտը առաջ անցավ Պետրոսից և ավելի շուտ վազեց ու առաջինը գերեզման եկավ։ Եվ կունաւով՝ տեսավ, որ կտավները այնտեղ էին, բայց ներս չմտավ։ Եկավ նաև Սիմոն Պետրոսը, որ նրա հետեւից էր գալիս. մտավ գերեզմանը և տեսավ, որ կտավները այնտեղ էին, և վարշամակը, որ որա գլխին էր, մյուս կտավների հետ չէր, այլ առանձին ծալված՝ մի կողմ էր։ Այն ժամանակ մտավ և մյուս աշակերտը, որ ավելի առաջ էր եկել գերեզման. տեսավ ու հավատաց...» (Հմմտ. Հովհ Ի 1-10)։

Չորրորդ միջադեպը Գալիլիայի լճում է Պետրոսի և մյուսների հետ գիշերվա ապարդյուն ձկնորսությունից հետո։ «Ուռկանը դցեցե՛ք նավակի աջ կողմը...»։ Նրանք այդպես էլ անում են,

և ուռկանի մեջ այնքան ձուկ է լցվում, որ նրանք չեն կարողանում այն դուրս քաշել: Այդ ժամանակ «այն աշակերտը, որին Հիսուս սիրում էր», Պետրոսին ասում է. «Տերն է»: Ուռկանը ցամաք քարշ տալուց և նախաճաշելուց հետո Հիսուս երեք անգամ Պետրոսին պատգամում է արածացնել իր ոչխարներին, ապա կանխասում է նրա խաչելությունը. «“Երբ ծերանաս, ձեռքերդ վեր կբարձրացնես, և ուրիշները քեզ գոտի կկապեն ու կտանեն՝ ուր չես կամենա”»: ...Եվ երբ այս ասաց, ավելացրեց՝ արի՝ իմ հետեւից: Պետրոսը դարձավ և տեսավ, որ այն աշակերտը, ում Հիսուս սիրում էր, գալիս է հետեւից. նա, որ ընկել էր նրա կրծքով... ասաց Հիսուսին. «Տե՛ր, իսկ սա ի՞նչ կլինի»: Հիսուս նրան ասաց. «Եթե ես կամենում եմ, որ դա ապրի, մինչեւ որ ես գամ, այդ քեզ ի՞նչ հոգ, դու արի՝ իմ հետեւից»»: Ավետարանի վերջին տողերը հաստատում են. «Այս աշակերտն է, որ վկայում է այս բաների մասին, որ և գրեց իսկ դրանք. և գիտենք, որ նրա վկայությունը ճշմարիտ է» (Հմմտ. Հովհ ԻԱ. 20-24):

Ներքին վկայությունները կարծես Ավետարանի հեղինակ են մատնանշում Զեբեղեոսի որդի Հովհաննես առաքյալին, հատկապես այն չորս դրվագները, որտեղ «աշակերտը, ում սիրում էր Հիսուս» արտահայտությունն առկա է: Փաստը, որով կարող ենք բացառել Հովհաննեսի՝ Ավետարանի հեղինակ լինելը՝ այն պարզ ենթադրությունն է, որ նա չէր կարող ինքն իր համար կիրառել «սիրելի աշակերտ» արտահայտությունը: Իսկ եթե ընդունենք, որ Ավետարանը գրվել է որևէ գրչի կողմից, ով «ես՝ Հովհաննես» արտահայտությունը

փոխարինել է «աշակերտը, ում Հիսուս սիրում էր» արտահայտությամբ, ապա միանգամայն հնարավոր է դառնում այն, որ Ավետարանը շարադրվել է Հովհաննեսի աշակերտների շրջանակում: Այնուամենայնիվ, Ավետարանի վերջաբանում հստակ գրված է, որ իրական հեղինակը Զեբեղեոսի որդի Հովհաննեսն է: Անշուշտ, հնարավոր է, որ այս վերջաբանը հետագայի հավելում է, բայց պետք չէ մոռանալ, որ այն առկա է Ավետարանի մեզ հասած բոլոր ձեռագրերում:

Արտաքին ապացույցներն առաջին հայացքից հակասական են: Վաղ եկեղեցու հայրերից ոմանք, ինչպես իրենեսու Լուգդոնացին (†202թ.) և Կղեմես Հռոմեացին (†101թ.), փաստում են, որ Ավետարանը գրվել է Զեբեղեոսի որդի Հովհաննեսի կողմից, Եփեսոսում: Սակայն մյուս կողմից Պապիասը՝ Հերապոլսի եպիսկոպոսը (60-130թթ.), պնդում էր, որ երկու Հովհաննեսներ գոյություն ունեին՝ առաքյալը, որ այլևս կենդանի չէր, և երեցը, որ տակապին ողջ էր: Դիոնիսիոսը՝ Եփեսոսի հետագա եպիսկոպոսը, հավաստում էր, որ Եփեսոսում կար երկու գերեզման, որոնց մեջ թաղված էին Հովհաննես անունով անձնելք: Համենայն դեպս, ավանդությունը համառորեն պնդում է, որ Ավետարանը գրվել է Եփեսոսում: Կարելի է հետեւյալ ենթադրությունն անել. Ավետարանի շարադրման համար տեղեկությունը տրամադրել է Զեբեղեոսի որդի Հովհաննեսը, իսկ այն գրի է առնվել կամ խմբագրվել նույնպես Եփեսոսում բնակվող Հովհաննես երեցի կողմից: Հովհաննեսի Բ և Գ թղթերի հեղինակը «Երեցն» է: Սակայն Ա



թուղթը, առավել քան Բ ու Գ թղթերը, հիշեցնում է Դ Ավետարանի ոճն ու բովանդակությունը, և հետևաբար կարող էր գրված լինել Զերեղեսի որդի Հովհաննեսի կողմից:

**Տայպնության զրոի հեղինակը:**  
Մյուս Հովհաննեսների հետ համեմատությամբ, ովքեր կարող էին համարվել Դ Ավետարանի և Թղթերի հեղինակ, այս դեպքում հեղինակության հարցը բավական խրթին է:

սին տրված «Աստվածաբան» մակղերը դժվարացնում է նրա նույնացումը Զերեղեսի որդի Հովհաննես առաքյալի հետ: Սակայն եթե հաշվի առնենք, որ Զերեղեսի որդի Հովհաննեսն ապրել է մինչև հռոմեական Դոմետիանոս կայսեր (ՔՀ 81-96) ժամանակները, ապա հավանական է, որ նա է «Պատմոսի տեսանողը», որի տեսիլքները գրի են առնվել Հայտնություն գրքում:

## ՀՈՎՍԵՇ Հիսուսի Եղբայրը

<sup>55</sup>Ո՞չ սա է հիւսանն որդի. ո՞չ մայր սորա կոչի Մարիամ, եւ Եղբայր սորա՝ Յակովոս եւ Յանուա եւ Սիմոն եւ Յուդա. <sup>56</sup>Եւ քորը սորա ո՞չ ամենքեան առ մեզ են. արդ ուստի՞ է սամա այս ամենայն:

<sup>55</sup>Եին անդ կանայք բազումք, կային ի հեռաստանէ եւ հայէին, որք եկին զկնի Յիսուսի ի Գալիլէ պաշտել զնա. <sup>56</sup>յորս էր Մարիամ Մագդաղենացի, եւ Մարիամ՝ Յակովբայ եւ Յանուա, մայր, եւ մայր որդուցն Զեբեդեայ:

<sup>30</sup>Չ սա է մանուկ հիւսանն, եւ որդին Մարենայ, Եղբայր Յակովբայ եւ Յանուա, եւ Յուդայի եւ Սիմոնի. եւ չիցե՞ն քորքն դորա աստ առ մեզ: Եւ գայթագղին ի նա:

<sup>40</sup>Եին եւ կանայք որ հայէին ի հեռաստանէ. յորս էր Մարիամ Մագդաղենացի, եւ Մարիամ՝ Յակովոս փոքրկան եւ Յանուա, մայրն, եւ Սոնովնէ:

<sup>47</sup>Իսկ Մարիամ Մագդաղենացի, եւ Մարիամ՝ Յակովբայ եւ Յանուա՝ տեսին զտեղին ուր եղաւ:

**Երբ Հիսուս իր երկրավոր առաքելության ընթացքում այցելում է Նազարեթ և քարոզում տեղի ժողովարանում, համայնքը Նրան հիշում է որպես «Հյուսնի որդու» և, հայտնելով Նրա չորս եղբայրների անուններն ու հիշատակելով քույրերին, ցույց տալիս, որ ճանաչում է Նրա ընտանիքին: Ղուկասը Հիսուսի ծննդյան պատումի մեջ Նրան անվանում է Մարիամի «անդրա-**

Մատթ ԺԳ 55

<sup>55</sup>Սա հյուսնի որդին չէ. սրա մայրը չէ, որ Մարիամ է կոչվում. և սրա Եղբայրները՝ Յակովոս, Յանուա, Սիմոն և Յուդա: <sup>56</sup>Եվ սրա քույրերը բոլորը մեզ մոտ չե՞ն. և արդ, որտեղից է սրան այս բոլորը»:

Մատթ ԻԵ 56

<sup>55</sup>Այնտեղ շատ կանայք կային, որոնք կանգնած հեռվից նայում էին և որոնք Գալիլիայից եկել էին Յիսուսի հետևից՝ նրան ծառայելու հանար. <sup>56</sup>Նրանց մեջ էին Մարիամ Մագդաղենացին, Յակովի և Յանուա մայր Մարիամը և Զեբեդեոսի որդիների մայրը:

Մարկ Զ 3

<sup>3</sup>Սա հյուսնի տղան և Մարիամի որդին չէ միթե, Յակովոսի և Յանուայի ու Յուդայի և Սիմոնի Եղբայրը. և սրա քույրերը այստեղ մեզ մոտ չե՞ն»: Եվ նրանով գայթակղվում էին:

Մարկ ԺԵ 40

<sup>40</sup>Կային և կանայք, որոնք դիտում էին հեռվից: Նրանց մեջ էին Մարիամ Մագդաղենացին, Կրտսեր Յակովոսի և Յանուա մայրը՝ Մարիամը, ինչպես և Սաղոմեն:

Մարկ ԺԵ 47

<sup>47</sup>Իսկ Մարիամ Մագդաղենացին և Յակովոսի ու Յանուա մայր Մարիամը տեսան այն տեղը, ուր նա դրվեց:

**նիկ որդի» (Ղուկ Բ 7): Եկեղեցու հայրերից ոմանք, ցանկանալով ապացուցել Մարիամի «Հավերժական կուսության» վարդապետությունը, ընդունում են, որ այդ եղբայրներն ու քույրերը Հովսեփի՝ նախորդ ամուսնության զավակներն էին: Ոմանք էլ, այդ թվում Աստվածաշնչի Դ դարի գիտակ Հերոնիմոսը, այն տեսակետն են հայտնում, որ հունարեն «Եղբայր» և «Քույր» հասկա-**



ցուլթյունների տակ կարելի է հասկանալ նաև «զարմիկ» և «զարմուհի»։ Հարկ է նշել նաև, որ սրա վառ ապացույցն է Արևելքում տարածված այդ սովորությունը։

Մարկոսը, ումից անկասկած օգտվել են Մատթեոսն ու Ղուկասը, նկարագրում է Կափառնայումում Հիսուսի քարոզչությունը։ Լսելով, որ մայրն ու եղբայրները եկել և ուզում են տեսնել իրեն, Հիսուս ասում է. «“Ո՞վ է իմ մայրը կամ՝ իմ եղբայրները”։ Ապա նայեց իր շուրջը, իր աշակերտներին, որոնք նստած էին, և ասաց. “Ահա՛ վասիկ իմ մայրը և իմ եղբայրները. որովհետեւ, ով Աստծո կամքն է կատարում, նա՛ է իմ եղբայրը, քույրը և մայրը”» (Մարկ Գ 33-35)։

Հովհաննեսը պատմում է այն մասին, թե ինչպես Տաղավարահարաց տո-

նին, երբ հրեաներն ուզում էին սպանել Հիսուսին, և նա ստիպված մնացել էր Գալիլիայում, եղբայրները, չհասկանալով Նրա նպատակն ու մտադրությունը, ասում են. «Այստեղից անցիր գնա՛ Հրեաստան, որպեսզի քո աշակերտներն էլ տեսնեն այն գործերը, որ դու անում ես. որովհետեւ չկա մեկը, որ թաքուն գործի և դեռ ուզենա իրեն համարձակ ներկայացնել. եթե այդ գործերն անում ես, ուրեմն հայտնի՛ր քեզ աշխարհին։ Քանի որ եղբայրներն իսկ գեռես չէին հավատացել նրան» (Հովհ է 3-5)։ Սակայն Ղուկասը նշում է, որ Մարիամը՝ Հիսուսի մայրը, և Հիսուսի եղբայրները Նրա համբարձումից հետո երուսաղեմում առաքյալների հետ միասին շարունակում են իրենց աղոթքները։

## ՀՈՎՍԵՓ՝ Հիսուսի հայրը

<sup>16</sup>Յակովը ծնաւ զայլակի զայրն Մարենայ որում խօսեցեալ զՄարիամ կոյս յորմէ ծնաւ Յիսուս, որ անուանեցաւ Քրիստոս:

<sup>18</sup>Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս. խօսեալ զմայր նորա Մարիամ Յայլակու, մինչչեւ եկեալ առ միմեանս գտաւ յդացեալ ի Յոգույն Սրբոյ: <sup>19</sup>Եւ Յայլակի այր նորա, քանզի արդար էր եւ ոչ կամէր առակել զնա, խորհեցաւ լռելեայն արձակել զնա: <sup>20</sup>Եւ մինչդեռ նա զայս ածէր զմտաւ, ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երեւեցաւ նմա եւ ասէ. Յայլակի, որդի Դաւթի, մի՛ երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո. քանզի որ ի նմայն ծնեալ է՝ ի Յոգույն Սրբոյ է:

<sup>24</sup>Եւ զարթուցեալ Յայլակի ի քնոյ անտի, արար որպէս հրամայեաց նմա հրեշտակն Տեառն, եւ առ յինքն զկինն իւր:

<sup>13</sup>Եւ իբրեւ զնացին նոքա անտի, ահա հրեշտակ Տեառն երեւէր ի տեսլեան Յայլակու՝ եւ ասէր. Արի, առ զմանուկդ եւ զմայր իւր, եւ փախիր յԵգիպտոս, եւ անդ լինիջիր ցործամ ասացից քեզ. քանզի ի խնդիր է Յերովդէս կորուսանել զմանուկդ:

<sup>19</sup>Եւ ի վախճանելն Յերովդի՝ ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երեւէր Յայլակու, յԵգիպտոս, <sup>20</sup>Եւ ասէր. Արի, առ զմանուկդ եւ զմայր իւր, եւ զնա յԵրկիրն Խրայելի, զի մեռան որ խնդրէին զանձն նանկանդ:

Մատթ Ա 16

<sup>16</sup>Մատթանը ծնեց Յակոբին. Յակոբը ծնեց Հայլակին՝ Մարիամի մարդուն, որի նշանածն էր կույս Մարիամը, որից ծնվեց Յիսուս, որ անվանվեց Քրիստոս:

Մատթ Ա 18-20

<sup>18</sup>Յիսուս Քրիստոսի ծնունդը այսպէս եղավ. նրա մայրը՝ Մարիամը, որ Հայլակի նշանածն էր, նախքան նրանց՝ իրար մոտենալը, Սուրբ Յոգուց հիշացած գտնվեց: <sup>19</sup>Եվ Հայլակը՝ նրա մարդը, քանի որ արդար էր և չէր կամենում նրան խայտառակել, մտածեց առանց աղմուկի արձակել նրան: <sup>20</sup>Եվ մինչ նա այս բանի մասին էր մտածում, ահա Տիրոջ հրեշտակը երազի մեջ երևաց նրան և ասաց. «Հայլակ, Դավթի որդի, մի՛ վախեցիր քեզ մոտ առնելու Մարիամին՝ քո կնոջը, որովհետև նրա մեջ ծնվածը Սուրբ Յոգուց է:

Մատթ Ա 24

<sup>24</sup>Եվ Հայլակը քնից արթնանալով՝ արեց, ինչպէս հրամայել էր իրեն Տիրոջ հրեշտակը, և իր կնոջն առավ իր մոտ:

Մատթ Բ 13

<sup>13</sup>Եվ երբ նրանք այնտեղից զնացին, ահա Տիրոջ հրեշտակը երազի մեջ երևաց Հայլակին ու ասաց. «Վեր կաց, վերցրո՛ այդ մանկանը և նրա մորը ու փախիր Եգիպտոս. և այնտեղ մնա՛ մինչև որ քեզ ասեն. քանի որ Յերովդեսը փնտրում է այդ մանկանը կորստհան մատնելու համար»:

Մատթ Բ 19

<sup>19</sup>Երբ Յերովդեսը վախճանվեց, ահա Տիրոջ հրեշտակը երազի մեջ երևաց Հայլակին՝ Եգիպտոսում և ասաց. <sup>20</sup>«Վեր կաց, վերցրո՛ այդ մանկան ու իր մորը և վերադարձիր Խրայելի Երկիրը, որովհետև մեռան նրանք, որ այդ մանկան մահն էին ուզում»:

<sup>26</sup>Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ իրեշտակ յԱստուծոյ ի քաղաք մի Գալիլեացւոց, որում անուն էր Նազարէթ, <sup>27</sup>առ կոյս խօսեեալ առն, որում անուն էր Յովանէ, ի տանէ Դաւթի. Եւ անուն կուսին Մարիամ:

<sup>4</sup>Ել եւ Յովանէ ի Գալիէլ ի քաղաք Նազարէթ ի Յրեաստան, ի քաղաք Դաւթի որ կոչի Բեթեհեն, վասն լինելոյ նորա ի տանէ եւ յազգէ Դաւթի, <sup>5</sup>նտանել յաշխարհագիր Մարեմաւ հանդերձ զոր խօսեալն էր նմա, եւ էր յոի:

<sup>16</sup>Եւ եկին փութանակի, եւ գտին զՄարիամ եւ լՅովանէ եւ զմանուկն եղեալ ի մսուր:

<sup>23</sup>Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրեւ երեսնից սկսեալ, որոց որպես եւ կարծէր, որդի Յովանէ, որ Յակովայն, որ Յեղեայն, որ Մատաքեայն

<sup>22</sup>Եւ ամենեքին վկային նմա, եւ զարմանային ընդ քանս շնորհացն որ ելանէին ի բերանոյ նորա, եւ ասէին. Ո՞չ սա է որդին Յովանէ:

<sup>45</sup>Գտանէ Փիլիպպոս զևաթանայէլ եւ ասէ ցնա. Զորմէ գուեաց Սովուս յօրէնսն եւ մարգարէթն, գտաք զՅիսուս զորդի Յովանէ, ի Նազարէթ:

Տրտնջէին զնմանէ Յրեայքն, զի ասաց թէ՝ Ես եմ հացն իջեալ յերկնից, <sup>42</sup>Եւ ասէին. Ո՞չ սա է Յիսուս որդին Յովանէն, զորոյ մեք գիտենք զհայրն եւ զմայր. իսկ արդ զիա՞րդ ասէ եթէ՝ Ես յերկնից իջի:

**Տովուսի** (Եբթ. «Թող Աստված ավետում է Հիսուսի ծննդյան մասին: [Պավակներ] ավելացնի»): Կույս Մարիամի նշանաձն էր գեռևս այն ժամանակ, մի Գաբրիէլ հրեշտակը Մարիամին է որպես իր զավակի: Նա խառնվածքով

Ղուկ Ա 27

<sup>26</sup>Վեցերորդ ամսին Գաբրիէլ իրեշտակը Աստօն կողմից ուղարկվեց Գալիլեայի մի քաղաքը, որի անունը Նազարէթ էր, <sup>27</sup>մի կույսի մոտ, որ նշանված էր Հովանէ անունով մի մարդու հետ՝ Դավթի տնից: Եվ այդ կույսի անունը Մարիամ էր:

Ղուկ Բ 4

<sup>4</sup>Հովանէն էլ Դավթի տնից և ազգատոհնից լինելով՝ Գալիլեայի Նազարէթ քաղաքից ելավ գնաց դեպի Յրեաստան՝ Դավթի քաղաքը, որը Բեթեհեն է կոչվում, <sup>5</sup>մարդահանարի մեջ արձանագրվելու Մարիամի հետ, որ նրա հետ նշանված էր և հոյի էր:

Ղուկ Բ 16

<sup>16</sup>Եվ նրանք շտապով եկան ու գտան Մարիամին ու Հովանէն և մսուրի մեջ դրված մամկանը:

Ղուկ Գ 23

<sup>23</sup>Եվ ինքը Յիսուս շուրջ երեսուն տարեկան էր, երբ սկսեց իր գործունեությունը: Եվ, ինչպես կարծում էին, որդին էր Հովանէն, և սա՝ Յակոբի, և սա՝ Յեղիի, և սա՝ Մատաքեայն:

Ղուկ Դ 22

<sup>22</sup>Եվ բոլորը վկայում էին ու զարմանում նրա բերանից ելած շնորհալի խոսքերի վրա ու ասում. «Սա Հովանէն որդին է!»:

Յովի Ա 45

<sup>45</sup>Փիլիպպոսը գտնում է Նաբանայէլին ու նրան ասում. «Ում մասին որ Սովուսը օրենքի մեջ և մարգարէները գրել են, գտանք նրան Յիսուսին՝ Հովանէն որդուն, Նազարէթ քաղաքից»:

Յովի Զ 42

<sup>42</sup>Եվ ասում էին. «Սա Յիսուսը չէ՝ Հովանէն որդին, որի հորն ու մորը մենք ճանաչում ենք: Իսկ արդ, ինչպես է ասում Ես երկնքից իջա»:

հեղ, սիրալիր, մեծահոգի ու բարեխիղճ ծնող էր, ով Հիսուսին թերևս սովորեցրել է հյուսնի արհեստը: Հնարավոր է՝ Հիսուսի ակնածանքը Հովսեփի նկատմամբ ինչոր չափով արտացոլված է այն պարզ փաստի մեջ, որ նա Աստծուն անվանում էր «Աթեա» (Հայրիկ)՝ դրանով արտահայտելով Աստծո Հայրության խոր և անձնական ըմբռնումը:

Մատթեոսի վկայությամբ՝ երբ Հովսեփին իմանում է իր նշանածի հղության մասին, տարակուսանքի մեջ է ընկնում, բայց քանի որ արդար էր և չէր կամենում նրան խայտառակել, որոշում է առանց աղմուկի արձակել Մարիամին: Տիրոջ հրեշտակը հայտնվում է նրան և ասում. «Հովսեփ, Դավթի որդի, մի՛ վախեցիր քեզ մոտ առնելու Մարիամին՝ քո կնոջը, որովհետև նրա մեջ հղացածը Սուրբ Հոգուց է: Նա մի որդի պիտի ծնի, և նրա անունը Հիսուս պիտի դնես, քանի որ նա պիտի փրկի իր ժողովրդին՝ իր մեղքերից»: Հավաստիանալով Մարիամի անարատ հղության մեջ Հովսեփը Մարիամին տանում է իր տուն, և երբ Բեթղեհեմի մսուրում մանուկը ծնվում է, նրա անունը դնում է «Հիսուս»:

Փրկչին երկրպագելու եկած Մոգերի հեռանալուց հետո հրեշտակի ցուցումով Հովսեփը Մարիամի ու Մանկան հետ փախչում է Եգիպտոս, և միայն Հերովդեսի մահից հետո նույն հրեշտակի ցուցումով վերադառնում է Իսրայել և բնակություն հաստատում Գալիլիայի գողտրիկ Նազարեթ քաղաքում: Այստեղ նա զբաղվում է իր՝ հյուսնի արհեստով: Արա արձագանքն է թերևս Հիսուսի՝ Նազարեթ կատարած այցելության ժամանակ տեղի բնակիչների վերաբեր-

մունքը. «Սա հյուսնի որդին չէ՝ սրա մայրը չէ՝, որ Մարիամ է կոչվում. և սրա եղբայրները՝ Հակոբոս, Հովսես, Սիմոն և Հուդա: Եվ սրա քույրերը բոլորը մեզ մոտ չե՞ն. և արդ, որտեղից է սրան այս բոլորը» (Մատթ ԺԿ 55-56): Մատթեոսի Ավետարանում Հովսեփի մասին հետագա հիշատակություն չկա:

Հուկասը նկարագրում է Հիսուսի ծննդյան ավետումը, որի ժամանակ Մարիամը «նշանված էր Հովսեփի անունով մի մարդու հետ՝ Դավթի տնից»: Ի տարբերություն Մատթեոսի՝ Հուկասը հայտնում է, որ նրանք ապրում էին նազարեթում: Միայն մարդահամարի պատճառով է, որ նրանք գնում են Բեթղեհեմ, որովհետև Հովսեփը «Դավթի տնից և ազգատոհմից» էր:

Ծննդից քառասուն օր հետո Մարիամն ու Հովսեփը Հիսուսին տանում են Տաճար՝ Տիրոջը ներկայացնելու և զոհաբերություն մատուցելու, որից հետո նրանք վերադառնում են «Գալիլիա, իրենց քաղաքը՝ Նազարեթ»:

Հուկասն այնուհետև նշում է, որ Հիսուսի ծնողները կանոնավոր կերպով այցելում էին Երուսաղեմ: Հեղինակը հատկապես ներկայացնում է տասներկուամյա Հիսուսի՝ ծնողների հետ այցը Երուսաղեմ, որտեղ, համաձայն Հրեական օրենքի, Հիսուս պետք է հաստատվեր իբրև «օրենքի զավակ»: Տունդարձի առաջին օրը, նկատելով, որ Հիսուս իրենց ուղեկիցների մեջ չէ, ծնողները վերադառնում են Երուսաղեմ և նրան գտնում Տաճարում՝ վարդապետների մեջ նստած: Հիսուսի մայրը նրան ասում է. «‘Որդի՛, այս ի՞նչ արեցիր դու մեզ. ահավասիկ հայրդ ու ես տագնապած քեզ էինք փնտրում”: Եվ նա



պատասխանեց նրանց. “ինչո՞ւ էիք ինձ փնտրում, չգիտեի՞ք, թե ես Հորս տանը պետք է լինեմ”: Բայց նրանք չհասկացան այն խոսքը, որ նա իրենց ասաց: Եվ Հիսուս նրանց հետ իջավ ու Նազարեթ գնաց. և նա հնագանդ էր նրանց: Եվ նրա մայրը այս բոլոր բաները պահում էր իր սրտում» (Ղուկ Բ 48-51):

Երուսաղեմ կատարած այս այցից հետո Հովսեփի մասին այլևս հիշատակություն չկա: Հովհաննու Ավետարանում և՝ Փիլիպպոսը (Նաթանայելի հետ խոսելիս), և՝ Կափառնայումի հրեաները Հիսուսին բնորոշում են որպես «Հովսեփի որդի»՝ հայտնելով, որ ճանաչում են նրա հորն ու մորը (Հմմտ. Հովհ Զ 42):

Տեառնեղբայր Հակոբոսին վերագրված պարականոն Ավետարանը, որը

պատմում է Հիսուսի մանկության մասին և հավանաբար գրվել է Բ դարում, նշում է, որ Մարիամի հետ ամուսնանալիս Հովսեփը բավական տարիքով էր: Թերեւս վաղաժամ մահվան պատճառով է, որ նա խաչելության դրվագում չի հիշատակվում:

Բ և Գ դարերի պարականոն «Ատաղձագործ Հովսեփի պատմությունը» արևելյան եկեղեցիներում աստիճանաբար ակնածանքի է արժանանում՝ որպես ընտանեկան սրբության օրինակ: Արվեստի գործերում նա հաճախ է պատկերվում մանուկ Հիսուսի հետ, գավաղանը ձեռքին:

## ՀՈՎՍԵՓ Արիմաթիացի

<sup>57</sup>Եւ իբրեւ երեկոյ եղեւ, եկն այր մի մեծատուն յԱրիմաթեայ որում անուն էր Յովակէփ, որ աշակերտեցաւ իսկ Յիսուսի:

<sup>58</sup>Եւ առեալ զմարմինն Յովակէփ՝ պատեաց սուրբ կտաւովը, <sup>60</sup>Եւ եղ ի նոր գերեզմանի զոր փորեաց ի վիմի. Եւ թաւալեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ մի մեծ՝ գնաց:

<sup>42</sup>Եւ իբրեւ երեկոյ եղեւ, քանզի ուրբար էր որ ի շաբաթն մտանէր, <sup>43</sup>Եկեալ Յովակէփ որ յԱրիմաթեայն էր, այր պարկեշտ նախարար, որ եւ ինքն իսկ ակն ուներ արքայութեանն Աստուծոյ, համարձակեցաւ ենուտ առ Պիղատոս, եւ խնդրեաց զմարմինն Յիսուսի:

<sup>44</sup>Եւ Պեղատոս զարմացաւ, թէ այնչափ վաղ մեռաւ: Եւ կոչեցեալ առ ինքն զհարիւրապետն, եհարց զնա եւ ասէ, թէ արդարեւ այնչափ վա՞ղ մեռաւ: <sup>45</sup>Եւ իբրեւ ստուգեաց ի հարիւրապետ անտի, շնորհեաց զմարմինն Յովակէփայ: <sup>46</sup>Եւ Յովակէփ գնեաց կտաւ, եւ իջուցեալ զնա՝ պատեաց կտաւովն, եւ եղ ի գերեզմանի՝ զոր էր փորեալ ի վիմ: Եւ թաւալեցոյց վէմ մի դուռն գերեզմանին:

<sup>50</sup>Եւ ահա այր մի անուն Յովակէփ, որ էր նախարար, այր բարեգործ եւ արդար. <sup>51</sup>(սա չէր միաբանեալ ընդ խորհուրդս եւ ընդ գործս նոցա,) յԱրիմաթեայ քաղաքէ Յրեից, որ եւ ինքն իսկ ակն ուներ արքայութեան Աստուծոյ:

Մատք Իւ 57

<sup>57</sup>Երբ երեկո եղավ, եկավ Հովակէփ անունով արիմաթիացի մի մեծահարուստ մարդ, որ Յիսուսին աշակերտել էր:

Մատք Իւ 59

<sup>59</sup>Եվ Հովակէփը, մարմինն առնելով, պատեց մաքուր կտավով <sup>60</sup>և դրեց նոր գերեզմանի մեջ, որ փորել էր տվել ժայռի մեջ: Եվ մի մեծ քար, որպես կափարիչ, գերեզմանի դրան առաջ գլորեց ու գնաց:

Մարկ Ժւ 43

<sup>42</sup>Եվ երբ երեկո եղավ,- քանի որ ուրբար էր, և շաբաթամուտն էր սկսվում,- <sup>43</sup>արիմաթիացի Հովակէփը, որ մի պարկեշտ մարդ էր ու իրեաների ժողովի անդամ և որ ինքն էլ Աստօն արքայութիւնն էր սպասում, համարձակվեց մտնել Պիղատոսի մոտ և ուզեց Յիսուսի մարմինը:

Մարկ Ժւ 45-46

<sup>44</sup>Եվ Պիղատոսը զարմացավ, որ Յիսուս այշչափ շուտ էր մեռել. և իր մոտ կանչելով հարյուրապետին՝ հարցրեց նրան ու ասաց. «Իրոք այշչափ շուտ մեռավ»: <sup>45</sup>Երբ այդ ստուգեց հարյուրապետից, մարմինը շնորհեց Հովակէփին: <sup>46</sup>Եվ Հովակէփը կտավ գնեց ու նրան իշեցնելով՝ պատեց այդ կտավով ու դրեց մի գերեզմանի մեջ, որ փորված էր ժայռի մեջ: Եվ մի քար գլորեց գերեզմանի դրան առաջ:

Ղուկ Իգ 50

<sup>50</sup>Եվ ահա Հովակէփ անունով մի մարդ կար իրեաների Արիմաթե քաղաքից: Նա իրեաների խորհրդի անդամ էր, բարեգործ և արդար մի մարդ <sup>51</sup>(սա չէր միաբանել նրանց մտադրություններին ու գործերին): Եվ ինքն էլ էր սպասում Աստօն թագավորութիւնը:



<sup>38</sup>Յետ այսորիկ աղաչեաց զՊի-դատոս Յովանէ որ յԱրինաթեայ էր, աշակերտ Յիսուսի ի ծածուկ վասն ահին Յրէից, զի բարձգէ զմարմինն Յիսուսի. Եւ իրամայեաց Պիղատոս. Եկին եւ բարձին զնա:

Յովի ԺԹ 38

<sup>39</sup>Այնուհետև Հովհաննէ, որ արիմա-թիացի էր և Յիսուսի թաքուն աշա-կերտն էր հրեաների վախի պատ-ճառով, Պիղատոսին աղաչեց, որ Յիսուսի մարմինը վերցնի: Եվ Պի-ղատոսը հրաման տվեց. ուստի Յովսեփն ու Նիկոդեմոսը եկան և նրան վերցրին:

**Հովսեփի** (Եբր. «թող Աստված [զավակներ] ավելացնի»): Ավետարան-ներից յուրաքանչյուրն իր ձեռով է կեր-տում Հովսեփ Արիմաթիացու կերպա-րը: Մարկոսը նրան անվանում է Սին-հեղիփոնի հարգված անդամ, ով Աստծո արքայությանն էր սպասում: Մատթեո-սը նրան պարզապես անվանում է «մե-ծահարուստ մարդ»: Ղուկասը նրան անվանում է «բարեգործ և արդար մարդ»՝ ավելացնելով, որ «սա չէր միա-բանել նրանց (Սինհեղիփոնի անդամ-ների) մտադրություններին ու գործե-րին»: Հովհաննեսը նրան հիշատակում է որպես «Հիսուսի թաքուն աշակերտ հրեաների վախի պատճառով»:

Չորս Ավետարաններն էլ հայտնում են, որ Հիսուսի խաչելությունից հե-տո Հովսեփը գնում է Պիղատոսի մոտ՝ խնդրելու Հիսուսի մարմինը, և ստա-նալով նրա համաձայնությունը, խաչից

իջեցնում է Տիրոջ մարմինը, պատում կտավով ու գնում գերեզմանում: Մար-կոսն այստեղ ավելացնում է, որ Պիղա-տոսը «մարմինը շնորհեց Հովսեփին: Եվ Հովսեփը կտավ գնեց...» և Տիրոջ մար-մինը գերեզմանում դնելուց հետո «մի քար գլորեց գերեզմանի դռան առաջ»: Մատթեոսը նշում է, որ այդ գերեզմա-նը նրան էր պատկանում: Ղուկասն ավելացնում է, որ ոչ ոք գեռ չէր դրվել գերեզմանի մեջ:

Հովսեփի հայրենի Արիմաթիա քա-ղաքի ավանդական վայրը Ռամլան է՝ Լյուդդայի մոտակայքում, Երուսա-ղեմից հարավ-արևեմուտք ընկած ծո-վափնյա հարթավայրում: Նիկոդեմոսի պարականոն Ավետարանի համաձայն՝ Հովսեփը նպաստել է Լյուդդայի առա-ջին քրիստոնեական համայքնի հիմ-նադրմանը:

## ՅՈՒԴԱ ԻՍԿԱՐԻՒՎՄԱԳԻ

<sup>2</sup>Եւ առաքելոցն երկոտասամից էին անուանք այսոքիկ. առաջին Սիմովն, անուանեալն Պետրոս, եւ Անդրեաս եղբայր նորա, <sup>3</sup>Յակովոս Զեբեդեայ եւ Յովհաննես եղբայր նորա, Փիլիպպոս եւ Բարթողոմէոս, Թովմաս եւ Սատթեոս մաքսաւոր, Յակովոս Ալփեայ եւ Ղերեոս որ անուանեցաւն Թադէոս, <sup>4</sup>Սիմովն Կանանացի եւ **Յուդա** Իսկարիովտացի, որ եւ մատնեցն զնա:

<sup>14</sup>Յայնժամ գնաց մի յերկոտասամիցն անուանեալ **Յուդա** Իսկարիովտացի առ քահանայապետսն, եւ ասէ. <sup>15</sup>Զի՞նչ կամիք տալ ինձ, եւ ես մատնեցից զնա ձեզ:

<sup>25</sup>Պատասխանի ետ Յուդա որ մատնելոցն էր զնա եւ ասէ. Միթէ ե՞ս իցեմ, վարդապետ: Ասէ ցնա. Դու ասացեր:

<sup>47</sup>Եւ մինչդեռ նա զայն խօսէր, ահա **Յուդա**, մի յերկոտասամիցն եկն, եւ ընդ նմա ամբոխ բազում սրովք եւ բրօք ի քահանայապետիցն եւ ի ծերոց ժողովրդեանն:

<sup>3</sup>Յայնժամ տեսեալ **Յուդայի** որ մատնեցն զնա թէ պարտաւորեցաւ, զղջացաւ եւ դարձոյց զարծարն առ քահանայապետսն եւ ծերս ժողովրդեանն, <sup>4</sup>եւ ասէ. Սեղայ զի մատնեցի զարիւն արդար: Եւ նոքա ասեն. Սեզ չէ փոյթ, դու գիտես:

<sup>16</sup>Եւ եղ անուն Սիմովնի՝ Պետրոս, <sup>17</sup>եւ Յակովոս Զեբեդեայ եւ Յովհաննու եղբօրն Յակովոյ՝ եղ նոցա անուանս Բամերեգէս, որ է Որ-

Մատթ Ժ 4

<sup>2</sup>Եվ տասներկու առաքյալների անունները սրանք էին. առաջին՝ Սիմոն Պետրոս կոչվածը, և նրա եղբայրը Անդրեաս, <sup>3</sup>Զեբեդեոսի որդի Յակովոս և նրա եղբայրը Յովհաննես, Փիլիպպոս և Բարթողոմէոս, Թովմաս և Սատթեոս մաքսավոր, Ալփեոսի որդի Յակովոս և Ղերեոս, որ Թադէոս կոչվեց, <sup>4</sup>Սիմոն Կանանացի և **Յուդա** Իսկարիովտացի, որ և մատնեց նրան:

Մատթ Ի 2 14

<sup>14</sup>Այն ժամանակ Տասներկուսից մեկը՝ **Յուդա** Իսկարիովտացի կոչվածը, գնաց քահանայապետների մոտ ու ասաց. <sup>15</sup>«Ինչ է կկամենաք ինձ տալ, որ ես նրան ձեզ մատնեմ»: Եվ նրանք երեսուն արծաթ դրամ խոստացան նրան:

Մատթ Ի 2 25

<sup>25</sup>Հուդան, որ մատնելու էր նրան, պատասխանեց ու ասաց. «Միթէ ե՞ս եմ, Վարդապետ»: Նրան ասաց՝ դու ասացիր:

Մատթ Ի 2 47

<sup>47</sup>Եվ մինչ նա դեռ այսպես խոսում էր, ահա **Յուդան** Տասներկուսից մեկը, Եկավ. ու նրա հետ՝ քահանայապետների և ժողովրդի ծերերի կողմից բազում ամբոխ սրերով ու մահակներով:

Մատթ Ի 3

<sup>3</sup>Այն ժամանակ **Յուդան**, որ Յիսուսին մատնել էր, տեսնելով, որ Յիսուս դատապարտվեց, զղջաց, արծաթ դրամները վերադրծեց քահանայապետներին և ժողովրդի ծերերին ու ասաց. <sup>4</sup>«Սեղանչեցի, որովհետև արդար արյուն մատնեցի»: Իսկ նրանք ասացին. «Սեր հոգը չէ, դու գիտես»:

Մարկ Գ 19

<sup>16</sup>Եվ Սիմոնի անունը Պետրոս դրեց <sup>17</sup>և Զեբեդեոսի որդու՝ Յակովոսի ու նրա եղբօր՝ Յովհաննեսի անունները դրեց Բաներեգէս, որ նշանակում

դիք որոտման։ <sup>18</sup>Եւ զԱնդրեաս, եւ զՓիլիպպոս, եւ զԲարթողոմէոս, եւ զՄատթէոս զմաքսաւորն, եւ զԹովմաս, եւ զՅակովոս Ալփեայ, եւ զԹադէոս, եւ զՍիմովն Կանանցի, <sup>19</sup>Եւ ՀՅՈՒՅՔ Իսկարիովուտացի, որ եւ մատնեացն զնա:

<sup>10</sup>Եւ ՅՅՈՒՅՔ Իսկարիովուտացի, մի յԵրկուտասանից անտի, գնաց առ քահանայապետսն զի մատնեսցէ զնա նոցա:

<sup>43</sup>Եւ մինչդեռ նա զայն խօսէր, զայ ՅՅՈՒՅՔ Իսկարիովուտացի, մի յԵրկուտասանից անտի, եւ ընդ նմա ամբոխ սուսերօք եւ բրօք ի քահանայապետիցն եւ ի դպրաց եւ ի ծերոց:

<sup>14</sup>ԶՍիմովն զոր եւ Պետրոսն անուանեաց, եւ զԱնդրեաս գեղքայր նորին, եւ զՅակովոս, եւ զՅովհաննես, եւ զՓիլիպպոս, եւ զԲարթողոմէոս, <sup>15</sup>Եւ զՄատթէոս, եւ զԹովմաս, եւ զՅակովոս Ալփեայ, եւ զՍիմովն զկոչեցեալն Նախանձայոյց, <sup>16</sup>Եւ զՅուդա Յակովոյ, եւ ՀՅՈՒՅՔ Իսկարիովուտացի, որ եղեւ իսկ մատնիչ:

<sup>3</sup>Ապա ենոււ Սատանայ ի ՅՅՈՒՅՔ ի կոչեցեալն Իսկարիովուտացի, որ էր ի թուոյ Երկուտասանիցն:

<sup>47</sup>Եւ մինչդեռ խօսէր, ահաւասիկ ամբոխ. եւ որ կոչէրն ՅՅՈՒՅՔ, մի յԵրկուտասանիցն, առաջնորդէր նոցա. իբրեւ մերձեցաւ առ Յիսուս, համբուրեաց զնա. քանզի զայն նշան սուսեալ էր նոցա, թէ՝ Ընդ որում ես համբուրեցից, նա է, զնա ունիցիք։ <sup>48</sup>Ասէ ցնա Յիսուս. ՅՅՈՒՅՔ, համբուրելո՞վ մատնես զՈրդի մարդոյ։

<sup>72</sup>Եւ ասէր զՍիմովնեան ՅՅՈՒՅՔ Իսկարիովուտացւոյ, զի նա իսկ մատնելոց էր զնա, եւ մի էր յԵրկուտասանիցն:

Է՛ Որտման որդիներ: <sup>18</sup>Նաև՝ Անդրեասին և Փիլիպպոսին և Բարթողոմէոսին և մաքսավոր Մատթէոսին և Թովմասին և Ալփեոսի որդի Յակոբոսին և Թադէոսին և Սիմոն Կանանցուն ։ <sup>19</sup>և ՀՅՈՒՅՔ Իսկարիովուտացուն, որը և նրան մատնեց:

Մարկ ԺԴ 10

Մարկ ԺԴ 43

Ղուկ Զ 16

Ղուկ ԻԲ 3

Ղուկ ԻԲ 47-48

Յովհ Զ 72

<sup>10</sup>ԵՎ ՀՅՈՒՅՔ Իսկարիովուտացին Տասներկուսից մեկը, գնաց քահանայապետների մոտ, որ Յիսուսին մատնի նրանց:

<sup>43</sup>ԵՎ մինչ նա դեռ խոսում էր այս բաները, եկավ ՀՅՈՒՅՔ Իսկարիովուտացին՝ Տասներկուսից մեկը, և իր հետ՝ սրբով, մահակներով զինված ամբոխ՝ ուղարկված քահանայապետների, օրենսգետների ու ծերերի կողմից:

<sup>14</sup>Սիմոնին, որին էլ Պետրոս կոչէց, և Անդրեասին՝ նրա եղբորը, Յակոբոսին, Յովհաննեսին, <sup>15</sup>Փիլիպպոսին, Բարթողոմէոսին, Մատթէոսին, Թովմասին, Ալփեոսի որդի Յակոբոսին, Սիմոնին Նախանձահույզ կոչվածին, <sup>16</sup>Յակոբի որդի Յուդային և Իսկարիովուտացի ՀՅՈՒՅՔ, որը և մատնիչ եղավ։

<sup>3</sup>Ապա սատանան մտավ Իսկարիովուտացի կոչված ՀՅՈՒՅՔ, մեջ, որ Տասներկուսի թվում էր։

<sup>47</sup>ԵՎ մինչ նա դեռ խոսում էր, ահա երևաց մի ամբոխ. և նա, որ ՀՅՈՒՅՔ էր կոչվում, Տասներկուսից մեկը, առաջնորդում էր նրանց. երբ Յուդան մոտեցավ Յիսուսին, համբուրեց նրան, որովհետև այն նշանն էր տվել նրանց, թէ՝ “Ում հետ ես համբուրվեմ, նա’ է, նրան բռնեցեք”։ <sup>48</sup>Յիսուս նրան ասաց. «ՀՅՈՒՅՔ, համբուրելո՞վ ես մատնում մարդու Որդուն»։

<sup>72</sup>Նա խոսում էր Իսկարիովուտացու՝ Սիմոնի որդի ՀՅՈՒՅՔ մասին, որովհետև հենց նա էր մատնելու նրան. և Տասներկուսից մեկն էր:

<sup>4</sup>Ասէ մի ոմն յաշակերտաց անտի, **Յուղա** հսկարիովտացի, որ մատնելոցն էր զնա. <sup>5</sup>Ընդէ՞ր ոչ եւդդ այդ վաճառեցաւ երեք հարեւը դենարի եւ տուաւ աղքատաց:

<sup>2</sup>Եւ ի լինել ընթրեացն (Սատանայի իսկ արկեալ էր ի սիրտ, զի մատնեսց զնա, **Յուղա** Սիմովնի հսկարիովտացւոյ) <sup>3</sup>գիտաց Յիսուս զի զամենայն ինչ եւս Յայր ի ծեռս նորա, եւ թէ յԱստուծոյ ել եւ առ Աստուած երթայ, <sup>4</sup>յառնէ յընթրեաց անտի եւ դնէ զիանդերձան, եւ առեալ դենջակ մի սփածաւ:

<sup>26</sup>Պատասխանի եւս Յիսուս եւ ասէ. Այն է, որում ես բացից զպատառն եւ տաց: Եւ բացեալ զպատառն տայ **Յուղայի** հսկարիովտացւոյ:

<sup>29</sup>Զի ոնանք համարէին թէ զի զարկեն ուներ **Յուղա**, ասաց նուա Յիսուս. Գնեա ինչ որ պիտոյ իցէ մեզ ի տօնիս, եւ կամ, զի աղքատաց ինչ տացէ:

<sup>2</sup>Գիտէր եւ **Յուղա** որ զնայն մատնելոց էր՝ զուելին, զի բազում անգամ ժողովեալ էր անդր Յիսուսի աշակերտօրն հանդերձ: <sup>3</sup>Եւ **Յուղայի** առեալ ընդ իւր զգունդն, եւ ի քահանայապետիցն եւ ի փարիսեցւոց սպասաւորս, զայ անդր ջահիւք եւ լապտերօք եւ զինուք:

<sup>5</sup>Պատասխանի ետուն նմա. ԶՅիսուս Նազովեցի: Ասէ ցնոսա Յիսուս. Ես եմ: Կայր ընդ նոսա եւ **Յուղա** որ մատնէրն զնա:

**Տուդա** (եբր. «գովելի», «Հոչակավոր»): Քրիստոսի տասներկու առաքյալներից, Ավետարաններում առաքյալների թվարկումների մեջ վերջինը՝

Յովի ԺԲ 4

<sup>4</sup>Աշակերտներից մեկը՝ **Հուդա** հսկարիովտացին, որ մատնելու էր նրան, ասաց. <sup>5</sup>«Ինչո՞ւ՝ այդ յուղը չվաճառվեց երեք հարյուր արծար դահեկանի և չտրվեց աղքատներին»:

Յովի ԺԳ 2

<sup>2</sup>Եվ ընթրիքի ժամանակ, երբ սատանան արդեն իսկ Սիմոնի որդի հսկարիովտացի՝ **Հուդայի** սրտի մեջ դրել էր, որ մատնի նրան, <sup>3</sup>Յիսուս իմացավ, որ Յայրը ամեն բան իր ծեռքն էր հանձնել, և որ ինքը Աստծուց էր եւել և Աստծոն մոտ էր գնում: <sup>4</sup>Սա վեր կացավ ընթրիքի սեղանից, մի կողմ դրեց զգեստները և մի սրբիչ վերցնելով՝ մեջքին կապեց:

Յովի ԺԳ 26

<sup>26</sup>Յիսուս պատասխանեց և ասաց. «Նա է, որի համար ես այս պատառը կթարախեն և կտամ իրեն»: Եվ քաթախելով պատառը տալիս է հսկարիովտացի՝ **Հուդային**:

Յովի ԺԳ 29

<sup>29</sup>Որովհետև ոմանք կարծում էին, թե, քանի որ **Հուդան** էր զանձանակը պահում, Յիսուս նրան ասաց. «Գնիր, ինչ որ մեզ տոնի ժամանակ պետք է» և կամ՝ որ մի բան տա աղքատներին:

Յովի ԺԸ 2-3

<sup>2</sup>**Հուդան** էլ, որ նրան մատնելու էր, գիտեր այս տեղը, որովհետև Յիսուս ու իր աշակերտները շատ անգամ այնտեղ հավաքվել էին: <sup>3</sup>Եվ **Հուդան** իր հետ վերցնելով գունդը և պահակներ՝ ուղարկված քահանայապետներից ու փարիսեցիներից, այնտեղ եկավ ջահերով, լապտերներով ու զենքերով:

Յովի ԺԸ 5

<sup>5</sup>Նրան պատասխանեցին՝ Յիսուս Նազովեցուն: Յիսուս նրանց ասաց՝ Ես եմ: Նրանց հետ էր և **Հուդան**, որ մատնում էր նրան:

«որ մատնեց նրան» մակդիրով: «Իսպար»՝ «իշ Կարիոթ», նշանակում է «մարդ Կարիոթից», որը Հրեաստանի հարավային քաղաքներից էր: Հետևա-



բար Հուդան տասներկուսի մեջ միակ ոչ գալիլիացին էր՝ օտար՝ առաքյալների խմբում, ով կարծես միշտ մենակ էր՝ մյուսների կողմից չհասկացված:

Հովհաննեսը բացահայտորեն նրան անվանում է «գող և մատնիչ», «կորսույան դատապարտված մարդ» և «սատանայից բռնված»:

Հիսուս թերևս Հուդային համարել է իր աշակերտների խմբի խիստ կարեռը անդամ, և Հուդան հավանաբար Հիսուսի մեջ նշարել է մեսիխական մարդարեռության լրումը: Հուդան խմբի ամենակրքոտ ազգայնամոլն էր, առավել խորաթափանց, քան հասարակ գալիլիացիները, ով բավական շուտ հասկացավ, որ Հիսուս, «Հզոր՝ խոսքերով և գործերով», իր և շատերի կողմից երկար սպասված Մեսիխն էր: Սակայն իր սպասումները չարդարացված գտնելով և հետզհետե հիասթափության մեջ ընկնելով (քանի որ Հիսուս մերժել էր թագավոր դառնալ, հմմտ. Հովհ Զ 15-16), Հուդան ավելի ու ավելի անհամբեր է դառնում, մինչև որ որոշում է նախաձեռնությունն իր ձեռքը վերցնել:

Հուդան ինքն է մոտենում քահանայապետներին՝ Հիսուսին «մատնելու նրանց»: Վերջիններս ուրախանում են և խոստանում հատուցել դրա դիմաց երեսուն արծաթ դրամ (մոտ տասը դոլար), ինչը Հին Կտակարանի ժամանակներում օտար ստրուկի գնման վարձն էր կամ այն գումարը, որ նոր Կտակարանի ժամանակներում պահանջվում էր տիրոջից հրեա ստրուկի արյուն թափելու դիմաց:

Իր աշակերտների հետ Վերջին ընթրիքի ժամանակ, Պատեքին նախորդող գիշերը, Հիսուս բացահայտ զգուշաց-

նում է իր մոտալուս մատնության մասին:

Հստ Հովհաննու Ավետարանի՝ Հիսուս իր աշակերտների, այդ թվում Հուդայի ոտքերը լվանալով և խոնարհության օրինակ ծառայելով, հայտնում է իր մատնության մասին: Այս անգամ զգուշացումն ավելի ազդու էր. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ծառան ավելի մեծ չէ, քան իր տերը, և ոչ էլ ուղարկվածը՝ ավելի մեծ, քան նա, ով նրան ուղարկեց: Եթե այս բաները գիտեք, առավել երանելի եք, եթե դրանք կատարեք: Զեր բոլորի համար չէ, որ ասում եմ, որովհետեւ ես գիտեմ նրանց, որոնց ընտրել եմ, այլ որպեսզի կատարվի գրվածը, թե՝ ով ինձ հետ հաց էր ուտում, իմ դեմ դարձավ» (Հովհ Ժ 16-18):

Թվում է՝ հաջորդ քայլը պիտի լիներ մատնիչին տարհամոզելը կամ աշակերտների խմբից նրան հեռացնելը, սակայն Հիսուս նրան պատվի է արժանացնում՝ տալով կերակրի ամենալավ պատառը և բոլորից թաքցնելով նրա ուրացությունը, բացի «սիրելի աշակերտից»:

Հուդան կարծես մերժում է Հիսուսի այդ վերջին ջերմ մոտեցումը, որովհետեւ, ինչպես Հովհաննեսն է ասում. «Սատանան մտավ նրա մեջ»: Հիսուս ասում է. «Հիմա ինչ որ անելու ես, իսկույն արա՛»: Հուդան անմիջապես դուրս է ելնում. «և գիշեր էր...»:

Համատես Ավետարանները նկարագրում են Հիսուսի աղոթքը Գեթսեմանիում, նրա տագնապը պարտեզում, և Հուդայի ժամանումը զինված ամբոխի հետ: Հուդան նրանց նշան էր տվել, որով պիտի ճանաչեին Հիսուսին. «Ում

Հետ ես համբուրվեմ, նա՛ է, բռնեցե՛ք նրան և տարե՛ք զգուշությամբ։ Եվ մոտենալով նրան՝ իսկույն ասաց. “Ուարբի՛, Ուարբի՛”. և համբուրեց նրան։ Եվ նրանք ձեռք դրեցին նրա վրա ու բռնեցին» (Մարկ ԺԴ 44:46): Հովհաննու Ավետարանում ձերբակալությունն այսպես է նկարագրվում. «Իսկ Հիսուս իր վրա եկող այս ամենը տեսնելով՝ դուրս ելավ ու նրանց ասաց. “Ո՞ւմ եք փնտրում”։ Նրան պատասխանեցին՝ Հիսուս նազովրեցուն։ Հիսուս նրանց ասաց՝ ես եմ։ Նրանց հետ էր և Հուդան, որ մատնում էր նրան։ Երբ Հիսուս ասաց՝ ես եմ, հետ-հետ գնացին և գետին ընկան։ Դարձյալ նրանց հարցրեց՝ ո՞ւմ եք փնտրում։ Նրանք ասացին՝ Հիսուս նազովրեցուն։ Հիսուս նրանց պատասխանեց. “Ձեզ ասացի, թե՛ ես եմ. արդ, եթե ինձ եք փնտրում, նրանց թո՛ւյլ տվեք գնալ”» (Հովհ ԺԸ 4:8):

Հուդան Սինհեղբիոնի դատավարության ժամանակ չի հիշատակվում, չնայած որ համաձայն օրենքի՝ նա պետք է վկայություն տար Հիսուսի մասին։ Հուդայի ցավագին զղջման և ինքնասպանության պատկերը Մատթեոսը կառուցել է Զաքարիայի մարդարեության հիման վրա (Հմմտ. Զաք ԺԱ 12, 13 եւ Մատթ ԻԾ 3-5)։ Հուդայի մահվան պատմությունը, որը Հուկասը ներկայացնում է Գործք Առաքելոցում, և որի մասին գիտեին բոլոր երուսաղեմացիները, հավանաբար ավելի ճշգրիտ է։ Երկու պատումներն էլ Հուդայի մահը կապում են երուսաղեմում բնակվող օտարազգիների գերեզմանի հետ, որ կոչվում էր «Ակկեղդամա»՝ «Արյան դաշտ»։ Այդ վայրն այսօր էլ տեսանելի է Արևմտյան բլրից հարավ՝ ենոմի հովտի մոտ։



## ՀՈՒՂԱՌ Հիսուսի Եղբայրը

<sup>55</sup>Ո՞չ սա է հիւսանն որդի. ո՞չ մայր սորա կոչի Մարիամ, եւ Եղբայրը սորա՝ Յակովոս եւ Յովան եւ Սիմոն եւ Յովան. <sup>56</sup>Եւ քորք սորա ո՞չ ամենեքեան առ մեզ են. արդ ուստի՞ է սմա այս ամենայն:

<sup>37</sup>Ո՞չ սա է մանուկ հիւսանն եւ որդին Մարեմայ, Եղբայր Յակովոյ եւ Յովանայի եւ Սիմոնի եւ չիցե՞ն քորք դորա աստ առ մեզ: Եւ գայթակղէին ի ճա:

Մատթ ԺԳ 55

<sup>55</sup>Սա հյուսնի որդին չէ՞ սրա մայրը չէ՞, որ Մարիամ է կոչվում. և սրա Եղբայրները՝ Յակովոս, Յովան, Սիմոն և Յովան. <sup>56</sup>Եվ սրա քույրերը բոլորը մեզ մոտ չե՞ն. և արդ, որտեղից է սրան այս բոլորը»:

Մարկ Զ 3

<sup>3</sup>Սա հյուսնի տղան և Մարիամի որդին չէ՞ միթե, Յակովոսի և Յովանի ու Յովանայի և Սիմոնի Եղբայրը. և սրա քույրերը այստեղ մեզ մոտ չե՞ն»: Եվ նրանով գայթակղվում էին:

**Հուղա** (Եբր. «գովելի», «հոչակավոր»): Այս Հուղային հանդիպում ենք Հիսուսի ընտանիքի մյուս անդամների հետ, ովքեր եկել էին նազարեթի ժողովարան՝ լսելու Հիսուսի վարդապետությունը. «Սա հյուսնի և Մարիամի որդին չէ», Հակոբոսի և Հովսեի ու Հուղայի և Սիմոնի եղբայրը. և սրա քույրերը այստեղ մեզ մոտ չե՞ն»: Հովհաննեսը մատնանշում է այն փաստը, որ Հիսուսի երկրավոր կյանքի վերջում անդամ նրա եղբայրները չեին հավատում նրան: Չորս եղբայրներից Սիմոնի և Հովսեի մասին հետագա ճշգրիտ տեղեկություններն էր առաջանական կապի շուրջ տարակույների պատճառներ գրեթե չկան:

Եկեղեցու առաջնորդը և առաջին եպիսկոպոսը, իսկ Հուղան՝ մի համառոտ նամակի հեղինակ, որն ընդգրկված է Նոր Կտակարանում:

Նամակը գրվել է ՔՀ մոտ 80թ.՝ որպես զգուշացում ընդդեմ եկեղեցու սուտ ուսուցիչների: Հեղինակն իրեն անվանում է՝ «Հուղան՝ ծառան Հիսուս Քրիստոսի և եղբայրը Հակոբոսի»: Հակոբոսը, որ քսան տարի շարունակ երուսաղեմի եկեղեցու եպիսկոպոսն էր, անշուշտ ծանոթ էր նրա ընթերցողներին: Հակոբոսի հետ ունեցած Հուղայի ազգակցական կապի շուրջ տարակույների պատճառներ գրեթե չկան:

## ՀՈՒՂԱ առաքյալ

<sup>14</sup>ԶՍԻՄՆՎԱ զոր եւ Պետրոսն անուանեաց, եւ զԱնդրէաս գԵղբայր նորին, եւ զՅակովըն, եւ զՅովհաննէս, եւ զՓիլիպպոս, եւ զԲարթոլոմէոս, <sup>15</sup>եւ զՄատթէոս, եւ զԹովնաս, եւ զՅակովըն Ալփեայ, եւ զՍիմոն զկոչեցեալն նախանձայոյգ, <sup>16</sup>եւ զՅովհայ Յակովբայ, եւ զՅուդա Իսկարիովտացի, որ եղեւ իսկ մատնիչ:

<sup>22</sup>Ասէ ցմա Յովհա (ոչ Իսկարիովտացին). Տեր, զի՞ եղեւ զի մեզ յայտնելոց ես զբեզ եւ ոչ աշխարհի:

**Հուղա** (երբ. «գովելի», «հոչակավոր»): Քրիստոսի տասներկու առաքյալներից, հայտնի նաև «Դեբեռոս» և «Թաղեռոս» անուններով: «Հուղա» անվամբ նրան միայն Հուկասն է հիշատակում տասներկուսի խմբում: Հովհաննու Ավետարանում նա անվանվում

Դուկ Զ 16

<sup>14</sup>Սիմոնին, որին էլ Պետրոս կոչեց, և Անդրեասին նրա եղբորը, Յակոբոսին, Յովհաննեսին, <sup>15</sup>Փիլիպպոսին, Բարթոլոմէոսին, Մատթէոսին, Թովնասին, Ալփեոսի որդի Յակոբոսին, Սիմոնին՝ Նախանձահոյզ կոչվածին, <sup>16</sup>Յակոբի որդի Հուղային և Իսկարիովտացի Յուդային, որը և մատնիչ եղավ:

Յովի ԺԴ 22

<sup>22</sup>Հուղա (ոչ Իսկարիովտացին) ասաց նրան. «Տե՛ր, ինչպե՞ս եղավ, որ քեզ պիտի հայտնես մեզ և ոչ թե աշխարհին»:

**Տե՛ս ԹԱԴԵՈՍ առաքյալ**

է «Հուղա (ոչ Իսկարիովտացին)», երբ Վերջին ընթրիքին Հիսուսին հարցնում է. «Տե՛ր, ինչպե՞ս եղավ, որ քեզ պիտի հայտնես մեզ և ոչ թե աշխարհին»:

## ՂԱԶԱՐՈՍ

<sup>20</sup>Եւ աղքատ ոմն անուն **Ղազարոս** անկեալ դնէր առ դրան նորա վիրաւորեալ, <sup>21</sup>Եւ ցանկայր լնուլ գորովայն իւր ի փշրանացն որ անկանէին ի սեղանոյ մեծատանն. այլ եւ շունք եւս գային եւ լիզուին զվես նորա:

Ղուկ ԺԶ 20

<sup>20</sup>Եվ **Ղազարոս** անունով մի աղքատ մարդ ընկած էր նրա դրան առաջ՝ վերքերով ծածկված: <sup>21</sup>Եվ ցանկանում էր լցմել իր որովայնը այն փշրանքներով, որոնք թափվուն էին մեծահարուստի սեղանից: Եվ դեռ շներն էլ գալիս էին ու լիզում նրա վերքերը:

<sup>23</sup>Եւ ի դժոխսն ամբարձ զաչս իւր մինչ ի տաճանամ էր. ետես զԱբրահամ ի հեռաստանէ, եւ ՀՂազարոս ի գոգ նորա հանգուցեալ: <sup>24</sup>Եւ նա աղաղակեաց եւ ասէ. Յայր Աբրահամ, ողորմեաց ինձ, եւ առաքեա ՀՂազարոս, զի թացցէ զծագ մատին իւրոյ ի ջուր, եւ զովացուցէ զլեզու իմ, զի պապակին ի տապոյ աստի: <sup>25</sup>Եւ ասէ ցնա Աբրահամ. Որդեակ, յիշեա զի ընկալար անդէն զբարիս քո ի կեանսն քում, եւ Ղազարոս նոյնապէս զշարչարանս. արդ սա աստ միսիթարի, եւ դու այդո պապակիս:

Ղուկ ԺԶ 23-25

<sup>23</sup>Եվ դժոխսում, մինչ սա տաճանքների մեջ էր, բարձրացողեց իր աչքերը, հեռվից տեսավ Աբրահամին և **Ղազարոսին** էլ՝ նրա գրկում հանգստացած: <sup>24</sup>Եվ նա աղաղակեց ու ասաց. “Յայր Աբրահամ, ողորմի՛ր ինձ և ուղարկի՛ր **Ղազարոսին**, որ իր մատի ծայրը թոշի ջրով և զովացնի լեզուս, որովհետև այս տապից պապակում եմ”: <sup>25</sup>Եվ Աբրահամը նրան ասաց. “Որդյա՛կ, իիշի՛ր, որ դու ստացար քո բարիքները այնտեղ, քո կիանքի ընթացքում, իսկ **Ղազարոսն** էլ՝ չարչարանքները. այժմ սա այստեղ միսիթարվում է, իսկ դու այդտեղ պապակում ես:

**Ղազարոս** (Եբր. «Աստծուց օգնություն ստացող»): **Մեծահարուստի և Ղազարոսի առակի մուրացկանը**: Նա Հիսուսի առակների միակ կերպարն է, որ անունով է հիշատակվում: Այս առակը կարող է և՝ կապված լինել, և՝ չլինել այդ ժամանակի՝ Հիսուսի ունկնդիրներին հայտնի մի միջադեպի հետ: Սա առակների երկար շարքի մեջ մտնող մի առակ է, որը գրի է առնվել միայն Ղուկասի Ավետարանում:

Ղազարոսի մասին նշվում է, որ նա մշտապես պառկած էր հարուստի դուռան առաջ, ում մեծահարուստը չէր նկա-

տում: **Մահվանից հետո աղքատ Ղազարոսը գնում է Աբրահամի գիրկը,** իսկ մեծահարուստը՝ դժոխք: **Չնայած Ղազարոսին տեսնելու իր բոլոր աղաշանքներին՝ մեծահարուստը մերժվում է Աբրահամից, քանի որ հանդերձյալ կյանքում Ղազարոսի ու մեծահարուստի միջև առկա անդունդը թույլ չէր տալիս դժոխքից դրախտ անցնել:** **Մեծահարուստը խնդրում է, որ գոնե Ղազարոսին ուղարկեն իր հոր ու եղբայրների մոտ՝ նրանց զգուշացնելու,** որ իր նույն սխալները չկրկնեն: **Սակայն Աբրահամն այս խնդրանքն էլ է մեր-**

ժում՝ ասելով, որ Մովսեսն ու մարդարեները բավական են՝ թող նրանց լսեն:

Այս առակը մեզ ուսուցանում է տեսնելու հարստության մեջ առկա վտանգը, որը մարդուն անտարբեր է դարձնում ուրիշների կարիքների հանդեպ: Բացի դրանից, այն հիշեցնում է մեզ, որ մեր հավիտենական կյանքը նրանով է պայմանավորված, թե ինչպես կապրենք մեր երկրային կյանքը: Սա-

կայն պետք չէ մտածել, որ հարստությունն այստեղ չարիք է հոչակվում, իսկ աղքատությունը՝ առաքինություն: Զէ՞ որ Աբրահամն ինքն էլ հարուստ մեկն է եղել: Դժոխք չընկնելու համար հարուստը պետք է Ղուկ ԺԶ 1-9 դրվագում նկարագրված անիրավ տնտեսի պես մամոնայից բարեկամներ ձեռք բեր:

## ՂԱԶԱՐՈՍ՝ Մարթայի և Մարիամի եղբայրը

<sup>1</sup>Եւ էր ոնն հիւանդ Ղազարոս ի Բեթանեայ, ի գեղջէ Մարթենայ եւ Մարթայի քեր նորա: <sup>2</sup>Այս այն Մարիամ էր որ օծ զՏէրն իւղով, եւ ջնջեաց զոտս նորա հերով իւրով. որոյ եղբայրն Ղազարոս հիւանդ էր:

<sup>5</sup>Եւ սիրել Յիսուս զՄարթա եւ զքոյր նորա զՄարիամ եւ Ղազար:

<sup>11</sup>Զայս իբրեւ ասաց, յետ այսորիկ ասէ ցնոսա. Ղազարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ զի զարթուցից զնա:

<sup>14</sup>Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս յայտնապես. Ղազարոս մեռաւ. <sup>15</sup>Եւ ես ուրախ եմ վասն ձեր, զի դուք հաւատաչիք ինձ, զի ես չի անդ. բայց արդ եկայք երթիցուք առ նա:

<sup>43</sup>Զայս իբրեւ ասաց, ի ձայն մեծ աղաղակեաց եւ ասէ. Ղազարէ, արի եկ արտաքս:

<sup>1</sup>Իսկ Յիսուս վեց աւուրբ յառաջ քան զզատիկն եկն ի Բեթանիա, ուր էր Ղազար մեռեալն, զոր յարոյցն ի մեռելոց: <sup>2</sup>Եւ արարին անդ ննա ընթրիս, եւ ի սպասու կայր Մարթա, եւ Ղազար մի էր ի բազմելոց ընդ ննա:

<sup>9</sup>Իբրեւ գիտաց ժողովուրդ բազում ի Հրեհցն թէ անդ է, եկին, ոչ միայն վասն Յիսուսի, այլ զի եւ Ղազար տեսցեն, զոր յարոյցն ի մեռելոց: <sup>10</sup>Խորհուրդ արարին քահանայապետքն, զի եւ Ղազար սպանցեն. <sup>11</sup>Քանզի բազումք ի Հրեհց եղբային եւ հաւատային ի Յիսուս:

Յովի ԺԱ 1-2

Յովի ԺԱ 5

Յովի ԺԱ 11

Յովի ԺԱ 14

Յովի ԺԱ 43

Յովի ԺԲ 1-2

Յովի ԺԲ 9-10

<sup>1</sup>Եվ մի հիվանդ կար, Ղազարոս անունով, Բեթանիայից՝ Մարիամի և նրա քույր Մարթայի գյուղից: <sup>2</sup>Սա այն Մարիամն էր, որ յուղով օծեց Տիրոջը և իր մազերով սրբեց նրա ոսքերը: Եվ սրա եղբայր Ղազարոսը հիվանդ էր:

<sup>5</sup>Յիսուս սիրում էր Մարիամին, նրա քրոջը՝ Մարթային, և Ղազարոսին:

<sup>11</sup>Այս բաներն ասելուց հետո նորից ասաց նրանց. «Մեր բարեկամ Ղազարոսը ննջել է, սակայն ես գնում եմ, որ նրան արթնացնեմ»:

<sup>14</sup>Այն ժամանակ Յիսուս նրանց հայտնապես ասաց. «Ղազարոսը մեռավ. <sup>15</sup>Բայց ես ուրախ եմ ձեզ համար, որ այնտեղ չի. որպեսզի դուք ինձ հավատաք: Արդ, եկե՛ք գնանք նրա մոտ»:

<sup>43</sup>Երբ այս ասաց, բարձր ձայնով աղաղակեց և ասաց. «Ղազարո՞», վեր կացրել: <sup>4</sup>Եվ այնտեղ նրան ընթրիք տվին. սպասարկում էր Մարթան, իսկ Ղազարոսը նրա հետ սեղան նստածերից մեկն էր:

<sup>9</sup>Երբ հրեաներից բազում ժողովուրդ իմացավ, որ նա այնտեղ է, եկավ. ոչ միայն Յիսուսի պատճառով, այլ՝ որպեսզի տեսնի նաև Ղազարոսին, որին մեռելներից վեր էր կացրել: <sup>10</sup>Քահանայապետները խորհուրդ արեցին, որ Ղազարոսին էլ սպանեն, <sup>11</sup>քանի որ շատերը հեռանում էին հրեաներից և հավատում էին Յիսուսին:

<sup>17</sup>Եւ ժողովուրդն վկայէր որ էր ընդ նմա, եթէ զԴապար կոչեաց եւեթ ի գերեզմանէն, եւ յարոյց զնա ի մեռլոց:

**Հազարոս** (եբր. «Աստծուց օգնություն ստացող»):Բեթանիացի Մարթայի ու Մարիամի եղբայրը, Հիսուսի մտերիմներից, որոնց տանը Նա հյուրնկալվում էր երուսալեմ այցելելիս, հատկապես Պատերի տոնին: Հազարոսի հարությունն էական դեր է խաղում Հովհաննես ավետարանչի՝ Հիսուսի մասին պատմվող դրվագի աստվածաբարանական ու պատմական զարգացման մեջ: Սա Ավետարանի առաջին կեսում նկարագրված Հիսուսի ամենամեծ հրաշքն է: Հովհաննեսը հստակ ընդգծում է այն փաստը, որ Հազարոսն արդեն չորսօրյա հանգուցյալ էր: Հրեական պատկերացումների համաձայն՝ ննջեցյալի հոգին երեք օր շարունակ մնում է մարմնի մեջ, ուստի և Հազարոսն անկասկած արդեն մեռած էր: Այսպիսով, նրա հարությունը նշան է դառնում՝ ավելի բացահայտելով Հիսուսի՝ հավիտենական կյանքի պարգևիչ նախասահմանված լինելու հանգամանքը: Եվ չնայած որ Հազարոսը երկրավոր կյանքի է վերադառնում՝ այնուամենայնիվ Հիսուսի զրույցը Մարթայի հետ պարզում է, որ այդ հրաշքը հավիտենական կյանքի նշանն է Հիսուսի կողմից իրեն հավատացողիներին բաշխվող: Շեշտելով Հիսուսի սերը Հազարոսի ու նրա քույրերի նկատմամբ և ցույց տալով, որ Հիսուս վտանգում էր իր կյանքը նրանց օգնելով, պատումը մեզ այն մտքին է հանգեցնում, որ Հիսուս շուտով իր կյանքը պիտի մատնի իրեն սիրողներին հավիտենական կյանք պարգևելու համար: Հիսուսի արտասվելը վկայում է ոչ միայն ընտանիքի հանդեպ ունեցած

Յովի ԺԲ 17

<sup>17</sup>Իսկ ժողովուրդը, որ նրա հետ էր, վկայում էր, որ Դազարոսին հենց գերեզմանից կանչեց և նրան մեռելներից կենդանացրեց:

Նրա սիրո մասին, այլև այն կանխատեսության, որով Հիսուս, նրանց օգնելով, ընդառաջ էր գնում իր իսկ մահվանը:

Հազարու հարության պատումից անմիջապես հետո խոսվում է Հրեա քահանայապետների՝ Հիսուսին մահվան դատապարտելու որոշման մասին: Քահանայապետները կամքնում էին սպանել նաև Հազարոսին: Եթե վերջինս ներկայացնում էր բոլոր նրանց, որոնց Հիսուս սիրում էր ու Հավիտենական կյանք պարգևում, ապա պատումն ունի թաքնված համատեքստ. Հիսուսի հետևորդները պետք է հալածանքների ենթարկվեն նրա սիրո պատճառով:

Հիսուսի ժամանակների Բեթանիա գյուղն այժմ թափուր սարավանդի վրա է, որտեղ վեր են խոյանում երկու եկեղեցիներ՝ մեկը հունական ուղղափառ, մյուսը՝ քրանցիսկյան: Վերջինս հիմնվել է Դդարում, Հազարոսի գերեզմանի շուրջ կառուցված եկեղեցու ավերակների վրա: Հազարոսի գերեզմանն այսօր էլ պահպանվում է Բեթանիայի գերեզմանատանը: Ըստ Հերոնիմոսի, դեռևս Դդարի սկզբին Հազարոսի գերեզմանի շուրջ եկեղեցի է կառուցված եղել: ԺԱ դարում այնտեղ մի մզկիթ է հիմնվել, իսկ մի փոքր ավելի ուշ Ավետյաց երկրի սրբավայրերի լատին պահպանները թույլտվություն են ստացել գերեզման տանող նոր մուտք բացել:

Արևելյան մի ավանդության համաձայն՝ նրան և քույրերին դնում են մի վնասված նավակի մեջ և բաց թողնում Միջերկրական ծով, բայց նրանց հաջողվում է հասնել Կիպրոս կղզի, որտեղ Հազարոսը դառնում է Քետիմի եպիսկոպոսը:

## ՂԵՐԵՌՈՒ

<sup>2</sup>Եւ առաքելոցն երկոտասամից էին անուանք այսոքիկ. առաջին Սիմովն, անուանեալն Պետրոս, եւ Անդրեաս Եղբայր նորա, <sup>3</sup>Յակովոս Զեբեդեայ եւ Յովհաննես Եղբայր նորա, Փիլիպպոս եւ Բարթողոմէոս, Թովմաս եւ Մատթէոս մաքսաւոր, Յակովոս Ալփեայ եւ **Պէքէն** որ անուանեցաւն Թադէոս, <sup>4</sup>Սիմովն Կանանացի եւ Յուդա Իսկարիովտացի, որ եւ մատմեացն զնա:

Մատթ Ժ 3

<sup>2</sup>Եվ տասներկու առաքյալների անունները սրանք էին. առաջին՝ Սիմոն Պետրոս Կոչվածը, և նրա Եղբայրը՝ Անդրեաս, <sup>3</sup>Զեբեդեոսի որդի Յակովոս և նրա Եղբայրը՝ Յովհաննես, Փիլիպպոս և Բարթողոմէոս, Թովմաս և Մատթէոս մաքսաւոր, Ալփեոսի որդի Յակովոս և **Պէքէն**, որ Թադէոս կոչվեց, <sup>4</sup>Սիմոն Կանանացի և Յուդա Իսկարիովտացի, որ և մատմեց նրան:

**Ղերեռու** (եբր. «սիրտ» բառից): Համարում, և արևմտյան տեքստերում՝ «Ղերեռու» անունն օգտագործվում է միայն Մարկ Գ 18 համարում:  
**Թագեռու** անվան փոխարեն միայն որոշ աննշան ձեռագրերում՝ Մատթ Ժ 3 **Տե՛ս ԹԱԴԵՌՈՒ առարյալ**

## ՂԵՎԻ

<sup>14</sup>Եւ մինչեռ անցանէր, ետես շԴԵՒ Ալփեայ զի նստէր ի մաքսաւորութեան, եւ ասէ ցնա. Եկ զկնի իմ: Եւ յարուցեալ գնաց զկնի նորա:

Մարկ Բ 14

<sup>27</sup>Եւ յետ այնորիկ ել անտի եւ ետես մաքսաւոր մի որում անուն էր ՊԼԵՒ, զի նստէր ի մաքսաւորութեան. Եւ ասէ ցնա. Եկ զկնի իմ:

Ղուկ Ե 27

<sup>29</sup>Եւ արար ընդունելութիւն մեծ նմա ՊԼԵՒ ի տան իւրուն. Եւ էր ժողովուրդ բազում մաքսաւորաց եւ այլոց որ էին բազմեալ ընդ նոսա:

Ղուկ Ե 29

<sup>14</sup>Եվ մինչ նա անցնում էր, տեսավ Ալփեոսի որդի ՊԼԵՒ, որ մաքսատանը նստած գործի վրա էր, ու նրան ասաց՝ արի՛ իմ հետևից: Եվ Ղակն վեր կացավ գնաց նրա հետևից:

<sup>27</sup>Կրանից հետո, դուրս ելավ այնտեղից և տեսավ մի մաքսավորի, որի անունը ՊԼԵՒ էր, և որը մաքսատանը նստած գործի վրա էր: Յիսուս նրան ասաց. «Իմ հետևից արի՛»:

<sup>29</sup>Եվ ՊԼԵՒ իր տան մեջ նրան մեծ ընդունելություն տվեց, և մեծ թվով մաքսավորներ և ուրիշներ նրանց հետ սեղան էին նստել:

**ՂԵՎԻ (Եբր. «միացած»):**

**ՏԵՇ ՄԱՏԹ-ԵՈՍ առաջալ**

## ՂՈՒԿԱՍ ավետարանիչ

**Պողոս առաքյալի գործակիցներից,** մասնագիտությամբ բժիշկ, միջերկրածովյան Անտիոք քաղաքից: Նա անձնվիրաբար ծառայել է Տիրողը՝ առանց կող և ընտանիքի:

Գործք Առաքելոցի՝ առաջին դեմքով պատմվող հատվածներից (ԺԶ 10:17, ի 5:15, իԱ 1:37, իԸ 1:14), որտեղ նկարագրվում են Պողոսի հետ նրա ունեցած ճամփորդական որոշ դրվագներ, կարելի է կենսագրական որոշ մանրամասներ բացահայտել: Ղուկասը Պողոսին ընկերակցել է առաքելական երկրորդ ճամփորդության ժամանակ (49-52թթ.)՝ Տրովադայից Միջին Ասիայով դեպի Հունաստանի Փիլիպպեա քաղաքը: Պողոսի երրորդ ճամփորդության ժամանակ (54-57թթ.), նա Պողոսի հետ Փիլիպպեից վերադառնում է Երուսաղեմ: Ղուկասը Պողոսի հետ էր նաև նրա վերջին՝ Հրեաստանի կառավարչի նստավայրից՝ Կեսարիայից դեպի Հռոմ ուղերության ժամանակ, որտեղ և Պողոսի հետ մնում է նրա գերության ողջ ընթացքում:

Ղուկասը մահացել է 84 տարեկան հասակում, Հունաստանում: 356թ. Կոստանդին Բ կայսրը նրա նշխարները Բեռվտիայի Թերե քաղաքից տեղափոխում է Կոստանդնուպոլիս, որտեղ հետագայում ի պահ են դրվում Առաքելոց եկեղեցում: Ղուկասը և՛ բժիշկների, և՛ նկարիչների պահապան սուրբն է: Թե՛

Երուսաղեմի ասորական, թե՛ Հռոմի Սանտա Մարիա Մաջորե եկեղեցիների Տիրամոր պատկերները նրան են վերագրվում:

Իրինեոսը (†202թ.) առաջինն էր, որ Ղուկասին տվեց գ Ավետարանի ու Գործք Առաքելոցի հեղինակի պատիվը:

Ղուկասի Ավետարանի ու Գործքի գրական վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանց հեղինակը կրթված անձնավորություն է եղել: Բժշկագիտական եզրերի և ընդհանրապես բշխկության նկատմամբ յուրահատուկ վերաբերմունքը երկու գրքերում էլ խոսում են հեղինակի բժիշկ լինելու մասին: Երկու գրքերով նա ներկայացնում է քրիստոնեության պատմությունը՝ սկսած Հիսուսի ծննդից մինչև ողջ միջերկրածովյան աշխարհում Ավետարանի տարածումը: Ղուկասի Ավետարանը գրի է առնվել հավանաբար 70թ. հետո, իսկ Գործքը՝ ավելի վաղ՝ 64-65թթ., երկուսն էլ Հունաստանում:

Պողոսի և եկեղեցու մյուս հիմնագիրների հետ ունեցած սերտ կապերը, ինչպես նաև պարբերաբար կրկնվող այցելությունները Երուսաղեմ ու Կեսարիա, Հնարավորությունն էին տալիս Ղուկասին մանրամասն տեղեկություններ հավաքելու Հիսուսի կյանքի և քրիստոնեական եկեղեցու հիմնագրության ու ծավալման պատմության մասին:

## ՄԱՂԹՈՍ

<sup>10</sup>Իսկ Սիմովն Պետրոս քանզի ունէր սուր, ձգեաց զնա, եհար զքահանայապետին ծառայ, եւ ի բաց առ զունկն նորա զաջոյ. Եւ էր անուն ծառային Մաղթոս:

Քահանայապետի ծառան, ում ական-  
ջը Պետրոսը սրով կտրեց Գեթսեմանիի  
պարտեզում Հիսուսի ձերբակալության  
ընթացքում տեղի ունեցած ընդհարման  
ժամանակ: Մաղքոսը թերևս Տաճարի  
պահապանների խմբից էր՝ զինված սրե-  
րով ու գավազաններով, որոնց հրամայ-  
ված էր իրագործել Հիսուսի ձերբակա-  
լությունը:

Յովի Ժը 10

<sup>10</sup>Իսկ Սիմոն Պետրոսը, որովհետև սուր ուներ, քաշեց այն և զարկեց քահանայապետի ծառային ու նրա աջ ականջը կտրեց: Եվ այն ծառայի անունը Մաղթոս էր:

Զնայած երեք համատես Ավետարան-  
ներն էլ նկարագրում են այդ միջադե-  
պը (Հմմտ. Մատթ հԶ 51, Մարկ ԺԴ 47,  
Ղուկ իԲ 50), բայց միայն Հովհաննու  
Ավետարանն է նշում Մաղքոսի, և նրա  
ականջը կտրողի՝ Պետրոսի անունները:  
Բժիշկ Ղուկասի պատումում նշվում է  
նաև, որ Հիսուս «դիպչելով ականջին՝  
այն բժշկեց»:

## ՄԱՏԹԵՈՍ առաջալ

<sup>9</sup>Եւ անցեալ ընդ այն Յիսուսի՝ ետես այր մի զի նստեր ի մաքսաւորութեան, **Մաքսաւորութեան** անուն, եւ ասէ ցնա. Եկ զկնի իմ: Եւ յարուցեալ գնաց զկնի նորա:

Մատթ թ 9

<sup>9</sup>Եվ Յիսուս այնտեղով անցնելով տեսավ **Մաքսաւորութեան** անունով մի մարդու, որ նստել էր մաքսատանը, ու նրան ասաց. «Ին հետևից արի»: Եվ նա վեր կենալով գնաց նրա հետևից:

<sup>2</sup>Եւ առաքելոցն երկոտասանից էին անուանք այսոքիկ. առաջին Սիմոն, անուանեալն Պետրոս, եւ Անդրեաս եղբայր նորա, <sup>3</sup>Յակովոս Զեբեդեայ եւ Յովիաննես եղբայր նորա, Փիլիպպոս եւ Բարթողոմեոս, Թովմաս եւ **Մաքսաւորութեան** մաքսաւոր, Յակովոս Ալփեայ եւ Ղերենոս որ անուանեցաւն Թադէոս, <sup>4</sup>Սիմոն Կանանացի եւ Յուդա Իսկարիովտացի, որ եւ մատնեացն զնա:

Մատթ ժ 3

<sup>2</sup>Եվ տասներկու առաքյալների անուանները սրանք էին. առաջին՝ Սիմոն Պետրոս կոչվածը, և նրա եղբայրը Անդրեաս, <sup>3</sup>Զեբեդեոսի որդի Յակովոս և նրա եղբայրը Յովիաննես, Փիլիպպոս և Բարթողոմեոս, Թովմաս և **Մաքսաւոր**, Ալփեոսի որդի Յակովոս և Ղերենոս, որ Թադէոս կոչվեց, <sup>4</sup>Սիմոն Կանանացի և Յուդա Իսկարիովտացի, որ և մատնեացն նրան:

<sup>16</sup>Եւ եղ անուն Սիմոնի՝ Պետրոս, <sup>17</sup>եւ Յակովու Զեբեդեայ եւ Յովիաննու եղբօրն Յակովայ՝ եղ նոցա անուանն Բաներեգես, որ է Որդիք որոտնան. <sup>18</sup>Եւ զԱնդրեաս, եւ զՓիլիպպոս, եւ զԲարթողոմեոս, եւ **Մաքսաւոր** զմաքսաւորն, եւ զԹովմաս, եւ զՅակովոս Ալփեայ, եւ զԹադէոս, եւ զՍիմոնվն Կանանացի, <sup>19</sup>եւ զՅուդա Իսկարիովտացի, որ եւ մատնեացն զնա:

Մարկ 4 18

<sup>16</sup>Եվ Սիմոնի անունը Պետրոս որեց <sup>17</sup>և Զեբեդեոսի որդու՝ Յակովոսի ու նրա եղբօր՝ Յովիաննեսի անուանները որեց Բաներեգես, որ նշանակում է Որտման որդիներ: <sup>18</sup>Նաև՝ Անդրեասին և Փիլիպպոսին և Բարթողոմեոսին և մաքսավոր **Մաքսաւոր** և Թովմասին և Ալփեոսի որդի Յակովոսին և Թադէոսին և Սիմոն Կանանացուն <sup>19</sup>և Յուդա Իսկարիովտացուն, որը և նրան մատնեց:

<sup>13</sup>Եւ իբրեւ այգ եղեւ՝ կոչեաց զաշակերտսն իւր, եւ ընտրեաց ի նոցանէ երկոտասանս. զորս եւ առաքեալս անուանեաց: <sup>14</sup>ՉՍիմոնվն զոր եւ Պետրոսն անուանեաց, եւ զԱնդրեաս զեղբայր նորին, եւ զՅակովոս, եւ զՅովիաննես, եւ զՓիլիպպոս, եւ զԲարթողոմեոս, <sup>15</sup>եւ **Մաքսաւոր**, եւ զԹովմաս, եւ զՅակովոս Ալփեայ, եւ զՍիմոնվն զկոչեցեալն Նախանձայոյգ, <sup>16</sup>եւ զՅուդա Յակովայ, եւ զՅուդա Իսկարիովտացի, որ եղեւ իսկ մատնիչ:

Ղուկ 2 15

<sup>13</sup>Եվ երբ լույսը բացվեց, կանչեց իր աշակերտսներին և ընտրեց նրանցից տասներկուսին, որոնց և առաքյալներ անվանեց. <sup>14</sup>Սիմոնին, որին էլ Պետրոս կոչեց, և Անդրեասին՝ նրա եղբօրը, Յակովոսին, Յովիաննեսին, <sup>15</sup>Փիլիպպոսին, Բարթողոմեոսին, **Մաքսաւոր**, Թովմասին, Ալփեոսի որդի Յակովոսին, Սիմոնին՝ Նախանձայոյգ կոչվածին, <sup>16</sup>Յակովի որդի Յուդային և Իսկարիովտացի Յուդային, որը և մատնիչ եղավ:

**Մարդենս** (եբր. «Աստծո պարգևել»): Քրիստոսի տասներկու առաքյալներից, մասնագիտությամբ հարկահավաք՝ մաքսավոր: Նրա անունը հանդիպում է առաքյալների բոլոր ցանկերում: Մատթեոսի Ավետարանում նա հարկահավաք է, Մարկոսի ու Ղուկասի Ավետարաններում նա կրում է նաև Ղեկանունը: Մարկոսը հավելում է, որ նա Ալփեոսի որդին է: Տեքստերի համագրությունը մեզ թույլ է տալիս եզրակացնելու, որ Ղեկին ու Մատթեոսը նույն անձնափորությունն են, ում Հիսուս առաքելության է կոչում սահմանային Կափառնայում քաղաքի մաքսատնից: Ղուկասու Ավետարանի համաձայն՝ Ղեկ-Մատթեոսն իր տան մեջ Հիսուսի համար հատուկ խնջույք էր կազմակերպել: Եվսեբիոս Կեսարացու (Դ դ.) վկայությամբ՝ Մատթեոսը քարոզել է հրեաներին: Ավանդությունները նրա նահատակության տարբեր վայրեր են մատնանշում՝ Եթովպիա, Պարսկաստան, Պոնտոս:

Հերապոլիս քաղաքի եպիսկոպոս Պապիասը (60-130թթ.) տեղեկացնում է, որ Մատթեոսն է Ա Ավետարանի հեղինակը: Ամենայն հավանականությամբ Մատթեոսն սկզբում գրի է առել Հիսուսի խոսքերը, ապա դրանց ավելացրել մեսիական հինկտակարանյան մարդարեությունները: Հենց սա է պատճառ դարձել, որ Բ դարի կեսից այն սկսել է կոչվել «Ավետարան ըստ Մատթեոսի»: Նույն Պապիասի տեղեկացմամբ՝ Մատթեոսը քարոզել է հրեաներին իրենց իսկ լեզվով, որի արդյունքում ծնվել է եբրայեցերեն լեզվով ավետարանը, սակայն այս տեսակետը, դժվար ապացուցելի է դառնում՝ հաշվի առնելով Ավետարանի հղկված ու բարձրառն հունարենը: Այն թերևս իր ավարտուն տեսքն է ստացել 70-80թթ.:

## Տե՛ս նաև ՂԵՎԻ

## ՄԱՐԿՈՍ ավետարանիչ

**Մարկոս** (լատ. «մեծ մուրճ»): Պողոս առաքյալի, հետագայում՝ Պետրոս առաքյալի գործակիցը, ով Հիսուսի քարոզչության ժամանակ դեռահաս մի պատանի էր: Մարկոսը, ում հրեական անունը Հովհաննես էր, նոր Կտակարանում հիշատակվում է առնվազն տասն անգամ՝ երեք տարբեր դրվագներում: Առաջին անգամ նա հանդես է գալիս որպես Մարիամի՝ Երուսաղեմում ակնառու քրիստոնյա կնոջ որդին, որոնց տունը վաղ քրիստոնյաների աղոթավայրն էր: Այդ տունը նաև Հիսուսի առաքյալների և աշակերտների մշտական հավաքատեղին էր Երուսաղեմում: Բանակից փախուստի դիմած Պետրոսը դարձյալ նրանց տուն է գնում (Հմմտ. Գործք ԺԲ 12): Ավանդություններից մեկն այն նույնացնում է Վերնատան հետ՝ Մարկոսին համարելով տանտիրոջ որդին: Ոմանց ենթադրությամբ Մարկոսն այն «երիտասարդն» է, որ Հիսուսի ձերբակալության ժամանակ, հագուստը թողնելով իրեն բռնողների ձեռքը, մերկ փախչում է Գեթսեմանիի պարտեզից (Հմմտ. Մարկ ԺԴ 51-52): Հավանական է, որ Հուդան, Վերջին ընթրիքի ժամանակ աշակերտներին Վերնատանը թողնելով, վերադառնում է այնտեղ՝ Հիսուսին ձերբակալելու, և որ Մարկոսը շտապում է Գեթսեմանի՝ Հիսուսին զգուշացնելու այդ մասին:

Մոտ 46թ. Պողոսն ու Բառնաբասը պաղեստինցի՝ այդ ժամանակ արդեն երիտասարդ Հովհաննես Մարկոսին մասնակից են դարձնում իրենց առա-

ջին ճամփորդությանը՝ Անտիոքից Կիպրոս և Պամφոլիայի Պերգե քաղաքը, որտեղից Մարկոսը, թողնելով նրանց, վերադառնում է Հայրենի Երուսաղեմ: 49թ. Բառնաբասի և Պողոսի միջև խիստ անհամաձայնություն է ծագում՝ իրենց երկրորդ ճամփորդությանը Մարկոսին մասնակից դարձնելու առիթով: Այն ավարտվում է երկու գործակիցների բաժանումով. Պողոսն իր եռամյա ճամփորդության (Ասորիք և Կիլիկիա) ընկերակից է ընտրում Շիղային, իսկ Բառնաբասը Մարկոսի հետ միասին նավարկում է Կիպրոս կղզի:

Երկրորդ անգամ Մարկոսին հանդիպում ենք տասը տարի անց՝ Պողոսի հետ հաշտված, որպես նրա գործակից, գերության ընկեր և մեծ օգնական: Տեղեկանում ենք Կողոսիայի եկեղեցի կատարած նրա հավանական այցի մասին (Հմմտ. Կող Դ 10): Մարկոսի մասին վերջին անգամ ակնարկվում է Հռոմից Պետրոսի առաջին թղթի եզրափակիչ ողջույններում: Պետրոսն իր նամակը հանձնում է Սիղվանոսին՝ ավելացնելով. «Ձեզ ողջունում է... իմ որդի Մարկոսը» (Հմմտ. Ա Պետրոս Ա 13): Հավանական է, որ Մարկոսը Պետրոսի գործակիցն էր և նրա հոգեկոր որդին՝ Հռոմում նրա մասին հոգ տանելուց և՝ առաջ, և՝ հետո:

Անշուշտ Բ Ավետարանի գրական հենքն այդ կապն է: Հերապոլիս քաղաքի եպիսկոպոս Պապիասը (60-130թթ.) հաստատում է, որ «Մարկոսը, լինելով Պետրոսի թարգմանիչը, արձանագրեց

ճշտությամբ, բայց ոչ հաջորդականությամբ, այն ինչ Պետրոսը հիշում էր Տիրոջ խոսքերից և գործերից»: Իսկ իրինեռուի (†202թ.) վկայմամբ՝ «Պետրոսի և Պողոսի մահից հետո Սարկոսը՝ Պետրոսի աշակերտն ու թարգմանիչը, գրի առնելով մեզ է փոխանցել Պետրոսի վարդապետությունը»: Այս վկայություններից կարելի է եզրակացնել, որ Սարկոսն Ավետարանը գրել է Հռոմում, նախքան 70թ.:

Եվսեբիոս Կեսարացին (Դ դ.) տեղեկացնում է, որ նա Պողոս և Պետրոս

առաքյալների նահատակությունից հետո գնում է Ալեքսանդրիա և դառնում այնտեղի առաջին եպիսկոպոսը: Մարկոսի նշխարները պահպանվում են Վենետիկի Սբ Պողոս մայր եկեղեցում: Ղպտի եկեղեցին իր գլխավոր պատարագը վերագրում է Սարկոսին, թեև ալեքսանդրիացի քրիստոնյա գրողներից ո՛չ Կղեմեսը, ո՛չ Էլ Որոգինեսը եգիպտոսում Սարկոսի բնակության մասին ոչինչ չեն ակնարկում:

## ՄԱՐԹԱ

<sup>38</sup>Եւ եղեւ ի գնալն նոցա, եւ ինքն եմուտ ի գեղ մի. եւ կին ոմն անուն **Մարթա** ընկալաւ զնա ի տան իւրում:

<sup>40</sup>Եւ **Մարթա** զբաղեալ էր ի բազում սպասու, եկան եկաց առ նմա եւ ասէ. Տէր, ոչի՞նչ է փոյք քեզ, զի քոյրդ իմ միայն եթող զիս ի սպասու. արդ ասա դմա զի օգնեսցէ ինձ: <sup>41</sup>Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. **Մարթա**, **Մարթա**, դու հոգաս եւ զբազում իւիք զբաղեալ ես, <sup>42</sup>բայց աստ սակաւ ինչ պիտոյ է: Մարիամ մասն բարի ընտրեաց, որ ոչ բարձի ի սմանէ:

<sup>1</sup>Եւ էր ոմն իիւանդ Ղազարոս ի Բեթանեայ, ի գեղջէ Մարիամայ եւ **Մարթայի** քեւ նորա:

<sup>5</sup>Եւ սիրեր Յիսուս Հ**Մարթա** եւ զբոյր նորա զՄարիամ եւ զՂազար:

<sup>19</sup>Բազումք ի Յուից անտի եկեալ էին առ **Մարթա** եւ Մարիամ, զի միսիթարիեսցեն զնոսա վասն եղբօրն: <sup>20</sup>**Մարթա** իբրեւ լոււալ թէ Յիսուս գայ, ընդ առաջ գնաց նորա, բայց Մարիամ նստէր անդէն ի տան: <sup>21</sup>Ասէ **Մարթա** յՅիսուս. Տէր, եթէ աստ լեալ էր, եղբայրն ինչ չէր մեռեալ. <sup>22</sup>այլ եւ արդ գիտեմ եթէ զոր ինչ խնդրեսցես յԱստուծոյ՝ տացէ քեզ Աստուած:

<sup>24</sup>Ասէ զնա **Մարթա**. Գիտեմ զի յարիցէ ի յարութեամ՝ յաւուրն յետնում:

<sup>30</sup>Չեւ եւս էր եկեալ Յիսուս ի գեղն, այլ էր անդէն ի տեղուցն ուր ընդ առաջ եղեւ նմա **Մարթա**:

Դուկ Ժ 38

<sup>36</sup>Ասէ ցնա Սիմովն Պէտքաս. Տէր յո՞վ երթաս: Պատախանի ետ Յիսուս. Ուր եսն երթամ, դու՝ ոչ կարես այժմ գալ զկնի իմ, բայց ապա եկեսցես զկնի իմ: <sup>37</sup>Ասէ ցնա Պէտքաս. Տէր՝ ըստէ՞՞ն ոչ կարիցեմ գալ այժմ զկնի քո. արդէն զանձն իմ իսկ եղից ի վերայ քո:

<sup>10</sup>Իսկ Սիմովն Պէտքաս քանզի ունէր սուր, ծգեաց զնա՝ եւ եհար քահանայապետին ծառայ, եւ ի բաց առ զունկն նորա զաջոյ: Եւ էր անուն ծառային Մադրոս: <sup>11</sup>Ասէ Յիսուս շՊէտքաս. Արկ զուրդ անդրէն ի պատեանս իւր. քաֆակն զոր ետ ինձ Յայր ո՞չ ըմպիցեմ զնա:

<sup>15</sup>Եւ երթային զիետ Յիսուսի Սիմովն Պէտքաս՝ եւ մեւս աշակերտն: Եւ աշակերտն այն քանզի ծանաւթ էր քահանայապետին՝ ենուտ ընդ Յիսուսի ի գաւիթ քահանայապետին: <sup>16</sup>Եւ Պէտքաս կայր առ դրանն արտաքոյ: Ել մեւս աշակերտն՝ որ էր ծանաւթ քահանայապետին, եւ ասաց ցդրնապան՝ եւ եմոյժ ի ներքս շՊէտքաս: <sup>17</sup>Ասէ աղջիկն որ դրնապանն էր շՊէտքաս. Սի՞թէ՝ եւ դու յաշակերտաց առնն այնորիկ իցես: Եւ նա՛ ասէ. Ոչ եմ: <sup>18</sup>Կային անդ ծառայըն եւ սպասաւորք, խարոյկ արկեալ քանզի ցուրտ էր, եւ ջեռնուին. կայր ընդ նոսա եւ Պէտքաս՝ եւ ցեռնոյր:

<sup>25</sup>Եւ Սիմովն Պէտքաս կայր անդ՝ եւ ցեռնոյր. ասեն ցնա. Մի՞թէ՝ եւ դու յաշակերտաց անտի նորա իցես: Նա ուրացաւ եւ ասէ՝ թէ չե՞մ: <sup>26</sup>Եւ ասէ մի ուն ի ծառայից քահանայապետին՝ ազգական այնորիկ, զորոյ զունկն եհաւ Պէտքաս. ո՞չ ես իսկ տեսի զեեզ ի պարտիզի անդ ընդ նմա: <sup>27</sup>Դարձեալ ուրացաւ Պէտքաս. եւ վաղվաղակի հա՛ւ խաւսեցաւ:

Յովի ԺԳ 24

<sup>24</sup>Սիմոն Պէտքասը սրան ակնարկ արեց՝ հարցնելով, թե այդ ուն նասին է ասում:

Յովի ԺԳ 36-37

<sup>36</sup>Սիմոն Պէտքասը նրան ասաց. «Տէ՛ր, ու՞ր ես զնում»: Յիսուս պատախանեց. «Ուր ես եմ զնում, դու այժմ իմ հետևից չես կարող գալ, բայց հետո կգաս իմ հետևից»: <sup>37</sup>Պէտքասը նրան ասաց. «Տէ՛ր, ինչո՞ւ այժմ չեմ կարող քո հետևից գալ. այժմվանից իսկ իմ կիհանքը թեզ համար կտամ»:

Յովի ԺԸ 10-11

<sup>10</sup>Իսկ Սիմոն Պէտքասը, որովհետև սուր ուներ, քաշեց այն և զարկեց քահանայապետի ծառային ու նրա աջ ականջը կտրեց: Եվ այն ծառայի անունը Մադրոս էր: <sup>11</sup>Յիսուս Պէտքասին ասաց. «Այդ սուրդ նորից իր պատյանի մեջ դիր. այն քաֆակը, որ Յայրն է ինձ տվել, չպիտի՝ խմեմ»:

Յովի ԺԸ 15-18

<sup>15</sup>Եվ Յիսուսի հետևից գնում էին Սիմոն Պէտքասը և մյուս աշակերտը: Եվ քանի որ այդ աշակերտը քահանայապետին ծանոթ էր, Յիսուսի հետ մտավ քահանայապետի տան գավիթը: <sup>16</sup>Իսկ Պէտքասը կանգնել էր դրան մոտ, դուրսը: Մյուս աշակերտը, որ ծանոթ էր քահանայապետին, դուրս ելավ, դրնապանին ասաց և Պէտքասին ներս մտցրեց: <sup>17</sup>Այն աղջիկը, որ դրնապանն էր, Պէտքասին ասաց. «Սիթէ՝ դու էլ այդ մարդու աշակերտներից ես»: Եվ նա ասաց՝ ոչ, չեմ: <sup>18</sup>Այնտեղ կային ծառաներ և պահակներ, որոնք խաղույկ էին արել և տաքանում էին, քանի որ ցուրտ էր: Պէտքասն էլ նրանց հետ կանգնել էր ու տաքանում էր:

Յովի ԺԸ 25-27

<sup>25</sup>Եվ Սիմոն Պէտքասը այնտեղ կանգնած էր ու տաքանում էր. նրան ասացին. «Սիթէ՝ դու էլ նրա աշակերտներից ես»: Նա ուրացավ և ասաց՝ ոչ, չեմ: <sup>26</sup>Եվ քահանայապետի ծառաներից մեկը՝ նրա՛ ազգականը, որի ականջը Պէտքասը կտրել էր, ասաց. «Չէ՝ որ ես ինքս տեսա թեզ նրա հետ պարտեզում»: <sup>27</sup>Պէտքասը դարձյալ ուրացավ. և իսկույն մի աքաղաղ կանչեց:

<sup>2</sup>Ապա ընթանայ եւ օայ առ Սիմովն Պէտքոս՝ եւ առ մես աշակերտն զոր սիրեր Յիսուս, եւ ասէ ցնոսա. Բարձին զՏէր ի գերեզմանէ անտի, եւ ոչ զիտեմք՝ ուր եղին զնա: <sup>3</sup>Ել Պէտքոս՝ եւ մես աշակերտն՝ եւ գային ի գերեզմանն: <sup>4</sup>Ընթանային երկորին ի միասին: Եւ մես աշակերտն յառաջեաց ընթացաւ վարագոյն քան ՀՊէտքոս՝ եւ եկն նախ ի գերեզմանն:

Եկն եւ Սիմովն Պէտքոս՝ որ գայրն զկնի նորա, եւ եմուտ ի գերեզմանն. Եւ տեսանէ՝ զկտաւսն զի կային անդ.

<sup>2</sup>Եին ի միասին Սիմովն Պէտքոս, եւ Թովմաս՝ անուանեալն Երկուորեակ, եւ Նաթանայէլ որ ի Կամայ գալիլեացւոց, եւ որդիքն Զեբեղեայ, եւ այլը յաշակերտաց անտի Երկու: <sup>3</sup>Ասէ ցնոսա Սիմովն Պէտքոս՝ Երթամ ծուկն որսալ: Ասեն ցնա. Գամք եւ մեք ընդ քեզ: Գնացին եւ մտին ի նաւ, եւ յայնմ գիշերի կալան եւ ոչ ինչ:

Ասէ աշակերտն այն զոր սիրեր Յիսուս՝ ՀՊէտքոս. Տէր է այն: Սիմովն Պէտքոս իբրեւ լուար թէ Տէր է, արկաւ զհրեւ զսփածանելին քանզի մերկ էր, եւ ընկէց զինքն ի ծովն:

<sup>11</sup>Եմուտ Սիմովն Պէտքոս, եւ ձգէր զգործին ի ցամաք՝ լի՛ մեծամեծ ձկամքք, հարեւր եւ յիսուն եւ Երիւք: Եւ այնչափ ինչ կայր, եւ ոչ պատառեցաւ գործին:

<sup>15</sup>Եւ իբրեւ ճաշեցին, ասէ ցՍիմովն Պէտքոս Յիսուս. Սիմովն Յովնանու, սիրե՞ս զիս առաւել քան զոսուա: Ասէ ցնա. Այո՛ Տէր, եւ դու զիտես զի սիրեմ զքեզ: Ասէ ցնա. Արածեա՛, զգաշին ին: <sup>16</sup>Դարձեալ ասէ ցնա. Սիմովն Յովնանու սիրե՞ս զիս: Ասէ ցնա. Այո՛ Տէր, եւ դու զիտես զի սիրեմ զքեզ: Ասէ ցնա՝ արածեա՛ զոչխարս ին: <sup>17</sup>Ասէ ցնա Երիս անզամ.

### Հովի Ի 2-4

<sup>2</sup>Ապա վազում է և գալիս Սիմոն Պէտքոսի և այն մյուս աշակերտի մոտ, որին Յիսուս սիրում էր, ու նրանց ասում է. «Տիրոջը վերցրել են գերեզմանից, և չգիտենք, թէ ուրի են դրել նրան»: <sup>3</sup>Պէտքոսը և մյուս աշակերտը Ելան և գերեզման էին գալիս: <sup>4</sup>Երկուսով միասին վազում էին, բայց մյուս աշակերտը առաջ անցավ Պէտքոսից և ավելի շուտ վազեց ու առաջինը գերեզման Եկավ:

### Հովի Ի 6

Եկավ նաև Սիմոն Պէտքոսը, որ նրա հետևից էր գալիս. մտավ գերեզմանը և տեսավ, որ կտավները այնտեղ էին:

### Հովի ԻԱ 2-3

<sup>2</sup>Միասին էին Սիմոն Պէտքոսը, Թովմասը՝ Երկվորյակ կոչվածը, Նաթանայելը, որ Գալիլիայի Կաս քաղաքից էր, Զեբեղեոսի որդիները և աշակերտներից ուրիշ Երկու հոգի: <sup>3</sup>Սիմոն Պէտքոսը նրանց ասաց. «Գնում եմ ծուկ որսալու»: Նրան ասացին. «Մենք էլ ենք գալիս քեզ հետ»: Գնացին և նավակը մտան. և այդ գիշեր ոչինչ չբռնեցին:

### Հովի ԻԱ 7

Այս աշակերտը, որին Յիսուս սիրում էր, Պէտքոսին ասաց՝ Տէրն է: Երբ Սիմոն Պէտքոսը լսեց, թէ Տէրն է, հագուստը վրան գցեց, քանի որ մերկ էր, և իրեն նետեց ծովի մեջ:

### Հովի ԻԱ 11

<sup>11</sup>Սիմոն Պէտքոսը նավակ մտավ և ցամաք քաշեց ուռկանը, որ լիքն էր հարյուր հիսուներեք մեծ-մեծ ձկներով: Թեև այնչափ բան կար, բայց ուռկանը չպատռվեց:

### Հովի ԻԱ 15-17

<sup>15</sup>Եվ երբ ճաշեցին, Յիսուս Սիմոն Պէտքոսին ասաց. «Սիմոն, որդի՛ Հովնանի, սիրու՞մ ես ինձ ավելի, քան դրանք»: Սա ասաց նրան. «Այո՛, Տէր, և դու զիտես, որ սիրում եմ քեզ»: Նրան ասաց՝ արածացրու՛ իմ զաներին: <sup>16</sup>Դարձյալ ասաց նրան. «Սիմոն, որդի՛ Հովնանի, սիրու՞մ ես ինձ»: Նա ասաց նրան. «Այո՛, Տէր, և դու զիտես, որ սիրում եմ քեզ»:

Սիմովն Յովնանու սիրե՞ս զիս: Տրտմեցաւ՝ Պէտքո՞ւ զի ասաց ցնա երիցս՝ թէ սիրես զիս. Եւ ասէ ցնա. Տէր՝ դու զամենայն գիտես. Եւ դու իսկ՝ զամենայն ճանաչե՞ս, Եւ եթէ սիրեմ զբեզ: Ասէ ցնա Յիսուս. Արածեա՞ զոչխարս իմ:

<sup>20</sup>Դարձաւ Պէտքո՞ւ՝ Եւ տեսանէ զաշակերտն զոր սիրէր Յիսուս՝ զի երթայր զկնի, որ Եւ անկա՞ւ զլանջաւըն նորա՝ Եւ ասէ. Տէր ո՞վ է որ մատնելոցն է զբեզ: <sup>21</sup>Զնա տեսեալ Պէտքո՞ւի, ասէ ցՅիսուս. Տէր, իսկ սա՝ զի՞:

Յովհ Իւ 20-21

Նրան ասաց՝ արածացրու՝ ին ոչ-խարներին: <sup>17</sup>Երրորդ անգամ նրան ասաց. «Սիմոն, որդի՛ Յովնանի, սիրու՞ն ես ինձ»: Պէտքո՞ւ տիրեց, որ երրորդ անգամ իրեն ասաց, թէ՝ սիրու՞ն ես ինձ: Ու նրան պատասխանեց. «Տէ՛ր, դու անեն ինչ գիտես. դու ինքդ ճանաչում ես բոլորին և գիտես, թէ սիրում եմ քեզ»: Յիսուս նրան ասաց. «Արածացրու՝ ին ոչ-խարներին:

<sup>20</sup>Պէտքո՞ւ դարձավ և տեսավ, որ այն աշակերտը, ում Յիսուս սիրում էր, գալիս է հետևից. նա, որ ընկել էր նրա կրծքովն ու ասել. «Տէ՛ր, ո՞վ է, որ մատնելու է քեզ»: <sup>21</sup>Պէտքո՞ւ, նրան տեսնելով, ասաց Յիսուսին. «Տէ՛ր, իսկ սա հ՞նչ կլինի»:

**Պետրոս (Հուն. «փեմ», նախնական անունը Միմոն, արամ. «ուռնկնդրում»):** Քրիստոսի տասներկու առաքյալներից, Հովնանի որդին, Անդրեաս առաքյալի եղբայրը, Գալիլիայի Բեթսահիդա քաղաքից: Ավետարանները նշում են, որ նա ապրել է նաև Կափառնայումում: Պետրոսն ամուսնացած էր, և քարոզչական գործունեության ընթացքում կինը նրան ուղեկցում էր: Վերոհիշյալ երկու քաղաքներն էլ գտնվում էին Տիբերական լճի ափին և ծառայում էին հիմնականում ձկնորսության նպատակով: Պետրոսը հմուտ ձկնորս էր և մշտական հարաբերության մեջ էր տեղի հեթանոս ազգաբնակչության հետ: Հավանաբար նա մեծապես ազդվել էր Հովհաննես Մկրտչի քարոզչությունից, քանի որ եղբայրը՝ Անդրեասը, Հովհաննեսի աշակերտներից էր:

Հիսուսի և Պետրոսի ծանոթությունն ամենայն հավանականությամբ պետք է վերագրել Հիսուսի նախագալիկեական գործունեությանը՝ Անդրեասի միջնոր-

դությամբ: Աշակերտ դառնալով՝ Սիմոն Պետրոսը նոր անուն ստացավ՝ Կեփաս (արամ.՝ «փեմ»), որը նոր Կտակարանում արտահայտված է Պետրոս բառով: Հովհաննու Ավետարանի համաձայն՝ Պետրոսն այս անվանումն ստացավ Հիսուսի հետ առաջին իսկ հանդիպումից: Պետրոսը Հիսուսի առաջին աշակերտներից էր և հենց այդպես էլ ներկայացվում է առաքյալների թվարկումների մեջ: Նրա նվիրվածությունը Հիսուսին հաճախ է շեշտվում Ավետարաններում, և նա բազմիցս հանդես է գալիս Տասներկուսի անունից:

Գործք Առաքելոցում հստակ նկարագրվում է, թե ինչպե՞ս Հոգեգալստյան օրը Պետրոսն է դառնում քրիստոնեական առաջին համայնքի առաջնորդը: Սամարիայում նույնպես Եկեղեցու առաքելության ընթացքին նա է դառնում նախաձեռնողն ու առաջնորդը: Գործք առաքելոցը նրա անվան հետ է կապում հեթանոսների մեջ քրիստոնեական քարոզության սկզբնավորումը:

**Այս նախաձեռնության պատճառով Պետրոսն անմիջապես քննադատության է արժանանում:** Անտիռքում հեթանոսությունից քրիստոնեության դարձած առաջին հավատացյալների հետ սիրո ճաշի ընթացքին Պետրոսը հուղայական օրենքի նախանձախնդիր կողմնակիցների ճնշման տակ ստիպված տեղի է տալիս և հրաժարվում հեթանոսների հետ սեղան նստելուց: Սույն արարքն արժանանում է Պողոս առաքյալի քննադատությանը: Զնայած այս ամենին՝ Պողոս և Պետրոս առաքյալների միջև առկա տարածայնությունները երբեք չեն կարող բնութագրվել իբրև աստվածաբանական:

**Ստեփանոսի նահատակությունից հետո Պետրոսի քարոզչական ճամփորդությանը դժվար է հետեւել: Հոպակեռմ, կեսարիայում և այլուր նրա գործունեության հիշատակումը վկայում է, որ նա հիմնականում Պաղեստինի առաքյալն էր: Երուսաղեմում զնդանից հրաշքով ազատվելուց հետո նա ուղերձվում է մեկ այլ տեղ: Այդ տեղը սահմանելու հետազոտողների բոլոր ջանքերն անարդյունք են: Գիտենք, որ նա եղել է Անտիռքում, հնարավոր է, որ որոշ ժամանակ եղել է Կորնթոսում և Փոքր Ասիայի հյուսիսում գտնվող քրիստոնեական համայնքներում: Պետրոսի գործունեությունը Հռոմում որոշ հետազոտողների կողմից կասկածանքի տակ է դրվել, այնուհանդեռ Պետրոսի Առաջին Թուղթը թերևս գրվել է Հռոմում (Հմմտ. Ա. Պետր. Ե 13): Թղթում ակնարկներ կան ներոնյան հալածանքների մասին, որոնց ըստ Կղեմես Հռոմեացու (†101)՝ զոհ են գնացել Պողոս և Պետրոս առաքյալները: Նրա գլխիվայր խաչվելու փաստը՝ նկարագրված**

Գործք Պետրոսի անվավեր գրվածքում, պատմական որևէ հենք չունի: Հռոմում կատարված պեղումների ընթացքում հայտնաբերվել են Ա. Պետրոսի պաշտամունքի վաղ շրջանի բազմաթիվ վկայություններ:

**Մատթ Ժ 18 համարը Պետրոսին վերաբերող նորկտակարանյան ամենաքննարկված դրվագներից է: Հնուց ի վեր գոյություն ունեն այս համարի հիմնականում երկու մեկնություններ.**

ա) «վեմ» իմաստն աղերսվում է կամ Պետրոսի հավատքին կամ էլ Հիսուսի մեսիականությանը: Սա ամենավաղ մեկնությունն է (Որոգինես Գ դ.), և դրա ամենամեծ առավելությունը դրվագի համատեքստին տրված նշանակությունն է, որով ընդգծվում է Հիսուսի հանդեպ ունեցած դավանությունը: Պատմական տեսանկյունից պետք է թերևս վեմը հասկանալ ոչ միայն Հիսուսի հանդեպ ունեցած հավատի, այլև առաքելական դավանության իմաստով, որն ամենուրեք նշվում է իբրև եկեղեցու հիմք (Հմմտ. Եվկես Բ 20):

բ) Վեմը հենց ինքը Պետրոսն է: Այս մեկնությունը գրեթե ժամանակակից է առաջինին, որովհետև արդեն Տերտուղիանոսն (Գ դ.) առաջ է քաշում Պետրոսի առաջանությունն առաքյալների խմբում: Այս մեկնության հիմնական իմաստն այն է, որ Մատթ Ժ 18-ում Հիսուսի խոսքերը համարում է ուղղված անմիջականորեն Պետրոսին: Այնուամենայնիվ Արևելյան եկեղեցու մեկնությունը հիմնական գծերի մեջ հետեւել է Որոգինեսին, որի համաձայն՝ ունենալ Պետրոսի հավատքն ու առաքինությունները՝ նշանակում է ձեռքբերել նաև նրան տրված արքայության բանալիները: Այս տեսակետի օգտին է

խոսում ես ԾԱ 1-ում Աստծո խոսքը. Հանվել եք» (Այս հարցի շուրջ Հայ «Լսեցե՛ք ինձ, դուք, որ արդարության եք հետամուտ և փնտրում եք Տիրոջը, Եկեւուացի, «Յաղագս համապատուունայեցե՛ք այն հաստատուն վեմին, որից թեան երկոտասան առաքելոցն», երուկերտվել եք, և այն հորի փոսին, որից սաղէմ 1857):

## ՊԻՂԱՏՈՍ Պոնտացի

<sup>13</sup>Իբրեւ այգ եղեւ, խորհուրդ արարին ամենայն քահանայապետըն եւ ծերը ժողովրդեանն կասն Յիսուսի սպանանել զնա: <sup>24</sup>Կապեցին զնա եւ արին գնացին, եւ ետուն ի ձեռս Պոնտացւոյ Պիղապոսի դատաւորի:

<sup>15</sup>Յայնժամ ասէ ցնա Պիղապոս. Ո՞չ լսես որչափ դոքա հակառակ քո վկայեն:

<sup>17</sup>Իբրեւ ժողովեցան, ասէ ցնոսա Պիղապոս. Զո՞ կամիք յերկուց աստի զի արձակեցից ծեզ, զՅեսու Բարաբբա՞՝ եթէ զՅիսու զանուանեալն Քրիստոս: <sup>18</sup>Քանզի գիտէր թէ առ նախանձու մատնեցին զնա:

<sup>22</sup>Ասէ ցնոսա Պիղապոս. Իսկ զի՞ արարից զՅիսու զանուանեալն Քրիստոս:

<sup>24</sup>Եւ տեսեալ Պիղապոսի թէ ոչինչ օգնէ, այլ առաւել խռովութիւն լինի, առեալ ջուր՝ լուաց զձեռս առաջի ժողովրդեանն եւ ասէ. Քաւեալ եմ ես յարենտ արդարոյդ այդորիկ. դուք գիտասչիք:

<sup>58</sup>Սա մատուցեալ առ Պիղապոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի. յայնժամ Պիղապոս իրամայեաց տալ զմարմինն:

<sup>62</sup>Եւ ի վաղիւ անդր որ է յետ ուրբաթուն, ժողովեցան քահանայապետըն եւ փարիսեցիքն առ Պիղապոս, <sup>63</sup>եւ ասեն. Տեր, յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր մինչ կենդանին էր, թէ՝ Յետ երից աւուրց յառեն:

Մատք իւ 2

<sup>1</sup>Երբ առավոտ եղավ, բոլոր քահանայապետները և ժողովրդի ծերերը խորհուրդ արեցին Յիսուսի դեմ նրան սպանելու համար: <sup>2</sup>Նրան կապեցին, առան գնացին և հանձնեցին պոնտացի Պիղապոս կուսակալի ձեռքը:

Մատք իւ 13

<sup>13</sup>Այն ժամանակ Պիղապոսը նրան ասաց. «Զե՞ս լսում, ինչքան դրանք քո դեմ են վկայում»:

Մատք իւ 17-18

<sup>17</sup>Երբ հավաքվեցին, Պիղապոսը նրանց ասաց. «Այս երկուսից որի՞ն էր ուզում, որ ծեզ համար արձակեմ. Յեսու Բարաբբային, թէ՝ Յիսուսին՝ Քրիստոս կոչվածին». <sup>18</sup>Քանի որ Պիղապոսը գիտեր, որ նախանձից մատնել էին նրան:

Մատք իւ 22

<sup>22</sup>Եվ նրանք ասացին՝ Բարաբբային: Պիղապոսը նրանց ասաց. «Իսկ ի՞նչ անեն Յիսուսին՝ Քրիստոս կոչվածին»:

Մատք իւ 24

<sup>24</sup>Եվ Պիղապոսը տեսնելով, թէ ոչինչ չի օգնում, այլ էլ ավելի խռովություն է լինում, ջուր վերցնելով՝ լվաց ձեռքերը ժողովրդի առաջ ու ասաց. «Այդ արդարի արյունից ես անմասն եմ. դուք գիտեք»:

Մատք իւ 58

<sup>58</sup>Սա Պիղապոսի մոտ գնալով՝ Յիսուսի մարմինը խնդրեց: Այն ժամանակ Պիղապոսը իրամայեց, որ մարմինը տրվի:

Մատք իւ 62

<sup>62</sup>Եվ հետևյալ օրը, որ ուրբաթի հաջորդ օրն է, քահանայապետներն ու փարիսեցիները հավաքվեցին Պիղապոսի մոտ ու ասացին. <sup>63</sup>«Տեր, իիշեցինք, թէ այն մոլորեցնոնք, քանի կենդանի էր, ասում էր, թէ՝ երեք օրից հարություն պիտի առնեմ:

<sup>65</sup>Ասէ ցնոսա **Պիշտուու**. Ունիք զգօրականն, երթայք, զգուշացարուք որպէս եւ գիտէք:

<sup>1</sup>Եւ վաղվաղակի ընդ առաւտոն խորհուրդ արարեալ քահանայապետիցն հանդերձ ծերովքն եւ դպրօք եւ ամենայն ատեան, կապեցին զՅիսուս եւ տարան մատնեցին **Պիշտուու**: <sup>2</sup>Եւ հարց զնա **Պիշտուու** եւ ասէ. *Դո՞ւ* ես քագաւորն Հրէից: Նա պատասխանի ետ նման եւ ասէ. *Դու* ասես:

<sup>4</sup>Իսկ **Պիշտուու** դարձեալ հարցանէր զնա. Ոչի՞նչ տաս պատասխանի, տես քամի ամբաստանն զքն: <sup>5</sup>Եւ Յիսուս այնուհետեւ ոչինչ ետ պատասխանի, մինչեւ զարմանալ յոյժ **Պիշտուու**:

<sup>9</sup>Պատասխանի ետ **Պիշտուու** եւ ասէ ցնոսա. Կամի՞ք զի արձակեցից ձեզ զարքայն Հրէից:

<sup>12</sup>Դարձեալ պատասխանի ետ **Պիշտուու** եւ ասէ ցնոսա. Իսկ զի՞նչ կամիք թէ արարից զարքայն Հրէից: <sup>13</sup>Եւ նոքա դարձեալ աղաղակէին յուզեալք ի քահանայապետիցն՝ Ի խաչ հանգուա:

<sup>14</sup>Ասէ ցնոսա **Պիշտուու**. Զի՞նչ ինչ չար արարեալ իցէ դորա: Եւ նոքա առաւել եւս աղաղակէին եւ ասէին. Ի խաչ հան զդա: <sup>15</sup>Իսկ **Պիշտուու** իբրեւ զմիտս կամեցաւ հաճել զամբոխին, արձակեաց նոցա զԲարաբրայն, եւ զՅիսուս գան հարեալ ետ ի ձեռս զի ի խաչ ելանիցէ:

<sup>43</sup>Եկեալ Յովսէփի որ յԱրիմաթեայն էր, այր պարկեշտ նախարար, որ եւ ինքն իսկ ակն ուներ արքայութեանն Աստուծոյ, համարձակեցաւ եմուտ

Մատք Իւ 65

<sup>65</sup>**Պիշտուու** նրանց ասաց. «Զինվորներ ունեք. գնացեք ապահովութիւնը հոգ տարեք, ինչպես որ գիտեք»:

Մարկ ԺԵ 1-2

<sup>1</sup>Եվ իսկույն, վաղ առավոտյան, ծերերի և օրենսգետների հետ միասին, քահանայապետները և ամբողջ ատյանը խորհուրդ անելով կապեցին Յիսուսին և տարան հանձնեցին **Պիշտուուն**: <sup>2</sup>**Պիշտուու** հարցրեց նրան և ասաց. «Դո՞ւ ես հրյաների թագավորը»: Յիսուս պատասխան տվեց նրան և ասաց. «Դու ասում ես»:

Մարկ ԺԵ 4-5

<sup>4</sup>Իսկ **Պիշտուու** դարձյալ հարցրեց նրան. «Ոչ մի պատասխան չե՞ն տալիս. տե՛ս, ինչքա՞ն են քեզ ամբաստանում»: <sup>5</sup>Եվ Յիսուս, այնուհետև, ել ոչինչ չպատասխանեց, այնպես որ **Պիշտուու** շատ զարմացավ:

Մարկ ԺԵ 9

<sup>9</sup>**Պիշտուու** պատասխանեց և ասաց նրանց. «Ուզո՞ւմ եք, որ հրյաների արքային արձակեմ ձեզ համար»:

Մարկ ԺԵ 12

<sup>12</sup>**Պիշտուու** դարձյալ խոսք առավ և ասաց նրանց. «Իսկ ի՞նչ էք ուզում, որ անեն հրյաների արքային»: <sup>13</sup>Եվ նրանք, քահանայապետներից դրդված, դարձյալ աղաղակեցին. «Իսաչը հանիր դրան»:

Մարկ ԺԵ 14-15

<sup>14</sup>**Պիշտուու** նրանց ասաց. «Ի՞նչ չար բան է արել նա»: Եվ նրանք առավել ևս աղաղակում էին ու ասում. «Իսաչը հանիր դրան»: <sup>15</sup>Իսկ **Պիշտուու**, որովհետև ուզեց ամբոխին զոհացնել, նրանց համար Բարաբրային արձակեց: Իսկ Յիսուսին ծեծել տալով նրանց ձեռքը հանձնեց, որպես զի խաչը հանվի:

Մարկ ԺԵ 43-44

<sup>43</sup>Արիմաթիացի Յովսէփը, որ մի պարկեշտ մարդ էր ու հրյաների ժողովի անդամ և որ ինքն էլ Աստծո արքայութիւնն էր սպասում, հա-

առ **Պիշտուս**, եւ խնդրեաց զմարմինն Յիսուսի: <sup>44</sup>Եւ **Պիշտուս** զարմացաւ թէ այնչափ վաղ մեռաւ. եւ կոչեցեալ առ ինքն գիարիւրապետն՝ եհարց զնա եւ ասէ թէ՝ Արդարեւ այնչափ վա՞ղ մեռաւ:

<sup>1</sup>Ի իինգետասաներորդի ամի տէրութեանն Տիբերեայ կայսեր, ի դատաւորութեան Յիսուստանի **Պիշտուսի** Պոնտացւոյ, եւ ի չորրորդանտութեան գալիլեացւոց Յերովդի, եւ Փիլիպոսի Եղբաւր նորա չորրորդանտութեան ի Տուրացւոց եւ ի Տրաքոնացւոց աշխարհին, եւ ի չորրորդանտութեան Լիսանեայ Աբիլենացւոյ.

<sup>1</sup>Եկին ոմանք ի նմին ժամանակի եւ պատմեցին ննա վասն Գալիլեացւոցն, որոց զարիւնն **Պիշտուս** խառնեաց ընդ զրհս նոցա:

<sup>1</sup>Եւ յարուցեալ ամենայն բազմութիւնն նոցա, ածին զնա առ **Պիշտուս**:

<sup>3</sup>Իսկ **Պիշտուս** եհարց զնա եւ ասէ. Դո՞ւ ես թագաւորն Յրեից: Նա պատասխանի ետ ննա եւ ասէ. Դու ասացեր: <sup>4</sup>Ասէ **Պիշտուս** քրահանայապետն եւ ցժողովուրդսն. Զգտանեմ ինչ վնաս յառնս յայսմիկ:

<sup>6</sup>Իսկ **Պիշտուս** իբրեւ լոււաւ գԳալիէէ, եհարց եթէ Գալիլեացի՞ է այրն:

<sup>11</sup>Արհամարիեաց զնա եւ Յերովդէս հանդերձ իւրովք զօրականօքն, եւ այսն արարեալ՝ արկ զնովաւ հանդերձս սպիտակս, եւ ետ տանել անդրէն առ **Պիշտուս**: <sup>12</sup>Եւ եղեն բարեկամք **Պիշտուս** եւ Յերովդէս յաւուր յայնմիկ, քանզի յառաջ թշնամիք էին միհնեանց:

#### Ղուկ Գ 1

#### Ղուկ Ժ Գ 1

#### Ղուկ Ի Գ 1

#### Ղուկ Ի Գ 3-4

#### Ղուկ Ի Գ 6

#### Ղուկ Ի Գ 11-12

մարձակվեց մտնել **Պիշտուսի** մոտ և ուզեց Յիսուսի մարմինը: <sup>44</sup>Եվ **Պիշտուսը** զարմացավ, որ Յիսուս այդչափ շուտ էր մեռել. և իր մոտ կանչելով հարյուրապետին՝ հարցրեց նրան ու ասաց. «Իրոք այդչափ շու՞տ մեռավ»:

<sup>1</sup>Տիբերիոս կայսեր իշխանութիւն տասնինգետորդ տարում, երբ Պոնտացի **Պիշտուսը** կուսակալ էր Յիսուստանի, և Յերովդէսը՝ չորրորդապետ Գալիլիայի, և նրա եղբայր Փիլիպոսը՝ չորրորդապետ Խոռորդացիների ու Տրաքոնացիների աշխարհի, Լյուսանիասը՝ չորրորդապետ Աբիլենեի:

<sup>1</sup>Այդ նույն ժամանակ ոմանք եկան և պատմեցին նրան այն գալիլեացիների մասին, որոնց արյունը **Պիշտուսը** խառնեց իրենց զրիերի արյան հետ:

<sup>1</sup>Նրանց ամբողջ բազմությունը, վեր կենալով, նրան տարավ **Պիշտուսի** մոտ:

<sup>3</sup>Իսկ **Պիշտուսը** հարցրեց նրան և ասաց. «Կրյաների թագավորը դու՞՞ ես»: Նա պատասխանեց նրան և ասաց. «Դու ասացիր»: <sup>4</sup>Պիշտուսը քրահանայապետներին և ժողովորդին ասաց. «Այս մարդու մեջ ես որևէ հանցանք չեմ գտնում»:

<sup>6</sup>Իսկ **Պիշտուսը**, երբ լսեց Գալիլիայի մասին, հարցրեց, թե այդ մարդը գալիլեացի՞ է:

<sup>11</sup>Յերովդէսն էլ, իր զորականներով հանդերձ, արհամարիեց նրան և ծիծաղելով նրա վրա՝ սպիտակ զգեստներ հազցնել տվեց նրան ու վերստին հանձնեց, որ տանեն նրան **Պիշտուսի** մոտ: <sup>12</sup>Եվ **Պիշտուսն** ու Յերովդէսը այդ օրերին բարեկամներ եղան, որովհետև առաջ իրար թշնամիներ էին:

<sup>13</sup>Կոչեաց Պիշտուս քրահանայապետսն եւ զիշխանս եւ զժողովուրդն, <sup>14</sup>եւ ասէ ցնոսա. Աժեք մատուցեք ինձ զայրս զայր իբրեւ գխոտորեցուցիչ ժողովրդեանն. եւ ահաւասիկ առաջի ձեր դատեցայ, եւ վնաս ինչ ոչ գտի յառնս յայսմիկ՝ զորոց դուք չարախօսեքդ զիմանէ:

<sup>20</sup>Դարձեալ Պիշտուս սկսաւ խոսել, քանզի կամէր արձակել զՅիսուս:

<sup>24</sup>Եւ Պիշտուս հաւանեցաւ առնել զիայցուածս նոցա:

<sup>52</sup>Սա մատուցեալ առ Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի:

<sup>29</sup>Ել առ նոսա Պիշտուս արտաքս եւ ասէ. Զի՞նչ չարախօսութիւն մատուցանէք զառնէն զայննանէ:

<sup>31</sup>Ասէ ցնոսա Պիշտուս. Առէք զնա դուք, եւ ըստ ձերոց օրինացն դատեցարուք: Ասեն ցնա Յրեայքն. Մեզ ոչ է արժան սպանանել զոք:

<sup>33</sup>Եմուտ միւսանգամ յապարանսն Պիշտուս, կոչեաց զՅիսուս եւ ասէ ցնա. Դո՞ւ ես թագաւորն Յրէից:

<sup>35</sup>Պատասխանի ետ Պիշտուս. Միթէ եւ ես Յրեա՝ իցեմ. ազգն քո եւ քահանայապետք մատնեցին զքեզ ինձ. զի՞նչ զործ գործեալ է քո:

<sup>37</sup>Ասէ ցնա Պիշտուս. Ապա թէ այդպէս իցէ, թագաւո՞ր ոմն ես դու: Պատասխանի ետ Յիսուս. Դու ասես թէ թագաւոր իցեմ. բայց ես յայդ իսկ ծմեալ եմ, եւ ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ, զի վկայեցից ծշմարտու-

Դուկ ԻԳ 13

<sup>13</sup>Պիշտուս կանչեց քրահանայապետներին, իշխանավորներին և ժողովրդին ու ասաց. <sup>14</sup>«Այս մարդուն բերեցիք ներկայացրից ինձ, որպէս ժողովրդին մոլորեցնողի. և ահավասիկ ձեր առաջ դատարննություն արեցի և այս մարդու մեջ չգտա մեկն այն հանցանքներից, որոնցով դուք ամբաստանում եք նրան:

Դուկ ԻԳ 20

<sup>20</sup>Պիշտուս նորից սկսեց խոսել, որովհետև կամենում էր Յիսուսին արձակել:

Դուկ ԻԳ 24

<sup>24</sup>Եվ Պիշտուս հավանություն տվեց, որ նրանց պահանջը կատարվի:

Դուկ ԻԳ 52

<sup>52</sup>Սա Պիշտուսի մոտ գալով՝ ուզեց Յիսուսի մարմինը:

Յովի ԺԸ 29

<sup>29</sup>Ուստի Պիշտուսն ինքը դուրս ելավ նրանց մոտ և ասաց. «Այս մարդու մասին հի՞նչ ամբաստանություն եք ներկայացնում»:

Յովի ԺԸ 31

<sup>31</sup>Պիշտուս նրանց ասաց. «Դուք վերցրեք նրան և ձեր օրենքի համաձայն նրան դատեցեք»: Յրաները նրան ասացին. «Մեզ համար որևէ մեկին սպանել օրինավոր չէ»:

Յովի ԺԸ 33

<sup>33</sup>Պիշտուս դարձյալ ապարանք մտավ, կանչեց Յիսուսին և ասաց նրան. «Դու՝ ես հրյաների թագավոր»:

Յովի ԺԸ 35

<sup>35</sup>Պիշտուս պատասխանեց. «Միթէ ես էլ հրյա՝ եմ. քո ազգը և քահանայապետները մատնեցին թեզ ինձեռքը. դու հի՞նչ ես արել»:

Յովի ԺԸ 37-38

<sup>37</sup>Պիշտուս նրան ասաց. «Թե որ այդպէս է, ուրեմն դու թագավո՞ր ես»: Յիսուս նրան պատասխանեց. «Դու ես ասում, որ թագավոր եմ, բայց ես դրա համար իսկ ծնվել եմ և դրա համար իսկ եկել եմ աշխարհ,

թեանն. ամենայն որ ի ճշմարտութենէ է լսէ բարբառոյ իմոյ: <sup>38</sup>Ասէ ցնա **Պիշապոս**. Զի՞նչ է ճշմարտութիւն: Զայս իբրեւ ասաց, դարձեալ ել առ Յրեայսն եւ ասէ ցնոսա. Ես եւ ոչ մի ինչ պատճառս գտանեմ ի նմա:

<sup>19</sup>Յայնժամ ա՛ն **Պիշապոս** զՅիսուս եւ գան եհար:

<sup>4</sup>Ել դարձեալ **Պիշապոս** արտաքս եւ ասէ ցնոսա. Ահա ածեմ զնա արտաքս առ ձեզ, զի գիտասցիք թէ ես վնաս ինչ ի նմա ոչ գտանեմ:

<sup>6</sup>Իբրեւ տեսին զնա քահանայապետքն եւ սպասաւորք, զաղաղակ բարձին եւ ասեն. ի խաչ հան, ի խաչ հան զդա: Ասէ ցնոսա **Պիշապոս**. Առէք զդա ի ձեզ, եւ ձեզէն հանեք ի խաչ. զի ես ի դմա վնաս ինչ ոչ գտանեմ:

<sup>8</sup>Իբրեւ լուաւ զբանս զայս **Պիշապոս**, առաւել եւս երկեաւ:

<sup>10</sup>Ասէ ցնա **Պիշապոս**. Ընդ իս ո՞չ խօսիս, ո՞չ գիտես եք իշխանութիւն ունին հանել զքեզ ի խաչ, եւ իշխանութիւն ունին արձակել զքեզ:

<sup>12</sup>Եւ յայննանէ **Պիշապոս** խնդրէր արձակել զնա. Եւ Յրեայքն աղաղակին եւ ասէին. Եթէ զդա արձակես, չես բարեկամ կայսեր. ամենայն ոք որ թագաւոր կոչէ զանձն իւր, հակառակ է կայսեր: <sup>13</sup>Իսկ **Պիշապոս** իբրեւ լուաւ զբանս զայսոսիկ, ած զՅիսուս արտաքս. Եւ նստաւ ի վերայ թեմին ի տեղլոջն որ կոչէր Քարայատակ, եւ Եբրայեցերն Կապպաթ:

որպեսզի ճշմարտութիւն համար վկայեն: Ամեն մարդ, որ ճշմարտությունից է, իմ ձայնը լսում է»: <sup>38</sup>**Պիշապոս** նրան ասաց. «Ինչ է ճշմարտությունը»: Երբ այս ասաց, դարձյալ դուրս ելավ, իրյաների մոտ, ու ասաց նրանց. «Ես նրա մեջ ոչ մի հանցանք չեմ գտնում:

<sup>1</sup>Այս ժամանակ **Պիշապոս** իրամայեց Յիսուսին վերցնել և նրան գանակոծել:

<sup>4</sup>**Պիշապոս** դարձյալ դուրս ելավ ու ասաց նրանց. «Ահա նրան դուրս, ձեզ մոտ եմ թերում, որպեսզի իմանաք, թէ ես նրա մեջ որևէ հանցանք չեմ գտնում»:

<sup>6</sup>Երբ քահանայապետներն ու պահակները նրան տեսան, աղաղակ բարձրացրին և ասացին. «Խաչը՝ հանիր, խաչը՝ հանիր դրան»: **Պիշապոս** նրանց ասաց. «Դուքք առէք նրան ձեր մեջ և ինքներոդ խաչը հանեցեք, քանի որ ես որա մեջ որևէ հանցանք չեմ գտնում»:

<sup>8</sup>Երբ **Պիշապոս** այս խոսքերը լսեց, ավելի ևս վախեցավ:

<sup>10</sup>**Պիշապոս** նրան ասաց. «Ինձ հետ չե՞ս խոսում, չգիտե՞ս, որ իշխանություն ունեմ քեզ խաչը հանելու. և իշխանություն ունեմ քեզ ազատ արձակելու»:

<sup>12</sup>Սրանից հետո **Պիշապոս** ուզում էր նրան ազատ արձակել: Իսկ իրյաները աղաղակում էին ու ասում. «Եթէ դրան արձակես, կայսրին բարեկամ չես: Ամենայն ոք, որ ինքն իրեն թագավոր է կոչում, հակառակ է կայսեր»: <sup>13</sup>Իսկ երբ **Պիշապոս** այս խոսքերը լսեց, Յիսուսին դուրս բերեց, նստեց թեմի վրա, այն տեղը, որ Քարայատակ էր կոչվում, իսկ Եբրայերն Կապպաթ:

<sup>15</sup>Եւ նոքա աղաղակին. Բարձ ի մէնջ, բարձ ի մէնջ, եւ հան զդա ի խաչ: Ասէ ցնոսա **Պիշտոռու**. Ես գթագաւորդ ծեր ի խաչ հանիցեմ: Պատասխանի ետուն քահանայապետքն. Չիք մեր թագաւոր բաց ի կայսեր:

<sup>16</sup>Գրեաց եւ տախտակ մի **Պիշտոռու**, եւ եղ ի վերայ խաչին. Եւ եր գրեալ. Յիսուս ՆԱԶՈՎՌԵՑԻ, ԹԱԳԱՒՈՐ ՅՐԵՒՅ:

<sup>21</sup>Ասեն **Պիշտոռու** քահանայապետքն Յրէից. Մի՛ գրեր Թագաւոր Յրէից, այլ թէ՝ ևա ասաց. Թագաւոր են Յրէից: <sup>22</sup>Պատասխանի ես **Պիշտոռու**. Զոր ինչ գրեցի՞ գրեցի:

<sup>31</sup>Իսկ Յրեայքն, քանզի ուրբաթ էր, զի մի՛ անդէն ի խաչին ագանիցին մարմինքն մինչեւ ցշաբաթն, (զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ,) աղաչեցին **Պիշտոռու** զի խորտակեսցեն զբարձն նոցա եւ բարձին:

<sup>38</sup>Յետ այսորիկ աղաչեաց **Պիշտոռու** Յովսէի որ յԱրիմաթեայ էր, աշակերտ Յիսուսի ի ծածուկ վասն աիհն Յրէից, զի բարձէց զմարմինն Յիսուսի. Եւ հրամայեաց **Պիշտոռու**. Եկին եւ բարձին զնա՝:

Յովի ժթ 15

<sup>15</sup>Իսկ նրանք աղաղակում էին. «Վերացրու՛ մեր միջից, վերացրու՛ մեր միջից և խաչը՝ հանիր նրան»: **Պիշտոռու** նրանց ասաց. «Ես ծեր թագավորին խաչը՝ հանեմ»: Քահանայապետները պատասխանեցին. «Չունենք մենք այլ թագավոր, բացի կայսրից»:

Յովի ժթ 19

<sup>19</sup>**Պիշտոռու** մի տախտակ էլ գրեց և դրեց խաչի վրա. և գրված էր. «Յիսուս ՆԱԶՈՎՌԵՑԻ՝ հրյաների թագավոր»:

Յովի ժթ 21-22

<sup>21</sup>Յրյաների քահանայապետները **Պիշտոռուն** ասացին. «Մի՛ գրիր՝ հրյաների թագավոր, այլ՝ ինչ նա ասաց՝ թագավոր եմ հրյաների»: <sup>22</sup>**Պիշտոռու** պատասխանեց. «Ինչ գրեցի, գրեցի»:

Յովի ժթ 31

<sup>31</sup>Իսկ քանի որ ուրբաթ էր, որպեսզի մարմինները չմնան խաչի վրա մինչև շաբաթ օրը, - որովհետև այն շաբաթը տոնական մեծ օր էր, - հրյայ առաջնորդները **Պիշտոռուն** աղաչեցին, որ կոտրեն նրանց սրունքները և վերցնեն նրանց:

Յովի ժթ 38

<sup>38</sup>Այսուհետև Յովսէփը, որ արիմաթիացի էր և Յիսուսի թաքուն աշակերտն էր հրյաների վախի պատճառով, **Պիշտոռուն** աղաչեց, որ Յիսուսի մարմինն վերցնի: Եվ **Պիշտոռու** հրաման տվեց. ուստի Յովսէփն ու Նիկողենոսը եկան և նրան վերցրին:

**Պիշտոռու** (լատ. «նիզակակիր»): Հուգայի, Սամարիայի և Իղումեայի հինգերորդ հոռոմեական կուսակալ (26-36թթ.), հոռոմեական ընտանիքից: **Պիշտոռոս** ընտանեկան անունը հուշում է նրա նախնիների զինվորական լինելու, իսկ Պոնտացի ազգանունը՝ վկայում նրա ծննդավայրի մասին: Մինչեւ 26թ. նրա կենսագրության մասին ոչինչ

հայտնի չէ: Այդ թվականին Տիբերիոս կայսը (14-37թթ.) նրան նշանակում է Հրեաստանի կուսակալ: Իբրև կուսակալ նա իրեն վստահված տարածքի լիիրավ տերն էր, ում տրամադրության տակ էր հոռոմեական զորքը (120 հեծյալ, 2500-5000 հետիոտն զինվոր): Այս բանակը գտնվում էր Պաղեստինյան Կեսարիայում, իսկ ջոկատներից մեկը

մշտական պարեկային ծառայություն էր իրականացնում Երուսաղեմի Անտոնիոսի անունը կրող միջնաբերդում։ Կուսակալը կարող էր հաստատել կամ մերժել հրեական Մեծ Առյանի՝ Սինհեղբիոնի կայացրած մահվան դատավճիռները։ Նա էր նշանակում քահանայապետին և վերահսկում տաճարի գործունեությունը։ Նույնիսկ քահանայապետների պատմուճանները նրա մոտ էին պահպում, և նրանց էր հանձնում միայն տոն օրերին, երբ գալիս էր Երուսաղեմ և քաղաքը հսկելու համար հավելյալ պարեկային զորք տրամադրում։ Նույնիսկ հեթանոս պատմիչները Պիղատոսին հիշատակում են Հիսուսի մահվան հետ կապված, երբ Հրեաստանի կուսակալն առաջին ու վերջին անգամ պատմության բեմ է դուրս գալիս։ Ըստ Հովսեփոս Փլավիոսի (Ա. դ.) Պիղատոսի կողմից ձեռնարկված առաջին միջոցառումը կայսեր պատկերը կրող նշանի տեղադրումն էր Երուսաղեմում, որով իր դեմ է հանում հրեաներին։ Նրան նախորդած կուսակալները չեին համարձակվել սուրբ քաղաքում տեղադրել այդ պատկերը։ Հրեաների բուռն հակառակության հետևանքով Պիղատոսն ի վերջո տեղի է տալիս և կայսերական նշանը վերադարձնում կեսարիա։ Նույն հրեա պատմիչի համաձայն՝ անտեսելով հրեաների դժգոհությունը՝ Պիղատոսը տաճարի գանձարանից վերցված դրամներով կառուցում է 40 կմ երկարության ջրմուղը՝ քաղաքին ջուր մատակարարելու համար։ Հրեական տոնի ժամանակ Երուսաղեմ այցելիս Պիղատոսը հանդիպում է մոտ 10000-անոց հրեական ամբոխին, որն իր բուռն դժգոհությունն էր արտա-

հայտում նրա այդ արարքի դեմ։ Ի պատասխան այս բողոքի ցույցի՝ կուսակալը նրանց դեմ է ուղարկում հռոմեական զորախմբին՝ սպանելով նրանցից շատերի։ Ըստ Երեսութիւն, այս իրադարձության արձագանքն ենք գտնում Ղուկաֆի գլխում։

Պիղատոսի կինը Կլոդիա Պրոկուլան էր Օգոստոս կայսեր թոռնուհին և Կլոդիայի՝ Տիբերիոս կայսեր երրորդ կնոջ ապօրինի դուստրը։ Նա փորձառու, բարեկիրթ, դյուրազգաց արքայադուստր էր։ Պիղատոսը գուցե կնոջ և ոչ թե իր դիվանագիտական հմտության շնորհիվ էր նշանակվել կառավարչի պաշտոնում։ Հրեաստանի կառավարիչները սովորաբար թույլտվություն չեին ստանում կանանց իրենց հետ տանելու, սակայն Կլոդիան ամուսնու հետ էր նույնիսկ երուսաղեմում՝ թողնելով շատ կանանց համար փափագելի մայրաքաղաքային անդորր կյանքը։

Պիղատոսը նաև սամարացիների կոտորածն է կազմակերպում Գարիզին լեռան վրա, երբ խաբեությամբ սամարացիներին խոստանում է ցույց տալ Մովսեսի կողմից այնտեղ թաքցրած սուրբ սպասքը։ Զնայած այս բացահայտ ստին (Մովսեսը երբեք չի անցել Հորդանան գետը)՝ լեռան մոտ զինված մարդկանց մեծ բազմություն է հավաքվում։ Պիղատոսը շրջապատում է նրանց, գերի վերցնում և մահվան դատապարտում ցույցը կազմակերպողներին։ Սամարացիների պատվիրակությունը բողոքի դիմում է անում Ասորիքի կառավարիչը Վիտելիոսին։ Վերջինս Պիղատոսին հրամայում է այս մեղադրանքներին պատասխան տալ կայսեր առաջ, իսկ Պիղատոսի պաշտոնին նշանակում

Մարկելիոսին։ Մինչ Պիղատոսը Հռոմ Փրկչին մահվան դատապարտելու նրա էր գնում, մահանում է Տիբերիոս կայս- որոշումը ոչ թե Հռեաներին հաճոյանա- րը (37 թ.): Դատավարության արդ- լու համար էր, այլ ավելի շուտ Տիբե- յունքները մեզ հայտնի չեն, սակայն րիոս կայսեր զայրույթը չբորբոքելու եվսեբիոս Կեսարացու (Դ դ.) տեղեկաց- Հռեաստանում տեղի ունեցած հու- մամբ՝ Պիղատոսն ինքնասպան է եղել գումների առիթով։ Սա ավելի պարզ Գայոս կայսեր օրոք (37-41 թթ.):

Նոր Կտակարանում Պիղատոսը ներ- կայացված է իբրև թույլ մի կառավա- րիչ, ով գործում էր ոչ թե սկզբունք- ներից ելնելով, այլ գործնական պատ- վառացումների համաձայն։ Բայ այսմ գումների առիթով։ Պիղատոսի կյանքը նկարագրող մի քանի անվագեր «Գործք»-եր կան։

## ՍԱՂՈՄԵՇ՝ ԶԵՐԵԴԵՆՈՒԻ ԿԻՒՆԸ

<sup>40</sup>Եին և կանայք, որ հայէին ի հեռաստանէ, յորս էր Մարիամ Մագդաղենացի և Մարիամ Յակովու փոքրկան և Յովսէ ։

<sup>41</sup>Որք յորժամ էրն ի Գալիլեա, զիետ շրջէին նորա եւ պաշտէին զնա. Եւ այլ բազում կանայք որ ընդ ննա իսկ ելեալ էին յերուսաղէմ:

Մարկ ԺԵ 40

<sup>40</sup>Կային և կանայք, որոնք դիտում էին հեռվից: Նրանց մեջ էին Մարիամ Մագդաղենացին, Կրտսեր Յակոբոսի և Յովսէի մայրը Մարիամը, ինչպես և Սաղմէն, <sup>41</sup>որոնք, եթք Յիսուս Գալիլիայում էր, նրա հետևից էին գնում և ծառայում նրան. Կային նաև շատ այլ կանայք, որոնք նրա հետ երուսաղէմ էին ելել:

Եւ իբրև անց շաբաթն, Մարիամ Մագդաղենացի եւ Մարիամ Յակովբայ եւ Սաղմէն չոգան պատրաստեցին խունկս, զի եկեցեն օծցեն զնա:

Մարկ ԺԵ 1

Եվ երբ շաբաթն անցավ, Մարիամ Մագդաղենացին, Յակոբոսի մայր Մարիամը և Սաղմէն գնացին խնկի պատրաստություն տեսան, որպեսզի գան և օծեն նրա մարմինը:

**Սաղոմե՛** (եբր. «խաղաղ»): Զերեդեռոսի կինը, Ավետարանի համաձայն՝ Հիսուսի խաչելության ժամանակ ներկա գտնված և Զատկվա առավոտյան գերեզման այցելած երեք կանանցից մեկը: Մատթեոսը, նույն դրվագին անդրադառնալով, կանանցից յուրաքանչյուրին նույն հերթականությամբ նշում է, բայց «Սաղոմե» անվան փոխարեն ասում է. «Զերեդեռոսի որդիների մայրը» (Հմմտ. Մատթ Ե 56): Ղուկասը նրանց պարզապես «կանայք» է անվանում (Հմմտ. Ղուկ ԻԳ 55): Համատես Ավետարանները միաբերան հաստատում են, որ երեք կանայք էլ՝ Մարիամ Մագդաղենացին, մյուս Մարիամը և Սա-

ղոմեն, Գալիլիայից սկսած անբաժան հետեւ են Հիսուսին և ներկա գտնվել Հիսուսի ծովեղբյա առաքելությանը: Նրանցից երկուսը նրա առաջին աշակերտների մայրերն էին, իսկ Սաղոմեն՝ Հակոբոսի և Հովսէի մայրը:

Սաղոմեն, ում ամուսինը՝ Զերեդեռու, թերեւս որոշ կարողություն և դիրք ուներ ձկան առևտրում, կարեոր անդամ էր կանանց այն փոքրիկ խմբում, որը Հիսուսի և նրա աշակերտների կարիքներին ծառայել է ոչ միայն Գալիլիայում, այլև երուսաղեմ կատարած նրանց ճանապարհորդությունների ժամանակ:

## ՍԱՌՈՄԵՇ ՀԵՐՈՎԴԻՒՅԻ ԴՈՒՏԹՐԸ

**Սաղոմե** (եբր. «խաղաղ»): Հերովդիայի գուստը՝ նրա առաջին ամուսնուց՝ Հերովդես Փիլիպպոսից, Հերովդես Մեծի ծոռնուհին: Զնայած Ավետարաններում նրա անունը չի հիշատակվում, սակայն նրան նույնացնում են Հերովդեսի ծննդյան տարեդարձի օրը պալատում պարող աղջկա հետ, ով իր մոր դրդմամբ Հերովդեսից խնդրում է Հովհաննես Մկրտչի գլուխը (Հմմտ. Մատթ ԺԴ 1-12, Մարկ Զ 17-29, Ղուկ Թ 7-9): Հետագայում Սաղոմեն ամուսնատակում նում է իր հոր խորթ եղբոր՝ Փիլիպպոս Չորրորդապետի հետ:

## ՍԻՄԵՈՆ ՇԵՐՈՒՆԻ

<sup>25</sup>Եւ ահա էր այր մի յերուսաղեմ, որոյ անուն էր Ախեռջն, եւ էր այրն այն արդար եւ երկիւղած, եւ ակն ուներ միսիթարութեանն Խսրայելի. եւ Հոգի Սուրբ էր ի նմա:

<sup>34</sup>Եւ օրինեաց զնոսա Ախեռջն, եւ ասէ ցՄարիամ մայրն նորա. Ահա սա կայ ի զլորումն եւ ի կանգնումն բազմաց ի մեջ Խսրայելի եւ ի նշան հակառակութեան:

**Սիմեոն** (եբր. «ունկնդրել» բայից): Յուրաքանչյուր հրեական ընտանիքի առաջնածին որդի ծննդից քառասուն օր հետո պիտի ընծայվեր երուսաղեմի Տաճարին, ինչպես պահանջվում էր ելից գրքում. «Ինձ նվիրաբերի՛ր բոլոր խսրայելացիների անդրանիկ զավակներին, ամեն մի նախածին, մարդ թե անասուն, որովհետև իմն է» (Ելք Ժ 9: 12):

Մարիամն ու Հովսեփը մանուկ Հիսուսին տանում են երուսաղեմ՝ Տիրոջն ընծայելու, և իրենց հետ վերցնում են մաքրման ծեսի ընծաները, ինչպես պահանջվում էր Ղևտական գրքում (Ե 7)՝ «Երկու տատրակ կամ աղավնիների երկու ձագ»:

Տաճարում նրանց դիմավորում է Խսրայելի փրկությանն սպասող արդար ու աստվածավախ հրեա քահանա Սիմեոնը: Նրան խոստացվել էր մահ չտեսնել, մինչև «Տիրոջ Օծյալի» գալուստը: Մանկան իր գիրկն առնելով՝ Սիմեոնն օրհնում է Աստծուն՝ ասելով. «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությա՛մք արձակիր քո ծառային՝ ըստ քո խոսքի. որովհետև աչքերս տեսան փրկությունը քո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ, լույս,

Դուկ Բ 25

<sup>25</sup>Արդ, Երուսաղեմում Ախեռջն անունով մի մարդ կար, և այդ մարդը արդար ու աստվածավախ էր և ակնկալում էր Խսրայելի միսիթարությունը. և Սուրբ Հոգին էր նրա մեջ:

Դուկ Բ 34

<sup>34</sup>Ախեռջնը նրանց օրինեց և ասաց նրա մորը՝ Մարիամին. «Ահա սա նա է, որ պատճառ է դաշնալու Խսրայելի մեջ շատերի անկնան ու բարձրացնան և նշան՝ հակառակութիւն:

**Սիմեոնի** օրհներգությունը, 1500 տարի է արդեն, քրիստոնեական եկեղեցիներում երեկոյան ժամերգության մաս է կազմում:

Մանկանը վերադարձնելով՝ մորը՝ Սիմեոնն օրհնում է նրա ծնողներին և հայտնում մի խորհրդավոր մարգարեություն. «Ահա՝ սա նա է, որ պատճառ է դառնալու Խսրայելի մեջ շատերի անկման ու բարձրացման և նշան՝ հակառակության: Իսկ քո հոգու միջով էլ սուր պիտի անցնի, որպեսզի բազում սրտերի խորհուրդներ հայտնի դառնան» (Դուկ Բ 34-35):

Սա առհասարակ համարել են կանխացություն Մարիամի՝ Հիսուսի մոր վշտի մասին՝ որդու խաչելության ժամանակ: Նույնպես և Սիմեոնի օրհներգության՝ տիեզերական փրկության խոստումը, որը գրի է առել Ղուկասը, «լույս, որ կլինի հայտնություն հեթանոսների համար», ամենայն հավանականությամբ եսայի մարդարեի «Զարչարվող ծառայի» երգերից է ծնունդ առել:

## ՍԻՄՈՆ ԿԱՆԱՆԱԳԻ

<sup>2</sup>Եւ առաքելոցն երկոտասամից էին անուանք այսորիկ. առաջին Սիմովն, անուանեալն Պետրոս, եւ Անդրեաս Եղբայր նորա, <sup>3</sup>Յակովոս Եթեղեայ եւ Յովհաննես Եղբայր նորա, Փիլիպպոս եւ Բարթողոնես, Թովմաս եւ Սատթեոս մաքսաւոր, Յակովոս Ալփեայ եւ Ղեթոս որ անուանեցաւն Թաղէոս, <sup>4</sup>Սիմոն Կանանացի եւ Յուդա Խոկարիովտացի, որ եւ մատնեացն զնա:

<sup>18</sup>Եւ զԱնդրեաս, եւ զՓիլիպպոս, եւ զԲարթողոնես, եւ զՄատթեոս զմաքսաւորն, եւ զԹովմաս, եւ զՅակովոս Ալփեայ, եւ զԹաղէոս, եւ <sup>չ</sup>Սիմոն Կանանացի, <sup>19</sup>եւ զՅուդա Խոկարիովտացի, որ եւ մատնեացն զնա:

<sup>14</sup>ՉՍիմովն զոր եւ Պետրոսն անուանեաց, եւ զԱնդրեաս զԵղբայր նորին, եւ զՅակովոս, եւ զՅովհաննես, եւ զՓիլիպպոս, եւ զԲարթողոնես, <sup>15</sup>եւ զՄատթեոս, եւ զԹովմաս, եւ զՅակովոս Ալփեայ, եւ <sup>չ</sup>Սիմոն զկոչեցեալն Նախանձայոյգ, <sup>16</sup>եւ զՅուդա Յակովբայ, եւ զՅուդա Խոկարիովտացի, որ եղեւ իսկ մատնիչ:

**Սիմոն** (արամ. «ունկնդրում»): **Քրիստոսի տասներկու առաքյալներից:** «Կանանացի» այստեղ չի կարող նշանակել Քանանի երկրից կամ էլ Կանա քաղաքից: «Կանանացի» արամեերեն բառ է, որ նշանակում է «Նախանձահույզ»: Նա այդպես է անվանվում, քանի որ պատկանում էր նախանձահույզների կուսակցությանը, ինչպես որ նշում է Ղուկաս ավետարանիչը: Նախանձահույզների խմբավորումն ըստ երևույթին ձևավորվել է Հուդա Գամաղացու ապստամբության ժամանակներից (ՔՀ 6թ.): Նրանց պատմությունն իր գագաթնակետին է հասնում ՔՀ 66թ. աղետալի ապստամբության ժամանակ, որը հանգեցնում է

Մատթ Ժ 4

<sup>2</sup>Եվ տասներկու առաքյալների անունները սրանք էին. առաջին՝ Սիմոն Պետրոս կոչվածը, և նրա Եղբայրը Անդրեաս, <sup>3</sup>Զեթեղեոսի որդի Յակովոս և նրա Եղբայրը Յովհաննես, Փիլիպպոս և Բարթողոնես, Թովմաս և Մատթեոս մաքսավոր, Ալփեոսի որդի Յակովոս և Ղեթոս, որ Թաղէոս կոչվեց, <sup>4</sup>Սիմոն Կանանացի և Յուդա Խոկարիովտացի, որ և մատնեց նրան:

Մարկ Գ 18

<sup>18</sup>Սակա Անդրեասին և Փիլիպպոսին և Բարթողոնեոսին և մաքսավոր Մատթեոսին և Թովմասին և Ալփեոսի որդի Յակովոսին և Թաղէոսին և <sup>Սիմոն Կանանացուն</sup> <sup>19</sup>և Յուդա Խոկարիովտացուն, որը և նրան մատնեց:

Ղուկ Զ 15

<sup>14</sup>Սիմոնին, որին էլ Պետրոս կոչեց, և Անդրեասին նրա Եղբօրը, Յակովոսին, Յովհաննեսին, <sup>15</sup>Փիլիպպոսին, Բարթողոնեոսին, Մատթեոսին, Թովմասին, Ալփեոսի որդի Յակովոսին, <sup>Սիմոն</sup> Նախանձահույզ կոչվածին, <sup>16</sup>Յակովի որդի Յուդային և Խոկարիովտացի Յուդային, որը և մատնիչ եղավ:

**70թ. Հռոմեացիների կողմից երուսաղեմի տապալմանն ու կործանմանը:**

Նախանձահույզների հիմնական հետեւորդները տաքարյուն գալիլիացիներն էին: Սիմոնն ամենայն հավանականությամբ ծովեզրի բնակիչ էր, ինչպես Հիսուսի ուրիշ շատ հետեւորդներ: Ե՛վ Ավետարանում, և՛ Գործքում Ղուկասն առաքյալների խմբում Սիմոնին Հուդայի հետ է հիշատակում: Լրացուցիչ ոչ մի հավաստի տեղեկություն չկա այդ երկուսի մասին, սակայն «Սիմոնի և Հուդայի չարչարանքները» պարականոն գրվածքը պատմում է նրանց քարոզության և Պարսկաստանում նահատակվելու մասին:

## ՍԻՄՈՆ՝ ՀԻՍՈՒՏԻ Եղբայրը

<sup>55</sup>Ո՞չ սա է հիւսանն որդի. ո՞չ մայր սորա կոչի Մարիամ, եւ եղբարք սորա՝ Յակովոս եւ Յովան եւ Ախան:

<sup>37</sup>Ո՞չ սա է մանուկ հիւսանն եւ որդին՝ Մարիեմայ, եղբայր Յակովայ եւ Յովանայ եւ Յուդայի եւ Ախանին, եւ չիցե՞ն քորք դորա աստ առ մեզ: Եւ գայթակղին ի նա:

Մատթ ԺԳ 55

<sup>55</sup>Սա հյուսնի որդին չէ<sup>o</sup>. սրա մայրը չէ<sup>o</sup>, որ Մարիամ է կոչվում. և սրա եղբայրները՝ Յակովոս, Յովան, Ախան և Յուդա:

Մարկ Ղ 3

<sup>37</sup>Սա հյուսնի տղան և Մարիամի որդին չէ<sup>o</sup> միթե, Յակովոսի և Յովանի ու Յուդայի և Ախանին եղբայրը. և սրա քույրերը այստեղ մեզ մոտ չե՞ն»: Եվ նրանով գայթակղվում էին:

**Սիմոն** (արամ. «ունկնդրում»): Հիւսուսի ընտանիքի այն անդամներից, որոնց հիշատակում է Նազարեթի համայնքը. «Սա հյուսնի և Մարիամի որդին չէ<sup>o</sup> միթե, Հակոբոսի և Հովսեի ու Հուդայի և Սիմոնի եղբայրը. և սրա Հուդայի և Սիմոնի եղբայրը. և սրա

Զ 3): Հովհաննեսը նշում է, որ Հիսուսի սուսի ընտանիքի այն անդամներից, երկրավոր կյանքի վերջին տարում անգամ Նրա եղբայրները չեին հավատում Նրան: Մեզ հայտնի չէ, թե արդյո՞ք Սիմոնը հետագայում իր եղբոր՝ Հակոբոսի նման քրիստոնեական եկեղեցու անքույրերը այստեղ մեզ մոտ չե՞ն» (Մարկ ղամ է դարձել:

## ՍԻՄՈՆ՝ ՓԱՐԻՀԱԵՑԻ

<sup>40</sup>Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ ցնա. **Այժմովն**, ունիմ ինչ ասել թեզ: Եւ նա ասէ. Ասա, Վարդապետ: Եւ ասէ. <sup>41</sup>Երկու պարտապանք էին ուրումն փոխատուի. մինն պարտէր իինգ հարեւր դահեկան, եւ մեւսն յիսուն:

Ղուկ Է 40

<sup>40</sup>Յիսուս պատասխանեց նրան և ասաց. «**Այժմովն**, թեզ ասելու բան ունեմ»: Եվ սա ասաց. «Ասա՛, Վարդապետ»: Եվ Յիսուս ասաց. <sup>41</sup>«Մի փոխատու երկու պարտապաններ ուներ. մեկը իինգ հարյուր դահեկան պարտք ուներ, իսկ մյուսը՝ իիսուն:

<sup>43</sup>Ասէ **Այժմովն**. Ինձ այսպէս թուի եթէ որուն զբաղումն շնորհեաց: Եւ նա ասէ ցնա. Ուղիղ դատեցար: <sup>44</sup>Եւ դարձեալ ի կինն կողմն, ասէ ց**Այժմովն**. Տեսանե՞ս զայս կին, մտի ի տուն քո, ջուր ոտից ինոց ոչ ետուր. իսկ սա արտասուօք իւրովք եթաց զոտս իմ, եւ հերով իւրով ջնջեաց:

Ղուկ Է 43-44

<sup>43</sup>Այժմովն ասաց. «Ինձ այնպէս է թվում, թե նա՞ ուն ավելի շատը շնորհվեց»: Եվ Յիսուս ասաց նրան. «Ուղիղ դատեցիր»: <sup>44</sup>Եվ դատնալով կնոջ կողմը՝ **Այժմովն** ասաց. «Տեսնու՞ն ես այս կնոջը. մտա քո տունը, ոտքերիս համար ջուր չտվիր, իսկ սա իր արտասուրցներով թրչեց իմ ոտքերը և իր մազերով սրբեց:

**Սիմոն** (արամ. «ունկնդրում»): *Փարիսեցի, ում տանը մեղավոր կինն օծեց Հիսուսի ոտքերը և դրանք թրջեց իր արտասուրցներով:* Ոմանք նրան նույ-

նացնում են բորոտ Սիմոնի հետ, սարիսեցի, ում տանը մեղավոր կինն առաջադրված փաստարկներն կայն առաջադրված փաստարկներն էականորեն տարբերվում են իրարից:

## ՍԻՄՈՆ ԿՅՈՒՐԵՆԱցի

<sup>32</sup>Եւ եկեալ արտաքս՝ գտին այր մի Կիւրենացի անուն **Սիմոն**, զնա կալան պահակ զի բարձգէ զխաչն նորա:

<sup>21</sup>Եւ ունէին պահակ չեցած կիւրենացի, որ ընդ այն անցաներ՝ եկեալ յագարակէ, զհայրն Աղեքսանդրի եւ Ռուփայ, զի բարձգէ զխաչափայտն նորա:

<sup>26</sup>Իբրեւ առին գնացին զնա, ըմբռնեցին զոմն **Սիմոն** կիւրենացի որ գայր յանդէ, եղին ի վերայ նորա զխաչն բերել զկնի Յիսուսի:

Մատթ Իւ 32

Մարկ ԺԵ 21

Ղուկ ԻԳ 26

<sup>32</sup>Եվ դուրս ելնելով՝ գտան կյուրենացի մի մարդ՝ **Սիմոն** անունով, ու նրան ստիպեցին, որ նա խաչը կրի:

<sup>21</sup>Եվ ստիպեցին **Սիմոն** կիւրենացի՝ Աղեքսանդրի և Ռուփոսի հորը, որը ագարակից էր գալիս ու այդ տեղով էր անցնում, որ Յիսուսի խաչափայտը կրի:

<sup>26</sup>Երբ նրան առան գնացին, բռնեցին **Սիմոն** կիւրենացի անունով մեկին, որը հանդից էր գալիս. նրա վրա դրեցին խաչը, որ այն բերի Յիսուսի հետևից:

**Սիմոն** (արամ. «ունկնդրում»): Գող-գոթայի ճանապարհով անցնող այն մարդը, ում ստիպում են կրել Հիսուսի խաչափայտը մինչև խաչելության վայր: Հստ Մատթեոսի և Ղուկասի՝ նա կյուրենիայից էր, որը Հյուսիսային Աֆրիկայում գտնվող Լիբիայի մի մասն էր: Մարկոսը նշում է, որ Սիմոնն Ալեքսանդրի և Ռուփոսի հայրն է (ըստ երեսութին սրանք քրիստոնյաներ էին դարձել և ծանոթ էին Մարկոսի հռոմեացի ընթերցողներին): Ղուկասն ու Մարկոսն ասում են, որ Սիմոն կյուրենացին «հանդից էր գալիս», իբրև թե Պասեքի ուստագնացության էր գուրս

եկել՝ կամ կյուրենիայից, կամ երուսաղեմի մերձակայքից: Երեք համատես Ավետարաններն էլ հաստատում են, որ նրան ուղղակի ստիպում են կրել Գողգոթայի ճանապարհին ուժասպառված Հիսուսի խաչափայտը:

Հովհաննես ավետարանիչը հատուկ նշում է, որ «խաչափայտը նա ինքն էր վերցրել» ու տանում Գողգոթա՝ բնավ չհիշատակելով Սիմոն կյուրենացուն: Գուցե սա նպատակառուղղված էր հերքելու գնոստիկյան այն հերյուրանքը, թե Սիմոն կյուրենացին փոխարինել է Հիսուսին՝ ոչ միայն կրելով նրա խաչափայտը, այլև նրա փոխարեն խաչվելով:

## ՏԻԲԵՐԻՈՍ կայսր

<sup>1</sup>Ի հնգետասաներորդի ամի տերութեանն Տիբերև, կայսեր, ի դատաւորութեան Յրեաստանի Պիղատոսի Պոնտացւոյ, եւ ի չորրորդպետութեան Գալիլեացւոց Յերովդի, եւ ի Փիլիպոսի եղբօր նորա չորրորդպետութեան Խոռորացւոց եւ Տրաքոնացւոց աշխարհին, եւ ի չորրորդպետութեան Լիւսանեայ Արիլենացւոյ, <sup>2</sup>եւ ի քահանայապետութեան Աննայի եւ Կայիափայ, եղեւ բան Աստուծոյ ի վերայ Յովիաննու որդւոյ Զաքարիայ յանապատի անդ:

**Հռոմեացի կայսր (ՔՀ 14-37թթ.),** ում իշխանության օրոք են իրականացել Հիսուսի առաքելությունն ու խաչելությունը: Ծնվել է ՔԱ. 42թ., Օգոստոս կայսեր կնոջ՝ Լիվիայի և նրա առաջին ամուսին Տիբերիոս Կղողես Ներոնի որդին: Տիբերիոսը ուզմական պաշտոն է վարել Եվրոպայում և Արևելքում՝ արժանանալով մարտական պատիվների ու շքանշանների: Քանի որ նրա խորթ հայր Օգոստոսն անժառանգ էր, Տիբերիոսն էր նրա իրավահաջորդը, չնայած որ չէր վայելում Օգոստոս կայսեր սերն ու վստահությունը:

Հենց Տիբերիոս կայսեր պատվին է Հերովդես Անտիպասը հռոմեական

Դուկ Գ 1

**Տիբերիոս կայսեր իշխանութիւն տասնինգերորդ տարում,** երբ Պոնտացի Պիղատոսը կուսակալ էր Յրեաստանի, և Յերովդեսը՝ չորրորդպատետ Գալիլիայի, և նրա եղբայր Փիլիպոսը՝ չորրորդպատետ Խոռորացիների ու Տրաքոնացիների աշխարհի, Լյուսանիասը՝ չորրորդպատետ Արիլենեի, <sup>2</sup>և Աննայի ու Կայիափայի քահանայապետութիւն օրով, Աստծո խոսքը լսելի եղավ Զաքարիայի որդի Յովիաննեսին անապատում:

աշխարհով մեկ արդեն իսկ հայտնի տաք աղբյուրների մոտ, Հիսուսի կենդանության օրոք, կառուցում Տիբերիա քաղաքը: Տեղացի հրեաները խուսափում էին քաղաքի հեթանոսական շրջաններից և արհամարհում էին Հերովդեսի արևելյան արքունիքը: Նրանց համար քաղաքը պիղծ էր, որովհետև կառուցվել էր գերեզմանատան տեղում: Բ դարում ուարքիները պաշտոնապես հռչակում են այդ տեղանքի անպղծությունը: Դրանից հետո Տիբերիան դառնում է Սինեգրիոնի նստավայրը:

## ՓԻԼԻՊՈՍ առաքյալ

<sup>2</sup>Եւ առաքելոցն երկոտասամից էին անուանք այսոքիկ. առաջին Սիմովն, անուանեալն Պետրոս, եւ Անդրեաս Եղբայր նորա, <sup>3</sup>Յակովոս Զեբեդեայ եւ Յովհաննես Եղբայր նորա, <sup>4</sup>Ֆիլիպոս եւ Բարթողոմէոս, Թովմաս եւ Մատթէոս մաքսաւոր, Յակովոս Ալփեայ եւ Ղերէոս որ անուանեցաւն Թադէոս, <sup>5</sup>Սիմովն Կանանացի եւ Յուդա Իսկարիովտացի, որ եւ մատնեացն զնա:

<sup>16</sup>Եւ եղ անուն Սիմովնի՝ Պետրոս, <sup>17</sup>եւ Յակովու Զեբեդեայ եւ Յովհաննու Եղբօրն Յակովայ՝ եղ նոցա անուանս Բաներեգէս, որ է Որդիք որոտման. <sup>18</sup>Եւ զԱնդրէաս, եւ <sup>19</sup>Ֆիլիպոս, եւ զԲարթողոմէոս, եւ զՄատթէոս զմաքսաւորն, եւ զԹովմաս, եւ զՅակովոս Ալփեայ, եւ զԹադէոս, եւ զՍիմովն Կանանացի, <sup>20</sup>եւ զՅուդա Իսկարիովտացի, որ եւ մատնեացն զնա:

<sup>14</sup>ԶՍիմովն զոր եւ Պետրոսն անուանեաց, եւ զԱնդրէաս զԵղբայր նորին, եւ զՅակովոս, եւ զՅովհաննես, եւ <sup>15</sup>Ֆիլիպոս, եւ զԲարթէոս, <sup>16</sup>Եւ զՄատթէոս, եւ զԹովմաս, եւ զՅակովոս Ալփեայ, եւ զՍիմովն զԿոչեցեալն Նախանձայոյգ, <sup>17</sup>Եւ զՅուդա Յակովայ, եւ զՅուդա Իսկարիովտացի, որ եղեւ իսկ մատնիչ:

<sup>43</sup>Ի վաղի անդր կամեցաւ ելանել ի Գալիլեա. գտանէ <sup>44</sup>Ֆիլիպոս, եւ ասէ ցնա Յիսուս. Եկ զկնի իմ: <sup>44</sup>Եւ էր <sup>45</sup>Ֆիլիպոս ի Բերսայիդայ, ի քաղաք Անդրեայ եւ Պետրոսի: <sup>46</sup>Գտանէ <sup>47</sup>Ֆիլիպոս զևաբանայէլ եւ ասէ ցնա. Զորմէ գրեաց Մովսէս յօրէնսն՝ եւ մարգարէն, գտաք զՅիսուս զորդի Յովսեփայ ի Նազարեթ: <sup>48</sup>Ասէ ցնա Նաթանայէլ. Իսկ ի Նազարեթ

Մատթ Ժ 3

<sup>2</sup>Եվ տասներկու առաքյալների անունները սրանք էին. առաջին՝ Սիմոն Պետրոս Կոչվածը, և նրա Եղբայրը Անդրեաս, <sup>3</sup>Զեբեդեոսի որդի Յակովոս և նրա Եղբայրը Յովհաննես, <sup>4</sup>Ֆիլիպոս և Բարթողոմէոս, Թովմաս և Մատթէոս մաքսավոր, Ալփեոսի որդի Յակովոս և Ղերէոս, որ Թադէոս Կոչվեց, <sup>5</sup>Սիմոն Կանանացի և Յուդա Իսկարիովտացի, որ և մատնեց նրան:

Մարկ Գ 18

<sup>16</sup>Եվ Սիմոնի անունը Պետրոս որեց <sup>17</sup>և Զեբեդեոսի որդու՝ Յակովոսի ու նրա Եղբօր՝ Յովհաննեսի անունները որեց Բաներեգէս, որ նշանակում է Որտման որդիներ: <sup>18</sup>Նաև՝ Անդրեասին և <sup>19</sup>Ֆիլիպոսին և Բարթողոմէոսին և մաքսավոր Մատթէոսին և Թովմասին և Ալփեոսի որդի Յակովոսին և Թադէոսին և Սիմոն Կանանացուն <sup>20</sup>և Յուդա Իսկարիովտացուն, որը և նրան մատնեց:

Ղուկ Զ 14

<sup>14</sup>Սիմոնին, որին էլ Պետրոս կոչեց, և Անդրեասին՝ նրա Եղբօրը, Յակովոսին, Յովհաննեսին, <sup>15</sup>Ֆիլիպոսին, Բարթողոմէոսին, Մատթէոսին, Թովմասին, Ալփեոսի որդի Յակովոսին, Սիմոնին՝ Նախանձահույզ կոչվածին, <sup>16</sup>Յակովի որդի Յուդային և Իսկարիովտացի Յուդային, որը և մատնիչ եղավ:

Յովհ Ա 43-46

<sup>43</sup>Յաջորդ օրը Յիսուս որոշեց Գալիլիա մեկնել. գտավ <sup>44</sup>Ֆիլիպոսին ու նրան ասաց. «Արի՛ իմ հետևից»: <sup>44</sup>Եվ <sup>45</sup>Ֆիլիպոսը Բերսայիդայց էր, Անդրեասի և Պետրոսի քաղաքից: <sup>46</sup>Ֆիլիպոսը գտնում է Նաթանայէլին ու նրան ասում. «Ուն մասին որ Մովսէսը օրենքի մեջ և մարգարեները գրել են, գտանք նրան՝ Յիսուսին՝ Յովսեփի որդուն, Նաթանայէլ քաղա-

մա՞րդ ինչ իցէ բարոյ իմիք լինել:  
Ասէ ցնա **Փիլիպոս**. Եկ եւ տես:

<sup>48</sup>Ասէ ցնա Նաբանայէլ. Ուստի՝  
ճանաչես զիս: Պատասխանի ետ  
Յիսուս եւ ասէ ցնա. Մինչչեւ էր **Փիլիպոսի**  
կոչեցեալ զքեզ՝ զի էրի ի  
ներքոյ թգենոյն, տեսի զքեզ:

<sup>5</sup>Բարձ ի վեր զայս իւր Յիսուս եւ  
ետես, զի ժողովուրդ բազում գայր  
առ նա, ասէ **ցՓիլիպոս**. Ուստի՝  
զնեսցուք հաց զի կերիցեն դոքա:

<sup>7</sup>Պատասխանի ետ ննա **Փիլիպոս**.  
Երկերիւր դահեկանի հաց չէ դոցա  
բաւական, թէպէտ եւ իւրաքանչիւր  
ոք սակաւ ինչ առնուցու:

<sup>21</sup>Սոքա մատեան առ **Փիլիպոս** ոք  
ի Բեթսայիդայ Գալիլեացոցն էր,  
աղաչէին զնա եւ ասէին. Տէր, կա-  
մինք զՅիսուս տեսանել: <sup>22</sup>Գայ **Փիլիպոս**  
եւ ասէ ցԱնդրէաս, Անդրէաս  
եւ **Փիլիպոս** ասեն զՅիսուս:

<sup>8</sup>Ասէ ցնա **Փիլիպոս**. Տէր, ցոյց մեզ  
զՅայր, եւ շատ է մեզ: <sup>9</sup>Ասէ ցնա Յի-  
սուս. Այսափ ժամանակս ընդ ծեզ  
եմ, եւ ո՞չ ծանեար զիս, **Փիլիպոս**-  
ոք ետեսն զիս՝ ետես զՅայրն. Եւ դու  
զի՞՞դ ասես եթէ Ցոյց մեզ զՅայր:

Յովի Ա 48

թից»: <sup>46</sup>Նաբանայելը նրան ասաց.  
«Իսկ կարելի՞ է, որ Նազարեթից մի  
որևիցե լավ բան դուրս գա»: **Փիլիպոսը**  
նրան ասաց. «Արի՛ և տե՛ս»:

Յովի Զ 5

<sup>48</sup>Նաբանայելը նրան ասաց. «Որ-  
տեղի՞ց ես ինձ ճանաչում»: Յիսուս  
պատասխանեց և ասաց նրան. «**Փիլիպոսը**  
դեռ քեզ չկանչած, երբ թգե-  
նու տակ էր, տեսա քեզ»:

Յովի Զ 7

<sup>5</sup>Յիսուս իր աչքերը վեր բարձրաց-  
րեց և տեսավ, որ բազում ժողովուրդ  
է գալիս իր մոտ: **Փիլիպոսին** ասաց.  
«Որտեղի՞ց հաց պիտի գնենք, որ  
դրանք ուտեն»:

Յովի ԺԲ 21-22

<sup>21</sup>Նրանք մոտեցան **Փիլիպոսին**, որ  
Գալիլիայի Բեթսայիդա քաղաքից  
էր. աղազում էին նրան ու ասում. «Տէ՛ր, ուղուց ենք Յիսուսին տես-  
նել»: <sup>22</sup>**Փիլիպոսը** եկավ և Անդրէա-  
սին ասաց: Անդրէասը և **Փիլիպոս**ն  
էլ Յիսուսին ասացին:

Յովի ԺԴ 8-9

<sup>8</sup>**Փիլիպոսին** ասաց նրան. «Տէ՛ր, Յո-  
րը մեզ ցույց տուր, և այդ բավական  
է մեզ»: <sup>9</sup>Յիսուս նրան ասաց. «Այս-  
քան ժամանակ ծեզ հետ եմ, **Փիլիպոս**», և ինձ չճանաչեցի՞ր. ով ինձ  
տեսավ, տեսավ Յորը. իսկ դու ինչ-  
պէ՞ս ես ասում, թե՝ Յորը մեզ ցույց  
տուր:

**Փիլիպոս** (Հուն. «Ճիերի սիրա-  
հար»): **Քրիստոսի տասներկու առաք-  
յալներից**, ով Յիսուսի կողմից առա-  
քելության կոչվեց **Անդրէաս** և **Սիմոն**  
**Պետրոս** եղբայրներից հետո, **Նաթա-  
նայելի** հետ: Նա **Անդրէասի** և **Պետ-**  
**րոսի** հայրենի **Գալիլիայի** թեթսաի-

դա քաղաքից էր, **Հավանաբար** նույն  
ձկնորսական շրջանակից: Համատես  
ավետարանների ներկայացրած առաք-  
յալների ցուցակում նա հինգերորդն է՝  
նախորդելով **Բարթողիմեոսին**: Գործք  
Առաքելոցում՝ առաքյալների թվարկ-  
ման մեջ, նա նույնպես հինգերորդն է,

բայց այս անգամ նախորդելով թով-  
մասին: Նոր Կտակարանում Փիլիպպո-  
սը մի քանի անգամ է հիշատակվում.  
Երբ հինգ հազար մարդու կերակրելու  
Հիսուսի պահանջին չկարողացավ պա-  
տասխանել, երբ հեթանոսներին Հիսու-  
սի մոտ բերեց, և վերջապես երբ Հի-  
սուսին խնդրեց առաքյալներին ցույց  
տալու Հայր Աստծուն: Պապիասը (60-  
130թթ.) նրան ներկայացնում է իբրև  
երեցներից մեկը:

Ինչ վերաբերում է Փիլիպպոսի հե-  
տագա կյանքին, ապա ավանդություն-  
ները հակասում են միմյանց: Ըստ Բ  
դարի եփեսոսական մի ավանդության՝  
նա մահացել է Հերապոլսում: Ավելի ուշ  
ժամանակների մի ավանդության հա-  
մաձայն՝ Փիլիպպոսին խաչել են: Սրա  
հիման վրա միջնադարյան արվեստը  
Փիլիպպոսին պատկերել է կամ հինգ  
նկանակով, կամ խաչափայտով:

## ՕԳՈՍՏՈՍ կայսր

Դեւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնու-  
սիկ ել հրաման յԱ-գուղոս կայսերէ  
աշխարհագիր առնել ընդ ամենայն  
տիեզերս:

Դուկ Բ 1

ԴԱՅԱՐ Այն օրերին Օգոստոս կայսեր կող-  
մից հրաման ելավ՝ ամբողջ Երկրում  
մարդահամար անելու համար:

**Օգոստոս** (Հուն. «մեծություն»): օրոք է եղել: Կայսերական ցուցակագ-  
րակումը, ինչպիսին Ղուկասն է նկարագ-  
րի քրոջ թոռը, ծնվել է Հռոմում՝ ՔԱ 63թ.: 20 տարեկան հասակում, Կեսա-  
րի սպանության ժամանակ, իմանում է,  
որ ինքը Կեսարի որդեգիրն է: ՔԱ 31թ.  
Ակցիումի ճակատամարտում Գայոսը  
հաղթում է իր թշնամուն՝ Անտոնիու-  
սին: Հաջորդ 45 տարիներին Հռոմեա-  
կան աշխարհի ամբողջ իշխանությունը  
մնում է նրա ձեռքում: Մենատը նրան  
շնորհում է «Օգոստոս» տիտղոսը, որը  
շարունակ հիշեցնում է նրա իշխանությ-  
յամբ նշանավորված խաղաղության և  
առաջընթացի դարաշրջանը: Օգոստոս  
սի մահից հետո՝ ՔՀ 14թ., նրան հաջոր-  
դում է խորթ որդին՝ Տիբերիոսը:

Հստ Ղուկասու Ավետարանի՝  
Բեթղեհեմում անցկացված մարդահա-  
մարը, որին մասնակցել են Հովսեփն ու  
Մարիամը, Օգոստոսի տիրապետության

Միջերկրականի ծովափին փռվող  
Կեսարիան և բլրանիստ Սամարիան Հե-  
րովդեսն Օգոստոսի պատվին է կառու-  
ցել: Սամարիայի հունարեն անվանումը՝  
«Մեբաստոս», նշանակում է «Օգոս-  
տոս»:

## ՀԱՎԵԼՎԱԾ Ա

### ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԻՆԿԱԿԱՐԱՆՅԱՆ ԱՆՁԻՆՔ

#### Աբիաթար

(Եբր. «գերազանց հայր»): ՔԱ ԺԱ. ԳԵ. Քահանայապետ Դավիթի թագավորութեան օրոք: Երբ Սափուղն իմացավ, որ Նորի քահանաներն օգնում են Դավիթին, նրանց սպանել տվեց, փրկվեց միայն Աբիաթարը: Նա միացավ Դավիթին, երբ վերջինս հետապնդվում էր Սափուղի կողմից: Դավիթը, գահ բարձրանալով, Աբիաթարին կարգեց երկու քահանայապետներից մեկը, մյուսը Սադոկն էր: Աբիաթարն Աբիսողոմի ապստամբության ժամանակ Դավիթի կողմն էր, սակայն Աղոնիայի՝ գահ բարձրանալու փորձերի ժամանակ հարեց նրան: Սողոմոնը, Հաջորդելով Հորը, Աբիաթարին զրկեց քահանայապետությունից:

#### Աբրահամ

(Եբր. «հայր բազմութեան»): ՔԱ ԺԸ. ԳԵ. Հրեա ազգի մեծ նահապետ, Սեմի սերնդից: Ծնվել է Ուր քաղաքում: Յոթանասուն տարի հետո Աստված նրան պատվիրեց գնալ Խառան: Մի քանի տարի անց դարձյալ Աստծո հրամանով ելավ այնտեղից և իբրև վրանաբնակ մտավ Ավետյաց երկիրը: Տերը դարձյալ երևաց նրան և խոստացավ այդ երկիրը տալ նրա զավակին: Սովոր պատճառով ընկավ Եգիպտոս: Նախքան Սառայից Խահակի ծնունդը՝ որդի ունեցավ իր կնոջ աղախնից՝ Հագարից: Եգիպտոսից վերադարձավ Քանան: Աստված խոստացավ անչափ

բազմացնել Խահակի սերունդը: Խահակի համար կին առավ իր բարեպաշտ ազգականներից: Սառայի մահանալուց հետո կին առավ Քետուրային, որից վեց որդի ունեցավ:

Աբրահամը մահացավ 175 տարեկանում:

#### Ասեր

(Եբր. «երանելի»): ՔԱ ԺԶ Պ. Հակոբի ութերորդ և Զելիփայի երկրորդ որդին: Խարայելացիների Քանան մտնելու ժամանակ Ասերի ցեղն իր կարգով հինգերորդն էր: Ասերը ծնվեց այն ժամանակ, երբ նրա հայրը գեռևս արածեցնում էր իր աներոջ Հոտերը: Ասերն իր եղբայրների հետ Եգիպտական գերության վաճառեց Եղբորը՝ Հովսեփին: Երբ Հովսեփը կառավարիչ էր փարավոնի պալատում, Ասերն այն տասը որդիների մեջ էր, որոնց Հակոբը Եգիպտոս ուղարկեց ցորեն գնելու համար: Ասերի ցեղի զբաղեցրած երկիրն առատ ցորեն, գինի և ձեթ էր տալիս: Սակայն այդ ցեղը չկարողացավ երկրից վտարել քանանացիներին և բնակվեց նրանց հետ խառը:

#### Դանիել

(Եբր. «Աստված իմ դատավորն է»): ՔԱ Զ Պ. Հակա բարձրատոհմիկ պաշտոնյա Բաբելոնի պալատում: Նաբուգոդոնոսորը պատվիրում է Հրեա նշանավոր ընտանիքներից մի քանի պատա-

նիների ընտրել, որպեսզի նրանք պատրաստվեն ծառայելու որպես պալատական գրադիրներ: Դանիելը նրանցից մեկն էր: Նրանք հրաժարվում են կերակրվել թագավորի նշանակած ուտեղիքներով, քանզի դրանով կխախտեին մաքուր սննդի հրեական օրենքը: Մի քանի տարի անց թագավորը տագնապալի երազ է տեսնում, Դանիելը մեկնում է այդ երազը: Նաբուգողոնոսորը հրամայում է երկրպագել կուռքերին: Դանիելի երեք ընկերները հրաժարվում են և դրա համար կրակի հնոցն են նետվում, սակայն Տերն ուղարկում է իր հրեշտակին, որը փրկում է նրանց: Դանիելը մեկնում է նաև թագավորի մեկ ուրիշ երազ: Մարերի և պարսիկների կողմից Բաբելոնի գրավումից հետո Դանիելը միշտ մնում է իր բարձր պաշտոններում: Մյուս պաշտոնյաների նախանձի պատճառով Դանիելը նետվում է առյուծների գուբը: Սակայն Տերը դարձյալ ուղարկում է իր հրեշտակին, որը փակում է գաղանների բերանները և փրկում նրան:

Դանիելը ապրում է մինչև հրեաների գերությունից ազատման հրովարտակի հրապարակումը և տեսնում է իր շատ ազգակիցների վերադարձը Հրեաստան:

### Դավիթ

(Եբր. «սիրեցյալ»): Իսրայելի երկրորդ թագավորը ՔԱ 1010-970 թթ., Հեսսեի կրտսեր որդին, Հուդայի ցեղից: Սամուել մարգարեն նախքան Դավիթ թագավոր դառնալը նրան օծում է գահի վրա Սավուղին փոխարինելու համար: Դավիթը գեղեցիկ երիտասարդ էր, քաջայր, հրաշալի երաժիշտ ու բանաստեղծ: Նա համարձակորեն դուրս է գալիս փղշտացի ախոյան Գողիաթի դեմ և

սպանում նրան: Սավուղը նախանձով է լցվում Դավիթի դեմ և մի քանի անգամ փորձում է սպանել նրան: Սավուղի և Հովնաթանի մահից հետո նա թագավորում է Հուդայի երկրում: Յոթը տարի ընդդիմանալուց հետո նրան թագավոր են ընտրում նաև Իսրայելի տասը ցեղերը: Նա իր թագավորության մայրաքաղաքը գաղափում է երուսաղեմը և մեծ շուքով ու պատվով այնտեղ տեղավորում Աստծո տապանակը:

Դավիթի դեմ սկզբում ապստամբում է նրա որդին՝ Աբիսողոմը, այնուհետև գահին տիրանալու փորձեր անում մյուս որդին՝ Ալոնիան:

Նրա թագավորական ցեղը հոգեռորակես կրկին վեր է հառնում հանձին Հիսուս Քրիստոսի, որ Դավիթի զավակ է ըստ մարմնի:

### Եղիա

(Եբր. «Տերն իմ Աստվածն է»): ՔԱ Թ. դ.: Հրեա մարգարե ու բարեփոխիչ: Նա առաջին անգամ հրապարակ է իջնում Աքաարի թագավորության կեսերին: Աքաարի կինը Տյուրոսի եթբաաղ թագավորի գուստը Հեղաբելն էր: Թագավորը և թագուհին երկրպագում էին վյունիկեցիների աստվածներին, կուտներ կառուցում՝ ի պատիվ նրանց:

Թագավորի առջև անսպասելի կանգնում է մի տարօրինակ մարդ՝ կաշվե գոտիով և ուղտի մազից գործած թիկնոցով: Դա եղիան էր. նա ահեղ ձայնով կանխատեսում է, որ կուապաշտության պատճառով երաշտ է լինելու:

Նախքան զարմացած թագավորը կհասցներ ձերբակալել եղիային՝ նա հասցնում է թաքնվել: Կորել-անցնելով Հորդանանը՝ մարգարեն թաքնվում է Քերիթ հեղեղատում: Նրան այնտեղ կերակուր էին բերում ագռավները:

Տիրոջ ցուցումով Եղիան գնում է Սարեփթա քաղաքը: Նա այնտեղ հրաշքով կերակրում է այրի կնոջը, նրա տղային և իրեն: Այնուհետև կենդանացնում է մեռած տղային: Եղիան Աքաաբին առաջարկում է ժողովրդին հավաքել Կարմեղոս լեռան վրա, որպեսզի մարդիկ ականատես լինեն Բահաղի քրմերի անզորությանը, որոնց Հեղաբեկն էր բերել Սամարիա: Քորեբում պարզվում է քրմերի հավատի սին լինելը, և այդժամ նրանց բոլորին կոտորում են: Այդ պատճառով Հեղաբեկը ծրագրում է սպանել Եղիային: Մարգարեն այս անգամ գնում է Հուդա, այնտեղից էլ Քորեբ լեռը: Տերը հայտնվում է նրան և հրամայում է գնալ Դամասկոսի անապատը՝ Ագայելին ասորիների, իսկ Հեսուին՝ Իսրայելի թագավոր օծելու համար:

Եղիան Եղիսեի հետ մեկնում է Երիքով: «Մինչ նրանք քայլում էին, մի հրեղեն կառք և հրեղեն երիվարեր երեացին, նրանց բաժանեցին միմյանցից, և Եղիան պտտահողմերի մեջ դեպի երկինք վերացավ» (Դ Թագ. Բ 11):

## Եղիսե

(Եբր. «Աստված փրկություն է»): Իսրայելի մարգարե ՔԱ Թ դ.: Նա ծառայել է Աքաաբ, Օքողիա, Հորամ, Հեռու, Հովաքագ և Հովաս թագավորների օրոք: Եղիսեն ուսուցանում էր «մարդաբեների որդիներ» կոչվող աշակերտներին: Նա ապրում էր մարդաբեների մեջ: Նա մի շարք հրաշքներ է գործում. ապականությունից մաքրում է Մավաբի աղբյուրը, մի բուռ ալյուրով ուտելի է դարձնում թունավոր պատուղներից պատրաստված կերակուրը, հրաշքով ջրի երես է հանում գետն ընկած կացինը, բազմացնում է մի քանի գարեհա-

ցերը և հասկերը՝ կերակրելով հարյուր եղբայրների: Երբ Իսրայելի, Հուդայի և Եղումի միացյալ զորքերն անապատում առանց ջրի են մնում, Եղիսեն ցուցում է տալիս որոշակի տեղերում ակոսներ փորելու, որոնք շատ շուտով լցվում են ջրով, որը, սակայն, կարմիր ավազի պատճառով արյան գույն է ստանում: Հակառակորդի հետախույզները, այդ տեսներով, կարծում են, թե դաշնակիցները իրար են կոտորում, ուստի շտապում են տիրանալու ավարին, սակայն ուժեղ հակահարված են ստանում:

Դ թագավորներ գրքում պատմվում է Եղիսեի գործած մի շարք այլ հրաշքների մասին: Եղիա Մարգարեի՝ հրեղեն կառքով երկինք վերանալուց հետո Եղիսեն փոխարինում է իր ուսուցչին:

## Եսայի

(Եբր. «Աստված փրկություն է»): Հրեա մարգարե ՔԱ Ը դ. Երկրորդ կեսին: Նա ծառայել է Օզիայի, Հովաթամի, Աքազի և Եղեկիայի թագավորության տարիներին: Միքիայի ժամանակակիցն էր: Նրանք գործում էին հիմնականում Հուդայում և Երուսաղեմում:

Երկու հրեական պետությունները, որ հաճախ էին թշնամանում միմյանց հետ, այդ շրջանում, գտնվելով Ասորեստանի և Եգիպտոսի միջև, հայտնվել էին Երկու կրակի արանքում: Իսրայելը և Ասորիքը դաշինք են կազմում Ասորեստանի դեմ և փորձում են դրան մասնակից դարձնել նաև Հուդայի թագավոր Աքազին, սակայն վերջինս մեղք է գործում և օգնություն խնդրում Ասորեստանից: Եսային անարդյունք փորձեր է ձեռնարկում ընդդիմանալու Աքազի քաղաքականությանը և միասմանակ հեռանում է ասպարեզից: Սակայն Երբ Ասորեստանը գրավում է Դամասկոսը

և հսրայելի մի մասը, Եսային կրկին իր ձայնն է բարձրացնում՝ պահանջելով դադարեցնել՝ Հուղայի մասնակցությունը նման քաղաքական վտանգավոր խաղերին։ Լինելով պետական գործիչ նա չէր հավատում, որ այդպիսի միջոցներով հնարավոր էր Հուղան փրկել անկումից։ Նա կարծում էր, որ դարպասի մոտ կանգնած թշնամական զորքն Աստծո ձեռքին մի գործիք է՝ ընտրյալ ժողովրդին պատժելու անօրենությունների համար։

### Երեմիա

(Եբր. «Աստված կբարձրացնի»)։ Հրեա մարդարե ՔԱ Զ-Ե դդ.։ Ծառայել է Հովսիայի, Հովակիմի և Սեղեկիայի թագավորության տարիներին։ Մարդարեի ճշմարտախոսությունը շատ անգամ սպառնալիքի է ենթարկում նրա կյանքը։ Երեմիայի օրոք Հովսիա թագավորը կրոնական բարեփոխություններ է սկսում, սակայն մարդարեն կարծում է, որ ծիսական բարեկարգումները ոչ մի պտուղ չեն բերի, եթե մարդիկ իրենք հոգեպես չնորոգվեն։ Հովակիմ թագավորն այրում է Երեմիայի գրվածքները։ Նա բանտ է նետվում, երբ Նարուգոդոնոսորը գրավում է Երուսաղեմը։ Նա գուշակում է այդ սպառնալիքը և հրեաների բարեկոնյան 70-ամյա գերությունը։

Նաբուգոդոնոսորը բանտից հանում է Երեմիային և առաջարկում ապրել Բաբելոնում, սակայն մարդարեն նախընտրում է մնալ իր ժողովրդի մնացյալ մասի հետ, որը գերության չէր տարվել։ Դրանից քիչ անց՝ ՔԱ 586թ., Երեմիան ստիպված հրեաների մնացած մասի հետ գաղթում է Եգիպտոս։ Նա մինչև կյանքի վերջն էլ իր ազգակիցներին ահազանգում է, որ Հրեա ազգի գլխին թափվող աղետների բուն պատճառն անհավատությունն է և Աստծուց երես դարձնելը։

### Իսահակ

(Եբր. «Նա ծիծաղեց»)։ ՔԱ ԺՀ-ԺԶ դդ.։ Աբրահամի որդին, հրեաների նահապետներից մեկը։ Աբրահամը 100 տարեկան էր, որ նրան որդի է խոստացվում իր կնոջից՝ Սառայից։ Իսահակի կյանքում կան երկու նշանակալից իրադարձություններ՝ նրա ծնունդը որպես խոստման որդի և նրա ամուսնությունը Ռեբեկայի հետ, քանի որ նա հենց այն սերունդն էր, որի միջոցով է կատարվում Աստծո՝ Աբրահամին տված խոստումը՝ բազմացնելու նրա ցեղը։

Աբրահամը հնագանդ էր Աստծուն։ Սակայն այդ հնագանդությունը սոսկալի փորձության է ենթարկվում։ Աստված նրան հրամայում է որդուն զոհ մատուցել իրեն։ Աբրահամը համաձայնվում է, և այն է արդեն պետք է զոհեր իր սիրելի որդուն, երբ Աստծո ուղարկած հրեշտակը կանխում է նրան։ 137 տարեկանում իսահակն իր օրհնությունն է տալիս որդուն՝ Հակոբին, ով այդ իրավունքին տիրանում է իր եղբայր Եսավին և հորը խաբելու միջոցով։ Դա պատճառ է դառնում Հակոբի և Եսավի միջև գժության և երկար բաժանման։ 180 տարեկանում մեռնում և թաղվում է Մաքփելայի քարայրում՝ իր ծնողների գերեզմանում։

### Յակոբ

(Եբր. «Խարդախ»)։ ՔԱ ԺԶ դ.։ Իսահակի որդին, հրեաների երրորդ նահապետը։ Նա մոր՝ Ռեբեկայի եռանդուն ջանքերով խաբեռությամբ ստանում է ծերունի հոր օրհնանքը, իսկ այնուհետև ոսպապուրով եղբորից՝ Եսավից, գնում է անդրանկության իրավունքը։ Իսկ դա նշանակում էր, որ նա դառնում էր ընտանիքի գլխավորը և ստանում հոր ունեցվածքի մեծ մասը։ Եսավի

զայրույթից խուսափելու համար Հակոբը Ռեքեկայի խորհրդով մեկնում է մոր հայրենիքը՝ Միջագետք։ Ճանապարհին Աստված երազի մեջ հայտնվում է նրան, հաստատում է Աբրահամին տրված խոստումը և օրհնում է Հակոբին։ Հակոբը գնում է իր մոր ազգականի՝ Լաբանի մոտ։ Նա վերջինիս հետ պայման է կնքում յոթ տարի աշխատելու նրա մոտ, որից հետո կնության առնելու նրա աղջկան՝ Ռաքելին։ Սակայն Լաբանը նրան կնության է տալիս իր ավագ դստերը՝ Լիային, պայմանով, որ Հակոբը, առաջին շաբաթն անցկացնելով Լիայի հետ, կնության առնի նաև Ռաքելին՝ Լաբանի մյուս դստերը։ Սակայն Հակոբն ստիպված է լինում ևս յոթ տարի աշխատել Ռաքելի համար։ Հակոբը Լաբանի տանը տարբեր կանացից ունենում է տասնմեկ որդի և մեկ դուստր։

Հակոբն ընտանիքով գաղտնի փախչում է Լաբանից։ Սակայն վերջինս հասնում է նրա հետեւից, և նրանք նոր պայման են կնքում։ Քանանի սահմանի վրա հրեշտակների Աստվածը կռվում է նրա հետ, օրհնում նրան և տալիս «Խորայել» պատվական անունը։ Հակոբը հաշտվում է եղբոր՝ Եսավի հետ և շարժվում դեպի Քերոռն։ Սովոր ժամանակ Հակոբի որդին՝ Հովսեփը, որ կառավարիչ էր Եգիպտոսում, հոր ընտանիքին կանչում է Եգիպտոս, որտեղ նրանք ապրում են Գեսեմում։ Տասնյոթ տարի այնտեղ ապրելուց հետո Հակոբը մահանում է և թաղվում Քերոռնում՝ Մաքփելայի քարայրում։

### Յովնան

(Եբր. «աղավնի»)։ ՔԱ. Լ. դ.։ Հրեա մարդարե։ Գործել է Խորայելի Հերոռովամ թագավորի օրոք։ Աստծուց հրաման է ստանում քարոզել նինվեում,

մի քաղաքում, որը հրեաներին հայտնի էր իր զեխությամբ և անառակությամբ։ Հովնանը, վախենալով կատարել այդ գժվարին առաջադրանքը, նինվե չի գնում, այլ նավարկում է Թարսիս։ Ճանապարհին փոթորիկ է բարձրանում։ Նավավարները պարզում են, որ Հովնանը հրեա է, փախչում է Աստծո Հրամանից։ Վախենալով Աստծո բարկությունից՝ նրանք Հովնանի իսկ հոժարությամբ ծովն են նետում նրան, և փոթորիկը դադարում է։ Սակայն Տիրոջ հրամանով վիշապ ձուկը կուլ է տալիս մարդարեին։ Նա երեք օր մնում է ձկան որովայնում, որից հետո կենդանին որձկալով ցամաք է նետում նրան։ Այդ երեք օրերին նա աղոթում էր Աստծուն՝ փրկելու իրեն։ Եվ Աստված, փրկելով նրան, կրկնում է իր հրամանը՝ գնալ և քարոզել նինվեում։

Հովնանը նինվեում հայտնում է, որ 40 օր հետո քաղաքը կործանվելու է։ Ակաբեկված քաղաքացիներն ու թագավորը պահեցողություն են հայտարարում և մեծից փոքր քուրծ հագնում։ Աստված ողորմում է քաղաքին և չի կործանում այն։ Հովնանը տիրում է, որ իր առաքելությունն այդպիսի ընթացք է ստանում։ Ի պատասխան՝ Աստված ասում է, թե նինվե քաղաքին խնայեց, որովհետեւ այնտեղ մեղք չգործած մանուկներ կային։

Հովնանի պատմության հիմնական գաղափարներից մեկն այն է, որ Աստված իր սերը չի վերապահում միայն իր ժողովրդին, այլ նաև օտարներին։

### Ղովտ

(Եբր. «ծածկոց»)։ ՔԱ. ԺՀ-ԺԶ դդ.։ Ղովտն Աբրահամի հետ Ուրից գնում է Խառան, այնուհետեւ Քանան, այնտեղից Եգիպտոս և դարձյալ Քանան։ Հետագայում բաժանվում է Աբրահամից և

բնակություն հաստատում Սոդոմում: Շուտով նա գերի է ընկնում արևելյան ասպատակիչների ձեռքը: Աբրահամը համարձակ քայլերով նրան ազատում է գերությունից:

Նա մի անգամ իր տանն օթևան է տալիս երկու օտարականների և նրանց պաշտպանում կատաղի սոդոմացիների հարձակումից: Օտարականները Ղովտին հայտնում են, որ իրենք Տիրոջ հրեշտակներ են և ուղարկված են Սոդոմ և Գոմոր անառակ քաղաքները կործանելու համար:

Ղովտն իր ընտանիքով դուրս է գալիս քաղաքից և փրկվում է: Ղովտի դուստրերը՝ կարծելով, թե ոչ ոք ողջ չի մնացել Սոդոմի և Գոմորի կործանումից հետո, որոշում են իրենց հոր սերունդը պահպանելու համար Ղովտին գինի տալ և հղիանալ նրանից: Արյան այդպիսի խառնակությունից ծնվում են Մովաքը՝ մովաքացիների նախահայրը, և Ամմանը՝ ամոնացիների նախահայրը:

### Մովսես

(Եբր. «Ջրից հանված»): ՔԱ ԺԳ դ.: Հրեա մեծագույն առաջնորդ և օրենսդիր: Նրա կյանքը բաժանվում է երեք հիմնական շրջանների: Առաջինը՝ մանկության շրջանն է գետը նետվելուց, փարավոնի դստերը որդեգիր դառնալուց, դաժան եգիպտացուն սպանելուց մինչև Մադիամ փախչելը: Երկրորդը՝ այնտեղ ապրած շրջանն է, երբ նա ապրում է մադիամացիների քահանա Հոթորի տանը և ամուսնանում նրա դստեր՝ Սեպիորիայի հետ: Նա արածեցնում է իր աներոջ հոտերը: Արոտավայրը որոնելիս նա մոտենում է Քորեք (կամ Սինա) լեռանը, որտեղ անկեզ մորենու միջից լսվում է Աստծո ձայնը:

Տերը ասում է, որ Մովսեսն ընտրված է իր եղբայրներին դուրս բերելու եգիպտոսից: Տերը դրա համար նրան ուսուցում է հրաշքներ գործել, որպեսզի փարավոնը և իսրայելացիները հավատան նրան:

Մովսեսը և նրա եղբայրը փարավոնից խնդրում են թույլ տալ, որ հրեաները դուրս գան եգիպտոսից: Մակայն փարավոնը լսել անգամ չի ուզում: Այդժամ Աստված աղետներ է բերում եգիպտոսի վրա, և փարավոնը, ի վերջո, համաձայնվում է ազատ արձակելու հրեաներին: Եվ հրեաները, որ 430 տարի ապրում էի եգիպտոսում, դուրս են գալիս այդ երկրից: Նրանք քառասուն տարի պետք է դեգերեին անապատում Մովսեսի և Ահարոնի առաջնորդությամբ: Մակայն փարավոնը միտքը փոխում է և զորքով ընկնում է իսրայելացիների հետեւից և նրանց հասնում Կարմիր ծովի ափին: Փախստականներին միայն հրաշքը կարող էր փրկել: Տիրոջ հրամանով Մովսեսը ձեռքը տարածում է ծովի վրա, և ջրերը ետ են քաշվում՝ ճանապարհ բացելով փախստականների համար: Նրանք այդպիս փրկվում են, իսկ փարավոնի զորքը կուլ է գնում ջրերին: Սինայի անապատում ժողովուրդը շատ դժվարությունների է հանդիպում, սակայն Աստված նրա հետ էր, իսկ Մովսեսն էլ, ամեն անգամ հրաշքներ գործելով, թեթևացնում էր իսրայելացիների վիճակը: Ի վերջո Մովսեսը ժողովրդին հասցնում է Քորեք (Սինա) լեռը: Այնտեղ նա իր պարտականությունները թեթևացնելու համար նշանակում է ժողովրդի ղեկավարների:

Մոտենում էր մարդկության պատմության ամենակարևոր և ամենահանդիսավոր իրադարձություններից մեկը՝

*Օրենքի հանձնումը Սինա լեռան վրա: Մովսեսն այստեղ Օրենքն ընդունում է Աստծուց և հանձնում ժողովրդին: 40 տարի անց, երբ իսրայելացիների մեջ արդեն մահացել էին ստրկության արյուն ունեցող բոլոր մարդիկ, Մովսեսը ժողովրդին հասցնում է Ավետյաց երկիրի սահմանները՝ Քանան:*

*Մովսեսն ամենափառահեղ գործիչն է Հին Կտակարանում և Իսրայելի պատմության մեջ կենտրոնական անձնավորությունը: Պատահական չէ, որ նա է համարվում Հնդամատյանի՝ Հին Կտակարանի առաջին հինգ գրքերի հեղինակը:*

## Նոյ

(Եբր. «Հանգիստ, մխիթարություն»): ՔԱ 2000 թ.: Համեքի որդին, Աղամից հետո տասներորդ սերունդը: Նա բարեպաշտ և աստվածավախ մարդ էր, որ ապրում էր մի այնպիսի ժամանակում, երբ «Ապականվեց երկիրը, աշխարհը լցվեց անարդարությամբ» (Ծննդ. Զ 11): Աստված Նոյին հայտնում է, որ որոշել է ջրհեղեղի ջրերով կործանել ամենայն կենդանի բան երկրի վրա: Նա Նոյին պատվիրում է երեք տախտակամածով տապան կառուցել: Նախքան ջրհեղեղը Նոյն իր կնոջ, որդիների՝ Սեմի, Քամի և Հարեթի ու նրանց կանանց հետ մտնում է տապանը՝ վերցնելով նաև յուրաքանչյուր տեսակի կենդանիներից մեկական զույգ՝ արու և էզ:

Այնուհետև սկսվում է մեծ ջրհեղեղը: Հինգ ամիս անց ջրերն սկսում են հետ քաշվել և տապանը կանգ է առնում Արարատ լեռան վրա: Նոյը դուրս է գալիս տապանից և Տիրոջը զոհեր է մատուցում՝ շնորհակալություն հայտնելով իր փրկության համար: Տերն ուխտ է հաստատում Նոյի հետ՝ իս-

տանալով, որ այլևս ջրհեղեղ չի լինի, և Նոյն ու սերունդները կը ազմանան:

Նա խաղողի այգի է տնկում, խմում գրա գինուց: Երբ նա մերկ պառկած էր իր վրանում, Քամը տեսնում է Հորը այդ վիճակում, պատմում է այդ մասին իր եղբայրներին: Սեմը և Հարեթը ծածկում են նրա ամոթը: Նոյն արթնանալով անիծում է Քամին և նրա որդի Քանանին՝ ասելով, որ նրանք պետք է ծառա լինեն իրենց եղբայրներին:

Եթե Աղամն առաջին հայր հիմնադիրն էր, Նոյը դառնում է երկրորդը, որովհետեւ մարդկությունը երկրորդ անգամ սկիզբ է առնում նրանից:

## Սողոնոն

(Եբր. «Խաղաղասեր»): Իսրայելի երրորդ թագավորը ՔԱ 970-931 թթ., Դավիթի որդին: Նա գահի վրա փոխարինում է Հորը մեծ դժվարությամբ: Գահին հավակնում էին նրա երկու եղբայրները՝ Աբիսողոմը և Աղոնիան: Սակայն ծեր Դավիթը որպես իր հաջորդի օրհնում է տասնութամյա Սողոմոնին, նա այդ առիթով հազար ողջակեզ է մատուցում Տիրոջը և իմաստություն խնդրում նրանից՝ երկիրն արդարությամբ կառավարելու համար: Դավիթն ամուր հաստատել էր Իսրայելի սահմանները, և Սողոմոնը նոր տարածքներ չի ավելացնում թագավորությանը: Փոխարենը Սողոմոնը շատ կարևոր բարեփոխումներ է կատարում երկրի ներսում: Նա թագավորությունը բաժանում է տասներկու մարզերի, որոնց միայն կեսն էր համապատասխանում Իսրայելի ցեղերի հին տարածքներին: Յուրաքանչյուր մարզ կառավարում էր թագավորի ներկայացուցիչը: Սողոմոնը շահավետ առևտրական հարաբերություններ է հաստատում Տյուրոսի,

Եգիպտոսի, Արաբիայի, Հնդկաստանի և Բաքենի հետ։ Սողոմոնը երկրի ներսում ձեռնամուխ է լինում նաև ծավալուն շինարարության։ Առաջին հերթին նա սկսում է երուսաղեմի տաճարի շինարարությունը, որը տեսում է յոթ տարի։ Իսկ պալատական համալիրի կառուցման համար պահանջվում է ևս տասներեք տարի։ Տաճարի օծումը դառնում է ամենահանդիսավոր օրերից մեկն իսրայելի պատմության մեջ։

Սողոմոնը մահանում է՝ գահի վրա՝ մնալով գրեթե քառասուն տարի։

Նա իսրայելի մեծագույն իմաստունն էր՝ փառաբանվելով որպես խորաթափանց դատավոր, գիտնական և ականավոր գրող։ Իզուր չէ, որ հենց նա է համարվում Հին Կտակարանի «Առակներ», «Ժողովող», «Երգ Երգոց», «Իմաստություն Սողոմոնի» գրքերի հեղինակը։

## ՀԱՎԵԼՎԱԾ Բ

### ՏԻՍՈՒՄԸ ՄԵՐՆԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԵՐԸ

Նոր Կտակարանում կան Հիսուսի սերնդաբանության երկու ցանկեր՝ Մատթ Ա 1-17 և Ղուկ Գ 23-38:

Մինչ Մատթեոսի՝ Հիսուսի սերնդաբանության ցանկն սկսվում է Աբրահամից և հասնում մինչև Հիսուս, Ղուկասը, որդեգրելով հակառակ ընթացքը, սկսում է Հիսուսից և Դավթի ու Աբրահամի միջոցով հասցնում մինչև Աղամ և Աստված: Առաջին իսկ համեմատությունը ցույց է տալիս, որ այս երկու ցանկերի միջև կան զգալի տարբերություններ:

Մատթեոսն իր առաջ բերած սերնդաբանության ցանկը բաժանում է երեք համաշխատաբ մասերի՝

ա. Աբրահամից մինչև Դավիթ, Ա 2-6ա

բ. Դավթից մինչև Բաբելոնի գերությունը, Ա 6բ-11

գ. Բաբելոնի գերությունից մինչև Հիսուս, Ա 12-16:

Այս մասերից յուրաքանչյուրը պարունակում է 14 անուն:

Ղուկասը, սակայն, իր հառաջ բերած սերնդաբանության ցանկում որևէ ներքին բաժանում չի արել, թեև որոշ մեկնիչներ կատարում են հետեւյալ բաժանումը.

ա. Հիսուսից մինչև Զորաբարել (21 անուն), Գ 23-27ա,

բ. Սաղաթիելից մինչև Նաթան (21 անուն), Գ 27բ-31,

գ. Դավթից մինչև Աբրահամ (14 անուն), Գ 32-34ա,

դ. Թառայից մինչև Աստված (21 անուն), Գ 34բ-38:

Համեմատելով Մատթեոսի և Ղուկասի առաջ բերած ցանկերը՝ հաստատում ենք հետեւյալը.

ա. Ղուկասի հառաջ բերած ցանկի մի մասը՝ Աբրահամից մինչև Աստված, բացակայում է Մատթեոսի մոտ:

բ. Աբրահամից մինչև Դավիթ երկու ցանկերն էլ համընկնում են միմյանց:

գ. Դավթից մինչև Հիսուս ցանկերը ամբողջովին տարբերվում են միմյանցից: Միայն երկու անուններ են համընկնում՝ Սաղաթիել և Զորաբարել: Մատթեոսի հիշած 28 անունների դիմաց Ղուկասը հիշատակում է 42 անուն:

դ. Մատթեոսը հետեւում է Դավթի Սողոմոն որդու ճյուղին, իսկ Ղուկասը՝ Նաթան որդու ճյուղին:

ե. Մատթեոսի մոտ Հովսեփի հայրը կոչվում է Հակոբ, իսկ Ղուկասի մոտ՝ Հեղի:

Հայոց Աստվածաշունչն ինքնուրույն լուծում է տվել այս խնդրին՝ Ղուկասի ցանկում ավելացնելով «Հակոբ» անունը:

Հիսուսից մինչև Հակոբ անունների տարբերության խնդրը լուծելու համար առաջարկվել են երկու հիմնական տեսակետներ.

1. Մատթեոս Ավետարանիչը տվել է Հովսեփի սերնդաբանությունը, իսկ Ղուկասը՝ Մարիամի. Հովսեփը սերում է Դավթի որդի Սողոմոնի թագավորա-

կան ուղիղ գծով իջնող ճյուղից, իսկ Մարիամը՝ Դավթի որդի Նաթանից:

Հստ այս վարկածի՝ Մատթեոսն, իր Ավետարանն ուղղելով հրեաներին, ցանկացել է շեշտել Քրիստոսի սերնդաբանության Հովսեփի ճյուղը, քանի որ հրեաները սերումը հաշվում էին միայն հոր միջոցով, իսկ Հիսուսի կյանքում Հովսեփը նրա բուն հայրն էր կարծվում (Ղուկ Դ 22, Մատթ Ժ 9 55, Հովհ Ա 45, Զ 42):

Մյուս կողմից Ղուկասը, իր Ավետարանն ուղղելով հեթանոսներին, փորձել է ցույց տալ Հիսուսի իսկական սերնդաբանությունը Մարիամով՝ այսպիսով հաշտեցնելով նաև այն միտքը, թե Հիսուս բնական հայր չուներ, այլ ծնվել է գերբնական կերպով Ս. Կույսից: Այս տեսությունն ընդունելություն չի գտել Եկեղեցու հին Հայրերի մոտ: Թեև Իլարիոնը հիշում է այն, սակայն և մերժում: Առաջին անգամ այն հաջող կերպով պաշտպանվել է Ժ. Վերջին Առուս օֆ Վիտեխո-ի կողմից և ապա լայն տարածում գտել Ս. Գրքի մեկնիչների մոտ:

Այս տեսակետի օգտին է խոսում նաև հետեւյալը. մի ավանդություն հիշում է, որ Ս. Կույսի հայրը կոչվում էր Հովակիմ: Արդ՝ Հեղին Եղիակիմի համառոտագրությունն է, իսկ Եղիակիմը և Հովակիմը նույնն են. Հուղիթի գրքում (Դ 5, 7, 11 և Ժ 9) նույն քահանան երբեմն կոչվում է Հովակիմ և երբեմն Էլ՝ Եղիակիմ:

Հատկանշական է նաև, որ Թալմուդը Մարիամին համարում է Հեղինի դուստր:

2. Երկու ցանկերն էլ վերաբերում են Հովսեփին, սակայն մինչ Մատթեոսը ներկայացնում է Հովսեփի Փիգիկական նախնիների ցանկը, Ղուկասը՝ ըստ օրինի նախնիներինը:

Այս տեսակետն առաջ է քաշել Հուլիոս Աֆրիկանոսը Գ դարի Ա կեսին: Նա իր այս տեսությունը բացատրում է հետեւյալ կերպ. Սողոմոնի սերնդից Մատթանը, ամուսնանալով Եսթայի հետ, ծնում է Հակոբին: Մատթանը վախճանվելով՝ Մելքին ամուսնանում է նույն Եսթայի հետ և ծնում Հեղինին: Այսպիսով Հակոբը և Հեղին դառնում են միամոր եղբայրներ: Հեղին անզավակ մահանում է: Հակոբը, ըստ հրեական օրենքի թելադրության, իրեն կին է առնում եղբոր այրիացած կնոջը և ծնում է Հովսեփին: Եվ, հետեւաբար, հրեական օրենքի համաձայն (Բ Օր Ի 5-ից)՝ Հովսեփը համարվում է ինչպես Հակոբի (Մատթ Ա 16), այնպես էլ Հեղինի (Ղուկ Գ 23) որդին: Եղբակացնելով Մատթեոսը տալիս է Հովսեփի Փիգիկական հոր սերնդաբանությունը, իսկ Ղուկասը՝ ըստ օրինի հոր: Այնուհետև Աֆրիկանոսը շեշտում է, թե իր տեսակետը պաշտպանելու համար որևէ հավաստի վկայություն չունի, սակայն միաժամանակ ավելի լավ լուծում չի տեսնում:

Այս տեսությունը նույնպես լայն ընդունելություն է գտել ինչպես անցյալում, այնպես էլ այսօր:

Բացի այս հիմնական մեկնություններից՝ արտահայտվել են նաև այլ տեսակետներ, որոնցից նշում ենք հետևյալները.

ա. Այս ցանկերը խորհրդանշական բնույթ ունեն: Մինչև Մատթեոսի հառաջ բերած ցանկը ներկայացնում է Քրիստոսի թագավորական հատկանիշը, Ղուկասինը՝ քահանայականը: Այս տեսակետը հիշատակվել է մերժվել Հուղիոս Աֆրիկանոսի կողմից, Առարիստիդես նամակի սկզբում:

բ. Մատթեոսը տալիս է Հովսեփի սերնդաբանությունը, իբրև Դավթի գահի օրինական ժառանգի, մինչ Ղուկասը տալիս է Հիսուսի սերնդաբանությունը Նաթանի ճյուղից: Կարծվում է, թե Սոլոմոնի տոհմը մարեց Հովսիայի որդի Հեքոնիայով, և թե Նաթանի տանից Սաղաթիելը, իբրև գահաժառանգ, իր որդիների հետ համարվեցին Հեքոնիայի որդիներ, ըստ հրեական օրենքի (Թվոց իԵ 8-11): Այսպիսով մի կողմից բացատրվում է երկու ցանկերի՝ Դավթից մինչև Հիսուս անունների տարրերությունը, մյուս կողմից՝ Սաղաթիելու Զորաբարեկ անունների նույնությունը: Կարծվում է նաև, թե Մատթանը ունեցավ երկու որդի՝ Հակոբ և Հեղի: Ավագը՝ Հակոբը, որ թագավորության ժառանգն էր, եղել է Մարիամի հայրը: Սակայն Հակոբը մեռավ առանց արուզավակի, և Դավթի գահի աթոռակալությունը անցավ Հեղիի որդի Հովսեփին:

Հատկանշական է նաև, որ ըստ Եկեղեցական Ավանդության՝ Հովսեփը և Մարիամը սերտ ազգակցական կապ ունեին միմյանց հետ:

Հնագույն ժամանակներից հրեաները պահում էին սերնդաբանական ցանկեր, որոնցից ոմանք հասնում էին ընդհուպ մինչև Աստված: Այդ ցանկերը երկու տեսակ էին՝ պաշտոնական և անձնական: Պաշտոնական ցանկերը ներկայացնում էին քաղաքապետարանների պաշտոնական արձանագրությունները

և պահպանվում էին ապահով արխիվներում և տաճարում, իսկ անձնականները գրանցվում, լրացվում և պահպանվում էին ընտանիքների ղեկավարների կողմից:

Հին Կտակարանում կան այդպիսի մի շարք ցանկեր, ինչպես օրինակ Ծննդոց Ե 1-31, ԺԱ 10-32, ԻԲ 20-24, ԻԵ 1-20, ԼԶ 1-43, Հոռութ Դ 18-22, Ա Մնաց Ա-Թ և այլն: Հովսեփոս պատմիչը իր ինքնակենսագրության սկզբում ասում է, որ ինքը իր սերնդաբանության ցանկը վեցցրել է երուսաղեմի քաղաքապետարանի արխիվից:

Կարծվում է, որ Հնագույն ցանկերը դարերի ընթացքում արշավանքների, ավերումների, գերությունների հետևանքով փչացվել են, և հրեաները որոշ ժամանակ անց ձեռնարկել են այդ ցանկերի վերակազմության գործը՝ իրենց ձեռքի տակ ունեցած տվյալների հիման վրա: Այս ցանկերը, բնականաբար, չէին կարող կատարյալ և ամբողջական լինել, ինչպես նախկինները: Մյուս կողմից յուրաքանչյուր մարդ կարող էր ունենալ մի քանի այսպիսի ցանկեր:

Հստ Ֆիլիսի՝ Հավանաբար Հովսեփի, գուցե և Մարիամի այսպիսի ընտանեկան ցանկերի վրա են հիմնվել Մատթեոսը և Ղուկասն իրենց հառաջբերած ցանկերը շարադրելիս: Եվ այսպիսով կարող է բացատրվել նաև երկու ցանկերի միջև գոյություն ունեցող տարբերությունները:

**Աբիա** - Աբιա, օ  
Մատք Ա 7 Ա 7

**Աբիուդ** - Աբիօծ, օ  
Մատք Ա 13 Ա 13

**Աբրահամ** Աբրահամ, օ  
Մատք Ա 1 Ա 2 Ա 17 Ղուկ Գ 34

**Ադամ** - Ածամ, օ  
Ղուկ Գ 38

**Ադդի** - Ածծն, օ  
Ղուկ Գ 28

**Ադմին** - Ածմին, օ  
Ղուկ Գ 33

**Ազովը** - Աչար, օ  
Մատք Ա 13 Ա 14

**Ամինադաբ** - Ամանածաբ, օ  
Մատք Ա 4 Ա 4 Ղուկ Գ 33

**Ամովս** - Ամաչ, օ  
Մատք Ա 10 Ա 10 Ղուկ Գ 25

**Առնի** - Առնի, օ  
Ղուկ Գ 33

**Ասափ** - Ասափ, օ  
Մատք Ա 7 Ա 8

**Արամ** - Արամ, օ  
Մատք Ա 3 Ա 4 Ղուկ Գ 33

**Արփաքսադ** - Արփաչածած, օ  
Ղուկ Գ 36

**Աքազ** - Աշաչ, օ  
Մատք Ա 9 Ա 9

**Աքին** - Աշիմ  
Մատք Ա 14 Ա 14

**Բոնս** - Բօէչ, օ  
Մատք Ա 5

**Դաւիթ** - Դաբիծ, Դասիծ  
Մատք Ա 1 Ա 6 Ա 6 Ա 17 Ա 17 Ղուկ Գ 31

**Եգեկիա** - Եչեկիաչ, օս, օ  
Մատք Ա 9 Ա 10

**Եգրովն** - Եսրամ, օ  
Մատք Ա 3 Ա 3

**Ելմովդադ** - Ելմածամ, Ելմածամ, օ  
Ղուկ Գ 28

**Եղիազար** - Ելեաչար, օ  
Մատք Ա 15 Ա 15 Ղուկ Գ 29

**Եղիակիմ** - Ելիակիմ, օ  
Մատք Ա 13 Ա 13 Ղուկ Գ 30

**Եղիուդ** - Ելիուծ, օ  
Մատք Ա 14 Ա 15

**Ենովս** - Ենաչ, օ  
Ղուկ Գ 38

**Ենովք** - Ենաչ, օ  
Ղուկ Գ 37

**Եր** - Եր, օ  
Ղուկ Գ 28

**Զարա** - Զարա, օ  
Մատք Ա 3

**Զօրաբարել** - Զօրօթաթէլ, օ  
Մատք Ա 12 Ա 13 Ղուկ Գ 27

**Թամար** - Թամար, ի  
Մատք Ա 3

**Թարայ** - Թարա  
Ղուկ Գ 34

**Իսահակ** - 'Իսաάկ, օ  
Մատթ Ա 2 Ա 2

**Կայնան** - Կայնամ, Կայնան, օ  
Ղուկ Գ 36

**Կայնան** - Կայնամ կամ Կայնան, օ  
Ղուկ Գ 37

**Կովսամ** - Կոսամ օ  
Ղուկ Գ 28

**Քեղի** - 'Խլի, օ  
Ղուկ Գ 23

**Քոաքաբ** - 'Պաշաբ, ՞ն  
Մատթ Ա 5

**Քոութ** - 'Պոսթ, ՞ն  
Մատթ Ա 5

**Ղամեք** - Ղամէք, օ  
Ղուկ Գ 36

**Ղեւի** - Ղեւից, օ  
Ղուկ Գ 24

**Ղեւի** - Ղեւից, օ  
Ղուկ Գ 29

**Մաթուսադա** - Մաթոսալա, օ  
Ղուկ Գ 37

**Մահաք** - Մաաթ, օ  
Ղուկ Գ 26

**Մաղաղայէլ** - Մալելեիլ, օ  
Ղուկ Գ 37

**Մանասէ** - Մանասնից, ՞ն, օ  
Մատթ Ա 10 Ա 10

**Մատաքիա** - Մաթթատ, օ  
Ղուկ Գ 23 (3,24)

**Մատաքիա** - Մատթաթիաչ, օս, օ  
Ղուկ Գ 26

**Մատթա** - Մատթաթիաչ, օս, օ  
Ղուկ Գ 25

**Մատթա** - Մաթթատ, օ  
Ղուկ Գ 29

**Մատթան** - Մաթթան, օ -  
Մատթ Ա 15 Ա 15

**Մատտաթա** - Մատթաթա, օ  
Ղուկ Գ 31

**Մեղքեա** - Մելեա, օ  
Ղուկ Գ 31

**Մեղքի** - Մելչի  
Ղուկ Գ 24

**Մեղքի** - Մելչի  
Ղուկ Գ 28

**Մեննա** - Մեննա, օ  
Ղուկ Գ 31

**Յակոբ** - 'Իակաբ, օ  
Մատթ Ա 15 Ա 16

**Յաննիա** - 'Իաննան, օ  
Ղուկ Գ 24

**Յարեդ** - 'Իարէծ կամ 'Իարէտ, օ  
Ղուկ Գ 37

**Յեսսէ** - 'Իեսսան, օ  
Մատթ Ա 5 Ա 6 Ղուկ Գ 32

**Յեքոնիա** - 'Իեչոնիաչ, օս, օ  
Մատթ Ա 11 Ա 12

**Յովաքամ** - 'Իոաթամ, օ  
Մատթ Ա 9 Ա 9

**Յովանան** - ’Իօվանάն, ծ  
Ղուկ Գ 27

**Յովդա** - ’Իօվծա, ծ  
Ղուկ Գ 26

**Յովնամ** - ’Իօվնամ, ծ  
Ղուկ Գ 30

**Յովսէփ** - ’Իօվսէփ, ծ  
Ղուկ Գ 24

**Յովսէփ** - ’Իօվսէփ, ծ  
Ղուկ Գ 30

**Յովսէփ** - ’Իօվսէփ, ծ

**Յովսափիատ** - ’Իօվսափատ, ծ  
Մատթ Ա 8 Ա 8

**Յովսեր** ’Իօվսէր, ծ  
Ղուկ Գ 26

**Յովսիա** - ’Իօվսիաց, օս,  
Մատթ Ա 10 Ա 11

**Յովրամ** - ’Իօվրամ, ծ  
Մատթ Ա 8 Ա 8

**Յովրամ** - ’Իօվրամ, ծ  
Ղուկ Գ 29

**Յուդա** - ’Իօվծաց, ծ  
Մատթ Ա 2 Ա 3 Ղուկ Գ 33

**Յուդա** - ’Իօվծաց, ծ  
Ղուկ Գ 30

**Նաասովն** - Նաասովն, ծ  
Մատթ Ա 4 Ա 4Ղուկ Գ 32

**Նաբան** - Նաթան, ծ  
Ղուկ Գ 31

**Նանգեա** - Նայգաև, ծ  
Ղուկ Գ 25

**Նաւում** - Նաօվմ  
Ղուկ Գ 25

**Նաքովը** - Նաշար, ծ  
Ղուկ Գ 34

**Ներա** - Նηρ՛  
Ղուկ Գ 27

**Նոյ** - Նôւ  
Ղուկ Գ 36

**Ոզիա** - ’Օչիաց  
Մատթ Ա 8 Ա 9

**Ովբէդ** - ’Իօվբէդ, ծ  
Մատթ Ա 5 Ա 5 Ղուկ Գ 32

**Ուրիա** - Օնրիաց, ծ  
Մատթ Ա 6

**Ուագաւ** - ’Պագաւ  
Ղուկ Գ 35

**Սադովկ** - Տածակ, ծ  
Մատթ Ա 14 Ա 14

**Սաղա** - Տալա  
Ղուկ Գ 35

**Սաղաթիէլ** - Տալաթիէլ  
Մատթ Ա 12 Ա 12 Ղուկ Գ 27

**Սաղմովն** - Տալման, ծ, Տալա  
Մատթ Ա 4 Ա 5 Ղուկ Գ 32

**Սեր** - Տղթ, ծ - Սեր  
Ղուկ Գ 38

**Սեմ** - Σμ, ὁ  
Ղուկ գ 36

**Սեմեայն** - Σεμειων  
Ղուկ գ 26

**Սերուզ** - Σερούχ  
Ղուկ գ 35

**Սողոմովն** - Σօλօմῶν, ὁ  
Մատթ Ա 6 Ա 7

**Ռեսա** - Ῥησά, ὁ  
Ղուկ գ 27

**Ռոբովամ** - Ῥօβօάμ  
Մատթ Ա 7 Ա 7

**Փաղեկ** - Φαλέκ, ὁ  
Ղուկ գ 35

**Փարէս** - Φαρές, ὁ  
Մատթ Ա 3 Ա 3 Ղուկ գ 33

## ՆԱՎԵԼՎԱԾ Գ

### ՆԱՐԱԿԻՑ ԱՆՁԻՆՔ

#### **ԱԼՎԵՆՈՍ**

Մատթ Ժ 3

Մարկ Գ 18

Ղուկ Զ 15

Կրտսեր Հակոբոսի հայրը: Համատես Ավետարաններում և Գործքում այս Ալվենոսը հիշատակվում է միայն Հակոբոսի առնչությամբ: «Ալվենոս» և «Կղեռպաս» (Հովհ Ժթ 25) անունները արամեական նույն բառից են ծագում:

#### **ԱԼՎԵՆՈՍ**

Մարկ Բ 14

Հարկահավաք Ղեիի (հիմնականում հայտնի է որպես Մատթեոս առաքյալ) հայրը:

#### **ԱՂԵՔՍԱՆԴՐ**

Մարկ ԺԵ 21

Սիմոն Կյուրենացու որդիներից մեկը: Հոռոմեացի զինվորները Սիմոնին ստիպում են Հիսուսի խաչափայտը տանել մինչև Գողգոթա: Միայն Մարկոսն է նրա որդիներին անուններով հիշատակում՝ «Ալեքսանդրի և Ռուփոսի հայրը», և գուցե այն պատճառով, որ նրանք քրիստոնյա էին և ծանոթ էին իր ընթերցողներին:

#### **ԲԱՐԱՔԻՒ**

Մատթ ԻԳ 35

Զաքարիա քահանայի հայրը՝ հիշատակված Եսայի և Համարում: Սակայն անհավանական է, որ Հիսուս նկատի ունենար այս Բարաքիայի որդի Զաքա-

րիային, քանի որ վերջինս ոչ մարդարե էր եւ ոչ էլ նահատակ: Գերությունից հետո գործող Բարաքիայի որդի Զաքարիա մարդարեն էլ խաղաղությամբ է կնքել իր մահկանացուն, եւ դժվար թե Հիսուս այստեղ նրան ակնարկեր: Հովհաննես Մկրտչի հայրն էլ չի հիշատակվում իրեւ Բարաքիայի որդի եւ ոչ էլ հայտնի է, թե արդյոք նահատակվել է Տաճարում: Ամենահավանականն այն է, որ Հիսուս նկատի ունի թերեւ Ազարիա քահանայապետին, ով Հովհա թագավորի հրամանով սպանվեց Տաճարում (Բ Մնաց. ԻԴ 22): Այս քահանայապետի անունը եբրայեցերեն բնագրում առկա է Զաքարիա ձեւով, իսկ հայրանունն էլ Հովհիդայա է: Հավանական է, որ «Բարաքիայի որդի» արտահայտությունը հետագայի հավելում է, քանի որ Ղուկասը հիշատակում է Զաքարիայի նահատակությունը, սակայն առանց «Բարաքիայի որդի» մակդիրի (Մարկ ԺԱ 51):

#### **ԲԵԵՂԵՔԵՐՈՒՊ**

Մատթ Ժ 25

Մատթ ԺԲ 24

Մատթ ԺԲ 27

Մարկ Գ 22

Ղուկ ԺԱ 15

Ղուկ ԺԱ 18

Ղուկ ԺԱ 19

(Եբր. «Բահաղ» կամ «Ճանճերի տեր»): Հին հեթանոսական աստված, ում պաշտում էին Ակկարոնի փղշտացիները: «Բահաղ» «տեր» բառի քա-

նանական համարժեքն էր, ամբողջական նշանակությամբ՝ «երկնքի տեր»: Երայեցիների համար նա դևերի իշխանն էր, դրա համար էլ նրան կոչում են «Բեեղզերուղ»՝ «Ճանճերի տեր», համարելով սատանա: Երուսաղեմից եկած օրենսգետները Հիսուսի մասին այսպես են արտահայտվում. «Նրա մեջ Բեեղզերուղ կա, և դևերի իշխանի ձեռքով է հանում դևերին»: Հիսուսը նրանց պատասխանում է. «Ինչպես սկարող է սատանան սատանային դուրս հանել: Եվ արդ, եթե մի թագավորություն ինքն իր մեջ բաժանվի, այդ թագավորությունը չի կարող կանգուն մնալ: Եվ եթե մի տուն ինքն իր մեջ բաժանվի, այդ տունը չի կարող կանգուն մնալ: Եվ եթե սատանան ինքն իր դեմ դուրս գա և բաժանված լինի, չի կարող կանգուն մնալ, այլ նրա վախճանը հասել է» (Մարկ 9: 22-26):

### Գալիլիացիներ

(Եբր. «շրջապտույտ» բառից) Միջերկրական ծովի և Գալիլիայի լճի միջև ընկած և հռոմեացիների կողմից զեկավարվող շրջանի խառը բնակչությունը: «Գալիլիա» անունը, որը ծագում է երայեցերեն «գալիլ»՝ «շրջապտույտ» բառից, կարող էր վերաբերել ցանկացած խիտ սահմաններ ունեցող շրջանի: Հեթանոսների Գալիլիան՝ Գալիլիա-Գոհիմը («Հեթանոսների շրջան»), Իսրայելի հյուսիսային նահանգին տրված անվանումն էր, որովհետև երեք կողմից շրջապատված էր օտարականներով:

### Գերգեսացիներ

Մատթ Ը 28  
Մարկ Ե 1  
Ղուկ Ը 26

Գալարացիների եւ գերասացիների հետ գերգեսացիները Դեկապոլսի հե-

թանոսական քաղաքների մերձակայ-քում բնակվող ժողովուրդներից էին, որոնց երկրում Հիսուս բժշկեց «Լե-գեոն» անունով անզուսպ դիվահարին:

### Զեբեդեոս

Մատթ Դ 21  
Մատթ Ժ 3  
Մատթ Ի 20  
Մատթ Ի 2 37  
Մատթ Ի Է 56  
Մարկ Ա 19  
Մարկ Ա 20  
Մարկ Գ 17  
Մարկ Ժ 35  
Ղուկ Ե 10  
Յովի Ի Ա 2

(Եբր. «Աստծո պարգև»): Սաղոմեի ամուսինը, Հակոբոսի և Հովհաննեսի հայրը: Զեբեդեոսը որոշ կարողության տեր ձկնորս էր: Նա ձկնորսներ էր վարձել և սեփական նավակ ուներ: Նա կնոջը՝ Սաղոմեին հնարավորություն էր տվել նյութական օժանդակություն ցույց տալու Հիսուսին և նրա աշակերտներին:

Հետաքրքիր է այն փաստը, որ Գալիլիացի Զեբեդեոսը և նրա որդիներ ձուկ էին մատակարարում Երուսաղեմի քահանայապետի պալատին: Թերեւս սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ քահանայապետի պալատի բակի գոնապանը ներս է թողնում Զեբեդեոսի որդի Հովհաննեսին (Հմմտ.՝ Հովհ Ժ 15-16): Վերին Երուսաղեմում ավանդական մի վայր կա՝ «Զեբեդեոսի ձկան խանութը», որտեղ խաչակիրները խաչաձև փոքրիկ եկեղեցի են կառուցել: Այսօր այն արաբական սրճարանի է վերածվել:

### Լյուսանիաս Աբիլենացի

Ղուկ Գ 1

Հովհաննես Մկրտչի քարոզչության սկզբնական շրջանի իշխանավոր, ասո-

րական Արիլենե գավառի չորրորդապետ:

Արիլենեն գտնվում էր Հերովդես Փիլիպոսին պատկանող տերությունից հյուսիս ընկած տարածքում՝ Դամասկոսից հյուսիս-արևեմուտք: Հստ հրեա պատմագիր Հովսեփոսի (Ա. դ.)՝ ՔՀ 37թ. հռոմեական Կալիգուլա կայսրը թե՛ Փիլիպոսին, թե՛ Լյուսանիասին պատկանող տիրութները հանձնում է Հերովդես Ագրիպասին:

### Կղեռպաս

Յովի ժթ 25

(«Կղեռպատրոս» անվան կրծատ ձեր): «Հիսուսի խաչի մոտ կանգնած» Մարիամի ամուսինը: Այն կարծիքը, որ Կղեռպասը Հակոբոս Ալփեան առաքյալի հայրն էր, հաստատվում է այն նմանությամբ, որ ունեն Կղեռպաս և Ալփեոս բառերը երբայեցերենում, այսինքն՝ ունեն միևնույն գրության ձեր, բայց տարբեր են արտասանությամբ: Հստ Բ դարի պատմիչ Հեգեսիփոսի՝ Կղեռպասը հյուսն Հովսեփի՝ Մարիամի ամուսնու եղբայրն էր: Եթե սա ճիշտ է, ուրեմն Կղեռպասը Հիսուսի հորեղբայրն էր:

### Կյուրենիոս

Դուկ Բ 2

Պուբլիոս Սուլպիցիոս Կյուրենիոս: Ասորիքի կառավարիչ Օգոստոս Կայսեր օրոք՝ ըստ Ղուկաս ավետարանչի: Նա ՔԱ 12թ. Հռոմի կոնսուլներից էր, իսկ որոշ ժամանակ անց գլխավորում է Փոքր Ասիայում ապստամբ տավրոսցիների խռովության ճնշումը: ՔԱ 3թ. Ասիայի պրոկոնսուլն էր, իսկ ՔՀ 3-4թթ. Հայկական արշավանքի ժամանակ կայսրության գահաժառանգ Գայոս կեսարի խորհրդականն էր: ՔՀ 6-9 թթ. Ասորի-

քի ու Կիլիկիայի կայսերական լեգատն էր: Հենց այս պաշտոնով էլ նա ավարտում է պետական պաշտոնեությունը: Կյանքի վերջին տարիներն անցկացնում է Հռոմում, որտեղ և կնքում է իր մահականացուն ՔՀ 21թ.:

Ասորիքի ու Կիլիկիայի կայսերական լեգատ եղած ժամանակ Կյուրենիոսը մարդահամար է անցկացնում Հուդայի երկրում, որն Արքեղայոսի գահընկեցությունից հետո վերածվել էր հռոմեական պրովինցիայի: Հենց այս մարդահամարի մասին են խոսում Հովսեփոս Փլավիոսը (Ա. դ.) և Ղուկաս ավետարանիչը (Հմմտ. Գործ Ե 37): Վենետիկյան քարի վրա հայտնաբերված արձանագրությունից հայտնի է դառնում, որ սա Կյուրենիոսի կազմակերպած միակ մարդահամարը չէր: Ղուկասի ավետարանում հիշատակվող մարդահամարը ինը տարով նախորդել է վերոհիշյալ մարդահամարին:

### Հակոբոս՝ Կղեռպասի որդի

Սատթ Ի 56

Սարկ ԺԵ 40

Սարկ ԺԵ 47

Սարկ ԺԶ 1

Ղուկ ԻԴ 10

(Եբր. «գարշապարից բռնող», փիբ. «խարդախ»): Այս Հակոբոսը հիշատակվում է համատես Ավետարանների միայն մեկ համանման դրվագում՝ որպես Հիսուսի խաչելության ականատես Մարիամի (նրա հետ էին Մարիամ Մագդաղենացին, Սաղոմեն, Ղուկասի մոտ՝ նաև Հովհաննան) որդին: Մարկոսը նրան անվանում է «Կրտսեր»՝ հավանաբար տարիքի կամ փոքրամարմին լինելու պատճառով: Հովհաննան Ավետարանում այս Մարիամը հիշատակվում է ոչ որպես «Հակոբոսի մայր Մարիամ»,

այլ՝ «Կղեռպասի կին Մարիամ» (Հմմտ. Հովհ ԺԹ 25): Դրվագը նույնն է, ուրեմն պետք է ենթադրել, որ «Կրտսեր Հակոբոսի» ծնողները Կղեռպասն ու Մարիամն էին: Հակոբոսն այլևս անվանապես չի հիշատակվում:

### Յակոբոս՝ Հուդայի (ոչ Իսկարիով-տացի) հայրը կամ եղբայրը

Դուկ Զ 16

(Եբթ. «գարշապարից բռնող», փխթ. «խարդախ»): Քրիստոսի տասներկու առաքյալներից մեկի՝ Թագեռոսի (Երբեմն՝ «Հուդա») հայրը կամ եղբայրը: Միայն Ղուկասն է «Հուդա» անունը հիշատակում առաքյալների խմբում՝ թե՛ իր Ավետարանում և թե՛ Գործք Առաքելոցում (Հմմտ. Գրծ Ա 13): Մատթեոսն ու Մարկոսը նրան հիշատակում են «Թագեռոս» անվամբ: Հովհաննեսը նրան անվանում է «Հուդա (ոչ Իսկարիովտացի)»: Ուրեմն Թագեռոսն ու Հուդան նույն անձն են, և Հակոբոսը՝ նրա հայրը: Ղուկասի՝ «Հակոբի որդի Հուդա» արտահայտությունը ենթադրում է, որ Հակոբոսը կամ Հուդայի հայրն էր, կամ նրա եղբայրը:

### Յարկահավաքներ

(Հատ. «Քաղաքացիական ծառայողներ»): Սրանք համատես Ավետարաններում հիշատակված «մաքսավորներն» են, ովքեր պետական կամ հասարակական եկամուտների գանձման աշխատանքով էին զբաղվում:

### Յարյուրապետ

Հարյուրապետը հարյուր զինվորի՝ ենթասպայական կազմին պատկանող հրամանատար էր հռոմեական բանակում, ընտրվում էր շարքային զինվոր-

ներից: Վեց հազարանոց լեգենում կար վաթսուն հարյուրապետ:

Նոր Կտակարանում հիշատակվում են վեց հարյուրապետներ, որոնցից յուրաքանչյուրն առանձնանում է իր գովելի վարքով: Նրանցից երկուսն առնչակից են Հիսուսի կյանքին՝ Կափառնայումի հարյուրապետը, ում հանդիպում ենք Մատթեոսի և Ղուկասի Ավետարաններում, և Հիսուսի խաչելությանը ներկա զինվորական խմբի հարյուրապետը, ում հանդիպում ենք համատես բոլոր երեք Ավետարաններում:

### Յարյուրապետ՝ Կափառնայումի

Սատթ. Ը 5-13

Դուկ Է 1-10

Այս հարյուրապետը մարդիկ է ուղարկում Հիսուսի մոտ՝ իր հիվանդ ծառայի համար օգնություն աղերսելու: Բայտ Ղուկասի՝ հարյուրապետի ծառան, որ հավանաբար նրա պատգամաբերն էր, մահամերձ էր: Մատթեոսն ավելացնում է, որ նա «անդամալույծ ընկած էր և չարաչար տանջվում էր»: Ղուկասի պատումում հարյուրապետն անձամբ հանդես չի գալիս. Հրեա ավագներն են նրա խնդրանքը հայտնում Հիսուսին: Երբ Հիսուսն արդեն մոտենում էր նրա տանը, վերջինս բարեկամներ է ուղարկում Հիսուսի մոտ՝ հայտնելով, որ իրեն արթանի չի համարում իր հարկի տակ ընդունելու Տիրոջը. «Տե՛ր, նեղություն մի՛ կրիր... այլ խոսքով ասա՛, և իմ ծառան կրժշկվի»: Հիսուս դառնում է Իրեն հետեւող ժողովրդին և ասում. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ իսրայելի մեջ անդամ այսչափ հավատ չգտա»: Տուն վերադառնալով՝ պատգամավորները ծառային լիովին բժշկված են գտնում:

## Յարյուրապետ՝ Գողգոթայի

Մատթ Ի՛ 54

Մարկ ԺԵ 39

Ղուկ ԻՎ 47

**Հիսուսի մահապատիժն իրականացնող հոռմեական խմբի ղեկավար:** Այս հարյուրապետի շնորհիվ է մեզ հասել միակ առանձին վկայությունը Հիսուսի մասին՝ ընդհուպ մինչև Նրա մահվան պահը:

## Հեթանոսներ

Եթրայեցերեն գոյ բառն առհասարակ նշանակում է ոչ իսրայելացի ժողովուրդ: Նույն բառի հունարեն թարգմանությունը՝ էթնոս, նշանակում է «ազգ»: «Հեթանոս» բառն օգտագործվել է բոլոր ոչ հրեաների համար, ովքեր իսրայելի Աստծո «ողորմությունից դուրս» էին համարվում:

## Հերովդես Փիլիպպոս Կրտսեր

Մատթ ԾԴ 3

Մարկ Զ 17

Ղուկ Գ 19

Իտուրեայի, Գավլանիտիդայի, Տրաքոնիայի և Ավրանիտիդայի չորրորդապետ (ՔԱ 4-ՔՀ 34), Հերովդես Մեծի երեք որդիներից կրտսերը: Նա իր իշխանությունը պահպանել է մինչև մահ 34թ.: Հավաստի մի ավանդություն Հիսուսի պայծառակերպությունը կապում է ոչ միայն Թաթոր լեռան, այլ նաև Հերմոն լեռան հետ, որի հարավային լանջերին, Պան աստծո վաղեմի սրբավայրի տեղում, Փիլիպպոսը տաճար է հիմնել Օգոստոս Կայսեր պատվին:

Մատթեոսի և Մարկոսի Ավետարաններում Փիլիպպոսը հիշատակվում է որպես Հերովդիայի ամուսին, նախքան նրա՝ Անտիպասի հետ ամուսնությունը: Ենթադրվում է, որ Փիլիպպոսն ամուսնացել է Սաղոմեի՝ Անտիպասի և Հերովդիայի դստեր հետ:

## Հերովդեսականներ

Մատթ Ի՛ 16

Մարկ Գ 6

Մարկ Ը 15

Մարկ ԺԲ 13

Հստ հրեա պատմագիր Հովսեփոս Փլավիոսի (Ա. դ.)՝ Հերովդեսների անունը կրող քաղաքական այս խմբավորումը ՔԱ 40թ. Անտիգոն Մակաբայեցու փոխարեն կամենում էր գահին բազմեցնել Հերովդեսին: Ավետարաններում Հերովդեսականները հիշատակվում են Հիսուսին ընդդիմադիր փարիսեցիների առնչությամբ:

## Հրեշտակ

(Հուն. «պատգամաբեր»): Հիսուսից դարեր առաջ մարդիկ զգում էին, որ իրենց պաշտպանում և առաջնորդում են Աստծո հրեշտակները, զգում էին սնոտիապաշտությամբ կամ արևելյան երեակայությամբ, կամ էլ աստվածային ներշնչումով: Նոր Կտակարանը հաստատում է հրեշտակների գոյության իրողությունը: Իր օրերի ու դարաշրջանի մասին խոսելիս Հիսուս հաճախ է անդրադառնում հրեշտակներին. Հրեշտակներն ուրախանում են ապաշխարող մեղավորի համար, հոգիները դրախտ են տանում, մանուկների պահապան հրեշտակները մշտապես տեսնում են Հոր երեսը, հրեշտակները չեն ամուսնանում:

Հրեշտակները սերտորեն կապված են եղել Հիսուսի կյանքի առանցքային դրվագներին: Նրանք են Զաքարիա քահանային ավետել Հովհաննես Մկրտչի ծնունդը, Մարիամին՝ Հիսուսի ծնունդը, Հիսուսի ծննդյան ժամանակ երգել թեթղեհեմի դաշտերում, անապատում փորձության ժամանակ ծառայել Նրան: Հրեշտակներն են Գեթսեմանիի պարտեզում Հիսուսին զորացրել Նրա

տագնապի պահին, նրանք են գերեզմանից հեռու գլորել քարը և ավետել Հիսուսի հարությունը։ Հրեշտակներն են նրա համբարձումից հետո քաջալերել առաքյալներին, զորավիր եղել նրա հետևորդներին։ Հրեշտակի միջոցով է Պետրոսը դուրս եկել բանտից։ Հռոմ կատարած նավարկության ողջ ընթացքում, նավարեկության ժամանակ, Պողոսի հետ էր Տիրոջ հրեշտակը։ Հովհաննես Աստվածաբանի Հայտնության մեջ երկնքում հրեշտակների մատուցած պաշտամունքը եկեղեցու մատուցած պաշտամունքի նախատիպն է։

## Դեւտացի

Ղուկ Ժ 32

Յովի Ա 19

Ըստ Տիրոջ՝ Մովսեսին տված հրահանգի՝ Կեւիի ցեղի մարդիկ պետք է ծառայեին Ահարոնին ու քահանաներին՝ ապահովելով Վկայության խորանի, իսկ հետագայում նաև Տաճարի պահպանությունն ու խորանի սպասավորությունը (Թփոց Գ 1-13)։

## Ղովտ

Ղուկ Ժ 28

Ղուկ Ժ 29

Ղուկ Ժ 32

Աբրահամի եղբոր՝ Առանի որդին։  
Տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Ա։

## Նախանձահույզներ

Այն հրեաների անվանումը, ովքեր Մակաբայեցիների ժամանակներից՝ ՔԱԲ-Ա դդ. մինչև Մասադայի ամրոցի կործանումը՝ ՔՀ 73թ., ազգայնամոլությամբ էին համակված։ Իրենց համարելով ազգն օտար լծից փրկելու համար Աստծու կողմից ընտրված գործակալներ՝ նախանձահույզները, «Ոչ մի կանոն բացի Օրենքից, ոչ մի թագավոր

բացի Աստծուց» նշանաբանի ներքո, հետզհետե անզուսապ են դառնում և՝ հոռմեական տիրապետության ուժերի, և՝ հելլենիզմին հարող իրենց ազգակիցների դեմ դիմադրության մեջ։

## Նեեման Ասորի

Ղուկ Դ 27

Ասորիների զորքի հրամանատարը, ով չնայած իր ուժին ու զորությանը, բորոտ էր։ Եղիսե մարգարեի ցուցումով յոթն անգամ լվացվելով Հորդանան գետում՝ բժշկվում է եւ հավատում կենդանի Աստծուն (Դ Թագ. Ե 1-19)։

## Շուշան

Ղուկ Ը 3

Հիշատակվում է այն մեծահարուստ եւ ազնվական տիկնանց հետ, ովքեր Հիսուսին ու նրա առաքյալներին մատակարարում էին իրենց ունեցվածքից։

## Ոռուփոս

Մարկ Ժ 21

(Հուն. «կարմիր»): Սիմոն Կյուրենացու որդին եւ Ալեքսանդրի եղբայրը։ Ոռուփոսի մասին հիշատակվում է նաև Պողոս առաքյալի Հոռմեացիս թղթում (Հմմտ. ԺԶ 13)։

## Սադուկեցի

Մատթ Գ 7

Մատթ Ժ 2 1

Մատթ Ժ 2 6

Մատթ Ժ 2 11

Մատթ Ժ 2 12

Մատթ ԻԲ 23

Մատթ ԻԲ 34

Մարկ ԺԲ 18

Ղուկ Ի 27

Հիսուսի ժամանակ քահանայապետական ընդգծված դիրքորոշում ունեցող կուսակցություն, որն իր անվա-

նումն ու ծագումը կապում էր Դավիթ թագավորի քահանաներից մեկի՝ Սադոկի հետ (Բ Թագ. ի 25):

### Սամարացիներ

Սամարիան իսրայելի հյուսիսային թագավորության մայրաքաղաքն էր՝ հիմնված Ամրիի՝ Աքաաբի հոր կողմից, մի լեռան վրա, որն Ամրին «Սամերից գնեց երկու տաղանդ արծաթով» (այստեղից էլ «Սամարիա» անունը) (Գ Թագ ԺԶ 24), և այսօր էլ տեսանելի է ներկայիս Նաբլուս քաղաքից դեպի հյուսիս: «Սամարիա» անունով է կոչվել տասը ցեղերի զբաղեցրած տարածքը, որի սահմաններն էին Գալիլիան, Հորդանանը և Հրեաստանը:

### Սիմոն՝ բորոտ

Մատթ ԻԶ 6

Մարկ ԺԴ 3

(Եբր. «ունկնդրում»): Բորոտ Բեթանիայից, ում տանը Հիսուսին օծեցին նարդոսի յուղով: Հնարավոր է որոշ ազգակցական կապեր ուներ Հիսուսի մտերիմներ Մարթայի, Մարիամի ու Ղազարոսի հետ:

### Սիմոն՝ Յուդա Իսկարիովտացու հայրը

Յովհ Զ 72

Յովհ ԺԳ 2

(Եբր. «ունկնդրում»): Միայն Հովհաննես Ավետարանիչն է հիշատակում Հուդայի հորը: Մատնիչ առաքյալի ընտանիքը Հրեաստանի հարավային Կարբիոթ գյուղից էր, այստեղից էլ՝ «իշկարիոթ», որ նշանակում է «մարդ կարիոթ»:

### Սինհեղիոն

(Հուն. «ատյան»): Հետգերության շրջանի հուդաիզմի այս գերագույն

ժողովն ազնվականական սենատ էր՝ բաղկացած քահանաներից և աշխարհականներից, ովքեր ՔԱ Դ պատաժ, պարսից և հունական տիրապետությունների ժամանակ, հրեա ժողովրդի գլուխ էին կանգնել:

### Տիմեոս

Մարկ Ժ 46

(Եբր. «անմաքուր լինել» բայից): Կույր Բարտիմեոսի հայրը, որին բժշկեց Հիսուս:

### Փանուել

Ղուկ Բ 36

(Եբր. «Աստծու երես»): Աննա մարդարեուհու հայրը՝ Ասերի ազգատոհմից ու ցեղից:

### Փարիսեցիներ

(Հուն. «բաժանվածներ»): Ամենահզոր հրեական կրոնական խումբը Հիսուսի ժամանակներում և Նրա մշտական հակառակորդները, ժառանգները «սրբերի», ովքեր ՔԱ 332թ. Պաղեստինում հունական տիրապետության հաստատումից ի վեր պայքարել են կրոնական ազատության համար: Ինչպես «սրբերը», փարիսեցիները նույնպես, բարեպաշտական մղումներից գրդած, իրենց «առանձնացրել» էին, որպեսզի պահպանեն Օրենքը:

### Քուզա

Ղուկ Ը 3

Հերովդես Անտիպասի տան վերակացուն, ում կինը՝ Հովհաննան, մեկն էր այն կանանցից (Մարիամ Մագդաղենացի, Շուշան և ուրիշներ), ովքեր Գալիլիայում Հիսուսի քարոզչության ժամանակ հետեւում էին Նրան և տասներկու աշակերտներին:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ .....	7
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ .....	8
ԱՆԴՐԵԱՍ առաքյալ .....	9
ԱՆՆԱ մարգարետուիի .....	12
ԱՆՆԱ քահանայապետ .....	13
ԱՐՁԵՂԱՅՈՍ .....	15
ԲԱՐԱԲԲԱ .....	16
ԲԱՐԹՈՒՂԻՄԵՈՍ առաքյալ .....	18
ԲԱՐՏԻՄԵՈՍ .....	20
ԳԱԲՐԻԵԼ հրեշտակապետ .....	21
ԵՂԻՍԱԲԵԹ .....	22
ԶԱԿՔԵՈՍ .....	24
ԶԱՔԱՐԻԱ Ճովիաննես Մկրտչի հայրը .....	25
ԹԱՇԵՈՍ առաքյալ .....	28
ԹԵՈՓԻԼՈՍ .....	30
ԹՈՎՄԱՍ առաքյալ .....	31
ԿԱՅԻԱՓԱ քահանայապետ .....	34
ԿՊԵՈՊԱՍ .....	38
ՀԱԿՈԲՈՍ առաքյալ՝ Զեբեդեոսի որդի .....	39
ՀԱԿՈԲՈՍ առաքյալ՝ Ալփեոսի որդի .....	43
ՀԱԿՈԲՈՍ Հիսուսի եղբայրը .....	44
ՀԱՅՐՈՍ .....	47
ՀԵՐՈՎԴԵՍ արքա .....	48
ՀԵՐՈՎԴԵՍ՝ Գալիլիայի չորրորդապետ .....	50
ՀԵՐՈՎԴԻԱ .....	54
ՀՈՎՐԱՍՆԱ .....	56

---

ՀՈՎՐԱՆՆԵՍ Մկրտիչ	57
ՀՈՎՐԱՆՆԵՍ առաքյալ	69
ՀՈՎՍԵ Շիսուսի եղբայրը	76
ՀՈՎՍԵՓ Շիսուսի հայրը	78
ՀՈՎՍԵՓ Արիմաթիացի	82
ՀՈՒՂԱ Իսկարիովտացի	84
ՀՈՒՂԱ Շիսուսի եղբայրը	89
ՀՈՒՂԱ առաքյալ	90
ԴԱԶԱՐՈՍ	91
ԴԱԶԱՐՈՍ Մարթայի և Մարիամի եղբայրը	93
ԴԵԲԵՈՍ	95
ԴԵՎԻ	96
ԴՈՒԿԱՍ ավետարանիչ	97
ՄԱՂՔՈՍ	98
ՄԱՏԹԵՈՍ առաքյալ	99
ՄԱՐԿՈՍ ավետարանիչ	101
ՄԱՐԹԱ	103
ՄԱՐԻԱՄ Աստվածածին	105
ՄԱՐԻԱՄ Մագդաղենացի	108
ՄԱՐԻԱՄ Հակոբոսի և Հովսեի մայրը	111
ՄԱՐԻԱՄ Մարթայի քույրը	113
ՄԱՐԻԱՄ Մարկոս ավետարանչի մայրը	115
ՄՈԳԵՐ	116
ՆԱԹԱՆԱՅԵԼ	117
ՆԻԿՈՂԵՄՈՍ	118
ՊԵՏՐՈՍ առաքյալ	119
ՊԻՂԱՏՈՍ Պոնտացի	131
ՍԱՂՈՍԵ Զեբեդեոսի կինը	139
ՍԱՂՈՍԵ Յերովդիայի դուստրը	140
ՍԻՄԵՈՆ Ծերունի	141
ՍԻՄԵՈՆ Կանանացի	142
ՍԻՄՈՆ Շիսուսի եղբայրը	143
ՍԻՄՈՆ փարիսեցի	144
ՍԻՄՈՆ Կյուրենացի	145
ՏԻԲԵՐԻՈՍ կայսր	146
ՓԻԼԻՊՊՈՍ առաքյալ	147
ՕԳՈՍՏՈՍ կայսր	150

---

ՀԱՎԵԼՎԱԾ Ա	
ԱՎԵՏԱՐԱՍՆԵՐԻ ՀԻՆԿԱԿԱՐԱՍՅԱՆ ԱՆՁԻՆՔ	151
ՀԱՎԵԼՎԱԾ Բ	
ՀԻՄՈՒՄԻ ՍԵՐՆԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԵՐԸ	159
ՀԱՎԵԼՎԱԾ Գ	
ՀԱՐԱԿԻՑ ԱՆՁԻՆՔ	166

## ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

**Նրադարակչության փնօրեն՝  
Եղնիկ արքեպիսկոպոս Պետրոսյան**

**Պատրաստեցին՝ Ռուբեն արեղա Զարգարյանը  
Շահե արեղա Անանյանը  
Սրբազրիչ՝ Միքանուշ Գրիգորյան  
Էջաղբումը՝ Արփակ Տիգանյանի**

**ՄԱՅՐ ԱԹ-ՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՑԻՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՎԱԾԱՇԽԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՑԻՆ - 2010**

Չափսը՝ 60x84 1/8,  
Ծավալը՝ 176 էջ,  
Տպաքանակը՝ 1000